



մարտ

1/53

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ
JUSTICE

2021

ԻՐԱՎԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ



ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

2021
N 1 (53)

Գիտական հանդես Հրատարակվում է 2008 թվականից

Հիմնադիր և հրատարակիչ՝ «Իրավական կրթության և վերականգնողական
ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ

Գլխավոր խմբագիր՝ Աշոտ Հայրապետյան - իրավաբանական գիտությունների
թեկնածու, դոցենտ

Բոլոր իրավունքները պաշտպանված են:

Վերատպելը միայն հանդեսի խմբագրության թույլտվությամբ:

Խմբագրության կարծիքը միշտ չէ, որ համընկնում է հեղինակների կարծիքի հետ:

Գովազդային նյութերի բովանդակության համար խմբագրությունը

պատասխանատվություն չի կրում:

Հեղինակային նյութերը վերանայվում են և չեն վերադարձվում:

«Արդարադատություն» գիտական հանդեսն ընդգրկված է Հայաստանի
Հանրապետության բարձրագույն որակավորման կոմիտեի (ՀՀ ԲՈԿ) սահմանած
դոկտորական և թեկնածուական ատենախոսությունների հիմնական արդյունքների
և դրույթների հրատարակման համար ընդունելի պարբերական գիտական
հրատարակությունների ցուցակում:

Խմբագրության հասցեն՝ 375008, ք. Երևան, Մ. Խորենացու 162ա,
հեռախոս՝ 574483

ֆաքս՝ 574453 էլ. կայք՝ www.ardadatutyunjournal.com

Հրապարակված է 09.03.2021թ.

Տպագրությունը՝ էլեկտրոնային:

Լրատվական գործունեություն իրականացնող «Իրավական կրթության
և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ

Հասցեն՝ ք. Երևան, Մ. Խորենացու 162ա

Գրանցման վկայական - N 278.210.03426, գրանցված ՀՀ արդարադատության
նախարարության պետական ռեգիստրի Էրեբունու տարածքային բաժնի կողմից:

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ՝

EDITORIAL BOARD

Սրբուհի Գալյան – Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառնությունների ոլորտի համակարգող տեղակալ, Արդարադատության առաջին դասի խորհրդական, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական իրավունքի ամբիոնի ասպիրանտ, խմբագրական խորհրդի նախագահ

Srbuhi Galyan – Deputy Prosecutor General of the RA, carrying out functions envisaged by “Law on confiscation of property of illicit origin”, First Rank Counsellor of Justice, PhD student of the chair of criminal law, YSU, Chairman of the Editorial Board

Աշոտ Հայրապետյան – «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ տնօրեն, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ, գլխավոր խմբագիր

Ashot Hayrapetyan – “Legal Education and Rehabilitation Programs’ Implementation Center” SNCO, PhD in Law, Associate Professor, Chief Editor

Արտակ Ասատրյան – Իրավաբանական գիտությունների թեկնածու

Artak Asatryan – PhD in Law

Հրանուշ Հակոբյան – Իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Hranush Hakobyan – Doctor of Law, Professor

Արմեն Հարությունյան – Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատավոր, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Armen Harutyunyan – Judge at the European Court of Human Rights, Doctor of Law, Professor

Աշոտ Խաչատրյան – Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի դատավոր, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ashot Khachatryan – Judge at the Constitutional Court of the Republic of Armenia, Doctor of Law, Professor

Վոլոդյա Հովհաննիսյան – Իրավաբանական գիտությունների դոկտոր, դոցենտ

Volodya Hovhannisyan – Doctor of Law, Associate Professor

Արմեն Եսայան – Հայաստանի Հանրապետության արդարադատության երրորդ դասի պետական խորհրդական, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Armen Yesayan – Third Class State Advisor of Justice of the Republic of Armenia, Doctor of Law, Professor

Գրիգոր Բադիրյան – Իրավաբանական գիտությունների դոկտոր

Grigor Badiryan – Doctor of Law

Ստեփան Ծաղիկյան – Հայ-Ռուսական համալսարանի իրավունքի և քաղաքականության ինստիտուտի քրեական և քրեական դատավարության իրավունքի ամբիոնի վարիչ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Stepan Tsaghikyan – Head of Criminal and Criminal Procedural Law of the Law and Politics Department of the Russian-Armenian University, Doctor of Law, Professor

Սերգեյ Առաքելյան – «Արդարադատության ակադեմիա» ՊՈԱԿ ղեկավար, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Sergey Arakelyan – Rector of “Academy of Justice” SNCO, Doctor of Law, Professor

Ռուզաննա Հակոբյան – «Գավառի պետական համալսարան» հիմնադրամի ղեկավար, իրավաբանական գիտությունների դոկտոր, դոցենտ

Ruzanna Hakobyan – Rector of “Gavar State University” Fund, Doctor of Law, Associate Professor

Ժորա Ջհանգիրյան – «Գլաժոր» համալսարանի ղեկավար, իրավաբանական գիտությունների

դոկտոր, պրոֆեսոր

Zhora Jhangiryan – Rector of “Gladzor” University, Doctor of Law, Professor

Ռուբեն Ավագյան – «Մանց» համալսարանի ռեկտոր, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ruben Avagyan – Rector of “Manc” University, Doctor of Law, Professor

Արփիմեն Հովհաննիսյան – Իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ

Arpine Hovhannisyan – PhD in Law, Associate Professor

Սուրեն Քրմոյան – Իրավաբանական գիտությունների թեկնածու

Suren Krmoyan – PhD in Law

Սերգեյ Հայրապետյան – Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Sergey Hayrapetyan – Doctor of Historical Sciences, Professor

Աշոտ Ենգոյան – ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի քաղաքական գիտության պատմության և տեսության ամբիոնի վարիչ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ashot Engoyan – Head of Chair/Faculty of International Relations-Chair of Theory and History of Political Sciences of YSU, Doctor of Political Sciences, Professor

Գարիկ Քեռյան – ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի քաղաքական ինստիտուտների և գործընթացների ամբիոնի վարիչ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Garik Keryan – Head of Chair/Faculty of International Relations-Chair of Political Institutions and Processes of YSU, Doctor of Political Sciences, Professor

Մուշեղ Հովսեփյան – ԵՊՀ ժուռնալիստիկայի ֆակուլտետի տպագիր և հեռարձակվող լրատվամիջոցների ամբիոնի վարիչ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Mushegh Hovsepyan – Head of Chair / Faculty of Journalism- Chair of Printed and Broadcast Media of YSU, Doctor of Philological Sciences, Professor

Էդուարդ Ղազարյան – Հայաստանի ազգային ագրարային համալսարանի ագրոբիզնեսի և տնտեսագիտության ֆակուլտետի դեկան, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

Eduard Ghazaryan – Dean of the Faculty of Agribusiness and Economics of National Agrarian University of Armenia, Doctor of Economics, Professor

Օտարերկրյա անդամներ

International members

Հայկ Կուպելյանց – Իրավաբանական գիտությունների թեկնածու

Hayk Kupelyants – PhD in Law

Ալեքսանդր Կրիմով – ՌԴ Սանկտ Պետերբուրգի պատիժների իրականացման դաշնային ծառայության համալսարանի դեկան, ներքին ծառայության գեներալ-մայոր, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Alexandr Krymov - Head of the St. Petersburg University of the Federal Penitentiary Service of Russia (FPS of Russia), Major General of the Internal Service, Doctor of Law, Professor

Անդրեյ Սկիբա – Ռուսաստանի Դաշնության պատիժների իրականացման դաշնային ծառայության իրավունքի և կառավարման ակադեմիայի իրավաբանական ֆակուլտետի քրեակատարողական իրավունքի ամբիոնի պետ, իրավաբանական գիտությունների դոկտոր, դոցենտ, ներքին ծառայության մայոր

Andrey Skiba – Head of Chair / Legal Faculty- Chair of Criminal and Executive Right of the Academy of Law and Administration of the Federal Penitentiary Service of the Russian Federation, Doctor of Law, Associate Professor, Major of Internal Service

Եվգենի Բարաշ – Իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Ուկրաինայի գիտության և տեխնիկայի վաստակավոր գործիչ

Yevhen Barash – Doctor of Law, Professor, Honored Worker of Science and Technology of Ukraine

Հենրիկ Լինդերբորգ – Ֆինլանդիայի արդարադատության նախարարության քրեական պատիժների վարչության ավագ գիտաշխատող, սոցիալական գիտությունների դոկտոր

Henrik Lindeborg – Senior Researcher at the Criminal Punishment Department of the Ministry of Justice of Finland, Doctor of Law

Նիկիտա Իվանով – Համառուսական արդարադատության պետական համալսարանի քրեական իրավունքի և կրիմինալոգիայի ամբիոնի վարիչ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Nikita Ivanov – Head of the Chair of Penal Right and Criminology of the All-Russian State University of Justice, Doctor of Law, Professor

Սերգեյ Չերնյակսկի – Ուկրաինայի ներքին գործերի Ազգային ակադեմիայի պրոռեկտոր, Ուկրաինայի գիտության և տեխնիկայի վաստակավոր գործիչ, ոստիկանության գնդապետ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Serhii Cherniavskiy – Vice-Rector of the National Academy of Internal Affairs of Ukraine, Honored Worker of Science and Technology of Ukraine, Police Colonel, Doctor of Law, Professor

Վադիմ Վինոգրադով – Համառուսական արդարադատության պետական համալսարանի սահմանադրական և միջազգային իրավունքի ամբիոնի վարիչ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Vadim Vinogradov – Head of the Chair of Constitution and International Right of the All-Russian State University of Justice, Doctor of Law, Professor

Վլադիմիր Գուրեն – Համառուսական արդարադատության պետական համալսարանի քաղաքացիական դատավարության և դատական կարգադրիչների ծառայության կազմակերպման ամբիոնի վարիչ, իրավաբանական գիտությունների դոկտոր, դոցենտ

Vladimir Gureev – Head of the Chair of Civil Process and Organization of Service of Bailiffs of the All-Russian State University of Justice, Doctor of Law, Associate Professor

Կոնստանտին Գուսարով – Յարոսլավ Մուդրիի անվան ազգային իրավաբանական համալսարանի քաղաքացիական դատավարության ամբիոնի վարիչ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Konstantin Gusarov – Head of the Chair of Civil Procedure of the Yaroslav Mudryi National Law University, Doctor of Law, Professor

Վիտալիյ Ստուկանով – Բելառուսի Հանրապետության ներքին գործերի նախարարության ակադեմիայի հոգեբանության և մանկավարժության ամբիոնի պետ, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ

Vitaly Stukanov – Head of Department of Psychology and Pedagogy of the Academy of the Interior Ministry of the Republic of Belarus, Doctor of Pedagogical Sciences, PhD in Psychological Sciences, Associate Professor

Ալեքսանդր Ռուբիս – Բելառուսի Հանրապետության ներքին գործերի նախարարության ակադեմիայի քրեական դատավարության ամբիոնի պրոֆեսոր, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Aleksandr Rubis – Professor of the Department of Criminal Procedure of the Academy of Interior Ministry of the Republic of Belarus, Doctor of Law, Professor

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՎԱՐՉԱՆԻ

Արմեն Օհանյան (պատասխանատու քարտուղար), Միլվա Արիստակեսյան (տեխնիկական խմբագիր), Անուշ Հայրումյան (սրբագրիչ), Սամվել Աբրահամյան

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

- 6 ՄԵՐԳԵՅ ՄԵՂՐՅԱՆ
ՏԻԳՐԱՆ ՄԱՐԿՈՍՅԱՆ
Կատարողական թերթի ինստիտուտն արդյունավետ դատական
պաշտպանության իրավունքի համատեքստում
- 14 ՎԱՀԵ ԹՈՐՈՍՅԱՆ
Աշխարհիկ պետության իմաստավորումը լուսավորականության
տեսաբանների իրավաքաղաքական հայացքներում
- 18 ԳԱՐԻԿ ՔԵՌՅԱՆ
ՆՎԵՐ ԿՈՍՏԱՆՅԱՆ
Ընտրական իրավունքի հիմնական սկզբունքներն ու ձևերը
- 22 ՏԻԳՐԱՆ ԴԱԴՈՒՆՅ
Օտարերկրյա անձանց մասնակցությամբ հողային իրավահարաբերությունների
կարգավորման պատմական զարգացումը
- 32 ԼԻԱՆԱ ՄԱԼԽԱՍՅԱՆ
Ցեղապետությունը որպես տոհմացեղային կառավարման համակարգ
- 38 ԱՐՄԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ
Տուժողի մահվան ազդեցությունը վնասի հատուցման
սահմանադրական իրավունքի գործողության վրա
- 47 ԶՈՀՐԱԿ ԱՊՐԵՍՅԱՆ
Հանրության գերակա շահերի ապահովման ժամանակ սեփականության
իրավունքի պահպանման և վերականգնման հնարավորությունը
- 55 ԱՆՆԱ ՄԿՐՏՉՅԱՆ
Քաղաքացիաիրավական ինքնապաշտպանության և անհրաժեշտ
պաշտպանության տարրորոշման հիմնահարցը
- 62 ԼԻԼԻԹ ՊԵՏՐՈՍՅԱՆ
Վարչական դատարանում «ex officio» (գործի ի պաշտոնե քննության)
սկզբունքի իրացման որոշ հիմնախնդիրներ
- 69 ՔՐԻՍՏԻՆԵ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ
Լեգիտիմ նպատակը՝ որպես վարչարարության
համաչափության սկզբունքի տարր
- 77 ԱՆԻ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
Ընդատության կանոնների խախտման դատավարական հետևանքները
հայցադիմումը վարույթ ընդունելու փուլում
- 86 ՀԱՍՄԻԿ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ
ՄԻՐԱՐՓԻ ՄՈՒԴԴՈՒՍՅԱՆ
Դատապարտյալների վերասոցիալականացման
հասկացության հայեցակարգը
- 92 ՆԱՐԻՆԵ ԱՎԱԳՅԱՆ
Աշխարհագրական նշումների, ծագման տեղանունների և երաշխավորված
ավանդական արտադրանքի պաշտպանության առանձնահատկությունները

ՄԵՐԳԵՅ ՄԵՂՐՅԱՆ

ՀՀ գլխավոր հարկադիր կատարող,
ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քաղաքացիական
դատավարության ամբիոնի դոցենտ,
իրավաբանական գիտությունների թեկնածու

ՏԻԳՐԱՆ ՄԱՐԿՈՍՅԱՆ

ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության
պետական հանձնաժողովի անդամ,
ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ուսանողական
իրավաբանական խորհրդատվության կենտրոնի
դասախոս-կոորդինատոր,
իրավաբանական գիտությունների թեկնածու

ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԹԵՐԹԻ ԻՆՍՏԻՏՈՒՏՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԴԱՏԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Կատարողական վարույթի հարուցման նախադրյալների մեջ կարևորագույն տեղ են զբաղեցնում կատարողական փաստաթղթերը: Աշխատությունում, հայրենական և արտասահմանյան տեսական աղբյուրների, կատարողական վարույթի վերաբերյալ միջազգային փաստաթղթերի, ՀՀ և այլ երկրների օրենսդրության, ՄԻԵԴ, Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումների համատեքստում, քննարկվում է կատարողական թերթի ինստիտուտը՝ հետազոտության առանցքում դնելով նաև դատավարական խնայողության սկզբունքը և դատարանների գերծանրաբեռնվածության նվազեցման հրամայականը: Արդյունքում հեղինակները, եզրահանգելով, որ կատարողական թերթի ինստիտուտը թե՛ բովանդակային, թե՛ ընթացակարգային առումով չի համապատասխանում դատական ակտի հարկադիր կատարման իրավունքի նկատմամբ կիրառելի արդյունավետության պահանջին, մասնավորապես՝ դատավարական խնայողության սկզբունքին, առաջարկում են համարժեք օրենսդրական և տեխնիկական միջոցներով հրաժարվել կատարողական թերթի ինստիտուտից՝ դատական ակտերի դեպքում կատարողական փաստաթուղթ դիտարկելով անմիջականորեն դատական ակտը:

Հիմնադրամեր – հարկադիր կատարման ենթակա ակտ, կատարողական թերթ, կատարողական փաստաթուղթ, դատական պաշտպանության իրավունք, կատարողական վարույթի արդյունավետություն, դատավարական խնայողություն:

Դատական ակտերի հարկադիր կատարման ինստիտուտն ունի բացառիկ նշանակություն արդարադատության արդյունքների կենսագործման հարցում և կոչված է ամբողջացնելու դատական պաշտպանության գործընթացը: Այն դիտարկվում է որպես արդար դատաբնության իրավունքի անբաժանելի մաս, քանի որ մարդու խախտված իրավունքների դատական պաշտպանության իրավունքները չի կարող երաշխավորված իրացվել, եթե խախտված իրավունքների վերականգնման վերաբերյալ վերջնական և պարտադիր ուժ ունեցող դատական ակտը մնում է անկատար: Ավելին, դատական ակտերի կատարման իրավունքն առնչվում է սեփականության իրավունքին, քանի որ դատական ակտերի կատարմանը ողջամիտ ժամկետում հասնելու անհնարիությունը համարվում է միջամտություն՝ ունեցվածքից անարգել օգտվելու իրավունքի

իրականացմանը²:

Դատական ակտերի կատարելիության երաշխավորումը կարևորվում է նաև անկախ ու հարգված դատական իշխանություն ստեղծելու և զարգացնելու առումով: Այդ պատճառով Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեն, անդրադառնալով դատական ակտերի հարկադիր կատարման նշանակությանը, առանձնակի արժևորել է անդամ պետությունների կողմից դատական ակտերի պատշաճ, արդյունավետ և ողջամիտ ժամկետում կատարման ապահովումը³:

Հայաստանի Հանրապետությունում դատական ակտերի հարկադիր կատարումն իրականացվում է կատարողական վարույթի միջոցով, որի հետ կապված հարաբերությունները հիմնականում կարգավորվում են «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքով (այսուհետ՝

Օրենք)⁴: Ընդ որում, կատարողական վարույթի միջոցով ապահովվում է ոչ միայն դատական ակտերի, այլև մի շարք այլ ակտերի (անբողոքարկելի վարչական ակտեր, ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումներ, կատարողական մակագրության թերթեր և այլն) հարկադիր կատարումը: Այսինքն՝ օրենսդիրը հարկադիր կատարման ենթակա ակտերի շրջանակը չի սահմանափակել միայն դատական ակտերով⁵:

Միևնույն ժամանակ, հարկ է նշել, որ հարկադիր կատարողը կարող է ձեռնամուխ լինել համապատասխան ակտի հարկադիր կատարմանը միայն կատարողական վարույթ հարուցելու դեպքում: Այլ կերպ ասած՝ առանց կատարողական վարույթ հարուցելու հարկադիր կատարողն իրավունք չունի իրականացնել կատարողական գործողություններ և կիրառել հարկադիր կատարման միջոցներ⁶:

Հարկադիր կատարման ընթացակարգ սկսելու հիմք է համապատասխան փաստաթղթերի ներկայացումը հարկադիր կատարողին, որոնք մասնագիտական գրականության մեջ անվանվում են կատարողական փաստաթղթեր⁷: Այս տեսանկյունից Օրենքի համակարգային վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ այն առանձնացնում է կատարողական փաստաթղթերի երեք տեսակ՝ կատարողական թերթը, կատարողական մակագրության թերթը և անբողոքարկելի վարչական ակտը: Մասնավորապես, Օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ հարկադիր կատարման միջոցների կիրառման հիմքը սույն օրենքով սահմանված կարգով տրված կատարողական թերթն է և կատարողական մակագրության թերթը, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի⁸ 88-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջների պահպանմամբ ներկայացված դիմումը:

Դժվար չէ նկատել, որ հիշատակված դրույթում օրենսդիրը տարբերակված մոտեցում է ցուցաբերել կատարողական տարբեր փաստաթղթերի կապակցությամբ: Խոսքն այն մասին է, որ, եթե կատարողական մակագրության թերթի և անբողոքարկելի վարչական ակտի համար կատարողական փաստաթուղթ է դիտարկվում հենց հարկադիր կատարման ենթակա ակտը⁹, ապա դատական ակտերի պարագայում մման դերը վերապահվել է կատարողական թերթին: Այլ կերպ ասած՝ միայն դատական ակտերի հարկադիր կատարման դեպքում է օրենսդիրը պահանջում նոր կատարողական փաստաթղթի՝ կատարողական թերթի կազմում, իսկ մնացած դեպքերում բավարար է դիտարկվում համապատասխան հարկադիր կատարման ենթակա ակտի

ներկայացումը հարկադիր կատարողին:

Ինչպես նշվեց, դատական ակտերի հարկադիր կատարման իրավունքը դիտարկվում է որպես դատական պաշտպանության իրավունքի անբաժանելի մաս, որի իրականացումը ևս պետք է երաշխավորվի այն մոտեցումներին համահունչ, որոնք բնութագրական են դատական պաշտպանության իրավունքին: Այսպես, Սահմանադրության¹⁰ 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք, իսկ 75-րդ հոդվածում ամրագրված է, որ հիմնական իրավունքները և ազատությունները կարգավորելիս օրենքները սահմանում են այդ իրավունքների և ազատությունների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր: Հետևաբար, դատական ակտերի հարկադիր կատարման ինստիտուտի դեպքում կարևորագույն բնութագրիչ պետք է դիտարկել արդյունավետությունը:

Այս կապակցությամբ ուշադրության է արժանի նաև Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի այն մոտեցումը, որով վերջինս անդամ պետություններին առաջարկել է ապահովել դատական ակտերի, ինչպես նաև, որոշ դեպքերում, ոչ դատական կատարողական փաստաթղթերի, արդյունավետ և ծախսարդյունավետ կատարումը¹¹:

Նման պայմաններում գիտագործնական կարևոր նշանակություն ունի այն հարցադրման պատասխանը, թե որքանով է կատարողական թերթի ինստիտուտը համապատասխանում արդյունավետության պահանջին:

«Արդյունավետություն» բառը բառարանային նշանակությամբ ներառում է ինչպես արգասաբերությունը, այնպես էլ՝ շահավետությունը¹²: Այսինքն՝ որևէ երևույթի արդյունավետության մասին խոսելիս կարևորվում են թե՛ դրա՝ հետապնդվող նպատակին հասնելու ունակության, թե՛ այդ գործընթացում հնարավորինս փոքր ջանքերի ներդրման անհրաժեշտության հանգամանքները: Ուստի, վերջին տեսանկյունից ցանկացած ինստիտուտի արդյունավետության դիտարկումն ուղղակի աղերսներ ունի տնտեսվարության կամ խնայողության գաղափարի հետ: Այն դատավարական իրավունքում խտացվում է դատավարական խնայողության սկզբունքի շրջանակներում և դրսևորվում է դատարանի ու դատավարության այլ սուբյեկտների նվազագույն գործառութային, ժամանակային և ֆինանսական ծախսերով հետապնդվող նպատակի կենսագործման երաշխա-

վորման մեջ: Ընդ որում, դատավարական խնայողության սկզբունքն առաջին հերթին հասցեագրված է օրենսդրին և պահանջում է օրենսդրության մեջ անհրաժեշտ գործիքակազմի առկայություն¹³:

Հիշատակվածի լույսի ներքո առաջնահերթ նշանակություն ունի դատական ակտի և կատարողական թերթի միջև առկա կապի, ինչպես նաև օրենսդրորեն այս փաստաթղթերի առանձնացման անհրաժեշտության գնահատումը: Այս առումով ելակետային են կատարողական թերթ տալու հիմք հանդիսացող դատական ակտերի և կատարողական թերթի բովանդակություններին ներկայացվող պահանջները, որոնցից առաջինները սահմանված են դատավարական օրենքներում, իսկ կատարողական թերթում ներառվող տեղեկությունների շրջանակը նախատեսված է Օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասում:

Վերաբերելի կարգավորումների ուսումնասիրությունը և համեմատական վերլուծությունը ցույց են տալիս, որ կատարողական թերթում այս կամ այն կերպ վերաբառնալով է դրա տրման հիմք հանդիսացող դատական ակտերի բովանդակությունը: Կատարողական թերթի բովանդակությունում ներառվող միակ հավելյալ տեղեկությունը թերևս կարելի է համարել հարկադիր կատարման ենթակա դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելու ամսաթվի վերաբերյալ տվյալը: Հետևաբար, պետք է ընդգծել, որ կատարողական թերթի միակ գործառնությունը, ըստ էության, սահմանափակվում է դատական ակտի օրինական ուժի մեջ մտած լինելու փաստի հաստատմամբ:

Միաժամանակ կատարողական թերթի բովանդակային պահանջներն ուշադրության են արժանի այն առումով, որ դրանք հանդես են գալիս որպես կատարողական թերթի տրման հիմք հանդիսացող դատական ակտում առկա տվյալները կոնկրետ կատարողական վարույթի շրջանակներում որոշակիացնող դերակատարությամբ, օրինակ՝ կատարողական թերթում պահանջատիրոջ և պարտապանի սահմանմամբ կամ դատական ակտի եզրափակիչ մասի կատարման ենթակա մասի նախատեսմամբ: Այնուամենայնիվ, կատարողական թերթի այս գործառնությունը կրում է օժանդակ բնույթ, և դրա բացակայությունը չունի որոշիչ նշանակություն, քանի որ Օրենքի կարգավորումները միայն դատական ակտում առկա տվյալների հիման վրա թույլ են տալիս ստանալ համապատասխան հարցերի պատասխանները: Այսպես, օրինակ, Օրենքի 7-րդ հոդվածում տրված են «պահանջատեր» և «պարտապան» հասկացությունների բնորոշումները, որոնց հիման վրա որոշվում է անձի

կարգավիճակը կատարողական թերթում, ապա նաև՝ կատարողական վարույթում:

Վերոհիշյալի համատեքստում պակաս կարևոր չէ կատարողական թերթ տալու ընթացակարգը, որն, ընդհանուր առմամբ, նախատեսված է Օրենքի 18-րդ հոդվածում: Մասնավորապես, որպես կանոն, Օրենքը կատարողական թերթ տալու ընթացակարգի մեկնարկը կապում է պահանջատիրոջ կողմից դատարան ներկայացվող դիմումի հետ, որին պետք է կցվի դիմումի օրինակը պարտապանին ուղարկելու մասին ապացույց: Այնուհետև, եզրափակիչ դատական ակտերի դեպքում՝ դիմումն ստանալու օրվան հաջորդող երկշաբաթյա ժամկետի ավարտից հետո՝ եռօրյա ժամկետում, իսկ միջանկյալ դատական ակտերի դեպքում՝ դիմումն ստանալու օրվանից հետո՝ եռօրյա ժամկետում, դատարանը լուծում է կատարողական թերթ տալու հարցը՝ տալով կատարողական թերթ կամ առանց դատական նիստ հրավիրելու՝ կայացնելով կատարողական թերթ տալու դիմումը մերժելու կամ դիմումն առանց քննության թողնելու մասին որոշում: Կատարողական թերթ տալու դիմումը մերժելու կամ այն առանց քննության թողնելու մասին որոշումներն էլ իրենց հերթին ենթակա են բողոքարկման: Ընդ որում, մինչև 2019թ.-ին Օրենքում կատարված փոփոխությունները¹⁴ դատարանը չունի կատարողական թերթ տալու դիմումը մերժելու կամ այն առանց քննության թողնելու լիազորություն և դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելուց հետո իրավունքի ուժով պարտավոր էր պահանջատիրոջ դիմումի հիման վրա տալ կատարողական թերթ¹⁵:

Այսպիսով, ստացվում է, որ դատական ակտերի հարկադիր կատարման ընթացակարգ նախաձեռնելու համար կատարողական թերթի տրամադրումը ենթադրում է մի շարք գործողություններ, որոնք ենթակա են կատարման շահագրգիռ անձի և դատական ակտ կայացրած դատարանի, իսկ կատարողական թերթ տալու դիմումն առանց քննության թողնելու կամ մերժելու որոշումներ կայացվելու և դրանք բողոքարկելու պարագայում՝ նաև վերադաս դատական ատյանի կողմից: Եվ սա այն դեպքում, երբ կատարողական թերթը, ըստ էության, կրկնում է այն տալու հիմք հանդիսացող դատական ակտի բովանդակությունը՝ այն բացառությամբ, որ դրանում նախատեսվում են հարկադիր կատարման ենթակա դատական ակտի ուժի մեջ մտնելու մասին տվյալներ:

Ակնհայտ է, որ միայն դատական ակտի օրինական ուժի մեջ մտած լինելու հավաստման նպատակով կատարողական թերթի նախատեսումը չի

կարող արդարացնել դատարանի և դատավարության այլ սուբյեկտների կողմից ներկայումս պահանջվող ջանքերի ծավալն այն պարագայում, երբ այդ և կատարողական վարույթի իրականացման համար անհրաժեշտ դատական գործի վերաբերյալ ցանկացած այլ տվյալ կարող է հարկադիր կատարողին փոխանցվել այս ոլորտում տեղեկատվական տեխնոլոգիաների համարժեք լուծումների ներդրմամբ: Այլ կերպ ասած՝ կատարողական թերթի՝ որպես կատարողական փաստաթղթի գոյությունն իր բովանդակության և կազմավորման ընթացակարգի տեսանկյուններից համահունչ չէ դատավարական խնայողության սկզբունքին և արդյունավետության պահանջներին: Ուստի կատարողական թերթի միջոցառումներում դատական ակտերի հարկադիր կատարման երաշխավորումը խնդրահարույց է:

Միջազգային փորձի ուսումնասիրությունը ևս վկայում է այն մասին, որ ներկայումս մի շարք երկրներում դատական ակտի հարկադիր կատարման համար դատարանի կողմից կատարողական թերթի կամ այլ լրացուցիչ փաստաթղթի տրամադրման վերաբերյալ պահանջներ առկա չեն: Այսպես, Ֆրանսիայի Քաղաքացիական կատարողական վարույթի մասին օրենսգրքի համաձայն՝ կատարման ենթակա իրավական ակտը բավարար է Քաղաքացիական կատարողական վարույթի մասին օրենսգրքով սահմանված հարկադիր կատարման միջոցների կիրառման համար¹⁶:

Հարկադիր կատարման միջոցների կիրառման հիմքը կատարման ենթակա ակտն է համարվում նաև Էստոնիայում¹⁷, Ֆինլանդիայում¹⁸, Սերբիայում¹⁹ և Շվեդիայում²⁰: Դատական կամ կատարման ենթակա այլ ակտի առկայության դեպքում դատարանից կամ այլ լիազոր մարմնից որևէ այլ որոշում հայցելու անհրաժեշտություն չկա²¹: Կատարման ենթակա դատական ակտը պետք է կցվի դիմումին²²:

Հունաստանում ևս հարկադիր կատարման միջոցների կիրառման համար հիմք է օրինական ուժի մեջ մտած դատական/վարչական ակտը: Համաձայն Հունաստանի քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ կատարողական վարույթ հարուցելու համար պահանջատերը պետք է դիմումի հետ ներկայացնի կատարման ենթակա ակտի վավերացված պատճենը, որը հիմք է հարկադիր կատարման միջոցների կիրառման համար²³:

Չեխիայի քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ «Դատական ակտի հարկադիր կատարումը» վերտառությամբ 261-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ակտի հարկադիր կա-

տարման համար հիմք է պահանջատիրոջ դիմումը: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դիմումին պետք է կցվի կատարման ենթակա դատական/վարչական ակտը²⁴:

Գերմանիայի քաղաքացիական դատավարության օրենսգրքի 724-րդ պարագրաֆի 1-ին մասի համաձայն՝ դատական ակտի հարկադիր կատարումն իրականացվում է դատական ակտի պատճեն-օրինակի հիման վրա, որում առկա է նշում կատարման մասին (կատարման օրինակ-պատճեն): Նույն պարագրաֆի 2-րդ մասի համաձայն՝ կատարման օրինակ-պատճենը տրամադրվում է առաջին ատյանի դատարանի գրասենյակի ղեկավար աշխատակցի կողմից, իսկ եթե գործը վերադաս դատական ատյանում է՝ այդ դատարանի աշխատակցի կողմից: Հետևաբար, Գերմանիայում կատարողական վարույթ հարուցելու իրավական հիմքը դատական ակտը կայացրած դատարանի գրասենյակի աշխատակցի կողմից վավերացված դատական ակտի պաշտոնական պատճենն է, որի վրա առկա է կատարողական մակագրություն՝ հետևյալ բովանդակությամբ. «Դատական ակտի հաստատված պատճենը տրամադրվում է հարկադիր կատարման նպատակներով»²⁵:

Դատական ակտը որպես անմիջական կատարողական փաստաթուղթ դիտարկելու դեպքեր առկա են նաև միջազգային փաստաթղթերում: Այսպես, օրինակ՝ Հարկադիր կատարման համաշխարհային օրենսգրքի 4-րդ հոդվածի համաձայն՝ հարկադիր կատարման ենթակա վճռի կատարման հասնելու համար շահառուից չպետք է պահանջվի իրավական այլ ընթացակարգի նախաձեռնում²⁶: Նույն կերպ Անդրազգային քաղաքացիական դատավարության ՈՒՆԻԴՐՈՒԼ (UNIDROIT) սկզբունքների 26-րդ կետը սահմանում է, որ առաջին ատյանի դատարանի վերջնական վճիռը, ընդհանուր կանոնի համաձայն, պետք է լինի անմիջապես կատարելի²⁷:

Հայաստանի Հանրապետությունում կատարողական թերթի ինստիտուտից հրաժարման անհրաժեշտության մասին է վկայում նաև դատարանների գերծանրաբեռնվածության խնդիրը: Մասնավորապես, ներկայումս դատարանների կողմից տարեկան կտրվածքով տրվող կատարողական թերթերի քանակը գերազանցում է հարյուր հազարը, որոնք կազմելու համար ծախսված ժամանակի հանրագումարը բավարար է միայն այդ գործընթացով առնվազն հինգ դատավորի զբաղվածությունն ապահովելու համար: Հասկանալի է, որ այս իրավիճակն իր հերթին չի կարող ազդեցություն չունենալ դատարանների վարույթում գտնվող գործերի

քննության ժամկետների վրա՝ առնվազն ստեղծելով ողջամիտ ժամկետում գործի քննության երաշխիքի խախտման սպառնալիքներ: Հենց այս բոլոր հանգամանքների հաշվառմամբ ողջունելի է կատարողական թերթի փոխարեն համարժեք այլ լուծումների ներդրմանն ուղղված Արդարադատության նախարարության օրենսդրական նախաձեռնությունը, որի մշակման գործընթացին մասնակցություն են ունեցել նաև այս աշխատանքի հեղինակները²⁸:

Այսպիսով, կատարողական թերթի ինստիտուտի վերաբերյալ վերլուծությունների հիման վրա կարելի է անել հետևյալ եզրահանգումները.

1. Օրենսդիրը տարբերակված մոտեցում է ցուցաբերել հարկադիր կատարման ենթակա ակտերի կապակցությամբ, քանի որ անբողոքարկելի վարչական ակտերի և կատարողական մակագրության թերթի դեպքում կատարողական փաստաթուղթ է դիտարկել հենց այդ ակտերը, իսկ դատական ակտերի դեպքում նման դեր է վերապահվել դատական ակտի հիման վրա կազմված կատարողական թերթին:

2. Կատարողական թերթը, ըստ էության, հիմնականում կրկնում է այն տալու հիմք հանդիսացող դատական ակտի բովանդակությունը, և այդ առու-

մով կատարողական թերթի գործառնությունը սահմանափակվում է միայն դրա տրման հիմք հանդիսացող դատական ակտի օրինական ուժի մեջ մտած լինելու հավաստմամբ:

3. Կատարողական թերթի ինստիտուտը թե՛ բովանդակային, թե՛ ընթացակարգային առումով համահունչ չէ դատավարական խնայողության սկզբունքի էությանը և, ըստ այդմ, չի բավարարում հարկադիր կատարման իրավունքի՝ որպես դատական պաշտպանության իրավունքի անբաժանելի մասի նկատմամբ կիրառելի արդյունավետ լինելու պահանջը:

4. Հրատապ է կատարողական թերթի ինստիտուտից հրաժարվելու անհրաժեշտությունը, որի հիմքում, ի թիվս այլնի, դրված են դատական ակտերի՝ որպես անմիջականորեն կատարողական փաստաթուղթ հանդիսանալու միջազգային տարածում ունեցող մոտեցումը և դատարանների գերծանրաբեռնվածությունը կարգավորելու հրամայականը: Ընդ որում, նման փոփոխությունը պետք է ուղեկցվի օրենսդրական և տեխնիկական համարժեք և համապարփակ լուծումներով:

¹ Տե՛ս, օրինակ՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի Դի Պեդեն ընդդեմ Իտալիայի գործով 26.09.1996թ., Բուրդովն ընդդեմ Ռուսաստանի գործով 07.05.2002թ., Խաչատրյանն ընդդեմ Հայաստանի գործով 01.12.2009թ. վճիռները, Սահմանադրական դատարանի 24.11.2009թ. թիվ ՍԴ-Ռ-839 և 24.09.2013թ. թիվ ՍԴ-Ռ-1115 որոշումները:

² Տե՛ս, օրինակ՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի Իվանովն ընդդեմ Ուկրաինայի գործով 15.10.2009թ., Նիկողոսյանն ընդդեմ Հայաստանի գործով 18.05.2017թ., Ֆիդանյանն ընդդեմ Հայաստանի գործով 11.01.2018թ. և Խաչատրյանն ընդդեմ Հայաստանի գործով 01.12.2009թ. վճիռները:

³ Տե՛ս, Resolution No. 3 of the 24th Conference of European Ministers of Justice on “The implementation of judicial decisions in conformity with European standards”, 4 -5 October, 2001:

⁴ Ընդունվել է 05.05.1998թ.: Ուժի մեջ է մտել 01.01.1999թ.: Տե՛ս ՀՀՊՏ 1998.06.15/12(45):

⁵ Այս իրողության հաշվառմամբ Կառավարության 10.10.2019թ. «Հայաստանի Հանրապետության դատական և իրավական բարեփոխումների 2019-2023 թվականների ռազմավարությունը և դրանից բխող գործողությունների ծրագրերը հաստատելու մասին» թիվ 1441-Լ որոշման թիվ 3 հավելվածում մշակվելիք նոր օրենքի նախագծի համար ընտրվել է «Կատարողական վարույթի մասին» վերնագիրը:

⁶ Տե՛ս, Денисова Е.И. Спорные вопросы возбуждения исполнительного производства // Вестник Омского университета. Серия “Право”, 2008, С. 94.

⁷ Տե՛ս, օրինակ՝ Гуреев В.А., Гушин В.В. Исполнительное производство (4-е издание, исправленное и дополненное). - М.: Статут, 2014, С. 52-54, Чмырев С.Н., Губарева Т.И. Исполнительные документы и требования, предъявляемые к исполнительным документам // Вестник экономической безопасности, Право, 2016, Гнатко Е.А. Правовое регулирование исполнительных документов в Древней Руси и до судебной реформы 1864 года // Baikal Research

Journal, Право, 2016, Т 7, N 2, Гнатко Е.А. Недействительность исполнительных документов и основания признания их таковыми // Baikal Research Journal, Право, 2016, Т 7, N 6.

⁸ Ընդունվել է 18.02.2004թ.: Ուժի մեջ է մտել 31.12.2004թ.: Տե՛ս ՀՀՊՏ 2004.03.31/18(317) Հոդ.413:

⁹ Օրենքի 4-րդ հոդվածում օգտագործված «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 88-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջների պահպանմամբ ներկայացված դիմումը» արտահայտությունից թեև կարող է այլ տպավորություն ստեղծվել, սակայն անհրաժեշտ է ընդգծել, որ դրանում հիշատակված «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքում պահանջվում է հարկադիր կատարման ներկայացնել հենց անբողոքարկելի դարձած վարչական ակտը, իսկ ինչ վերաբերում է դիմումով այն ներկայացնելուն, ապա այս պահանջը վերաբերելի է մաս մյուս՝ կատարողական և կատարողական մակագրության թերթերի հարկադիր կատարման ներկայացմանը:

¹⁰ Ընդունվել է 05.07.1995թ.: 06.12.2015թ. շարադրվել է նոր խմբագրությամբ: Տե՛ս ՀՀՊՏ 2015.12.21/Հատուկ քողարկում Հոդ. 1118:

¹¹ Տե՛ս, Council of Europe Recommendation REC(2003)17 of the Committee of Ministers to Member States on Enforcement (adopted by the Committee of Ministers on 9 September 2003 at the 851st meeting of the Ministers' Deputies).

¹² Տե՛ս, Աղայան Է.Բ., Արդի հայերենի բացատրական բառարան: «Հայաստան» հրատ., Երևան, 1976, էջ 128, Սուքիասյան Ա.Մ., Հայոց լեզվի հոմանիշների բառարան: Հայկական ՍՍՀ Գիտությունների Ակադեմիայի հրատ., Երևան, 1967, էջ 94:

¹³ Տե՛ս, Մեղրյան Ս.Գ., Մարկոսյան Տ.Ա., Գեղամյան Է.Կ., «Պարտադիր» հակընդդեմ հայցի ինստիտուտի իրավական բնույթը և գոյաբանական հիմքերը քաղաքացիական դատավարությունում // «Արդարադատություն» գիտական հանդես, Երևան, 2020, 2 (51), էջ 9:

¹⁴ Ընդունվել է 09.07.2019թ.: Ուժի մեջ է մտել 04.08.2019թ.: Տե՛ս ՀՀՊՏ 2019.07.25/49(1502) Հոդ.642:

¹⁵ Տե՛ս, Սահմանադրական դատարանի 13.12.2016թ. թիվ ՍԴ-Ո-1330 որոշումը:

¹⁶ Հասանելի է հետևյալ հղումով՝ https://e-justice.europa.eu/content_procedures_for_enforcing_a_judgment-52-fr-en.do?member=1:

¹⁷ Տե՛ս, Code of Enforcement Procedure (հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.riigiteataja.ee/en/eli/ee/516092014002/consolide>):

¹⁸ Տե՛ս, The Finnish Enforcement Code (հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.finlex.fi/en/laki/kaannokset/2007/en20070705_20070987.pdf):

¹⁹ Տե՛ս, Law on Enforcement Procedure, հոդված 2912, (հասանելի է հետևյալ հղումով՝ https://arhiva.mpravde.gov.rs/images/Law%20on%20enforcement%20proceedings_180411.pdf):

²⁰ Տե՛ս, Enforcement Code (հասանելի է հետևյալ հղումով՝ <https://policehumanrightsresources.org/content/uploads/2016/08/Enforcement-Code-Sweden-1981.pdf?x68217>):

²¹ Հասանելի է հետևյալ հղումով՝ https://e-justice.europa.eu/content_procedures_for_enforcing_a_judgment-52-se-en.do?member=1:

²² Տե՛ս, Enforcement Code (հասանելի է հետևյալ հղումով՝ <https://policehumanrightsresources.org/content/uploads/2016/08/Enforcement-Code-Sweden-1981.pdf?x68217>):

²³ Հասանելի է հետևյալ հղումով՝ https://saplegal.gr/media/pdfs/Enforcement_of_Domestic_Judgments_on_Civil_and_Commercial_matters.pdf:

²⁴ Հասանելի է հետևյալ հղումով՝ https://is.muni.cz/el/1422/jaro2008/SOC026/um/99-1963_EN.pdf:

²⁵ Հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.gesetze-im-internet.de/englisch_zpo/englisch_zpo.html:

²⁶ Տե՛ս, Global Code of Enforcement, UIHJ Publication, 2015 (հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.uilhj.com/downloads/global-code-of-enforcement/#:~:text=The%20Global%20Code%20of%20Enforcement,major%20international%20organisations%20and%20institutions>):

²⁷ Տե՛ս, ALI / UNIDROIT Principles of Transnational Civil Procedure, 2006 The American Law Institute and UNIDROIT (հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.unidroit.org/instruments/civil-procedure/ali-unidroit-principles>):

²⁸ Տե՛ս, «Գատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի և հարակից օրենքների նախագծերի փաթեթը (հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.e-draft.am/projects/2900>):

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Աղայան Է.Բ., Արդի հայերենի բացատրական բառարան: «Հայաստան» հրատ., Երևան, 1976, 1615 էջ:
2. Մեղրյան Ս.Գ., Մարկոսյան Տ.Ա., Գեղամյան Է.Կ., «Պարտադիր» հակընդդեմ հայցի ինստիտուտի իրավական բնույթը և գոյաբանական հիմքերը քաղաքացիական դատավարությունում // «Արդարադատություն» գիտական հանդես, Երևան, 2020, 2 (51):
3. Սուքիասյան Ա.Մ., Հայոց լեզվի հոմանիշների բառարան: Հայկական ՍՍՀ Գիտությունների Ակադեմիայի հրատ., Երևան, 1967, 1242 էջ:
4. Гуреев В.А., Гушин В.В. Исполнительное производство. (4-е издание, исправленное и дополненное). - М.: Статут,

- 2014, 455 էջ:
5. Гнатко Е.А. Недействительность исполнительных документов и основания признания их таковыми // Baikal Research Journal, Право, 2016, Т 7, N 6 (հասանելի է հետևյալ հղումով՝ <https://cyberleninka.ru/article/n/nedeystvitel-nost-ispolnitelnyh-dokumentov-i-osnovaniya-priznaniya-ih-takovymi>):
 6. Гнатко Е.А. Правовое регулирование исполнительных документов в Древней Руси и до судебной реформы 1864 года // Baikal Research Journal, Право, 2016, Т 7, N 2 (հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.researchgate.net/publication/309273207_Pravovoe_regulirovanie_ispolnitelnyh_dokumentov_v_Drevnej_Rus_i_i_do_sudebnoj_reformy_1864_goda):
 7. Денисова Е.И. Спорные вопросы возбуждения исполнительного производства // Вестник Омского университета. Серия “Право”, 2008.
 8. Чмырев С.Н., Губарева Т.И. Исполнительные документы и требования, предъявляемые к исполнительным документам // Вестник экономической безопасности, Право, 2016.
 9. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի Դի Պեդեն ընդդեմ Իտալիայի գործով 26.09.1996թ. վճիռը:
 10. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի Բուրդովն ընդդեմ Ռուսաստանի գործով 07.05.2002թ. վճիռը:
 11. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի Իվանովն ընդդեմ Ուկրաինայի գործով 15.10.2009թ. վճիռը:
 12. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի Խաչատրյանն ընդդեմ Հայաստանի գործով 01.12.2009թ. վճիռը:
 13. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի Նիկողոսյանն ընդդեմ Հայաստանի գործով 18.05.2017թ. վճիռը:
 14. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի Ֆիդանյանն ընդդեմ Հայաստանի գործով 11.01.2018թ. վճիռը:
 15. Սահմանադրական դատարանի 24.11.2009թ. թիվ ՍԳՈ-839 որոշումը:
 16. Սահմանադրական դատարանի 24.09.2013թ. թիվ ՍԳՈ-1115 որոշումը:
 17. Սահմանադրական դատարանի 13.12.2016թ. թիվ ՍԳՈ-1330 որոշումը:
 18. Council of Europe Recommendation REC(2003)17 of the Committee of Ministers to Member States on Enforcement (adopted by the Committee of Ministers on 9 September 2003 at the 851st meeting of the Ministers’ Deputies):
 19. Resolution No. 3 of the 24th Conference of European Ministers of Justice on “The implementation of judicial decisions in conformity with European standards”, 4 -5 October, 2001.
 20. Global Code of Enforcement, UIHJ Publication, 2015 (հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.uilh.com/downloads/global-code-of-enforcement/#:~:text=The%20Global%20Code%20of%20Enforcement,major%20international%20organisations%20and%20institutions>).
 21. ALI / UNIDROIT Principles of Transnational Civil Procedure, 2006 The American Law Institute and UNIDROIT (հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.unidroit.org/instruments/civil-procedure/ali-unidroit-principles>):
 22. Civil Enforcement Proceedings Code of France, (հասանելի է հետևյալ հղումով՝ https://e-justice.europa.eu/content_procedures_for_enforcing_a_judgment-52-fr-en.do?member=1):
 23. Code of Enforcement Procedure of Estonia (հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.riigiteataja.ee/en/eli/ee/516092014002/consolide>).
 24. The Finnish Enforcement Code (հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.finlex.fi/en/laki/kaannokset/2007/en20070705_20070987.pdf).
 25. Law on Enforcement Procedure of Serbia (հասանելի է հետևյալ հղումով՝ https://arhiva.mpravde.gov.rs/images/Law%20on%20enforcement%20proceedings_180411.pdf).
 26. Enforcement Code of Sweden (հասանելի է հետևյալ հղումով՝ <https://policehumanrightsresources.org/content/uploads/2016/08/Enforcement-Code-Sweden-1981.pdf?x68217>).
 27. Civil Procedure Code of Greece (հասանելի է հետևյալ հղումով՝ https://saplegal.gr/media/pdfs/Enforcement_of_Domestic_Judgments_on_Civil_and_Commercial_matters.pdf).
 28. Civil Procedure Code of the Czech Republic (հասանելի է հետևյալ հղումով՝ https://is.muni.cz/el/1422/jaro2008/SOC026/um/99-1963_EN.pdf).
 29. Civil Procedure Code of Germany (հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.gesetze-im-internet.de/englisch_zpo/englisch_zpo.html).

Сергей Мегрян

Главный принудительный исполнитель РА,
доцент кафедры гражданского процесса юридического факультета ЕГУ,
кандидат юридических наук

Тигран Маркосян

Член государственной комиссии по защите
экономической конкуренции РА,
преподаватель-координатор консультационной службы
студентов юридического факультета ЕГУ,
кандидат юридических наук

РЕЗЮМЕ

Институт исполнительного листа в контексте права на эффективную судебную защиту

Среди предпосылок возбуждения исполнительного производства первостепенное место занимают исполнительные документы. В настоящей статье институт исполнительного листа анализируется в контексте отечественных и зарубежных теоретических источников, международных документов об исполнительном производстве, законодательства Республики Армения и других стран, правовых позиций ЕСПЧ, Конституционного суда РА, базируясь на принципе процессуальной экономии и необходимости уменьшения нагрузки судов. В результате авторы делают вывод о том, что институт исполнительного листа с точки зрения содержания и процедуры не соответствует применимым к праву на принудительное исполнение судебного акта требованиям эффективности, в частности принципу процессуальной экономии. Авторы предлагают отказаться от института исполнительного листа с применением соответствующих законодательных и технических средств, рассматривая непосредственно судебный акт в качестве исполнительного документа.

Ключевые слова: акт подлежащий принудительному исполнению, исполнительный лист, исполнительный документ, право на судебную защиту, эффективность исполнительного производства, судебная экономия.

Sergey Meghryan

Chief Compulsory Enforcement Officer of the Republic of Armenia,
Associate Professor of the Chair of Civil Procedure YSU Faculty of Law,
Candidate of Law

Tigran Markosyan

Member of the State Commission for the Protection
of Economic Competition of the Republic of Armenia,
Lecturer-Coordinator at Student Law Counselor Center, YSU,
Candidate of Law

SUMMARY

Institute of the writ of execution in the context of the right to effective judicial protection

Among the prerequisites for initiating enforcement proceedings, executive documents are of paramount importance. The institute of the writ of execution is analyzed in this scientific paper in the context of domestic and foreign theoretical sources, international documents on enforcement procedure, procedural laws of the Republic of Armenia and other states, the legal positions of the ECHR, the Constitutional court of the RA; putting in the centre of the research the principle of procedural economy and the imperative to reduce the court overload as well. In the result, the authors conclude that the institute of the writ of execution in terms of content and procedure does not comply with efficiency requirement applicable to the right to enforcement of the judicial acts, in particular the principle of procedural economy. Authors suggest renouncing the institute of a writ of execution with the use of reciprocal legislative and technical means; in case of the judicial acts, considering directly a judicial act as an enforceable document.

Key words: act subject to compulsory enforcement, writ of execution, enforceable title, right to judicial protection, effectiveness of the enforcement procedure, judicial economy.

Բնագիրը ներկայացվել է 01.02.2021թ.

Ընդունվել է տպագրության 09.02.2021թ.

Հոդվածը երաշխավորել է տպագրության (գրախոսել է)

իրավաբանական գիտությունների թեկնածու Վ. Դավաթյանը

ՎԱՋԵ ԹՈՐՈՍՅԱՆ

Եվրոպական համալսարանի իրավագիտության
ամբիոնի դասախոս,
իրավաբանական գիտությունների թեկնածու

ԱՇԽԱՐՀԻԿ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԻՄԱՍՏԱՎՈՐՈՒՄԸ ԼՈՒՍԱՎՈՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԲԱՆՆԵՐԻ ԻՐԱՎԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՅԱՅՔՆԵՐՈՒՄ

Աշխարհիկ պետության ֆենոմենի բացահայտումը, անտիկ շրջանից սկսած, զբաղեցնում է իրավա-
քաղաքական մտքի տեսաբանների և հետազոտողների ուշադրությունը: Ուշագրավ է, որ պետության և
եկեղեցու տարանջատման գաղափարը իրավունքի ուժ ստացավ լուսավորականության շրջանում առաջ
եկած իրավական փաստաթղթերում: Վերջինիս անհրաժեշտությունը հասունացավ կրոնական այլակար-
ծության, խղճի ազատության իրավունքի սահմանման, պետանկեղեցական հարաբերությունների հստա-
կեցման խնդիրների ազդեցության ներքո:

Հոդվածում առավելապես քննարկվում են անգլիական լուսավորիչների տեսական-իրավական հա-
յաքները, որոնք չափազանց մեծ դեր կատարեցին պետության և եկեղեցու առանձնացման գաղափարի
իմաստավորման, ապա նաև դրա լեզու ամրագրման գործում: Հոդվածում օգտագործել ենք պատմական
տրամաբանական, դիալեկտիկական մատերիալիզմի, անալիզի և սինթեզի գիտական մեթոդները:

Հիմնաբառեր- աշխարհիկ պետություն, պետության և եկեղեցու տարանջատում, խղճի ազատության
իրավունք, իրավաքաղաքական միտք:

Լուսավորականությունը՝ որպես քաղաքական
և փիլիսոփայական ուղղություն, ի հայտ է եկել 17-
րդ դարում՝ Անգլիայում, դասական կերպ է ստացել
Ֆրանսիայում, այնուհետև լայն տարածում է գտել
նաև այլ երկրներում: Լուսավորականության դա-
րաշրջանի հիմնական գծերից էր գիտելիքի և գի-
տության կարևորությունը, բանականության պայ-
քարը կրոնական նախապաշարվածության դեմ,
սոցիալ-քաղաքական հին կարգերի քննադատու-
թյունը, պետության առաջացման պայմանագրա-
յին (հասարակական դաշինքի) տեսության առա-
ջադրումը և այլն: Լուսավորիչները հանդես գալով
որպես ֆեոդալական դասակարգային հասարա-
կության քննադատներ՝ ըստ էության հավատարիմ
մնացին սեփական բուրժուական դասակարգային
շահերին¹:

Ահա այս պատմական շրջանում էլ վերստին
արժևորվեցին աշխարհիկ պետության գաղափարի
վերաբերյալ քննարկումները: Պետության և եկեղե-
ցու իրավահարաբերությունների օպտիմալ ձևաչա-
փի ընտրությունը նորից կանգ առավ երկու հիմնա-
կան մոտեցումների վրա՝

*ա) եկեղեցու լիակատար ենթակայությունը
պետական իշխանությանը,*

բ) պետության և եկեղեցու առանձնացումը:
Ընդ որում՝ եկեղեցու ինքնավարության ընդդիմա-
խոսները ամենևին չէին վիճարկում համոզմունքնե-
րը, այդ թվում՝ դավանանքի ազատության իրա-
վունքը, որպես մարդու բնական իրավունքի անբա-

ժանելի բաղադրատարր: Այս շրջանում առավել
ընդգծվեց պետական իշխանությունը՝ աստվածա-
յին արարչությունից դեպի մարդկային սահմանում
որակելու ռացիոնալիստական ըմբռնումը:

Անգլիացի նշանավոր մտածող Թոմաս Հոբսը
պետանկեղեցական հարաբերությունները մեկնա-
բանում էր պետության բացարձակացման և էտա-
տիստական մոտեցումների դիրքերից: Նա պա-
հանջում էր դպրոցն անջատել եկեղեցուց և կրթա-
կան համակարգը դնել աշխարհիկ հիմքերի վրա:
Ըստ Հոբսի՝ եկեղեցին պետք է դրվի պետության են-
թակայության ներքո, իսկ պետության առաջնորդը
պետք է լինի նաև հոգևոր առաջնորդ, հակառակ
պարագայում. «... խոշորություն և քաղաքացիա-
կան պատերազմ կառաջանա պետության և եկեղե-
ցու, հոգևոր և աշխարհիկ իշխանությունների կողմ-
նակիցների, արդարադատության սրի և հավատի
վահանի միջև ... »²: Հատկանշական է, որ պետու-
թյան ղեկավարը (քաղաքացիական ինքնիշխան)
կարող է իր հայեցողությամբ հոգևոր ոլորտի կառա-
վարումը վերապահել որևէ բարձրաստիճան
հոգևորականի, ինչպես նաև հոգևոր դասի համար
սահմանել եկամտի աղբյուրներ, նրանց հանձնել
պատվավոր կոչումներ և այլն: Ինչ վերաբերում է
կրոնին, ապա, ըստ Հոբսի՝ այն զանգվածային
հնազանդության միջոց է, և ցանկալի կլինի, որ պե-
տությունը այդպիսի որևէ մի կրոն ճանաչի պետա-
կան կամ պաշտոնական:

Խղճի ազատության իրավունքի ջատագովե-

րից էր հումանիստական-ռացիոնալիստական ուղղության վառ ներկայացուցիչ Բարուխ Սպինոզան: Ըստ նրա՝ պետության առաքելությունը կայանում է մարդկանց վախից ազատագրելու և նրանց բնական իրավունքները ճանաչելու և պաշտպանելու մեջ, որպեսզի յուրաքանչյուր ոք առանց թշնամանք հարուցելու ազատորեն արտահայտի իր միտքը: Մտքի, խղճի ազատությունը, սերը, ասելությունը և մարդու էությանը բնորոշ այլ կենսական հակումներ դուրս են պետության միջատմության տիրույթից: Չարգացնելով իր ազատամտական հայացքները՝ Սպինոզան Աստվածաբանական-քաղաքական տրակտատում գրում է. «Պետության համար չկա ոչինչ ավելի անվտանգ, քան այն, որ աստվածապաշտությունը և կրոնը սահմանափակվի միայն սիրով և արդարությամբ ... որպեսզի յուրաքանչյուրին բույլատրվի մտածել այն ինչ ցանկանում է և ասել այն, ինչ մտածում է՝»³: Սպինոզան սուր քննադատության էր ենթարկում կրեացիոնիզմի գաղափարը և եկեղեցին դնում պետության լիակատար ենթակայության տակ՝ ընդգծելով այն հանգամանքը, որ եկեղեցու ինքնուրույնությունը և պետությունից առանձնացումը հակասում է բարձրագույն իշխանության միասնականության և անբաժանելիության սկզբունքին⁴:

Պետության և եկեղեցու հարաբերակցության նախընտրելի ձևաչափի առաջադրման հարցում Հոբսից և Սպինոզայից տարբերվող դիրքորոշում ուներ անգլիացի լուսավորիչ, փիլիսոփա Ջոն Լոկկը: Նրա կարծիքով՝ եկեղեցին ազատ և կամավոր հիմունքներով միավորված մարդկանց հանրույթ է՝ Աստծո պատվին արժանանալու համար, իսկ պետությունը՝ քաղաքացիական բարիքների պահպանման և մարդու հիմնարար իրավունքների ապահովման նպատակով մարդկանց միավորում, հետևաբար՝ *միայնառնել այս երկու տարրեր ծագում, նպատակ և գործառույթ ունեցող երևույթները մույն է, քե՛ն՝ համակցել այնպիսի անհամատեղելի երևույթներ, ինչպիսիք են՝ երկիրն ու երկինքը*⁵: Այս տեսանկյունից Լոկկը արդարացնում էր պետության և եկեղեցու առանձնացման գաղափարը: Հատկանշական է, որ Լոկկի իրավահավասարության ընկալումը հենվում է արարչագործության գաղափարի վրա և արտահայտվում նրանով, որ բոլոր մարդիկ մեկ իմաստուն Արարչի ստեղծման արդյունք են և նրանց միջև չկա որևէ սուբորդինացիա:

Ըստ Լոկկի, անհանդուրժողականության հիմնական պատճառը եկեղեցու իշխելու տենչն է, որին վերջ տալու համար հարկավոր է սահմանազատել աշխարհիկ և հոգևոր ոլորտները, մասնավորապես՝

պետությունն ու եկեղեցին: Հակառակ պարագայում, *եթե դա տեղի չունենա, ապա անհնար կլինի սահմանափակել այն մարդկանց միջև առկա վեճերը, որոնց համար հոգու փրկությունը և պետության շահը կամ իսկապես շատ քանկ է, կամ բնորոշվում է որպես այդպիսին*⁶: Լոկկը, լինելով հանդուրժողականության ջերմ կողմնակից, այդ հարցում բացառություն էր անում կաթոլիկներին և աթեիստներին և, առհասարակ, կրոնական մոլեռանդներին: «Պապականները, - Լոկկի բնորոշմամբ, - վտանգ են ներկայացնում պետական իշխանության գոյությանը, հետևաբար չպետք է օգտվեն հանդուրժողականության բարիքից»⁷:

Հատկանշական է նաև այն փաստը, որ Լոկկը ոչ միայն տարանջատում է պետությունն ու եկեղեցին, այլև կրոնական և քաղաքացիական օրենքները՝ ընդգծելով, որ *այն ինչ բույլատրվում է պետության կողմից, չի կարող արգելել եկեղեցին*⁸:

Աշխարհիկ պետության հայեցակարգի տեսական զարգացմանը մեծապես նպաստեցին անգլիական բուրժուազիայի շահերը արտահայտող ինդեպենդենտների (Ջ.Միլթոն, Ջ.Հարինգթոն) և լեվելերների (Ջ. Լիբերտ, Ռ. Օվերտոն) պուրիտանական ակունքներ ունեցող կրոնաքաղաքական հոսանքները, որոնց ներկայացուցիչները, տարանջատելով բնական և դրական իրավունքները, բնական իրավունքին վերապահելով առաջնային կարգավիճակ՝ բարձրացրեցին մարդկանց բնական իրավունքների ապահովման խնդիրը՝ միաժամանակ համարձակ դատողություններ հնչեցնելով պետության և եկեղեցու անջատման, դավանանքի ազատության և կրոնական համայնքների անկախության անհրաժեշտության վերաբերյալ: Դրանցից թերևս ամենանշանավորը Ջոն Միլթոնն էր, որը անգլիական պառլամենտին ուղղված Արեռապագիտիկա հռետորական տրակտատում իր բողոքի ձայնն էր բարձրացնում գրաքննության օրենքի դեմ:

Ուշագրավ է այն, որ Միլթոնը ազատության՝ որպես կենսական արժեքի բարձրագույն ձևը համարում էր մտքի և խղճի ազատությունը և ընդգծում, որ *ազատությունը բոլոր մեծ տաղանդների բուժքույրն է*. «...այն վերևից ներթափանցելով մաքրեց և լուսավորեց մեր հոգիները ... ուրեմն տվեք ինձ ազատություններից բարձրագույնը՝ ազատությունը ճանաչելու, ազատությունը սեփական մտքերն արտահայտելու, և սեփական խղճով դատելու ազատությունը»⁹:

Այս դատողությունից հետո շուրջ կես հարյուրամյակ պահաջվեց Անգլիայում գրաքննության մասին օրենքի չեղարկման համար: Ի վերջո,

ազատ ապրելու մարդկային ձգտումը և անկաշկանդ մտածելու, մտքերն արտահայտելու ողջամիտ պահանջը ստացավ արժանի իրավական գնահատական: 1687թ. «Հանդուրժողականության մասին դաշնագրով» ապա 1689թ. անգլիական, Փառահեղ հեղափոխության ծնունդ հանդիսացող՝ Կրոնի հանդուրժողականության մասին ակտով՝ կաթոլիկ չհանդիսացող կրոնական համայնքներին շնորհվեց դավանանքի ազատության իրավունք, այդ թվում՝ սեփական աղոթատուն ունենալու և ազատորեն պաշտամունքի արարողություններ իրականացնելու հնարավորություն¹⁰:

Հակված չլինելով գերագնահատել հիշյալ իրավական ակտերի դերը՝ այնուամենայնիվ փաստենք, որ դրանք իսկապես քաջալերեցին խղճի և

դավանանքի ազատության իրավական բովանդակության արժևորման գործընթացը՝ կանխորոշելով նաև մարդու հիմնական իրավունքների և ազատությունների սահմանների ընդլայնումը և դրանց հետագա ամբողջացումը: Լուսավորականության դարաշրջանի մտածողները, լայն ազատախոսության հենքի վրա խարսխելով իրենց համոզմունքները, նպաստեցին աշխարհիկ և հոգևոր ոլորտների՝ պետության և եկեղեցու, ինչպես նաև դրանց մեծապես առնչվող խղճի և դավանանքի ազատության իրավական ամրագրմանը:

¹ «Լուսավորականություն» տերմինը առաջին անգամ գործածվել է Վոլտերի և Հերդենի կողմից: Տե՛ս Գ.Ա. Մելքումյան, Լուսավորականությունը որպես պատմա-մշակութային երևույթ, «Բանբեր Երևանի համալսարանի», 3 (84), Եր., 1994թ., էջեր 13-21:

² Տե՛ս, Դ. Գոբբե, Левиафан, Москва: Мысль, 2001, С. 316-317.

³ Տե՛ս, Բ. Спиноза, Богословско-политический трактат / Пер. с лат. М.М. Лопаткина, С.М. Роговина, Б.В. Чредина, М.: Академический проект, 2015, С. 226.

⁴ Տե՛ս, նույն տեղում, էջեր 209-218:

⁵ Տե՛ս, Դ. Լոք, Послание о веротерпимости. Сочинения в трех томах: Т. 3, М.: 1988, С. 103.

⁶ Տե՛ս, նույն տեղում, էջ 9:

⁷ Տե՛ս, Դ. Լոք, Опыт о веротерпимости, Сочинения в 3 т.- пер. с англ. и лат. Т. 3, ред. и сост., авт. примеч. А. Л. Субботин. М.: Мысль, 1988, С. 81.

⁸ Տե՛ս, Դ. Լոք, Послание о веротерпимости. Сочинения в трех томах: Т. 3, М.: 1988, С. 114.

⁹ Տե՛ս, J. Milton, Areopagitica, with a Commentary by Sir Richard C. Jebb and with Supplementary Material, Cambridge at the University Press, 1918, P. 56-57.

¹⁰ Տե՛ս, R. Sandberg, Law and Religion, Cambridge University Press, 2011, P. 23-28.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՅԱՆԿ

1. Գ.Ա. Մելքումյան, Լուսավորականությունը որպես պատմա-մշակութային երևույթ, «Բանբեր Երևանի համալսարանի», 3 (84), Եր., 1994թ.

2. Դ. Գոբբե, Левиафан, Москва: Мысль, 2001

3. Բ. Спиноза, Богословско-политический трактат / Пер. с лат. М.М. Лопаткина, С.М. Роговина, Б.В. Чредина, М.: Академический проект, 2015.

4. Դ. Լոք, Послание о веротерпимости. Сочинения в трех томах: Т. 3, М.: 1988.

5. Դ. Լոք, Опыт о веротерпимости, Сочинения в 3 т.- пер. с англ. и лат. Т. 3, ред. и сост., авт. примеч. А. Л. Субботин. М.: Мысль, 1988.

6. J. Milton, Areopagitica, with a Commentary by Sir Richard C. Jebb and with Supplementary Material, Cambridge at the University Press, 1918.

7. R. Sandberg, Law and Religion, Cambridge University Press, 2011.

Vahe Torosyan
Преподаватель юридического факультета
Европейского университета,
кандидат юридических наук

РЕЗЮМЕ

Понимание светского государства в правовых и политических взглядах теоретиков Просвещения

Открытие феномена светского государства с древних времен привлекало внимание теоретиков и исследователей легально-политической мысли. Примечательно, что идея разделения государства и церкви приобрела силу закона в юридических документах, появившихся во времена Просвещения. Потребность последнего созрела под влиянием религиозного инакомыслия, определения права на свободу совести и выяснения государственно-церковных отношений. В статье в основном обсуждаются теоретические и правовые взгляды английского Просвещения, которые сыграли очень важную роль в понимании идеи разделения государства и церкви, а затем и в ее юридической фиксации. В статье мы использовали научные методы историко-логического, диалектического материализма, анализа и синтеза.

Ключевые слова: светское государство, разделение государства и церкви, право на свободу совести, правовая и политическая мысль.

Vahe Torosyan
Lecturer of the Department of
Law at European University
PhD in Law

SUMMARY

The meaning of the secular state in the legal-political views of the theorists of the Enlightenment

The discovery of the phenomenon of the secular state has attracted the attention of theorists and researchers of legal-political thought since ancient times. It is noteworthy that the idea of separating the state and the church gained the force of law in the legal documents that emerged during the Enlightenment. The latter's need matured under the influence of religious dissent, the definition of the right to freedom of conscience, and the clarification of state-church relations. The article mainly discusses the theoretical and legal views of the English Enlightenment, which played a very important role in the understanding of the idea of the separation of the state and the church, and then in its legal fixation. In this article we have used the scientific methods of historical and logical, dialectical materialism, analysis and synthesis.

Key words: secular state, separation of state and church, right to freedom of conscience, legal and political thought.

Բնագիրը ներկայացվել է 18.01.2021թ.
Ընդունվել է տպագրության 09.02.2021թ.
Հոդվածը երաշխավորել է տպագրության (գրախոսել է)
իրավաբանական գիտությունների թեկնածու Կ. Հակոբյանը

ԳԱՐԻԿ ԶԵՆՅԱՆ

ԵՊՀ քաղաքական ինստիտուտների և
գործընթացների ամբիոնի վարիչ,
քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ՆՎԵՐ ԿՈՍՏԱՆՅԱՆ

ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի
քաղաքագիտության բաժնի բակալավր

ԸՆՏՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՁԵՎԵՐԸ

Ընտրությունների ֆենոմենը ուսումնասիրության առարկա է ոչ միայն քաղաքագիտության, այլ նաև իրավագիտության և այլ հասարակական գիտությունների համար: Այս համատեքստում շատ կարևոր են նաև ընտրական իրավունքի հայեցակարգը և դրա սկզբունքները: Մյուսն ալն հիմնական թեմաներն են, որոնք փորձել ենք դիտարկել այս հոդվածում:

Հիմնաբառեր – ընտրություններ, քվեարկություն, ընտրական իրավունքի ձևեր, ընտրական իրավունքի սկզբունքներ:

Ընտրությունները ժողովրդավարական իշխանության ձևավորման համար ունեն առանցքային նշանակություն: Այս երևույթն ուսումնասիրության առարկա է ոչ միայն քաղաքագիտության, այլև՝ հասարակական այլ գիտությունների, մասնավորապես իրավագիտության համար: Ընտրությունների պարբերական անցկացումը և իշխանությունների ձևավորման գործում դրանց դերի բացառիկությունը ամրագրված են ժողովրդավարական պետությունների սահմանադրաիրավական փաստաթղթերում: Այս տեսանկյունից կարևոր նշանակություն ունի տվյալ պետության քաղաքացիների՝ իշխանության ձևավորմանը մասնակցելու հնարավորության իրացման, այսինքն՝ ընտրական իրավունքի իրավական ամրագրումը, նրանց սկզբունքների և ձևերի վերհանումը: Իրավաբանական գրականության մեջ «ընտրություն» հասկացությունը մեկնաբանվում է որպես **իշխանության համապատասխան մարմնի կազմավորման կամ պաշտոնատար անձին լիազորություններով օժտելու գործընթաց**, որն իրականացվում է իրավագործ անձանց քվեարկության միջոցով: Ընտրությունների միջոցով են կազմավորվում պետությունների օրենսդիր մարմինները՝ խորհրդարանները, տեղական ինքնակառավարման մարմինները, որոշ երկրներում նաև դատական իշխանության մարմինները: Կախված կառավարման համակարգից՝ որոշ երկրներում պետության գլուխը ևս պաշտոնը ստանձնում է ուղղակի ընտրությունների միջոցով: Ընտրությունների միջոցով քաղաքացիները իրականացնում են իրենց կարևորագույն քաղաքական իրավունքներից մեկը՝ որոշում իրենց ներկայացուցիչներին հա-

մապատասխան ընտրովի մարմնում և օժտում նրանց իրենց անունից իշխանության իրականացման մանդատով՝ սահմանադրաիրավական նորմերով նախատեսված շրջանակներում: Եթե «ընտրություն» եզրույթը, ինչպես արդեն նշեցինք, մեկնաբանվում է որպես իշխանության որևէ մարմնի կազմավորում քվեարկության միջոցով և այս առումով հատուկ պարզաբանման կարիք չունի, ապա «ընտրական իրավունք» հասկացությունը, որպես կանոն, օգտագործվում է երկու իմաստով՝ սուբյեկտիվ և օբյեկտիվ:

Սուբյեկտիվ իմաստով ընտրական իրավունքը քաղաքացուն տրված հնարավորությունն է, մասնակցելու պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կազմավորմանը, որոշումների ընդունմանը՝ ընտրելու (ակտիվ ընտրական իրավունք) և ընտրվելու (պասիվ ընտրական իրավունք) միջոցով: Սուբյեկտիվ ընտրական իրավունքը քաղաքացու կոնկրետ իրավունքների համակարգ է, որի միջոցով առանձնանում է ակտիվ և պասիվ ընտրական իրավունքը: Ակտիվ ընտրական իրավունքն անվանում են նաև ձայնի իրավունք կամ ընդհանուր ընտրական իրավունք: Պասիվ ընտրական իրավունքը ենթադրում է ընտրություններում իր թեկնածությունն առաջադրելու իրավունքը կամ առաջադրվելու համաձայնություն տալու իրավունքը: Այսպիսով՝ սուբյեկտիվ իմաստով «ընտրական իրավունք» հասկացությունն ընդգրկում է ինչպես ընտրելու, այնպես էլ՝ ընտրվելու իրավունքը:

Օբյեկտիվ իմաստով ընտրական իրավունքը այնպիսի իրավական նորմերի համակարգ է, որը

կարգավորում է պետության մեջ ընտրովի մարմինների կազմավորման վերաբերյալ հասարակական հարաբերությունները: Այսպիսով, ընտրական իրավունքը (սուբյեկտիվ և օբյեկտիվ իմաստով) որպես ընտրություն հասկացության առանցքային բաղադրատարրերից մեկը, ինչպես նաև սահմանադրահրավական նորմերի ամբողջություն, կարգավորում է այնպիսի հասարակական հարաբերություններ, որոնք առաջանում են պետական ու տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների, ինչպես նաև անմիջական ժողովրդակառնության իրացման այլ գործընթացների (հանրաքվե, ժողովրդական նախաձեռնություն) ընթացքում¹:

Ինչպես նշեցինք, ընտրական իրավունքի ձևերը քաղաքագիտական և իրավաբանական գրականության մեջ, առավել ընդհանրական կերպով, լինում են երկու տեսակի՝ ակտիվ և պասիվ: Այժմ առավել խորքային անդրադառնալով դրանցից յուրաքանչյուրին:

Ակտիվ ընտրական իրավունքը իրենից ենթադրում է ընտրություններին քաղաքացու մասնակցելու և իր ձայնը այս կամ այն քաղաքական կուսակցությանը կամ թեկնածուին տալու իրավունքը: Այլ կերպ ասած՝ իր կամքը որպես քաղաքացի տվյալ քաղաքական ուժին դեղեգացնելու իրավունքի մասին է խոսքը: Պատմական տարբեր ժամանակահատվածներում գոյություն են ունեցել ակտիվ ընտրական իրավունքի տարբեր սահմանափակումներ: Օրինակ՝ գոյություն են ունեցել գույքային, տարիքային, սեռային և կրոնական սահմանափակումներ: Մինչև 19-րդ դարի կեսերը ընտրություններին հիմնականում մասնակցում էին որոշակի սոցիալական դիրք (ստատուս) ունեցող, հիմնականում արական սեռի մարդիկ, որոնք տիրապետում էին նաև որոշակի գույքի: Ներկայացվող հիմնավորումը կայանում էր նրանում, որ այդպիսի մարդիկ ավելի շահագրգռված են քաղաքականության մեջ մասնակցություն ունենալ: Մեռային սահմանափակումն առաջինը վերացվել է Նոր Զելանդիայում 1893 թվականին²: Գործընթացն այս շարունակվել է ակտիվորեն ընթանալ ամբողջ աշխարհում 20-րդ դարի 20-ական թվականներից: Շատ երկրներում գործում է ակտիվ ընտրական իրավունքի սահմանափակման այսպես կոչված բարոյականության գեները, որոշ երկրներում թմրամոլները, մայրությունից զրկված կանայք կամ դատարանի կողմից ազատազրկման դատապարտված մարդիկ իրավունք չունեն մասնակցելու ընտրական գործընթացներին: ՀՀ ընտրական օրենսգրքում, օրինակ, նմանատիպ սահմանափակումներ են նախատեսված դիտավորությանը ծանր և առանձնապես

ծանր հանցանքներ գործած և դատարանի՝ ուժի մեջ մտած վճռով պատիժը կրող անձանց, ինչպես նաև դատարանի՝ ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչված անձանց համար³: Ներկայումս ակտիվ ընտրական իրավունքի հիմնական սահմանափակումը տարիքային ցենզն է:

Բացի ընտրություններին մասնակցելու **իրավունքից** (ակտիվ ընտրական իրավունք), որն այժմ կիրառվում է պետությունների մեծ մասում՝ ՀՀ, ՌԴ, ԱՄՆ, Ֆրանսիա և այլն, գոյություն ունի նաև ընտրություններին մասնակցելու **պարտականություն**. այսինքն՝ քաղաքացին, ով ունի ընտրական իրավունք, պարտավոր է մասնակցել ներկայացուցչական մարմինների ձևավորմանը՝ ընտրությունների միջոցով: Այլ կերպ ասած՝ ընտրություններին մասնակցելը կարող է կրել ոչ միայն կամավոր, այլև ստիպողական բնույթ: Ընտրություններին մասնակցությունը որպես պարտականություն ներկայումս գոյություն ունի Ավստրալիայում, Բելգիայում, Հունաստանում, Բրազիլիայում, Կիպրոսում: Այս երկրներն ունեն ընտրություններին մասնակցության ամենաբարձր ցուցանիշները: Ավստրալիայում Երկրորդ աշխարհամարտից հետո ընտրություններին մասնակցել են ընտրողների 95.4 %-ը, իսկ Նիդերլանդներում, որտեղ ստիպողական մասնակցությունը վերացվել է 1967թ-ին՝ 83.5 %⁴: Ընդ որում՝ այս երկրներում ընտրություններին չմասնակցելը կարող է հանգեցնել քաղաքացու նկատմամբ պատժի կիրառման (տուգանք կամ որոշ իրավունքներից զրկում):

Ընտրություններին մասնակցությունը որպես համապարտադիր նորմ սահմանելը, մեր կարծիքով, կարող է ունենալ և՛ դրական, և՛ բացասական հետևանքներ: Հաշվի առնելով այն փաստը, որ ներկայումս ընտրություններին մասնակցության ցուցանիշը նույնիսկ ամենաժողովրդավարական պետություններում բավականին ցածր է, օրինակ՝ Մեծ Բրիտանիայում՝ 36-39%⁵, պարտադիր մասնակցությունը կարող է դրական ազդեցություն ունենալ մասնակցայնության ցուցանիշների աճի առումով, ինչը կապահովի հասարակության լայն շերտերի կամքի արտահայտումը պետական իշխանության ձևավորման հարցում: Այդուհանդերձ, պարտադիր մասնակցության նորմի ամրագրումը բավականին հակասական և խնդրահարույց կարող է ընկալվել: Այս առումով, պակասում է ընտրողների սեփական հետաքրքրությունը ընտրության գործընթացի նկատմամբ, և այն կարող է ստանալ զուտ ձևական բնույթ: Վերջինս, նաև ուղղակիորեն, հակասում է ընտրությունների կամավորության հիմնարար սկզբունքին, և հարց է, թե որքանով ձևավորված իշխանությունը կլինի լեգիտիմ: Սա մնում է սահմանադ-

րական և ընտրական իրավունքի շրջանակներում բուռն քննարկումների և ակադեմիական բանավեճերի առարկա և այս հարցի վերաբերյալ տեսակետները հակասական են :

Պասիվ ընտրական իրավունքը քաղաքացուն տրված հնարավորությունն է՝ ընտրվելու պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում, ինչպես նաև անձի իրավունքն է՝ որպես թեկնածու գրանցվելու, այլ թեկնածուների հետ համահավասար նախընտրական քարոզչություն անցկացնելու, թեկնածուի՝ օրենքով վերապահված մյուս բոլոր իրավունքներից օգտվելու: Սովորաբար ակտիվ ընտրական իրավունքով անձինք օժտվում են ավելի վաղ տարիքում, քան պասիվ ընտրական իրավունքի դեպքում: Պասիվ ընտրական իրավունքից օգտվելու համար անհրաժեշտ է, որ անձն ունենա ակտիվ ընտրական իրավունք :

Ընտրական իրավունքի ձևերից բացի գործում են նաև ընտրական իրավունքի մի շարք սկզբունքներ: Իրավունքի սկզբունքներն այն առաջնային, ելակետային դրույթներն են, որոնց վրա հիմնվում և որոնցով ներթափանցված է տվյալ իրավական համակարգը:

Ընտրական իրավունքի սկզբունքներն ասելով՝ նկատի ունենք այն պայմանները, որոնց պահպանումը և կիրարկումը ընտրությունների ժամանակ թույլ է տալիս դրանք որակել՝ որպես ժողովրդավարական չափանիշներին համապատասխան: Հիմնականում առանձնացվում են ընտրական իրավունքի 4 սկզբունքներ. դրանք են՝ *համընդհանրության սկզբունքը, ուղղակիության սկզբունքը, գաղտնիության սկզբունքը, հավասարության սկզբունքը*: Երբեմն նշվում են նաև այլ սկզբունքներ, օրինակ՝ հրապարակայնությունը, ազատությունը, ինչպես նաև սեռական, ռասայական, սոցիալական, կրոնական, էթնիկական կամ այլ պատկանելության և տնտեսական բնույթի՝ գույքային ցենզի հիմքի վրա առկա լուրջ սահմանափակումների բացակայություն:

Համընդհանրության սկզբունքի էությունն այն է, որ պետությունը բոլոր ազատ և գործունակ քաղաքացիներին ընտրական իրավունք է վերապահում:

Ուղղակիության սկզբունքը ենթադրում է՝ բոլոր քաղաքացիների անմիջականորեն ընտրելու կամ ընտրվելու իրավունքի և դրա իրացման պայմանների առկայությունը:

Գաղտնիության սկզբունքը ենթադրում է՝ քաղաքացիների կամարտահայտության վրա կողմնակի հսկողության բացառում:

Հավասարության սկզբունքը ենթադրում է, որ՝ յուրաքանչյուր ընտրող օժտված է հավասար ընտ-

րական ձայնի իրավունքով, որի դեպքում գործում է «1 ընտրող = 1 ձայն» բանաձևը, և որևէ քաղաքացու ձայնը չի կարող ավելի մեծ ազդեցություն ունենալ ընտրության արդյունքների վրա: Այլ կերպ ասած՝ հավասարության սկզբունքի կիրառմամբ բացառվում է քվեի որակական բաղադրատարրի առաջնային շեշտադրման հնարավոր հեռանկարը, և վճռորոշ գործոնը քվեների քանակական արտահայտությանն է թողնվում:

Ժողովրդավարական ընտրությունների անցկացման բավականին հետաքրքիր և ծանրակշիռ 7 չափանիշներ է առաջարկում **Գ. Բատլերը**.

1. Բոլոր չափահաս քաղաքացիները ունեն ձայնի իրավունք:

2. Ընտրությունները անցկացվում են պարբերաբար՝ համապատասխան ժամանակային ինտերվալով:

3. Խորհրդարանական բոլոր տեղերը պիտի լինեն ընտրովի՝ որպես կանոն մրցակցային ընտրությունների միջոցով:

4. Բնակչության որևէ նշանակալի խումբ չպիտի զրկվի կուսակցություններ ձևավորելու և թեկնածուներ առաջադրելու իրավունքից:

5. Ընտրական գործընթացը պիտի լինի արդար: Օրենքով, բռնությունը կամ այլ միջամտություն չպիտի արգելեն թեկնածուներին արտահայտելու սեփական տեսակետը կամ այլ ընտրողներին՝ քննարկել այն:

6. Չայները պիտի տրվեն ազատ, փակ, գաղտնի քվեարկության միջոցով, հաշվարկվեն ազնիվ և փոխարկվեն խորհրդարանական տեղերի՝ օրենքով սահմանված կարգով:

7. Ընտրված պաշտոնատար անձը պիտի ստանձնի պաշտոնը և զբաղեցնի այն մինչև սահմանված ժամկետի ավարտը կամ հաջորդ ընտրությունները :

Որպես ամփոփում, ցանկանում ենք նշել, որ թեև գրեթե բոլոր երկրների սահմանադրաիրավական փաստաթղթերում ամրագրված են ընտրությունների ակնհայտորեն ժողովրդավարական մի շարք սկզբունքներ, սակայն դա չի երաշխավորում ընտրությունների ժողովրդավարական անցկացումը: Ուստի, գալիս ենք այն եզրակացության, որ ընտրությունների սկզբունքների ամրագրումը թեև հիմնարար գործոն է, բայց բավարար նախապայման չէ ժողովրդավարական ընտրությունների անցկացման համար: Վերջինիս համար առանցքային նշանակություն ունեն նաև տվյալ պետության ավանդույթները, կուսակցական համակարգի կայացվածությունը, քաղաքական մշակույթը և այլ գործոններ:

¹ Տե՛ս, Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունք, գիրք երկրորդ, Երևան-2016, էջ 83-84:

² Տե՛ս, Nohlen, Dieter, “Elections in Asia and the Pacific: South East Asia, East Asia, and the South Pacific”, 2001թ., էջ 14-15:

³ Տե՛ս, ՀՀ ընտրական օրենսգիրք, հոդված 2-րդ, կետ 4-րդ (ուժի մեջ է՝ 01.06.2016թ.)

⁴ Տե՛ս, Քաղաքագիտություն, Երևան-2006, էջ 495:

⁵ Տե՛ս, <https://www.telegraph.co.uk/politics/2019/05/27/european-elections-turnout-uk-eu>.

⁶ Տե՛ս, Конституционное (государственное) право зарубежных стран / под ред. Б. А. Страшуна, 2007г., С. 17-19.

⁷ Տե՛ս, www.aravot.am/2012/01/10/287930.

⁸ Տե՛ս, Քաղաքագիտություն, Երևան-2006թ., էջ 502:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունք, գիրք երկրորդ, Երևան-2016:

2. ՀՀ ընտրական օրենսգիրք, (ուժի մեջ է՝ 01.06.2016թ.):

3. Քաղաքագիտություն, Երևան-2006:

4. Конституционное (государственное) право зарубежных стран / под ред. Б. А. Страшуна, 2007г..

5. Nohlen, Dieter, “Elections in Asia and the Pacific: South East Asia, East Asia, and the South Pacific”, 2001.

6. <https://www.telegraph.co.uk/politics/2019/05/27/european-elections-turnout-uk-eu>.

7. www.aravot.am/2012/01/10/287930:

Гарик Керян

Заведующий кафедрой политических институтов и процессов
факультета международных отношений ЕГУ,
доктор политологии, профессор

Нвер Костанян

Бакалавр департамента политологии факультета
международных отношений ЕГУ

РЕЗЮМЕ

Основные принципы и формы избирательного права

Феномен выборов является предметом изучения не только в политологии, но также в праве и других социальных науках. В этом контексте также очень важны концепция права голоса и его многочисленные принципы. Это основные темы, которые мы постарались рассмотреть в данной статье.

Ключевые слова: выборы, голосование, формы избирательного права, принципы избирательного права.

Garik Keryan

Head of the Chair of Department of Political Institutions
and Processes Faculty of International Relations YSU,
Sc. D. in Political Science, Professor

Nver Kostanyan

YSU Faculty of International Relations,
Department of Political Science, Bachelor

SUMMARY

Basic principles and forms of the right to vote

The phenomenon of elections is a subject of study not only in political science, but also in law and other social sciences. In this context, the concept of the right to vote and its many principles are also very important. These are the main topics that we have tried to consider in this article.

Key words: elections, voting, forms of the right to vote, principles of the right to vote.

Բնագիրը ներկայացվել է 26.02.2021թ.

Ընդունվել է տպագրության 01.03.2021թ.

Հոդվածը երաշխավորել է տպագրության (գրախոսել է)
քաղաքական գիտությունների թեկնածու Յ. Ակոսյանը

ՏԻԳՐԱՆ ԴԱԴՈՒՆՑ

ՀՀ արդարադատության նախարարության
«Օրենսդրության զարգացման և իրավական
հետազոտությունների կենտրոն» հիմնադրամի տնօրեն,
ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քաղաքացիական
դատավարության ամբիոնի ասպիրանտ

ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ԱՆՁԱՆՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՀՈՂԱՅԻՆ ԻՐԱՎԱՀԱՐԱՔԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ԶԱՐԳԱՅՈՒՄԸ

Հոդվածը նվիրված է Հայաստանում օտարերկրյա անձանց մասնակցությամբ հողային հարաբերությունների իրավական կարգավորման ինստիտուտի պատմաիրավական զարգացման հարցերի քննարկմանը: Հոդվածում, սկսած 19-րդ դարի սկզբից, վերլուծության են ենթարկվում պատմական տարբեր ժամանակաշրջաններում օտարերկրյա անձանց հողային իրավունքների կարգավիճակի առանձնահատկությունները, կիրառված արգելքների և սահմանափակումների դրսևորումները և դրանց պատճառները, վեր են հանվում այն ընդհանուր սկզբունքներն ու չափանիշները, որոնք հիմք են հանդիսացել քննարկվող հարաբերությունների իրավական կարգավորման համար:

Հիմնադրաբեր- օտարերկրյա անձինք, հող, հողային իրավունքներ, հողային իրավահարաբերություններ, պատմական զարգացում, մասնավոր սեփականություն, հողօգտագործում, իրավունքի սահմանափակումներ:

Հողը, որպես մարդու կենսագործունեության հիմք և բարեկեցության աղբյուր, արտադրության հատուկ միջոց է, այն առանձնահատուկ բնական ռեսուրսներից է, որը, միևնույն ժամանակ, հանդիսանում է պետության տարածքային ամբողջականության և պետական անվտանգության ապահովման երաշխիքներից մեկը և ունի կարևոր ռազմավարական նշանակություն: Այդքանով հանդերձ՝ հողը նաև սահմանափակ ռեսուրս է, ինչն ավելի է մեծացնում վերջինիս կարևորությունն ու նշանակությունը: Ուստի, հնագույն ժամանակներից սկսած, դեռևս հռոմեական իրավունքի շրջանակներում, չնայած մասնավոր սեփականության առկայությանը, հողամասերի շրջանառությանն ուղղված իրավական կարգավորումները ուղեկցվում էին նման շրջանառության սահմանափակումների նախատեսմամբ¹, ընդ որում, նման սահմանափակումներ սահմանվում էին՝ պետության կամ հասարակության շահերից ելնելով²:

Մյուս կողմից, ժամանակակից աղբյուրներում հողային իրավունքի զարգացումը վերլուծության է ենթարկվում սկսած 16-րդ դարից, ինչը բացատրվում է նրանով, որ նշված ժամանակատվածում ի հայտ եկան առաջին իրավական փաստաթղթերը, որոնցում մասամբ կամ համակարգային առումով, անդրադարձ էր կատարվում հողային ֆոնդի իրավական ռեժիմին, իսկ հետագայում էլ աստիճանա-

բար զարգացում ապրեց հողի նկատմամբ սեփականության իրավունքի հայեցակարգը, և առանձնացավ հողային իրավունքը՝ որպես իրավունքի առանձին ճյուղ³:

Հետևաբար, հաշվի առնելով նաև Հայաստանի իրավաբանական և տնտեսական զարգացման հետագա պատմական փուլերի հաջորդականությունն ու ուղղվածությունը՝ սույն հոդվածի շրջանակներում փորձ է կատարվել դիտարկել Հայաստանում օտարերկրյա անձանց մասնակցությամբ հողային իրավահարաբերությունների զարգացումը՝ սկսած 1828 թվականից, երբ տեղի ունեցավ Արևելյան Հայաստանի միացումը Ռուսական կայսրությանը⁴:

Ռուսական նախահեղափոխական շրջանի օրենսդրությամբ սահմանված էին հողամասերի շրջանառության սահմանափակումներ օտարերկրյա քաղաքացիների նկատմամբ, որոնց արգելվում էր հողի նկատմամբ սեփականություն ձեռք բերել⁵: Այնուամենայնիվ, Ռուսական կայսրության ստեղծման և սոցիալական շերտավորման ամրապնդման ժամանակներից ի վեր երկար ժամանակ հողային հարաբերությունները շատ փոփոխությունների չէին ենթարկվել, քանի դեռ 19-րդ դարի կեսերին տեղի չունեցան գյուղատնտեսական և դրան հաջորդող դատական և տեղական ինքնակառավարման բարեփոխումները⁶: Հատկանշա-

կան է, որ 19-րդ դարի երկրորդ կեսին և 20-րդ դարակազմին արդեն օրենսդրությունը մանրամասն կարգավորում էր օտարերկրյա ֆիզիկական և իրավաբանական անձանց հողային-իրավական կարգավիճակը: Ընդհանուր կանոնի համաձայն՝ օտարերկրյա ֆիզիկական և իրավաբանական անձինք կարող էին սեփականության իրավունքով ձեռք բերել ցանկացած հողամաս, սակայն ընդհանուր կանոնից առկա էին մի շարք բացառություններ՝ հողամասի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելու արգելքի կամ սահմանափակումների ձևով, որոնք վերաբերում էին ինչպես որոշակի կատեգորիայի (կալվածքային և դաշտային հողեր) կամ տարածքների (երկրամասերի, շրջանների) հողամասերին, այնպես էլ որոշակի կատեգորիայի սուբյեկտներին (հրեաներ, կորեացիներ և այլն):

Հատկանշական է, որ օտարերկրյա անձանց՝ անշարժ գույքի նկատմամբ սեփականության օգտագործման իրավունքներ ձեռք բերելու և ժամանակավոր տիրապետման իրավունքները սահմանափակվել էին նաև հենց Անդրկովկասյան երկրամասում, որտեղ Ռուսական կայսրության գաղութատիրական քաղաքականության արդյունքում ստեղծվել էին օտարերկրացիների գաղութներ՝ ձգտելով կայսրության տարբեր երկրամասերում զարգացնել գյուղատնտեսությունը և արհեստները: 1871թ. մի շարք նման գաղութների նկատմամբ սահմանվեցին նոր կարգավորումներ, որոնց հիման վրա գաղութների բնակիչները ստացան գյուղացի-սեփականատերերի կարգավիճակ՝ գյուղատնտեսական հողերի նկատմամբ ստանալով սեփականության իրավունք՝ հողամասերի տնօրինման որոշակի ժամանակավոր սահմանափակումներով: Սակայն այդ փոփոխությունները ոչ բոլոր գաղութներին էին վերաբերում, օրինակ՝ Շուշիի մերձակայքում Անդրկովկասի մի շարք գաղութներ առաջնորդվում էին նախկին կանոններով՝ մշտական օգտագործման իրավունքով տիրապետելով պետական հողերին: Իսկ 1898թ.-ից օրենքով օտարերկրացիներին արգելվեց արտադրական նպատակներից բացի այլ նպատակներով քաղաքային բնակավայրերից դուրս անշարժ գույք ձեռք բերել Կովկասի արևմտյան և հարավային սահմանակից տարածքներում, այդ թվում՝ Կարսի մարզում, Երևանի նահանգի մի շարք վարչական շրջաններում (Երևանի, Շարուր-Ղարալագյազի, Սուրմալուի, Նախիջևանի գավառներ), Ելիզավետպոլի նահանգի Ջանգեզուրի և Ջեբրայիլի գավառներում:

Անշարժ գույք ձեռք բերելու մասով կայսրության այլ տարածքներում ևս նախատեսվել և շա-

րունակվում էին պահպանվել համանման սահմանափակումներ, որոնք ուղղված էին եվրոպացի ներգաղթյալների, ներառյալ՝ գերմանացիների, ավստրիացիների, ինչպես նաև չինացի և կորեացի ներգաղթյալների դեմ¹⁰: Կամ, օրինակ, լեհական ծագում ունեցող անձանց արգելվում էր կայսրության արևմտյան նահանգներում սեփականության իրավունքով ձեռք բերել կալվածքային հողեր, բացառությամբ՝ ժառանգման դեպքերի, կամ ցմահ օգտագործման իրավունքով ձեռք բերել բնակավայրերից դուրս գտնվող հողեր¹¹:

Այսպիսով, կարելի է նշել, որ 19-20-րդ դարերում Ցարական Ռուսաստանում հողային հարաբերություններում օտարերկրյա ֆիզիկական և իրավաբանական անձանց նկատմամբ, որպես կանոն, կիրառվում էր ազգային ռեժիմը, չհաշված այն բացառությունները, որոնք նախատեսված էին պետական անվտանգության շահերից ելնելով, մասնավորապես՝ սահմանափակումները վերաբերում էին հողի որոշակի կատեգորիաներին (ըստ էության գյուղատնտեսական նշանակության հողերին), որոշակի տարածքներին (առաջին հերթին՝ սահմանամերձ) և որոշակի կատեգորիայի անձանց:

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին քննարկվող հարաբերություններում առանձնահատկությունը դրսևորվում էր նրանում, որ թշնամական երկրների (Գերմանիա, Ավստրիա, Հունգարիա, Թուրքիա, Բուլղարիա) քաղաքացիների կամ այդ երկրներում ստեղծված իրավաբանական անձանց համար Ռուսական կայսրությունում սահմանվել էին մի շարք սահմանափակումներ. նրանք զրկվել էին գրեթե բոլոր իրավունքներից, նրանց արգելվում էր հողամասերը տիրապետելը, անշարժ գույքը սեփականության իրավունքով կամ վարձակալությամբ ձեռք բերելը, բացառությամբ՝ բնակելի տարածքների, իսկ վերոնշյալ այն օտարերկրյա անձինք, որոնք ժառանգություն էին ստացել անշարժ գույք կամ տիրապետում էին քաղաքային բնակավայրերից դուրս գտնվող անշարժ գույքի Ռուսական կայսրության որոշակի նահանգներում, այդ թվում՝ Կովկասի ողջ երկրամասի տարածքում, պարտավոր էին սահմանված ժամկետում օտարել այդ գույքերը¹²: 1915թ. վերոնշյալ օտարերկրացիների որոշ իրավունքներ մասամբ վերականգնվեցին, մասնավորապես՝ հողամասի վարձակալության իրավունքները, որոնք տրվում էին հատուկ թույլտվությունների հիման վրա¹³:

Այսպիսով, մինչև հեղափոխական շրջանում օտարերկրյա անձանց հողային իրավահարաբերությունների կարգավորումը առանձնանում էր իր խախտաբղետությամբ: Օտարերկրյա անձանց հո-

ղային իրավունքների կարգավիճակը խիստ տարբերվում էր նախ՝ ըստ կոնկրետ պատմական ժամանակաշրջանի՝ կապված տվյալ ժամանակաշրջանում տեղի ունեցող պատմական իրադարձությունների, հասարակական-քաղաքական իրավիճակի հետ, և, ըստ այդմ, կամ խիստ սահմանափակվում էին օտարերկրյա անձանց իրավունքները, կամ նրանց տրվում էին լայն ազատություններ, երկրորդ՝ ըստ ազգային-սուբյեկտային հատկանիշի և տեղի քաղաքացիների իրավունքների պաշտպանության նպատակներից ելնելով, երրորդ՝ ըստ աշխարհագրական-տարածքային չափանիշների: Ամեն դեպքում, կարող ենք հստակորեն նշել, որ բոլոր սահմանափակումների հիմքում էլ ընկած էին հասարակական-քաղաքական գործոններ՝ հասարակության տարբեր շերտերի տարբեր կարգավիճակներ, տվյալ ժամանակահատվածին հատուկ տնտեսական կարգի առանձնահատկություններ, տվյալ պահի աշխարհաքաղաքական իրավիճակ և այլ ազգերի ու երկրների հետ հարաբերություններ, այդ հարաբերությունների համատեքստում պետության շահերի առաջնահերթություն և այլն:

Ինչպես իրավացիորեն նշում են որոշ հեղինակներ՝ քննարկվող ժամանակահատվածում օտարերկրյա անձանց հողային իրավունքների սահմանափակման անհրաժեշտությունը բխում էր այն նույն պատճառներից, որոնք առկա են մեր ժամանակներում. կանխել օտարերկրյա անձանց տնտեսական ամրապնդումը սահմանային և վիճելի տարածքներում, սահմանափակել նրանց հասանելիությունը երկրի բնական ռեսուրսներին, տեղի քաղաքացիների համար ապահովել ձեռնարկատիրությանը զբաղվելու բարենպաստ պայմաններ և ապահովել պետության անվտանգությունն ու տարածքային ամբողջականությունը¹⁴: Միևնույն ժամանակ, որքան էլ նշված նպատակները բխեն հանրային շահերից և ուղղված լինեն պետության և քաղաքացիների տնտեսական անվտանգության ապահովմանը, դրանք մասամբ նաև կրել են խտրական, ազգային և դասակարգային բնույթ¹⁵, հատկապես, երբ խոսքը գնում է այս կամ այն ազգային պատկանելության հիմքով սահմանափակումների սահմանմանը:

1917թ. Ռուսաստանում տեղի ունեցած հեղափոխական իրադարձությունները էական ազդեցություն ունեցան հողային իրավահարաբերությունների հետագա կարգավորման վրա: Դա հատկապես ակնառու դարձավ 1917թ. հոկտեմբերի 26-ի «Հողի մասին դեկրետի» ընդունմամբ, որը հանդիսացավ խորհրդային հողային օրենսդրության զարգաց-

ման հիմքը¹⁶: Դեկրետի հիմքում դրվեց հողի ազգայնացման սկզբունքը, որը նախատեսում էր, որ հողը հանդիսանում է պետության սեփականության օբյեկտ¹⁷: Դեկրետով սահմանվեցին հողօգտագործման և հողաբաշխման նոր սկզբունքներ, մասնավորապես՝ ընդմիշտ վերանում էր հողի մասնավոր սեփականությունը, արգելվում վաճառքը, վարձակալությունը, գրավադրումը, հողի այլ կերպ տնօրինումը. ամբողջ հողը հայտարարվում էր համաժողովրդական սեփականություն և տրվում աշխատավորների օգտագործմանը: Ամրագրվում էր հավասար հողօգտագործման սկզբունքը, այսինքն՝ հողը բաշխվում էր աշխատավորների միջև՝ կախված տեղի պայմաններից՝ ըստ աշխատուժի կամ սպառման մակարդակի:

Այսինքն «Հողի մասին դեկրետով», ըստ էության, ոչ միայն վերացվեց հողի նկատմամբ մասնավոր սեփականությունը, այլ նաև բացառվեց օտարերկրացիներին որպես հողային իրավահարաբերությունների սուբյեկտ դիտելու հնարավորությունը. հողամասի նկատմամբ սեփականության իրավունք, այսպես, թե այնպես, բացի պետությունից, չուներ ոչ մի սուբյեկտ, այդ թվում՝ օտարերկրացիները, իսկ հողօգտագործման իրավունքները վերապահվել էին քաղաքացիներին, պետությանը, համայնքներին:

Հետագա զարգացումները տարան նրան, որ ԽՍՀՄ 1924թ. Սահմանադրությամբ հողերի կառավարման և հողօգտագործման ընդհանուր սկզբունքների հաստատման իրավասությունը տրվեց Խորհրդային միությանը: Արդյունքում 1928թ. ԽՍՀՄ Կենտրոնական գործադիր կոմիտեն ընդունեց «Հողօգտագործման և հողի կառավարման ընդհանուր սկզբունքները», որում ամրագրվեց միասնական պետական հողային ֆոնդի հասկացությունը և սահմանվեցին հողի առանձին կատեգորիաների իրավական ռեժիմները¹⁸: Սկզբունքներում սահմանվում էր, որ ԽՍՀՄ հողային համակարգի հիմքը հողամասի մասնավոր սեփականության ընդմիշտ վերացումն է և հողի նկատմամբ ԽՍՀՄ բացառիկ պետական սեփականության հաստատումը¹⁹: Սկզբունքները արդեն անդրադարձ էին կատարում ԽՍՀՄ աշխատավոր օտարերկրյա քաղաքացիներին²⁰, սակայն նրանց հողօգտագործման իրավունքների իրականացումը պայմանավորվում էր հողօգտագործողների միավորումների միջոցով դրանք իրացնելու հնարավորությամբ, ինչպես որ ԽՍՀՄ քաղաքացիների դեպքում էր:

Այսպիսով, հողի նկատմամբ պետական սեփականությունը դարձավ խորհրդային հողային

օրենսդրության անկյունաքարը: Արդյունքում, արդեն ԽՍՀՄ 1936թ. Սահմանադրությամբ ամրագրվեց հողի նկատմամբ պետության բացառիկ սեփականությունը՝ նշելով, որ հողը, ինչպես և ընդերքը, ջրերը, անտառները համարվում են պետության սեփականություն՝ համաժողովրդական սեփականություն²¹:

Հետագայում, 1968թ. դեկտեմբերի 13-ին ընդունվեցին ԽՍՀՄ և միութենական հանրապետությունների հողային օրենսդրության հիմունքները (այսուհետ՝ 1968թ. Հիմունքներ), որոնք կարևոր դեր խաղացին հողային հարաբերությունների կարգավորման գործում: 1968թ. Հիմունքները պարունակում էին սկզբունքորեն նոր իրավական նորմեր՝ հիմք հանդիսանալով հողային իրավունքի նոր ինստիտուտների ձևավորման համար²²: 1968թ. Հիմունքների 3-րդ հոդվածը կրկին շեշտում էր հողի նկատմամբ պետության բացառիկ սեփականության մասին, իսկ 7-րդ հոդվածը սահմանում էր հողօգտագործման սուբյեկտների շրջանակը (ԽՍՀՄ քաղաքացիներ, կոլտնտեսություններ, կոոպերատիվներ և այլն): Միևնույն ժամանակ սահմանվում էր, որ ԽՍՀՄ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում հողերը օգտագործման նպատակով կարող էին տրամադրվել այլ կազմակերպությունների և անձանց ևս, սակայն ոչ միայն բացահայտված չէր այդ կազմակերպությունների և անձանց շրջանակը, այլ նաև օրենսդրությամբ նման դեպքեր չէին նախատեսվել²³, իսկ օտարերկրյա անձանց վերաբերյալ որևէ կարգավորում առկա չէր: Ըստ այդմ՝ հետհեղափոխական ժամանակաշրջանում օտարերկրյա անձանց կողմից հողի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելու հնարավորությունը բացառված էր՝ հողի նկատմամբ մասնավոր սեփականության բացառման համատեքստում, իսկ օտարերկրյա անձանց կողմից հողի նկատմամբ այլ իրավունքների իրացման, այդ թվում՝ հողօգտագործման հնարավորության մասով կարգավորումներ առկա չէին: Կարելի է ասել միակ կարգավորումը, ինչպես նշվեց վերևում, 1928թ. «Հողօգտագործման և հողի կառավարման ընդհանուր սկզբունքներում» առկա այն կարգավորումն էր, որը հնարավորություն էր տալիս քաղաքական իրավունքներ ունեցող օտարերկրյա աշխատավորներին հողօգտագործողների միավորումների միջոցով օգտագործել հողը, սակայն, մեր կարծիքով, դրանով օտարերկրյա անձինք որպես հողօգտագործման առանձին սուբյեկտ չէին կարող դիտարկվել:

Սա գալիս էր նաև նրանից, որ խորհրդային շրջանի օրենսդրությամբ իրավական նշանակություն

չէր տրվում օտարերկրյա անձանց իրավական կարգավիճակին. այդ մասին է վկայում, առաջին հերթին, այն, որ առաջին անգամ միայն 1977թ. ԽՍՀՄ, իսկ կոնկրետ՝ Հայաստանի դեպքում՝ 1978թ. ՀԽՍՀ Սահմանադրությամբ, ամրագրվեցին հստակ նորմեր օտարերկրյա անձանց իրավական կարգավիճակի վերաբերյալ²⁴: Ուստի, այս առումով դժվար է լիովին համաձայնել այն հեղինակների հետ²⁵, ըստ որոնց՝ խորհրդային ժամանակաշրջանի համատեքստում հողի նկատմամբ օտարերկրյա անձանց իրավունքների իրավական կարգավորումը սկսվում է 1918թ.-ից:

Օտարերկրյա անձանց հողօգտագործման իրավունքների ամրագրման մասով էական փոփոխություններ տեղի ունեցան միայն 1989-90-ական թվականներին, երբ ընդունվեցին 1989թ. «Վարձակալության մասին ԽՍՀՄ և միութենական հանրապետությունների օրենսդրության հիմունքները» և 1990թ. «Հողի մասին ԽՍՀՄ և միութենական հանրապետությունների օրենսդրության հիմունքները», ընդ որում, եթե դիտարկենք այս օրենսդրական ակտերը ժամանակակից մոտեցմամբ, ապա դրանք կարելի է համարել որպես հողի նկատմամբ մասնավոր սեփականության իրավունքը վերականգնելու առաջին փորձ²⁶:

«Վարձակալության մասին օրենսդրության հիմունքները» հստակ առանձնացնում էին օտարերկրյա անձանց՝ որպես հողօգտագործման սուբյեկտների: Մասնավորապես, 3-րդ հոդվածը սահմանում էր, որ վարձակալության կարող էին տրվել հողը և այլ բնական ռեսուրսները, իսկ 5-րդ հոդվածը սահմանում էր, որ՝ որպես վարձակալներ, ի թիվս այլնի, կարող էին հանդես գալ նաև խորհրդային և օտարերկրյա իրավաբանական անձանց մասնակցությամբ միջազգային ասոցիացիաները և կազմակերպությունները, օտարերկրյա պետությունները, միջազգային կազմակերպությունները, օտարերկրյա իրավաբանական անձինք և քաղաքացիները: Համանման կարգավորումներ առկա էին նաև «Հողի մասին օրենսդրության հիմունքների» 6-րդ և 7-րդ հոդվածներում:

Պետք է հիշել, որ 20-րդ դարի 90-ական թվականների հիմնական տնտեսական խնդիրներից մեկը հողային հարաբերությունների վերակառուցումն էր, և պետության բացառիկ սեփականությամբ սոցիալիստական կացութաձևից անցումը սեփականության, առաջին հերթին՝ հողի նկատմամբ սեփականության բազմաձևությանը, և, ըստ այդմ, սկսած 20-րդ դարի 90-ական թվականներից, օրենսդրությունը զարգացավ հողի մասնավոր սեփականության ճանապարհով՝ դրանով իսկ պայ-

մանավորելով հողային բարեփոխումների սկիզբը²⁷։ Այս համատեքստում պետության բացառիկ սեփականության վերացման և նոր հողային հարաբերությունների մեկնարկի հիմք հանդիսացավ 1990 թվականի օգոստոսի 23-ին Գերագույն խորհրդի կողմից ընդունված «Հայաստանի անկախության մասին» հռչակագիրը, որի 7-րդ կետով սահմանվեց. «Հայաստանի Հանրապետության ազգային հարստությունը՝ հողը, ընդերքը, օդային տարածությունը, ջրային և այլ բնական պաշարները, տնտեսական, մտավոր, մշակութային կարողությունները, նրա ժողովրդի սեփականությունն է»։ Դրանով իսկ հանվեցին երկրի հիմնական օրենքի մակարդակով դրված սահմանափակումները, որոնք վերաբերում էին հողը տնտեսական շրջանառության մեջ մտցնելուն²⁸։ Սակայն սկսված արմատական բարեփոխումները էականորեն չանդադարձան օտարերկրյա անձանց իրավասությունների ընդլայնման հարցին։ Բանն այն է, որ 20-րդ դարի 90-ական թվականների բարեփոխումների պայմաններում բուռն քննարկումները ըստ էության, ծավալվում էին ոչ թե հողային օրենսդրության արդիականացման տնտեսական նպատակահարմարության հարցերի, այլ դրա գաղափարական և քաղաքական բաղադրիչների շուրջ, և կրքերը թեժանում էին հատկապես այն ժամանակ, երբ խոսքը գնում էր օտարերկրացիներին հողի նկատմամբ մասնավոր սեփականության իրավունքի տրամադրման հարցերի մասին²⁹։

Այս առումով հատկանշական է, որ Գերագույն խորհրդի կողմից 1990թ. հոկտեմբերի 31-ին ընդունված՝ «Հայաստանի Հանրապետությունում սեփականության մասին» օրենքով որպես սեփականության օբյեկտ դիտվում էր նաև հողը, որպես սեփականության իրավունքի սուբյեկտ՝ նաև քաղաքացիները, դրանով իսկ ամրագրելով հողի մասնավոր սեփականության ինստիտուտի հիմքերը, բայց, միևնույն ժամանակ, հողը և բնական մյուս ռեսուրսները դեռևս համարվում էին «հանրապետության ազգային հարստությունը», «նրա ժողովրդի սեփականությունը»³⁰։ Վերոնշյալ ակտով՝ օրենքի մակարդակով ամրագրվեց նաև սեփականության հարաբերություններում օտարերկրյա անձանց իրավասությունների հարցը, սակայն, միևնույն ժամանակ, առանց բացառության խիստ արգելք սահմանվեց հողի նկատմամբ օտարերկրյա քաղաքացիների սեփականություն ձեռք բերելու մասով³¹։ Ինչ վերաբերում է օտարերկրյա իրավաբանական անձանց, ապա վերջիններիս՝ հողի նկատմամբ սեփականություն ունենալու մասով հստակ կարգավորում վերոնշյալ օրենքը չէր սահմանում, սակայն

57-րդ հոդվածով նախատեսում էր Հայաստանի Հանրապետության տարածքում արդյունաբերական և այլ ձեռնարկություններից, շենքերից, շինություններից բացի որպես սեփականություն այլ գույք ունենալու հնարավորությունը՝ իրենց տնտեսական և այլ գործունեության իրականացման նպատակների համար։ Հատկանշական է նաև, որ օրենքի 58-րդ հոդվածը սահմանում էր օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների իրավունքը՝ Հայաստանի Հանրապետության տարածքում որպես սեփականություն ունենալու դիվանագիտական, հյուպատոսական և միջազգային այլ հարաբերությունների իրականացման համար անհրաժեշտ գույք՝ միջազգային պայմանագրերով և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով։

Վերոնշյալ կարգավորումներն իրենց արտացոլումը գտան «Գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների մասին» 1991թ. հունվարի 22-ի օրենքում, որի ուժով հողամասի նկատմամբ ՀՀ քաղաքացիների սեփականության իրավունքը ծագում էր միայն գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ (այդ հարաբերությունները մանրամասն կարգավորվեցին նաև 1991 թվականի դեկտեմբերի 29-ի Հողային օրենսգրքով)³²։ Իր հերթին, 1991թ. Հողային օրենսգիրքը հողի սեփականության ձևերի շրջանակում, բացի պետական և կոլեկտիվ սեփականության ձևերից, նախատեսում էր միայն ՀՀ քաղաքացիների սեփականություն հանդիսացող հողերը, իսկ օրենսգրքում 1993թ. կատարված լրացումներից հետո՝ նաև այլ պետությունների սեփականություն հանդիսացող հողերը՝ բացառապես դիվանագիտական և հյուպատոսական ներկայացուցչությունների համար։ Նույնական կարգավորումներ նախատեսվեցին նաև կարճատև կյանք ունեցած մեկ այլ օրենսդրական ակտում՝ 1995թ. դեկտեմբերի 27-ին ընդունված «Անշարժ գույքի մասին» օրենքում։

Այսինքն, 1990-ական թվականներին սեփականության իրավունքի հարցերում տեղի ունեցող փոփոխությունների պայմաններում հողի նկատմամբ օտարերկրյա անձանց մասնավոր սեփականության իրավունքի հարցերը, միևնույն է, գտնվում էին արգելքների և սահմանափակումների դաշտում՝ որպես խիստ զգայուն հարցեր։ Սկզբնական շրջանի համար, ըստ էության, սա հասկանալի կարող է լինել, քանի որ, ինչպես նախկին միութենական մյուս հանրապետությունները, այնպես էլ Հայաստանը գնում էին վերոնշյալ հարցերի իրավական կարգավորումների աստիճանական ազատականացման ճանապարհով և հնարավոր էլ չէր այս

համատեքստում ակնկալել արմատական փոփոխություններ, հատկապես, երբ նման հարցերը, ինչպես արդեն նշվեց, պատմականորեն միշտ էլ կախված են եղել տվյալ պահի քաղաքական, սոցիալ-տնտեսական տարբեր գործոններից: Ինչևէ, հետագա զարգացումները տարան նրան, որ նորանկախ Հայաստանում արդեն սահմանադրական մակարդակով նախ՝ 1995թ. Սահմանադրությամբ և հետագայում էլ 2005թ. և 2015թ. փոփոխություններով, ամրագրվեց օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց՝ հողի նկատմամբ սեփականություն ձեռք բերելու արգելքը, ինչը, ըստ էության, հիմնականում պայմանավորված է եղել պետական, ազգային անվտանգության խնդիրներով³³, սակայն, ի տարբերություն նախորդ շրջանի իրավական կարգավորումների, նախատեսվեց նշված արգելքից օրենքով բացառություններ սահմանելու հնարավորությունը³⁴: Նշվածը հետագայում իր արտացոլումը գտավ 2001թ. մայիսի 2-ին ընդունված Հողային օրենսգրքում՝ 4-րդ հոդվածով՝ բացառելով օտարերկրյա քաղաքացիների, քաղաքացիություն չունեցող անձանց, հողի նկատմամբ սեփականության իրավունք ունենալու հնարավորությունը՝ նրանց դիտարկելով միայն որպես հողօգտագործման սուբյեկտներ՝ բացառություն նախատեսելով միայն Հայաստանի Հանրապետությունում կացության հատուկ կարգավիճակ ունեցող անձանց համար:

Քննարկվող հարաբերություններում էական փոփոխություններ տեղի ունեցան 2012 և 2018 թվականներին: Մասնավորապես, 2012թ. փետրվարի 27-ի փոփոխություններով Հողային օրենսգրքի 4-րդ հոդվածում հողային իրավահարաբերությունների սուբյեկտների շարքում հատուկ նշվեցին օտարերկրյա պետությունները, չնայած այն հանգամանքին, որ մինչ այդ օտարերկրյա պետությունները, միևնույն է, կարող էին դիմել որպես սուբյեկտներ, քանի որ օրենսգրքի 66-րդ և 76-րդ հոդվածները կարգավորում էին օտարերկրյա պետությունների համապատասխանաբար հողամասերի վաճառքի և վարձակալության տրամադրման հետ կապված հարցերը: Ամեն դեպքում, փոփոխություններով հատուկ կարգավորումներ նախատեսվեցին օտարերկրյա պետություններին և միջազգային կազմակերպություններին դիվանագիտական և ներկայացուցչական նպատակների համար հողամասերի տրամադրման առնչությամբ: Դե իսկ 2018թ. հունվարի 16-ին կատարված փոփոխություններով ընդլայնվեցին օտարերկրյա անձանց հողային իրավունքները, մասնավորապես՝ ընդհանուր արգելքից ևս մեկ բացառություն նախատես-

վեց, ըստ որի՝ տնամերձ, այգեգործական, ինչպես նաև անհատական բնակելի տան, հասարակական և արտադրական օբյեկտների, բազմաբնակարան բնակելի շենքի կառուցման և սպասարկման համար հողամասերի վրա չի տարածվում օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց կողմից հողի նկատմամբ սեփականություն ձեռք բերելու վերաբերյալ սահմանափակումը:

Ամփոփելով օտարերկրյա անձանց հողային հարաբերությունների իրավական կարգավորման ինստիտուտի գեներգիսի և պատմական զարգացման շուրջ վերլուծությունները՝ կարող ենք նշել, որ՝

1) Հայաստանում նշված հարաբերությունների կարգավորումը ամբողջապես կամ էապես պայմանավորված է եղել աշխարհաքաղաքական, սոցիալ-տնտեսական տարբեր գործոններով և իրավիճակներով ու դրանց առանձնահատկություններով, և, ընդհանուր առմամբ, սահմանափակումները սահմանվել են՝ ելնելով պետության կամ հասարակության շահերից, պետական, տնտեսական, հասարակական անվտանգության ապահովման անհրաժեշտությունից:

2) Սահմանափակումներ սահմանվել են տարածքային և սուբյեկտային չափանիշներից ելնելով՝ կախված այն հանգամանքից, թե աշխարհագրական որ տարածքում է գտնվում հողամասը և (կամ) որ սուբյեկտի նկատմամբ է սահմանվում սահմանափակումը, այդ թվում՝ ազգային պատկանելիությունից ելնելով՝ որոշակի խտրական դրսևորումներով, ինչպես նաև՝ ելնելով հողի նկատմամբ ձեռք բերված գույքային իրավունքի տեսակից, եթե հողօգտագործումը հիմնականում կամ որոշ դեպքերում թույլատրելի էր համարվում, ապա հողի նկատմամբ սեփականության իրավունքի դեպքում արգելքները շատ ավելի խիստ էին:

3) Մյուս կողմից, քննարկվող հարաբերությունների իրավական կարգավորման առանձնահատկությունները մշտապես կախված են եղել տվյալ ժամանակահատվածում երկրում տիրող քաղաքական, տնտեսական կարգից, վարվող սոցիալ-տնտեսական քաղաքականությունից, մասնավորապես, մինչև հողի նկատմամբ պետության բացառիկ սեփականության հռչակումը տարբեր փուլերում օտարերկրյա անձանց հողային իրավունքների կարգավիճակը խիստ տարբերվել է՝ կախված տվյալ պահին տարվող տնտեսական քաղաքականությունից՝ մի դեպքում օտարերկրացիների ներուժը խթանելու, մյուս դեպքում՝ հայրենական տնտեսվարողներին պաշտպանելու նկատառումներով, ինչպես նաև առկա են եղել սահմանափակումներ՝

ելնելով երկրի տարածքային ամբողջականության և անվտանգության ապահովման նկատառումներից, ժողովրդագրական գործոններից և այլ երկրների հետ հարաբերություններից:

4) Խորհրդային ժամանակաշրջանում հողի նկատմամբ պետության բացառիկ սեփականության հաստատման հետևանքով հողի մասնավոր սեփականության իսպառ բացառման և հողօգտագործման ձևերի էական սահմանափակումների պայմաններում քննարկվող իրավահարաբերությունների կարգավորումը գտնվել է խիստ արգելքների և սահմանափակումների ներքո:

5) Խորհրդային կարգերի փլուզման շեմին

իրավական համակարգի արմատական վերափոխումները չնայած հիմք հանդիսացան օտարերկրյա անձանց և պետություններին որպես հողային իրավաբերությունների առանձին սուբյեկտ դիտարկելու, սակայն, այնուամենայնիվ, չհանգեցրին քննարկվող հարաբերությունների կարգավորման իսպառ ազատականացման, այլ այս կամ այն ձևով ու չափով պահպանվեցին պատմական արմատներ ունեցող արգելքներն ու սահմանափակումները՝ իրենց ժամանակակից դրսևորումներով և առանձնահատկություններով հանդերձ:

¹ Տե՛ս, Корнилова У. В., Мельников Н. Н. Правовое регулирование ограничений оборотоспособности земельных участков: монография. – М.: ИНФРА-М, 2019, С. 6.

² Տե՛ս, Логунова М. В. Ограничения оборотоспособности земельных участков в публичных интересах: Дисс...канд. юрид. наук. МГУ. М., 2019, С. 80.

³ Տե՛ս, Анисимов П. В., Чикильдина А. Ю., Працко Г. С. История становления и развития отечественного земельного права: проблема периодизации // Философия права. 2014. N5 (66), С. 70.

⁴ Տե՛ս, Ներսիսյան, Մ. Գ. Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին: Պատմա-քաղաքական հանդես, 1972 (1), էջ 13:

⁵ Տե՛ս, Корнилова У. В., Мельников Н. Н., նշված աշխ., էջ 9:

⁶ Տե՛ս, Бородин С. С. Земельное право. Общая часть: Курс лекций / СПбГУАП. СПб., 2000, С. 19.

⁷ Տե՛ս, Бобряшова М. А. Права на земельные участки иностранных физических и юридических лиц в России. Дисс...канд. юрид. наук. Москва, 2012, С.45-46.

⁸ Տե՛ս, Курдиновский В. И. К учению о легальных ограничениях права собственности на недвижимость в России. - Одесса, “Экономическая” типография, 1899 г., С. 317.

⁹ Տե՛ս, նույն տեղում, էջեր 317-318:

¹⁰ Տե՛ս, Маленко В. С. Гражданско-правовое регулирование земельного оборота с иностранным элементом: Дисс...канд. юрид. наук. Москва, 2007, С.17-18.

¹¹ Տե՛ս, Победоносцев К.П. Курс гражданского права. Первая часть: Вотчинные права. - Москва: «Статут», 2002, С. 110:

¹² Տե՛ս, Бобряшова М. А., նշված աշխ., էջեր 52-53:

¹³ Տե՛ս, նույն տեղում, էջեր 52-53:

¹⁴ Տե՛ս, Анисимов А. П., Мелихов А.И. Конституционно-правовое регулирование права частной собственности на земельные участки: монография. Волгоград: Мастер. 2009. С. 12.

¹⁵ Տե՛ս, Дежина Д. П. Конституционно-правовое регулирование правового положения иностранных граждан в Российской Федерации и роль органов внутренних дел в его реализации. Автореф. дисс. ... канд. юрид. наук. Москва. 2006, С. 11.

¹⁶ Տե՛ս, Бобряшова М. А., նշված աշխ., էջ 54:

¹⁷ Տե՛ս, Маленко В. С., նշված աշխ., էջ 18:

¹⁸ Տե՛ս, Крассов О. И. Земельное право: учебник. - 4-е изд., перераб. и доп. - М.: Норма: ИНФРА-М, 2014, С. 72.

¹⁹ Տե՛ս, Общие начала землепользования и землеустройства. Утверждены Постановлением ЦИК СССР от 15 декабря 1928 года, կետ 1:

²⁰ Տե՛ս, նույն տեղում, կետ 7րդ:

²¹ Բնագիր ռուսերեն տեքստում կիրառվում են “государственная собственность” և “всенародное достояние” եզրույթները: Եզրույթների հայերեն փարզանության պարզապիսի “собственность” և “достояние” բառերի լեզվաբանական տարբերակումը չի նկատվում (“всенародное достояние” եզրույթը փարզանվում է որպես

«համաժողովրդական սեփականություն», տե՛ս Սեկոյան Ա. «Ռուս-հայերեն ուսումնական բառարան», Երևան, «Լույս» հրատարակչություն, 1978, էջ 63, Ղարիբյան Ա. «Ռուս-հայերեն բառարան», Երևան, «Հայաստան» հրատարակչություն, 1977, էջ 224):

²² Տե՛ս, Крассов О. И., նշված աշխ., էջեր 77-78:

²³ Տե՛ս, Бобряшова М. А., նշված աշխ., էջ 55:

²⁴ Մասնավորապես, ՀԽՍՀ 1978թ. Սահմանադրության 35-րդ հոդվածը սահմանում էր, որ օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց համար Հայաստանի Հանրապետությունում երաշխավորվում են օրենքով նախատեսված իրավունքներ ու ազատություններ, այդ թվում՝ նրանց պատկանող անձնական, գույքային, ընտանեկան և այլ իրավունքների պաշտպանության համար դատարան և պետական այլ մարմինների դիմելու իրավունք: Տե՛ս Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն (Հիմնական օրենք), ընդունված է Հայաստանի Հանրապետության իններորդ գումարման Գերագույն խորհրդի արտահերթ յոթերորդ նստաշրջանում 1978 թվականի ապրիլի 14-ին:

²⁵ Տե՛ս, օրինակ, Дихтяр А. И., Корнеева С. Ю., Правовое регулирование земельных отношений с участием иностранных лиц. - Саарбрюккен: LAP Lambert Academic Publishing. 2013, էջ 10:

²⁶ Տե՛ս, Крассов О. И., նշված աշխ., էջ 78:

²⁷ Տե՛ս, Маленко В. С., նշված աշխ., էջեր 20-21:

²⁸ Տե՛ս, Խաչատրյան Պ. Խորհրդային միությունում և Հայաստանի Հանրապետությունում հողի նկատմամբ պետության սեփականության իրավունքի առանձնահատկությունների իրավահամեմատական վերլուծությունը, «Արդարադատություն» գիտական հանդես, 2010, դեկտեմբեր 3 (4), էջ 45:

²⁹ Տե՛ս, Маленко В. С., նշված աշխ., էջ 16:

³⁰ Տե՛ս, «Հայաստանի Հանրապետությունում սեփականության մասին» օրենք, հոդված 40-րդ:

³¹ Տե՛ս, նույն տեղում, հոդված 56-րդ:

³² Տե՛ս, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ / ընդհանուր խմբագրությամբ՝ Գ. Հարությունյանի, Ա. Վաղարշյանի. - Եր.: «Իրավունք», 2010, էջ 375:

³³ Տե՛ս, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ, էջեր 375-376:

³⁴ Տե՛ս, Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն (1995թ. խմբագրությամբ), հոդված 28-րդ, Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն (2005թ. խմբագրությամբ), հոդված 31-րդ, Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն (2015թ. խմբագրությամբ), հոդված 60-րդ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

- 1) Корнилова У. В., Мельников Н. Н. Правовое регулирование ограничений оборотоспособности земельных участков: монография. – М.: ИНФРА-М, 2019.
- 2) Логунова М. В. Ограничения оборотоспособности земельных участков в публичных интересах: Дисс...канд. юрид. наук. МГУ. М., 2019.
- 3) Анисимов П. В., Чикильдина А. Ю., Працко Г. С. История становления и развития отечественного земельного права: проблема периодизации // Философия права. 2014. N5 (66), (հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://cyberleninka.ru/article/n/istoriya-stanovleniya-i-razvitiya-otechestvennogo-zemelnogo-prava-problema-periodizatsii>, վերջին մուտք՝ 04.12.2020թ.):
- 4) Ներսիսյան, Մ. Գ. Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին: Պատմա-բանասիրական հանդես, 1972 (1), էջ 13, (հասանելի է հետևյալ հղմամբ՝ [http://hpj.asj-oa.am/1774/1/1972-1\(3\).pdf](http://hpj.asj-oa.am/1774/1/1972-1(3).pdf), վերջին մուտք՝ 04.12.2020թ.):
- 5) Бородин С. С. Земельное право. Общая часть: Курс лекций / СПбГУАП. СПб., 2000.
- 6) Бобряшова М. А. Права на земельные участки иностранных физических и юридических лиц в России. Дисс...канд. юрид. наук. Москва, 2012:
- 7) Курдиновский В. И. К учению о легальных ограничениях права собственности на недвижимость в России. - Одесса, “Экономическая” типография, 1899 г. (հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://repo.nspu.ru/bitstream/nspu/3275/1/k-ucheniye-o-legalnyh-ogranichen.pdf>, վերջին մուտք՝ 04.12.2020թ.):
- 8) Маленко В. С. Гражданско-правовое регулирование земельного оборота с иностранным элементом: Дисс...канд. юрид. наук. Москва, 2007.
- 9) Победоносцев К. П. Курс гражданского права. Первая часть: Вогчинные права. – Москва: “Статут”, 2002г..
- 10) Анисимов А. П., Мелихов А.И. Конституционно-правовое регулирование права частной собственности на земельные участки: монография. Волгоград: Мастер. 2009.
- 11) Дежина Д. П. Конституционно-правовое регулирование правового положения иностранных граждан в Российской Федерации и роль органов внутренних дел в его реализации. Автореф. дисс. ... канд. юрид. наук. Москва. 2006.
- 12) Декрет II Всероссийского съезда Советов о земле 26 октября (8 ноября) 1917 г. Выверено по изданию: Декреты Советской власти. Т.I. М., Гос. изд-во полит. литературы, 1957 (հասանելի է հետևյալ հղմամբ՝ http://www.hist.msu.ru/ER/Etext/DEKRET/o_zemle.htm, վերջին մուտք՝ 04.12.2020թ.):
- 13) Крассов О. И. Земельное право: учебник. - 4-е изд., перераб. и доп. - М.: Норма: ИНФРА-М, 2014.
- 14) Общие начала землепользования и землеустройства. Утверждены Постановлением ЦИК СССР от 15 декабря 1928 года, կետ 1 (հասանելի է հետևյալ հղմամբ՝ http://www.libussr.ru/doc_ussr/ussr_3540.htm, վերջին մուտք՝ 04.12.2020թ.):

- 15) Конституция (Основной закон) Союза Советских Социалистических Республик. Утверждена постановлением Чрезвычайного VIII Съезда Советов Союза Советских Социалистических Республик от 5 декабря 1936 г. (հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://constitution.garant.ru/history/ussr-rsfsr/1936/red_1936/3958676/, վերջին մուտք՝ 04.12.2020թ.):
- 16) Союз Советских Социалистических Республик. Закон от 13 декабря 1968 г. “Об утверждении основ земельного законодательства Союза ССР и Союзных Республик” (հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://normativ.kontur.ru/document?moduleId=1&documentId=37756>, վերջին մուտք՝ 04.12.2020թ.):
- 17) Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն (Հիմնական օրենք), ընդունված է Հայաստանի Հանրապետության իններորդ գումարման Գերագույն խորհրդի արտահերթ յոթերորդ նստաշրջանում 1978 թվականի ապրիլի 14-ին, (հասանելի է հետևյալ հղմամբ՝ <http://www.irtek.am/views/act.aspx?aid=150837>, վերջին մուտք՝ 04.12.2020թ.):
- 18) Диктяр А. И., Корнеева С. Ю. Правовое регулирование земельных отношений с участием иностранных лиц. — Саарбрюккен: LAP Lambert Academic Publishing. 2013.
- 19) Основы законодательства Союза ССР и союзных республик об аренде. Утв. ВС СССР 23.11.1989 N 810-1, (հասանելի է հետևյալ հղմամբ՝ http://www.consultant.ru/document/cons_doc_LAW_1029/, վերջին մուտք՝ 04.12.2020թ.):
- 20) Основы законодательства Союза ССР и союзных республик о земле. Приняты ВС СССР 28.02.1990, (հասանելի է հետևյալ հղմամբ՝ <http://www.consultant.ru/cons/cgi/online.cgi?req=doc&base=ESU&n=43639#030968781946621604>, վերջին մուտք՝ 04.12.2020թ.):
- 21) Խաչատրյան Պ. Խորհրդային միությունում և Հայաստանի Հանրապետությունում հողի նկատմամբ պետության սեփականության իրավունքի առանձնահատկությունների իրավահամեմատական վերլուծությունը, «Արդարադատություն» գիտական հանդես, 2010, դեկտեմբեր 3 (4).
- 22) «Հայաստանի Հանրապետությունում սեփականության մասին» օրենք, ՀՀԳ Տ 1990/20, ընդունվել է 31.10.1990թ., ուժի մեջ է մտել 01.12.1990թ. (հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.arlis.am/documentview.aspx?docid=67>, վերջին մուտք՝ 04.12.2020թ.):
- 23) «Գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների մասին» օրենք, ՀՀԳ-ԽՏ 1991/2, ընդունվել է 22.01.1991թ., ուժի մեջ է մտել 20.02.1991թ. (հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=77>, վերջին մուտք՝ 04.12.2020թ.):
- 24) Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ / ընդհանուր խմբագրությամբ՝ Գ. Հարությունյանի, Ա. Վաղարշյանի. - Եր.: «Իրավունք», 2010.
- 25) «Անշարժ գույքի մասին» օրենք, ՀՀԱԺՏ 1996/1-2, ընդունվել է 27.12.1995թ., ուժի մեջ է մտել 25.01.1996թ. (հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=251>, վերջին մուտք՝ 04.12.2020թ.):
- 26) Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն:
- 27) Հայաստանի Հանրապետության հողային օրենսգիրք, ՀՀՊՏ 2001.06.15/17(149) հոդ. 457-րդ, ընդունվել է 02.05.2001թ., ուժի մեջ է մտել 15.06.2001թ. (հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=146285>, վերջին մուտք՝ 04.12.2020թ.):
- 28) «Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենք, ՀՀՊՏ 2012.03.28/17(891) հոդ. 290-րդ, ընդունվել է 27.02.2012թ., ուժի մեջ է մտել 07.04.2012թ. (հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=74621>, վերջին մուտք՝ 04.12.2020թ.):
- 29) «Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» օրենք, ՀՀՊՏ 2018.02.07/9(1367) հոդ. 107-րդ, ընդունվել է 16.01.2018թ., ուժի մեջ է մտել 17.02.2018թ. (հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=119404>, վերջին մուտք՝ 04.12.2020թ.):

Тигран Дадунц

Директор Фонда “Центр развития законодательства и
правовых исследований” министерства юстиции РА,
аспирант кафедры гражданского процесса
юридического факультета ЕГУ

РЕЗЮМЕ

Историческое развитие регулирования земельных отношений с участием иностранных лиц

Статья посвящена обсуждению вопросов историко-правового развития института правового регулирования земельных отношений с участием иностранных лиц в Армении. В статье, начиная с начала XIX века, анализируются особенности земельно-правового статуса иностранных лиц в разные исторические периоды, проявления применяемых ограничений и запретов, их причины, раскрываются общие принципы и критерии, которые легли в основу правового регулирования обсуждаемых отношений.

Ключевые слова: иностранные лица, земля, земельные права, земельные отношения, историческое развитие, частная собственность, землепользование, ограничения права.

Tigran Dadunts

Director at “Centre for Legislation Development and
Legal Research” Foundation, Ministry of Justice,
PhD student at Chair of Civil Procedure,
Faculty of Law, YSU

SUMMARY

Historical development of the regulation of land relations with the participation of foreign persons

The article is devoted to the discussion of the issues of historical and legal development of regulation of land relations with the participation of foreign persons in Armenia. The article, starting from the beginning of the 19th century, analyzes the features of the land-legal status of foreign persons in different historical periods, the ways the restrictions and prohibitions applied and their causes, reveals the general principles and criteria that formed the basis of the legal regulation of the discussed relations.

Key words: Foreign persons, land, land rights, land relations, historical development, private property, land use, restrictions on rights.

Բնագիրը ներկայացվել է 08.02.2021թ.

Ընդունվել է տպագրության 18.02.2021թ.

Հոդվածը երաշխավորել է տպագրության (գրախոսել է)

իրավաբանական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր Ա.Իսկոյանը

ԼԻԱՆԱ ՄԱԼԽԱՍՅԱՆ

ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և
իրավունքի ինստիտուտի դոկտորանտ,
իրավաբանական գիտությունների թեկնածու

ՅԵՂԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՏՈՀՄԱՅԵՂԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Ամփոփելով «Յեղապետությունը որպես տոհմացեղային կառավարման համակարգ» հետազոտությունը՝ կարելի է եզրակացնել, որ ցեղապետության իշխանությունը ամփոփված է ֆորմալ կարգավիճակում: Յեղապետությունը կառավարվում է անհատի կողմից, ով ունի գերակայություն հպատակների նկատմամբ և օժտված է աստվածային կառավարման իրավունքով: Յեղապետությունում ձևավորված և հազարամյակներ պահպանված սոցիալական իշխանության կրոնական օրինականացման միակ այլընտրանքը՝ հասարակական պայմանագրի հայեցակարգի ձևավորումն էր, ինչը քաղաքական հետազոտարգացումների արդյունքում՝ հանգեցրեց բանական սոցիալական-քաղաքական բանավեճի կազմակերպման ինստիտուցիոնալ մեխանիզմի որոնմանը, զարգացմանը, կատարելագործմանը և հասարակական պայմանագրի ինստիտուտի կայացմանն ու պահպանմանը:

Հիմնաբառեր- ցեղապետություն, կառավարման համակարգ, իշխանություն, նպատակային միավորումներ, առաջնորդ, ցեղապետ:

Պարզ ցեղապետությունը ներառում է մի քանի հանրույթներ, որոնցից մեկը գերակայում է մյուսներից, իսկ դրա առաջնորդը հանդիսանում է առաջնորդ մնացյալ բոլորի նկատմամբ: Պարզ ցեղապետությունները ծագում են ենթահամակարգերի վերածվող պարզերի միավորմամբ: Գոյություն ունեն մեծ քարտեզից ձևավորված գերբարդ ցեղապետություններ, որոնցում հաշվարկվում են հազարավոր և նույնիսկ միլիոնի հասանող անդամներ:

«Աշխարհում հայտնի են բազմաթիվ էթնոգրաֆիկ ժողովուրդներ, որոնք ունեն ցեղապետական կառավարում: Աֆրիկայում՝ աշանտի, բեգանտու, բագանդա, վոլոֆ, գուլու, պուշտուններ, Հյուսիսային Աֆրիկայում՝ բեդուիններ, դադախներ, կիրգիզներ, մոնղոլներ, Ֆիջիում, Հայիթիում և Հավայան կղզիների հյուսիսարևմտյան ափամերձ տարածքներում՝ հյուսիսամերիկյան հնդկացիներ, ինկեր և այլն»¹:

Յեղի առաջնորդը, սկզբունքորեն, տարբերվում է տոհմի ղեկավարից, ով անհատական վարքագծի արդյունքում է վաստակում իր կարգավիճակը: Ամերիկացի անթրոպոլոգ Մ. Սալզին գրում է. «Յեղապետությունում քաղաքական հիմնականաբար ապահովվում է ցեղային կապերով: Սակայն այդ կապերը սեփական ձևավորման պայման ունեն. այն է՝ ֆորմալ առաջնորդի առկայությունը: Այստեղ ցեղի անդամները չեն հաստատում մյուսների նկատմամբ սեփական իշխանությունը անհատական ջանքերով, այլ՝ իշխանության են գալիս արյունակցական կապերի միջոցով՝ հատուկ կարգավիճակի ուղիով: Իշխանությունն ամփոփված է ֆորմալ կարգավիճակում. առաջնորդին տրված են կազմակերպչական արտոնություններ, ինչը դրսևորվում է նաև ենթակա ժողովրդի գույքի և աշխատանքի արդյունքի նկատմամբ հատուկ հսկողությամբ»²: Անթրոպոլոգ և փիլիսոփա Լ.Ե. Գրինին նշում է. «Իշխանության քաղաքական ձևավորման գլխավոր սկզբունքը հավայական ցեղապետություններում խստորեն կապված է արյունակցական հիերարխիայի հետ, որն էլ հենված է նախնիների նկատմամբ ծագումնաբանական մերձավորության և առաջնորդի հեղինակության հիմքերի վրա (ավագ եղբայրների և որդիների ծագումնաբանությունը համարվում է առավել բարձր): Այսպիսով, ամբողջ քաղաքական և սոցիալական հիերարխիան կառուցվում է արյունակցական հարաբերությունների շուրջ»³:

Առաջնորդի իշխանության պահպանման կարևոր մեխանիզմ է՝ բարիքի վերաբաշխումը: Այն ծագում է տարբեր նյութական բարիքների փոխանակության ձևավորման արդյունքում, որն, այս դեպքում, զուգահեռաբար պատկերվում է որպես ուղղահայաց ձևաչափ՝ ներքևից վերև և վերևից ներքև: Ահա ինչպես է տվյալ գործընթացը նկարագրում հայտնի անթրոպոլոգ Ռ.Ֆիրտը. «Տիկոպիան կղզու ցեղի առաջնորդը, իր համայնքի ցածր օղակից՝ «ներքևից» ստանում է նվերներ, սակայն բացի ընդունելուց նա նաև պարտավոր է իր ստացածը բաշխել առավել մեծ քանակությամբ»⁴: Հավելենք, որ այստեղ առատաձեռնությունն առաջ-

նորդից խստորեն պահանջվող հատկանիշ է համարվում: «Յեղապետներն իրավասություն ունեն վերահսկել մթերքների և իրենց տներում պահվող արժեքավոր իրերի հսկայական քանակությունը: «...» Ակնկալվում է, որ այդ պաշարները կօգտագործվեն ի բարօրություն ժողովրդի: Համայնքի շարքային անդամների կուտակած բարիքը ևս պետք է բաշխվի մյուս անդամների միջև: Տվյալ դեպքում, առաջնորդները հետևողական են, որ գույքի բաժանման սխալ նախադեպեր չլինեն: Խախտման դեպքերում՝ առաջնորդը բռնագրավում է համայնքի անդամի գույքը և, նույնիսկ, սպանում նրան:»⁴:

Առաջնորդին թանկարժեք իրերի նվիրաբերության, իսկ հետո բաշխման կարգը ընդհանուր ցեղապետության կառավարման վերաբերյալ պատկերացում է ձևավորում, որով նա տնօրինում է ընդհանուր համայնքի շահը՝ պարզեցնելով հպատակներին իբրև թե ազատություն, միևնույն ժամանակ, դրանով իսկ ուժեղացնելով վերջիններիս կախվածությունն իրենից: Յեղապետության կառավարման մեջ կիրառվող այս վերաբաշխումը լայն կիրառվում է որպես իշխանության ամրապնդման եղանակ, նաև ներկայումս՝ պետությունների կողմից:

Յեղապետության ձևավորման սկզբնական շրջանում առաջնորդը հանդիսանում էր միայն որպես գույքը տնօրինող: «Նրա հպատակներն ու արյունակիցները բերում են նրան հատուկ ընտրված նվերներ: «...» Բացի ցեղախմբի անդամների և հյուրերի համար նախատեսված զվարճանքի ծախսերից՝ առաջնորդը առատաձեռնորեն բարիքը բաժանում է նվերների տեսքով իր լավագույն հպատակներին: Այս կերպ նա ձեռք է բերում հավատարիմ հպատակներ, այսպիսով՝ նվերների ու նյութական բարիքներ ստանալու շարունակական հոսք ապահովելով իր համար: Ի դեպ, դրանց կուտակումը նպատակային է՝ կրկին հետ բաժանելու պայմանով:»⁵:

Սակայն «ցեղապետության ձևավորման տարբեր փուլերում «...» նման վերաբաշխումը բխում էր առաջնորդի նյութական շահերից»⁶:

«Համայնքի առաջնորդն, իհարկե, իրեն պատկանող «ամբողջ բարիքը» չէր բաժանում»⁷: Այսպիսով, բաժանելով հասարակական բարիքը սեփական անունից, առաջնորդը բարձրացնում է իր հեղինակությունը, իսկ համայնքի անդամներն, իրենց առաջնորդից ստանալով նվերներ, ստիպված էին պատասխանել նույն կերպ, ինչը, որպես կանոն, և՛ ծավալով, և՛ արժեքով գերազանցում էր նախնական նվերը: Բացի դրանից, առաջնորդն իր հասարակական գործառնությունների իրականացման, անձնական կարիքների, ընտանիքի և ծառաների

ապահովման «ներկայացված ծախսերի» համար օգտվում էր կոլեկտիվ հավելյալ արդյունքից: Յեղապետության կազմավորման նախնական շրջանում նման ծախսերը սահմանափակ էին: Ժամանակի ընթացքում բարիքի կուտակման չափերն աճում են: Որոշ ամենագարգացած նախապետական հիերարխիկ համակարգերում կառավարիչները կարող էին իրենց թույլ տալ, առանց խոճի խայթի, «մտնել հասարակության գրպանը» և օգտագործել ժողովրդի ստեղծած բարիքը՝ բացառապես սեփական կարիքների համար⁸:

Այսպիսով, առաջնորդը ստացված նվերներն առավել շատ է սկսում օգտագործել իր մերձավոր շրջանակի և իր սեփական կարիքների համար: Ձևավորվում է գույքային շերտավորում:

«Ի հակադրություն մարքսիստական պատկերացումներին, տեսնում ենք, որ այս պարագայում իշխանությունը ածանցյալ չէ, այլ առաջնային է գույքային շերտավորման նկատմամբ: Բավականին հաճախ և մեխանիկորեն են անթրոպոլոգները բացատրում ցեղապետության ծագումը հասարակական արդյունքի ավելցուկի ծագմամբ»⁹: Այստեղ նկատենք, որ նյութական բարիքներում իշխանության փոխակերպումը պահպանվում է բոլոր մինչև կապիտալիստական պետություններում՝ որպես օրգանական և համակարգաձևավորող տարր, և միայն նոր ժամանակներում է կոռուպցիան ձևակերպվում որպես հակաիրավական երևույթ: Ժամանակակից բազմաթիվ երկրներում՝ ֆորմալ առումով գտնվելով օրենքից դուրս, փաստացի տվյալ մեխանիզմը մնում է որպես համակարգաձևավորող:

Յեղապետության մեջ վերաբաշխումն, իր ողջ կարևորությամբ, կարող է միայն հզորացնել առաջնորդի իշխանությունը, ամրապնդել նրա ֆորմալ կարգավիճակը, սակայն չի հանդիսանա նրա իշխանության հիմքը:

Յեղապետությունում իշխանությունը կրոնական բնույթ է կրում և հիմնված է աստվածների հետ առաջնորդի առավել մոտ լինելու *զադափարախտության* վրա: «Յեղապետությունը կառավարվում է ցեղապետ-անհատի կողմից, ով գերակա դիրք ունի համայնքի անդամների նկատմամբ և նրանց կառավարելու իրավունք: Այդ իրավունքը անփոփոխ է, հիմնված է ենթադրյալ աստվածային ծագման վրա, ինչը, իր հերթին, բնական կերպով ենթադրում է տիտղոսի ժառանգական փոխանցում՝ հորից որդուն»¹⁰: «Հատկապես նա (առաջնորդը), անցկացնելով անհրաժեշտ արարողակարգերը և ճիշտ կազմակերպելով նվիրաբերության կարգը, պատասխանատու է հողի բերրիության և լավ բեր-

քառվորյան ապահովման համար»¹¹ :

Այս ամենը բերեց նրան, որ. «Հասարակության հիերարխիկ շերտերում ձևավորվեց մոգական ուժի վերաբերյալ բացասական վերաբերմունք առ այն, որ միայն ցեղապետները և նրա հարազատներն են օժտված հատուկ հատկանիշներով, որը հնարավորություն է տալիս ճիշտ տնօրինել իշխանությունը և շփումներ հաստատել անդրշիրիմյան աշխարհի հետ: Հասարակ ժողովրդի համար այդ ունակությունները հասանելի չեն, բացի այդ՝ ցեղապետի ձեռքում կենտրոնացված իշխանությունը կարող է դառնալ վտանգավոր և՛ վնասել նրան անձնապես, և՛ իր ամբողջ շրջապատին: Դրա արդյունքում՝ հիերարխիկ շերտերում ձևավորվում են իշխանության կարգավորման և պահպանության ուղենիշները:»¹² : Այսպիսով, անհնազդուությունը առաջնորդին՝ անհնազանդություն է աստվածներին: Ամերիկացի անթրոպոլոգ Ռ. Կորնեյրոն հետևյալ կերպ է շարադրում այդ իրավիճակը. «Երբ առաջնորդի ցանկությունը աստվածային կամքով է արտահայտված, իսկ նրա հետ համաձայնությունը պարզևատրված է անդրշիրիմյան աշխարհի հետ շփմամբ կամ այլ գերբնական շնորհով՝ այս դեպքում ո՞վ կարող է առարկել»: Առաջնորդի հրամանը չկատարողներին ճնշելու համար հաճախ աստվածների անունից հնչում էին սարսափելի և արագ տեղացող պատիժների սպառնալիքներ:»¹³ :

Ցեղապետությունում ծագած իշխանության կրոնական օրինականացումը պահպանվեց մինչև Նոր ժամանակներ: Ցեղապետության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ցանկացած հասարակության և, ընդհանրապես, իշխանական համակարգի համար իրական հիմք հանդիսանում է գաղափարախոսությունը, այն դեպքում, երբ պետության համար բնորոշ ուժային մեխանիզմները միայն հարմարեցվում են դրան: Բոլոր դեպքերում, ցեղապետությունը լիարժեք կայուն համակարգ չէ: Առավել ճիշտ բնորոշմամբ՝ այն բավականին կայուն է որպես սոցիալական կազմակերպման ձև: Մակայն ցեղապետի կարգավիճակը ոչ միշտ է բնութագրվում որպես կայուն: Ահա ինչպես է տվյալ թեման ներկայացնում Ն.Ն. Կրադինը՝ համեմատելով մի շարք այլ անթրոպոլոգների մոտեցումներ. «Արտաքննապես բազմաթիվ ցեղապետությունների կառավարիչները միապետների տեսք ունեին: Մակայն, իրականում, նրանց իշխանությունը խիստ սահմանափակված էր: Որոշ խմբերի մոտ գոյություն ունեին սոցիալական հսկողության բավականին զարգացած մեխանիզմներ: Օրինակ՝ գոտենտների մոտ առաջնորդը կարող է տուգանել մեղավորին, հեգերների դեպքում՝ մահապատժի վճիռ ընդունել (չնայած գործնականում տվյալ պատիժը կիրառել զգուշանում էր): Առաջնորդների մտավախությունները, անկասկած, պայմանավորված էին հարկադրման ինստիտուտների բացակայությամբ: Նույն աղբյուրում հաղորդվում էր, որ բանտու ցեղի բազմաթիվ առաջնորդներ սպանվեցին իրենց ցեղակիցների ճնշման հետևանքով (Schapera): Օրինակ, երբ առաջնորդը չէր հետևում ավագանու խորհրդին, փորձում էր փոփոխել ավանդույթները, խախտում տաբուն կամ սպանություն գործում, նրան կարող էին գահընկեց անել (աշանտի, յորուբա, էգբա): Հավայական առաջնորդներից շատերը սպանվեցին այն բանի համար, որ ճնշել էին համայնքի շարքային անդամներին: Վերջիններս ընդունում էին իրենց առաջնորդների իրավունքները՝ ստացված արդյունքի որոշակի մասնաբաժնի նկատմամբ, սակայն պնդում էին, որ նման հարաբերություններում պետք է պահպանվի «արդարությունը»: Եթե առաջնորդները և նրանց մերձավոր շրջապատը չարաշահում էին իրենց կարգավիճակը, ապա դա կարող էր ծնել ժողովրդական դժգոհություն: Քանի որ ցեղապետության կառավարիչները չունեին հարկադրանքի մասնագիտացված ապարատ, նման իրավիճակներում նրանց կարգավիճակը նախանձելի չէր (Մ.Սալգին)»¹⁴ : Այսպիսով, համառոտ նկարագրելով, թե ինչ էր իրենից ներկայացնում ցեղապետությունը որպես քաղաքականության տեսակ և լուսաբանելով այն որպես պատմության մեջ առաջին ինստիտուցիոնալ կազմակերպված սոցիալական իշխանության բնույթ՝ կարող ենք անցնել դրա ծագման պատճառների և մեխանիզմների հարցի քննարկմանը:

Քանի որ «ցեղապետություն» երևույթը բացահայտվել է հարաբերականորեն վերջերս, գոյություն ունեն դրա ծագման սակավաթիվ հայեցկարգեր: Դրանցից առավել հայտնին պատկանում է քաղաքական անթրոպոլոգ Ռ. Կորնեյրոյին: Ահա՝ ինչ է գրում նա. «Մի քանի փաստեր հանգեցրին նրան, որ նեոլիթի ժամանակաշրջանի գյուղերը ընդլայնեցին իրենց ինքնավարության սահմանները և ձևավորվեցին մի քանի համայնքներից կազմված քաղաքական միավորներ, որը կոչվում է ցեղապետություն: Ըստ էության՝ ցեղապետության ձևավորման նախադրյալներ հանդիսացան՝ գյուղատնտեսությունը, սոցիալական և բնական միջավայի սահմանափակումները, ժողովրդական ճնշումները և պատերազմները: Այս նախադրյալներով ստեղծվեցին բավարար և անհրաժեշտ պայմաններ, որոնք էլ հրահրեցին գործընթացը: Դրանք գրեթե անխուսափելիորեն հանգեցրին ցեղապե-

տության ծագմանը: Այսպիսով, ցեղապետությունը կարող էր ծագել ոչ միայն ցեղապետության ծագման սակավաթիվ հայեցկարգեր: Դրանցից առավել հայտնին պատկանում է քաղաքական անթրոպոլոգ Ռ. Կորնեյրոյին: Ահա՝ ինչ է գրում նա. «Մի քանի փաստեր հանգեցրին նրան, որ նեոլիթի ժամանակաշրջանի գյուղերը ընդլայնեցին իրենց ինքնավարության սահմանները և ձևավորվեցին մի քանի համայնքներից կազմված քաղաքական միավորներ, որը կոչվում է ցեղապետություն: Ըստ էության՝ ցեղապետության ձևավորման նախադրյալներ հանդիսացան՝ գյուղատնտեսությունը, սոցիալական և բնական միջավայի սահմանափակումները, ժողովրդական ճնշումները և պատերազմները: Այս նախադրյալներով ստեղծվեցին բավարար և անհրաժեշտ պայմաններ, որոնք էլ հրահրեցին գործընթացը: Դրանք գրեթե անխուսափելիորեն հանգեցրին ցեղապե-

տությունների ստեղծմանը, իսկ հետագայում, առավել սահմանափակ տարածքներում՝ պետությունների ծագմանը:

Անդրադառնալով այն հարցին, թե ինչպիսի գաղափարներով դրսևորվեցին վերը թվարկված պայմանները և երբ սկսեցին ձևավորվել ցեղապետությունները: Ըստ իս՝ այս հարցում մարդկային մտահաղացումները ցեղապետություն ստեղծելու գաղափարների վերաբերյալ պարզ և սակավաթիվ են: Դրանք սակավաթիվ են՝ բացի հետևյալներից.

1. Ձենքի ուժով զավթել հարևան համայնքները:

2. Մարդկանց և նրանցով բնակեցված տարածքները ներառել սեփական քաղաքական միավորում:

3. Մարդկանց գերեվարել և ստիպել նրանց աշխատել, ինչպես ստրուկներ:

4. Օգտագործել մերձավոր զինակիցներից զավթված տարածքների կառավարման համար, եթե տեղի առաջնորդները ապստամբություն կազմակերպեն:

5. Պատերազմի դեպքում նրանցից ևս պահանջել զինվորական ուժի տրամադրում:

Այս գաղափարների շարքը բավարար է, որպեսզի ապահովեր ցեղապետության ինտելեկտուալ ապարատը: Հնարավոր է արդյոք գտնել առավել պարզ գաղափարներ, կամ արդյո՞ք մնան մտահաղացումներ չի կարող ունենալ ցանկացած անձ»¹⁵:

Այս գաղափարների իրականացումը հանգեցրեց ցեղապետության ծագմանը:

Որպես գիտնականներ՝ մենք չենք կիսում բերված գաղափարները, քանի որ դրանք դառնում են շոշափելի, երբ արդեն ձևավորվում են: Այս գաղափարները արմատապես հակասում են կազմակերպված համայնքների ձևավորման և զարգացման գործընթացին, քանի որ հարևան հանրությունների հետ պատերազմը նպատակ ուներ կամ պաշտպանության, կամ ոչնչացման, կամ թալանի, կամ աքսորի: Մեկ հանրության ենթակայումը մյուսին ցեղապետության ձևավորման սկզբնական շրջանում բացարձակ անհայտ ինչ-որ երևույթ էր, և այս թվացյալ պարզունակ գաղափարը, իրականում, երկար և բարդ է հասունացել: Սակայն չենք բանավիճի այս գաղափարի հետ, քանի որ հիմնական հակափաստարկները չեն վերաբերում ռազմական ճանապարհով ցեղապետություն ձևավորելու հնարավորությանը: Այս դեպքում սահմանափակվենք երկու դիրքորոշումներով:

Առաջինը՝ միմյանց չենթարկված հատվածներից կազմված պոլիտիայի կայուն ենթակայումը

հնարավոր չէ, ինչպես հնարավոր չէ սանձահարել մոծակների խումբը: Ենթակայել հնարավոր է միայն այն հասարակությունը, որի ներսում արդեն առկա է ինստիտուցիոնալ սոցիալական ենթակայում: Նշանակում է՝ ենթակայող պոլիտիան արդեն պետք է հանդիսանար որպես ցեղապետություն: Երկրորդ՝ զավթված համայնքների հպատակման մեջ պահելու համար, մինչ հպատակվող բնակչության ընկալումներում զավթողի իշխանությունը օրինականացնող գաղափարախոսության ձևավորումը (իսկ դա բավականին բարդ և տևական գործընթաց է, որը սովորաբար ավարտին չի հասնում), անհրաժեշտ են ուժեղ և կայուն հարկադրանքներ, այսինքն՝ պետական մեխանիզմներ: Դա կնշանակեր, որ պետությունը ծագել է ցեղապետությունից առաջ: Բանը նրանում չէ, որ դա հակասում է Կարենյոյի և անթրոպոլոգների մեծամասնության դիրքորոշմանը: Եթե մնան մեխանիզմներ ձևավորվելից ցեղապետության ծագման արևածագին, դրանք որևէ տեղ չէին անէանա: Ինչպես արդեն նշել ենք, չմայած՝ ցեղապետությունում իշխանությունը հարաբերական կայուն է որպես ինստիտուտ, բոլոր դեպքերում դրա կայունությունը հաճախ բավարար չէ՝ բարձր հուսալիությամբ կոնկրետ առաջնորդի կարգավիճակը ապահովելու և առավել բարդ ցեղապետությունների տրոհումը առավել պարզերի կանխարգելման համար, որոնց օրինակները բավականին շատ են: Այլ խոսքով՝ հարկադրման մեխանիզմների ուսումնասիրման նյութը բավականին ծավալուն է և հակասական. ուստի վերջնական եզրահանգումներ անելը ճիշտ չէ:

Ռ.Կարենյոյի հետ համաձայն ենք միայն նրանում, որ ցեղապետության ծագումը պայմանավորված է գործընթացներով, որոնք առկա են ոչ թե այս կամ այն պոլիտիայի ներսում, այլ՝ դրանց միջև հարաբերություններում: Կազմավորման գործընթացի բնույթի ընկալումը հնարավոր է միայն նրա վերաբերյալ հետմարքսիստական տարածքում պատկերացումների տարածմամբ, քանի որ զարգացած բարդ համակարգերը դետերմինացվում են ամենից առաջ որոշակի ներքին հակասություններով (մարքսիստները դա անվանում են՝ միասնության և հակադրությունների պայքարի օրենք): Իրականում հանրության զարգացումը (այստեղ այլ համակարգեր չենք դիտարկվում) գլխավորապես պայմանավորված է դրանց կառուցվածքով և, առաջին հերթին, ռազմական ինստիտուտի կառուցակարգերով: Գոյություն ունի պարզ կանոն. պարտվածները անհետանում են:

Հանրության պատմությունը հանդիսանում է միմյանց նկատմամբ դրանց փոխադարձ ուժեղաց-

ման գործընթաց: Այս մրցակցության առանցքային գործոններից մեկը հանդիսանում է սոցիալական կազմակերպման եղանակների ձևափոխությունը: Հատկապես այս տրամաբանությամբ է ծագում կենտրոնացված իշխանությունը սկզբնական շրջանում ցեղապետության, հետագայում արդեն՝ պետության ձևով:

Կազմակերպված հանրություններում չկան պատճառներ այն մասին, որ որոշակի ենթահամակարգ (համայնք, խումբ և այլն) ձեռք բերի իշխանություն մյուսի նկատմամբ: Բացի այդ, նման գերակայությունը արմատապես հակասում է նման պոլիտատների գոյության կայուն եղանակին, դրանց ենթահամակարգերի համագործակցման բնույթին, որոնց հավասարությունը, փոխադարձ ընդունումն ու փոխադարձ հարգանքը հանդիսանում են այդ հանրությունների գոյության կարևոր պայման: Ինչպես գրում է Մ.Սալզինը. «Այդ հանրությունները քաղաքականապես հավասար են: Որոշակի հանգամանքների պայմաններում որոշները կարող են

մյուսներին գերազանցել քաջությամբ, սակայն ոչ առավել բարձր ենթակարգության դիրքորոշմամբ. նրանք բոլորը դիտարկվում են նույն հարթության վրա «...»: Նախանձախնդրորեն պաշտպանելով սեփական ինքնավարությունը՝ նրանք չեն ճանաչում որևէ քաղաքական հիմք, որը կարող է հակառակ լինել իրենց սեփական շահերին:»¹⁶ :

Սոցիալական կազմակերպման տվյալ տիպը լիարժեք կայունություն ձեռք բերեց այն ժամանակ, երբ դրան համապատասխան ձևափոխվեց գաղափարախոսությունը: Նման ձևափոխությունը, որը հաստատում է, ինչպես արդեն հիշատակվել է, առաջնորդի ծագումնաբանական կապը գերբնական ուժերի հետ, ապահովեց ցեղապետության ձևավորումը:

¹ Տե՛ս, Крадин Н.Н. Политическая антропология. М. 2004. С. 165-166.

² Տե՛ս, Салзин М. Экономика каменного века. М., 1999. С. 134.

³ Տե՛ս, Гринин Л.Е. Государство и исторический процесс. Эпоха формирования государства. Общий контекст социальной эволюции при образовании государства. М., 2007. С. 110.

⁴ Տե՛ս, Крадин Н.Н. Политическая антропология. М. 2004.С. 119.

⁵ Տե՛ս, Салзин М. Экономика каменного века. М., 1999. С. 134.

⁶ Տե՛ս, Салзин М. Экономика каменного века. М., 1999. С. 134.

⁷ Տե՛ս, նույն տեղում:

⁸ Տե՛ս, Крадин Н.Н. Политическая антропология. М. 2004.С. 120.

⁹ Տե՛ս, Салзин М. Экономика каменного века. М., 1999. С. 135.

¹⁰ Տե՛ս, Кревельд Мартин ван. Расцвет и упадок государства. М., 2006.С. 19.

¹¹ Տե՛ս, նույն տեղում էջ 29:

¹² Տե՛ս, Крадин Н.Н. Политическая антропология. М. 2004.С. 118.

¹³ Տե՛ս, Карнейро Р.Л. Было ли вожество сгустком идей? // Раннее государство, его альтернативы и аналоги. - Волгоград. 2006. С. 224.

¹⁴ Տե՛ս, Крадин Н.Н. Политическая антропология. М. 2004.С. 169.

¹⁵ Տե՛ս, Карнейро Р.Л. Было ли вожество сгустком идей? // Раннее государство, его альтернативы и аналоги. - Волгоград. 2006. С. 220.

¹⁶ Տե՛ս, Sahlins M. Sahlins. Tribal Culture and Its Transformations// Shared diversity: peoples and cultures in the global village. Texas A&M University. Dept. Of Anthropology. 2002. P. 56.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՅԱՆԿ

1. Гринин Л.Е. Государство и исторический процесс. Эпоха формирования государства. Общий контекст социальной эволюции при образовании государства. М., 2007.
2. Крадин Н.Н. Политическая антропология. М., 2004.
3. Кревельд Мартин ван. Расцвет и упадок государства. М., 2006.

4. Карнейро Р.Л. Было ли вождество ступенью идей? // Раннее государство, его альтернативы и аналоги. – Волгоград. 2006.
5. Салзин М. Экономика каменного века. М., 1999.
6. Sahlins M. Sahlins. Tribal Culture and Its Transformations// Shared diversity: peoples and cultures in the global village. Texas A&M University. Dept Of Anthropology. 2002.

Լիանա Մալխասյան

Докторант института философии,
социологии и права НАН РА,
кандидат юридических наук

РЕЗЮМЕ

Вождество как система племенного управления

Подводя итоги исследования “Вождество как система племенного управления” можно сделать вывод: власть вождества заключена в формальном статусе. Вождество управляется индивидуумом, который имеет превосходство над подчиненными и наделен божественным правом управления. Единственной альтернативой религиозной легализации социальной власти, сформированной в вождестве и сохраненной тысячелетиями, являлось формирование концепции общественного договора, что вследствие дальнейших политических развитий привело к поиску, развитию, усовершенствованию и в результате становления и сохранения как института общественного договора.

Ключевые слова: вождество, система правления, власть, целевые союзы, лидер, вождь.

Liana Malkasyan

Doctoral candidate of the Institute of Philosophy,
Sociology and Law of NAS of RA,
PhD in Law

SUMMARY

Tribal leadership as a tribal management system

Summing up the research about “Tribal leadership as a system of tribal management”, it can be concluded: The tribal leadership power is summarized in formal status. Tribal leadership is ruled by an individual who has dominance towards subjects and is endowed with the right of divine rule. The only alternative to the religious legitimacy of the social power, which was formulated and preserved for millennia in the tribal leadership, was the formation of social contract concept, which, as a result of further political developments, led to the search, development, improvement of the organization of rational socio-political debate institutional mechanism and as a result of the formation and maintenance of the institution of the social contract.

Key words: tribal leadership, management system, power, target unions, leader, chieftain.

Բնագիրը ներկայացվել է 15.01.2021թ.

Ընդունվել է տպագրության 09.02.2021թ.

Հոդվածը երաշխավորել է տպագրության (գրախոսել է)

իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գ. Սաֆարյանը

ԱՐՄԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Եվրոպական համալսարանի իրավագիտության
ամբիոնի ասպիրանտ

ՏՈՒԺՈՂԻ ՍԱՀՎԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՎՆԱՍԻ ՀԱՏՈՒԳՄԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՎՐԱ

Սույն հոդվածը նվիրված է տուժողի մահվան դեպքում վնասի հատուցման հիմնական իրավունքի գործողության շարունակականության հարցերին: Քննարկման առարկա են դարձել վնասի հատուցման պահանջի սահմանադրաիրավական բնույթը, վնասի հատուցման հիմնական իրավունքի սահմանման նպատակը, և դրանց լույսի ներքո փորձ է արվել, այդ իրավունքի գործողության վրա մահվան ունեցած ազդեցության հիմնահարցերի շուրջ, գալ որոշակի եզրահանգումների:

Հիմնաբաներ- մահ, տուժող, վնասի հատուցման պահանջ, իրավունքի պաշտպանության միջոց, սեփականություն, ժառանգություն:

Հայաստանի Հանրապետությունում 2015 թվականին տեղի ունեցած սահմանադրական փոփոխությունների արդյունքում վնասի հատուցման իրավունքը ստացավ իր առանձին ամրագրումը՝ ճանաչվելով որպես մարդու հիմնական իրավունք:

ՀՀ Սահմանադրության 62-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Յուրաքանչյուր ոք ունի պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց ոչ իրավաչափ գործողություններով կամ անգործությամբ, իսկ օրենքով սահմանված դեպքերում՝ նաև իրավաչափ վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման իրավունք: Վնասի հատուցման պայմանները և կարգը սահմանվում են օրենքով»¹:

Վնասի հատուցման հիմնական իրավունքն ամրագրող ՀՀ Սահմանադրության 62-րդ հոդվածն անհատների և իրավաբանական անձանց համար երաշխավորում է պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց ոչ իրավաչափ գործողությունների կամ անգործության հետևանքով նրանց պատճառված վնասի դիմաց հատուցման տրամադրումը: Օրենքով հատուկ սահմանված դեպքերում անձինք կարող են ակնկալել և ստանալ հատուցում նաև իրավաչափ վարչարարության հետևանքով ծագած վնասի դիմաց:

Իրավունքը խախտված անձի (այլ կերպ՝ տուժողի) մահը վնասի հատուցման հիմնական իրավունքի վրա ունի ազդեցության երկու ուղղություն.

Առաջին. տուժողի մահը չի դադարեցնում վնասի հատուցման պահանջի իրավունքը: Նյութական պահանջի իրավունքը փոխանցվում է վերջինիս իրավահաջորդներին՝ շարունակելով լինել սահմանադրական մակարդակում երաշխավորված:

Երկրորդ. տուժողի մահը որոշ դեպքերում ինքնին երրորդ անձանց վնաս պատճառելու և, հետևաբար, նրանց մոտ դրա հատուցման սահմանադրական իրավունքի ծագման հիմք է:

Սույն հոդվածը նվիրված է վնասի հատուցման սահմանադրական իրավունքի գործողության վրա տուժողի մահվան ունեցած ազդեցության (նշված առաջին ուղղության) վերլուծությանը:

Վնասի հատուցման հիմնական իրավունքի գործողության վրա առաջնային տուժողի մահվան ունեցած ազդեցությանը վերաբերող հարցի պատասխանը գետեղված է՝ այն վրա հասնելու պարագայում իրավունքը դադարելու կամ գոյությունը շարունակելու հնարավորության մեջ: Նմանաբնույթ ազդեցությունը բացահայտելու համար անհրաժեշտ է պարզել, թե կրած վնասի դիմաց հատուցում չստացած տուժողի մահվան պարագայում ինչպիսի ճակատագրի է արժանանում քննարկման առարկա հիմնական իրավունքը:

Նշված հարցի պարզաբանման համար, առաջին հերթին, անհրաժեշտ ենք համարում քննարկման առարկա դարձնել փոխհատուցման պահանջի սահմանադրաիրավական բնույթը՝ հղում կատարելով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ նաև ՄԻԵԴ) պրակտիկային:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին» Եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ նաև ՄԻԵԿ) թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի 1-ին մասի համաձայն. «Յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ ունի իր գույքից անարգել օգտվելու իրավունք...»²:

ՄԻԵԿ թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածով նախատեսված «գույք» հասկացությունն ունի ինքնուրույն նշանակություն, որը չի սահմանա-

փակվում նյութական իրերի նկատմամբ սեփականության իրավունքով և կապված չէ ներպետական օրենսդրության ձևական դասակարգման հետ: Ինչպես նյութական իրերը, այնպես էլ գույքային հանդիսացող որոշակի այլ իրավունքներ ու շահեր, որոնք իրենցից ներկայացնում են ակտիվ (անգլերեն *constituting an asset*), նույնպես կարող են համարվել «գույքային իրավունքներ» և, հետևաբար, նաև «գույք»՝ այս դրույթի իմաստով³:

Այսպիսով, գույքային իրավունքը կարող է դիտվել որպես «գույք»՝ ՄԻԵԿ թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի իմաստով, եթե այն իր բնույթով կարող է որակվել որպես անձին պատկանող ակտիվ (նյութական արժեք), այլ կերպ՝ անձի ունեցվածքի մաս: ՄԻԵԿ ձևավորած պրակտիկայից հետևում է, որ պատճառված վնասի դիմաց փոխհատուցման պահանջը Դատարանը հենց այդպես է ճանաչում և համարում «գույք»՝ Կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի իմաստով:

Մասնավորապես, *Pressos compania naviera s.a. and others v. Belgium* գործով ՄԻԵԿ-ը եզրահանգել է, որ պատճառված վնասի դիմաց փոխհատուցման պահանջն այնպիսի բնույթ ունի, որ այն դարձնում է ակտիվ, և, հետևաբար, պետք է համարվի «գույք»՝ Կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի իմաստով⁴:

Plechanov v. Poland գործով ՄԻԵԿ-ը արձանագրեց, որ «գույք» հասկացությունը տարածվում է նաև ակտիվների նկատմամբ, այդ թվում՝ պահանջների, որոնց կապակցությամբ դիմումատուն կարող է պնդել, որ նվազագույնը ունեցել է դրանց բավարարման օրինական ակնկալիք: Պահանջը կարող է որակվել որպես ակտիվ միայն այն դեպքում, երբ ազգային օրենսդրության տեսանկյունից այն բավարար հիմնավորված է, օրինակ՝ առկա է ձևավորված դատական պրակտիկա, որը հաստատում է այն: Այս գործով եզրահանգելով, որ պետության հանդեպ վնասի փոխհատուցման պահանջը ազգային օրենսդրության տեսանկյունից հիմնավոր է՝ ՄԻԵԿ-ը այն որակեց որպես «գույք»՝ Կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի իմաստով⁵:

Դրամական ցանկացած պահանջի պարագայում ենթադրվում է, որ վաղ թե ուշ այն ապահովելու է անձի իրական (նյութականացված) հարստության աճը: Եթե դրամական միջոցները կամ նյութական իրերը համարվում են հարստության մաս, ապա դրանք ստանալու անձի ունեցած իրավաբանորեն ամրագրված հնարավորությունը (պահանջը) նույնպես պետք է դիտարկվել որպես նրա հարստության որոշակի դրսևորում: Ասվածը ամրապնդվում է նաև նրանով, որ պահանջն ինքնուրույն կարող է հանդիսանալ հարստության աճի առարկա՝ ինչպես նաև հարստության պահպանման առարկա: Այսպիսով, պահանջը կարող է հանդիսանալ հարստության մաս և, հետևաբար, պետք է համարվի «գույք»՝ Կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի իմաստով:

վում է նաև նրանով, որ պահանջն ինքնուրույն կարող է հանդիսանալ շրջանառության առանձին առարկա՝ ձևավորելով շուկայական որոշակի արժեք: Արդեն իսկ պատճառված վնասի դիմաց փոխհատուցում ստանալու պահանջը, մեծ հաշվով, իրենից ներկայացնում է իրավախախտին ուղղված դրամական (գույքային) պահանջ:

Ամփոփելով ներկայացվածը՝ կարող ենք եզրահանգել, որ հանրային իշխանության կողմից պատճառված վնասի հատուցման պահանջը իրենից ներկայացնում է «գույք»՝ Կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի իմաստով, և, հետևաբար, պետությունը պարտավոր է անձի համար երաշխավորել այդպիսի գույքից անարգել օգտվելու հնարավորությունը:

Երբ վնասի հատուցման դրամական պահանջն ուղղված է հանրային իշխանությանը, ապա անձի՝ այդ տեսակ գույքից անարգել օգտվելու հնարավորությունը կախված է, մասնավորապես, հանրային իշխանության կողմից պահանջը փաստացի բավարելու հանգամանքից: Այդ գումարը անձին չտրամադրելը, որը վերջինս ողջամտորեն կարող էր ակնկալել հանրային իշխանությունից, հանդիսանում է միջամտություն՝ իր «գույք»-ից (պահանջից) անարգել օգտվելու իրավունքին: Նման դիրքորոշում է հայտնել ՄԻԵԿ-ը, մասնավորապես, *Burdov v. Russia* և *Voytenko v. Ukraine* գործերով կայացված վճիռներով⁶:

Այսպիսի ընկալման հիմքերը լիովին տրամաբանական և օրինաչափ են թվում, երբ պահանջատերը ստանում է բավարարում, այսինքն՝ դրամական պահանջը ձևավորվում է նյութականացված, իրական հարստության: Ստացվում է, որ վերջինս իրացրել է իր պահանջը, օգտվել է իր գույքից, իսկ այդ գումարը չտրամադրելը, որն անձն իրավունք ուներ ստանալ, հավասարեցվում է նրան, որ վերջինս չի կարողանում անարգել օգտվել իր գույքից, այսինքն՝ անձի իրավունքը խախտվում է:

Հանրային իշխանությունը պարտավոր է անձի համար երաշխավորել իր գույքից անարգել օգտվելու կոնվենցիոն և սահմանադրական ամրագրում ստացած հնարավորությունը: Եթե պարտապանը հանրային իշխանությունը չէ, ապա վերջինիս պարտականությունը հանգում է իր գույքից անարգել օգտվելու անձի իրավունքը պաշտպանելուն, իսկ, այն դեպքում, երբ հանրային իշխանությունը հանդես է գալիս պարտապանի դերում, ապա վերջինիս պարտականությունն է նաև տրամադրել համապատասխան պահանջի բավարարում: Հակառակ դեպքում՝ կստացվի, որ հանրային իշխանությունն ինքն է խախտում այն իրավունքը, որը պար-

տավոր է երաշխավորել:

Հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 81-րդ հոդվածի կարգավորումները՝ նույն ակտի 60-րդ հոդվածում ամրագրված սեփականության հիմնական իրավունքը՝ պետք է մեկնաբանել ՄԻԵԴ վերը ներկայացված պրակտիկայի լույսի ներքո: Նման կերպ է վարվել, օրինակ, ՀՀ վճռաբեկ դատարանը, երբ թիվ ԵԿԴ/0169/02/15 քաղաքացիական գործով 27.12.2016 թվականին կայացված որոշմամբ գրավի իրավունքը ճանաչել է որպես «գույք» Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի իմաստով և նշել. «2005 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածում և 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածում գործածվող «սեփականություն» եզրույթը մեկնաբանելիս պետք է ելակետ ընդունել և հաշվի առնել սեփականության իրավունքի պաշտպանության ոլորտում Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ ՄԻԵԴ) իրավակիրառ պրակտիկան»⁷:

Ինչպես հայտնի է, սուբյեկտիվ իրավունքի պաշտպանության եղանակների տակ հասկացվում են օրենքով ամրագրված հարկադրական բնույթի նյութաիրավական միջոցները, որոնց կիրառմամբ իրականացվում է խախտված իրավունքների վերականգնումը և ներգործությունը իրավախախտի վրա⁸: Իր հերթին, վնասի հատուցումը հանդիսանում է իրավունքի պաշտպանության ճանաչված և լայն տարածում ունեցող միջոցներից մեկը:

ՄԻԵԴ-ն իր վճիռներում արձանագրել է, որ կոնվենցիոն իրավունքի խախտման հաստատումը պետությանը պարտավորեցնում է դադարեցնել այն և վերականգնել մինչև իրավունքի խախտումը եղած դրությունն՝ այնքանով, որքանով դա հնարավոր է⁹:

Իրավունքի վերականգնման միջոցի ընտրությունը յուրաքանչյուր դեպքում կախված է թույլ տրված խախտման բնույթից: Հնարավոր են իրավիճակներ, երբ կարելի է վերականգնել այն դրությունը, որը առկա կլինեք խախտումն առհասարակ տեղի չունենալու պարագայում (restitutio in integrum), սակայն շատ դեպքերում խախտման բնույթն այնպիսին է, որ մինչ այդ եղած դրությունն ապահովել հնարավոր չէ, և այդ պարագայում, արդեն, սուբյեկտիվ իրավունքը վերականգնվում է պատճառված վնասների հատուցմամբ: Վնասների հատուցումը կոչված է՝ ամբողջությամբ կամ հնարավոր առավելագույն չափով հարթելու, վերացնելու ի հայտ եկած բացասական հետևանքները՝ դրանով իսկ փորձելով վերականգնել (այնքանով, որքանով հնարավոր է) մինչև իրավունքի խախտումը եղած դրությունը:

մը եղած դրությունը:

Այս կապակցությամբ անհրաժեշտ ենք համարում հիշատակել նաև ՀՀ սահմանադրական դատարանի կողմից 07.11.2017 թվականին կայացված թիվ ՍԴՈ-1383 որոշումը, որտեղ մասնավորապես արձանագրվել է. «Յուրաքանչյուր իրավունքի ամրագրումն արդեն իսկ ենթադրում է դրա խախտման արդյունքում պատճառված վնասների հատուցում: Միայն այդ պարագայում իրավունքների և ազատությունների պաշտպանության համակարգը կլինի լիարժեք և արդյունավետ»¹⁰:

Այսպիսով, կարող ենք նշել, որ վնասի հատուցումը հանդիսանում է իրավունքի պաշտպանության միջոց: Իրավունքի պաշտպանության միջոցից օգտվելու իրավունք կարող է ունենալ միայն տուժողը, այսինքն՝ անձը, ում որոշակի գործողություններով կամ դրսևորած անգործությամբ վնաս է պատճառվել:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի¹¹ 1058-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Քաղաքացու անձին կամ գույքին, ինչպես նաև իրավաբանական անձի գույքին պատճառված վնասը լրիվ ծավալով ենթակա է հատուցման այն պատճառած անձի կողմից»:

Նշված նորմից հետևում է, որ օրենսդիրը վնասը դիտում է մի դեպքում պատճառված անձին, մյուս դեպքում՝ նրա գույքին: Պարզ է, որ անձին պատճառված վնասը կարող է լինել ինչպես նյութական, այնպես էլ ոչ նյութական, իսկ գույքին պատճառված վնասը՝ բոլոր դեպքերում իր բնույթով նյութական է: Ինչպես նյութական, այնպես էլ ոչ նյութական վնասի պատճառումը հիմք է հանդիսանում տուժողի մոտ նյութական փոխհատուցման պահանջ ներկայացնելու իրավունքի ծագմանը:

Պատճառված վնասի հատուցմանը վերաբերող դրամական պահանջի իրավունքը գույքային իրավունք է, գույք (սեփականություն) և, հետևաբար, ընդհանուր կանոնի համաձայն՝ տուժողի մահից հետո այն ժառանգում են իր իրավահաջորդները:

Կասկածից վեր է, որ անձի մահից հետո անմիջապես նրան պատճառված նյութական կամ ոչ նյութական վնասի (անձին պատճառված վնաս) հատուցումը այլևս ուղղված չէ խախտված որևէ սուբյեկտիվ իրավունքի վերականգնմանը կամ տուժողին պատճառված բացասական հետևանքների հարթմանը՝ այդ կերպ փորձելով հնարավորինս վերականգնել մինչև իրավունքի խախտումը եղած դրությունը:

Իր հերթին, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի¹² 1184-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Ժառանգ-

գության ղեպքում մահացածի գույքը (ժառանգությունը) անփոփոխ վիճակում, որպես միասնական ամբողջություն, անցնում է այլ անձանց «...»:

Նույն ակտի 1186-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «*Ժառանգության զանգվածի մեջ է մտնում ժառանգության բացման օրը ժառանգատուին պատկանող գույքը՝ ներառյալ դրամը, արժեթղթերը, գույքային իրավունքները և պարտականությունները*»:

Ինչպես երևում է նշված նորմից, անձը ժառանգում է ժառանգատուի մահվան պահին նրան պատկանող գույքը (մասնավորապես իրերը)՝ անկախ նրանից, թե այն ինչ աստիճանի վնասված է, և թե ինչ գույք անձը կարող էր ժառանգել, եթե տուժողի կենդանության օրոք տեղի ունեցած իրավախախտման արդյունքում այն չոչնչացվեր:

Վնասված իրը ժառանգատուի մահվանից հետո այլևս դադարում է լինել խախտված սուբյեկտիվ իրավունքի օբյեկտ, իսկ իրավահաջորդը սեփականության իրավունք է ձեռք բերում գույքի նկատմամբ այն վիճակում, որը փաստացի առկա է եղել ժառանգության բացման պահին:

Գույքի ոչնչացման (կորստի) պարագայում դրա նկատմամբ իրային իրավունքները դադարում են: Տուժողի իրավահաջորդը չի կարող ժառանգել կորսված գույք, որի նկատմամբ սեփականության իրավունքը դադարել է առաջինի կենդանության օրոք: Այս պարագայում ևս, ժառանգը ձեռք չի բերում ո՛չ խախտված իրավունք, ո՛չ խախտված իրավունքի օբյեկտ: Իրավիճակն այլ է տուժողի կենդանության պարագայում, քանզի գույքի ոչնչացման արդյունքում վերջինս ապօրինաբար զրկվում է դրա նկատմամբ իր սեփականության իրավունքից, այսինքն՝ ամեն ղեպքում իր սուբյեկտիվ իրավունքը խախտվում է:

Հանրային իշխանության նկատմամբ դրամական պահանջը պնդելիս ՀՀ Սահմանադրության 62-րդ հոդվածով նախատեսված վնասի հատուցման իրավունքը կարող է վկայակոչել միայն այն անձը, որը վնաս է կրել, այսինքն՝ տուժել է հանրային իշխանության գործունեությունից: Սա պայմանավորված է նրանով, որ վնասի հատուցման սահմանադրական իրավունքի ամրագրումը կոչված է հարթելու անձին պատճառված բացասական հետևանքները, վերականգնելու նրա խախտված իրավունքները և օրինական շահերը: Նման պարագայում վնասի հատուցման սահմանադրական իրավունքի իրավագոր կարող է համարվել միայն տուժած անձը:

Անփոփոխվող ողջ ասվածը՝ պետք է նշենք, որ վնասի հատուցման սահմանադրական իրավունքի

ուժով ծագած փոխհատուցման պահանջը մի կողմից գույք է (սեփականություն), որը մտնում է ժառանգության զանգվածի մեջ, մյուս կողմից՝ հիշյալ սահմանադրական իրավունքը կարող է պատկանել միայն տուժողին:

Ելնելով վերը նշված դիտարկումներից՝ գտնում ենք, որ վնասի հատուցման պահանջի իրավունքը, փոխանցվելով տուժողների իրավահաջորդներին, հանդիսանում է նրանց կողմից օրինական հիմքով ձեռք բերված գույք (սեփականություն): Տուժողին պատճառված վնասի հատուցման պահանջը, սեփական անունից պնդելու կապակցությամբ, նրա իրավահաջորդները սահմանադրական մակարդակում կարող են ապավինել իրենց սեփականության հիմնական իրավունքին: ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի ուժով՝ տուժողին պատճառված վնասի հատուցման պահանջի իրավունքը հանրային իշխանության կողմից պետք է պաշտպանվի, իսկ եթե պատճառված վնասի համար պատասխանատուն հանրային իշխանությունն է, ապա նաև պատշաճ կերպով բավարարվի վերջինիս կողմից:

Այսպիսով, վնասի հատուցման պահանջը ներառվում է ժառանգության զանգվածի մեջ և փոխանցվում իրավահաջորդներին՝ որպես այլևս նրանց պատկանող գույք (գույքային իրավունք): Ժառանգության կարգով ենթակա է փոխանցման ինչպես նյութական, այնպես էլ ոչ նյութական վնասի հատուցման պահանջը, որպիսի հանգամանքի արձանագրումը կարևոր է հատկապես ժառանգատուի անձի հետ անխզելիորեն կապված գույքային իրավունքները ժառանգության զանգվածի մեջ չներառվելու ընդհանուր կանոնի համատեքստում:

Կան ղեպքեր, երբ պատճառված վնասի հատուցման իրավունքն անխզելիորեն կապված է տուժողի անձի հետ (ոչ նյութական վնաս, կյանքին կամ առողջությանը պատճառված վնաս և այլն): Ամեն ղեպքում, եթե տուժողի մահվանը նախորդող որևէ պահի արդեն իսկ ձևավորված է եղել որպես կատարման ենթակա, բայց մինչ մահը փաստացի չկատարված դրամական պահանջ, ապա այն փոխանցվում է իրավահաջորդներին որպես նրանց պատկանող գույք՝ անկախ դրա ծագման սկզբնական հիմքից:

Ասվածը պայմանավորված է նրանով, որ անձի հետ անգամ անխզելիորեն կապված դրամական պահանջն արդեն իսկ պետք է բավարարված լիներ նրա կենդանության օրոք և ձևափոխվեր դրամական միջոցների, որոնք էլ ենթակա կլինեին ժառանգման: Նման պայմաններում պահանջի սկզբնական իրավական հիմքը չի կարող այն իրավահաջորդներին փոխանցվելու հարցում խոչըն-

դոտ հանդիսանալ: Հակառակ մոտեցումը կետանց բոլոր տված պարտապանին հնարավորություն կընձեռի օգտվել իր կողմից դրսևորած ոչ իրավաչափ վարքագծից և տուժողի մահվանից հետո խուսափել իր պարտավորությունների կատարումից:

Այսպես, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի¹³ 1186-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն. «Ժառանգության զանգվածի մեջ չեն մտնում ժառանգատուի անձի հետ անխզելիորեն կապված իրավունքները և պարտականությունները, մասնավորապես՝ քաղաքացու կյանքին կամ առողջությանը պատճառված վնասը հատուցելու իրավունքը»:

Նույն օրենսգրքի¹⁴ 1249-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի համաձայն.

«1. Վճարման ենթակա, սակայն քաղաքացու կյանքի օրոք որևէ պատճառով չվճարված՝ աշխատավարձի, բոշակների, նպաստների և կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի հատուցման գումարներն ստանալու իրավունքը պատկանում է մահացածի ընտանիքի անդամներին, ինչպես նաև նրա խնամքի ներքո գտնվող անաշխատունակ անձանց:

2. Մահացածին չվճարված գումարները սույն հոդվածի 1-ին կետի հիմքով ստանալու իրավունք ունեցող անձանց բացակայության կամ նրանց կողմից այդ գումարները սահմանված ժամկետում չվճարելու պահանջ չներկայացնելու դեպքում համապատասխան գումարները ներառվում են ժառանգության զանգվածի մեջ և ժառանգվում են սույն օրենսգրքով սահմանված ընդհանուր հիմունքներով»:

Ներկայացված կարգավորումներից հետևում է, որ քաղաքացու կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի հատուցման իրավունքը ամեն դեպքում նրա մահվամբ դադարում է՝ պայմանավորված վերջինիս հետ անխզելիորեն կապված լինելու հանգամանքի հետ: Սակայն կենդանության օրոք վճարման ենթակա և չվճարված գումարների ստացման պահանջը միևնույն է՝ փոխանցվում է իրավահաջորդության կարգով: Նույն պնդումները վերաբերելի են նաև ոչ նյութական վնասի հատուցման պահանջների նկատմամբ. մինչև տուժողի մահը բավարարման ենթակա հատուցման պահանջը փոխանցվում է տուժողի իրավահաջորդներին:

Տուժողի մահից հետո նրան պատճառված ոչ նյութական վնասի հատուցման հարցի վերաբերյալ դիրքորոշում է հայտնել նաև ՄԻԵԴ-ը, մասնավորապես, *Keenan v United Kingdom* գործով 3 ապրիլի 2001 թվականին կայացված վճռով: Նշված գործով՝ ՄԻԵԴ-ն արձանագրելով, որ դիմումատուի

մահացած որդին անազատության պայմաններում գտնվելու ընթացքում դարձել է Կոնվենցիայի երրորդ հոդվածով սահմանված իրավունքի խախտման գոհ, եզրակացրեց, որ դիմումատուն այդ կապակցությամբ ներպետական մակարդակով պետք է հնարավորություն ունենար հանդես գալու ինչպես անձամբ իրեն, այնպես էլ որդուն, կենդանության օրոք, պատճառված ոչ նյութական վնասի փոխհատուցման պահանջով:

ՄԻԵԴ-ը նշել է, որ Մարկ Բինանը, պայմանավորված մինչև մահը իր նկատմամբ կիրառված կարգապահական պատժի հետ, գտնվել է զգալի լարվածության, տագնապի և անհանգստության վիճակում, ինչպես նաև դիմումատուն՝ վերջինիս մայրը, նույնպես գտնվել է լարվածության և տագնապի վիճակում՝ որդուն անազատության մեջ պահելու պայմանների նաև հետագայում՝ իրավական պաշտպանության արդյունավետ միջոցներից օգտվելու հնարավորություն չունենալու պատճառով:

Հղում կատարելով ՄԻԵԿ 41-րդ հոդվածին՝ ՄԻԵԴ-ը Մարկ Բինանի կրած ոչ նյութական վնասի դիմաց դիմումատուին շնորհել է 7000 ֆունտ ստերլինգ գումարի չափով փոխհատուցում՝ որպես որդու իրավահաջորդի, ինչպես նաև, դիմումատուի կողմից կրած ոչ նյութական վնասի դիմաց, նրան շնորհել է ևս 3000 ֆունտ ստերլինգ գումարի չափով փոխհատուցում¹⁵:

Զննարկվող հիմնահարցերի ուսումնասիրումն առավել ամբողջական դարձնելու նպատակով՝ կցանկանանք նաև կատարել որոշակի իրավահամեմատական վերլուծություն՝ ներկայացնելով Միացյալ Թագավորության և Ռուսաստանի Դաշնության փորձը:

Միացյալ Թագավորությունում նշված հարցերը կարգավորվում են 1934 թվականի «Իրավական բարեփոխումների մասին /առանձին դրույթներ/» ակտով (Law Reform/Miscellaneous provisions/ Act 1934): Հիշյալ իրական ակտի կարգավորումներից հետևում է, որ բացառությամբ հարազատի մահը սգալու, ինչպես նաև զրպարտության հիմքերով ձևավորված ոչ նյութական վնասի փոխհատուցման պահանջների, մնացած բոլոր դեպքերում տուժողի կենդանության օրոք ծագած վնասի հատուցման պահանջը անձի մահվամբ չի դադարում և փոխանցվում է հօգուտ նրա իրավահաջորդների¹⁶:

Այս ակտը վնասի հատուցման նոր պահանջի համար հիմքեր չի ստեղծում, այլ ապահովում է, որ ընդհուպ մինչև մահվան պահը անձի ունեցած իրավունքները փոխանցվեն նրա իրավահաջորդներին: Ի հակադրություն որոշ այլ երկրներում ընդունված

մոտեցման՝ Միացյալ Թագավորությունում իրավահաջորդության կարգով փոխանցման են ենթակա ոչ միայն անձին պատճառված նյութական, այլ նաև ոչ նյութական բնույթի վնասի հատուցման իրավունքները: Պետք է փաստել նաև, որ գործում է մահվանը հաջորդող ժամանակահատվածի համար ոչ նյութական վնասի հատուցում չտրամադրելու մասին կանոնը: Հատուցման ենթակա է միայն իրավախախտման և մահվան միջև ընկած ժամանակահատվածում տուժողի կրած ոչ նյութական վնասը¹⁷:

Վերն արդեն քննարկված ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1186-րդ և 1249-րդ հոդվածների կարգավորումները նույնական են Ռուսաստանի Դաշնության քաղաքացիական օրենսգրքի¹⁸ համապատասխանաբար՝ 1112-րդ և 1183-րդ հոդվածների կարգավորումներին: Սա նշանակում է, որ Ռուսաստանի Դաշնությունում նույնպես անձին պատճառված նյութական վնասի հատուցման պահանջը, տուժողի կենդանության օրոք, ենթակա է վճարման, սակայն չվճարված փոխհատուցման հետ, իրավահաջորդության կարգով ենթակա է փոխանցման:

Ոչ նյութական վնասի հատուցման պահանջը Ռուսաստանի Դաշնությունում իրավահաջորդության կարգով փոխանցման ենթակա գույքային իրավունք (գույք) չի դիտարկվում և համարվում է տուժողի մահվամբ դադարած՝ նրա անձի հետ անխզելիորեն կապված լինելու պատճառաբանությամբ: Սրան զուգահեռ, Ռուսաստանի Դաշնության գերագույն դատարանն արձանագրել է, որ ոչ նյութական վնասի դիմաց արդեն շնորհված, սակայն դեռևս չստացված փոխհատուցումը (փոխհատուցման գույքային իրավունքը) կարող է ժառանգվել¹⁹:

Այսպիսով, Ռուսաստանի Դաշնությունում տուժողի մահվամբ դադարում է նախկինում ծագած ոչ նյութական վնասի փոխհատուցման իրավունքը, բացառությամբ այն դեպքի, երբ խոսքը գնում է իրավասու մարմնի կողմից շնորհված, բայց տուժողի կենդանության օրոք նրա կողմից չստացված փոխհատուցման մասին:

Հայաստանի Հանրապետությունը, կարելի է ասել, որդեգրել է հակառակ մոտեցումը՝ հիմքում դնելով ՄԻԵԴ պրակտիկան, որը վերն արդեն քննարկել ենք, և ճանաչել է ոչ նյութական վնասի հատուցման պահանջի իրավահաջորդության հնարավորությունը: Գտնում ենք, որ սա առավել ճիշտ մոտեցում է, քանզի վնասի հատուցման իրավունքը նյութական իրավունք է, որի ծագումը կախված չէ իրավասու մարմնի կողմից հատուցում շնորհելուն

վերաբերող ակտի ընդունումից (առաջին հերթին խոսքը գնում է դատարանի վճռի մասին), նման ակտով ընդամենը հաստատվում է նյութական իրավունքի գոյությունը: Ոչ նյութական վնասի հատուցման պահանջի փոխանցման ենթակա լինել-չլինելը նման ակտի կայացումից կախվածության մեջ դնել պետք չէ, քանի որ, եթե սկզբունքորեն ճանաչվում է, որ ոչ նյութական վնասի հատուցման պահանջը կարող է փոխանցվել, ապա դրա համար բավարար է նման պահանջի ծագման համար անհրաժեշտ իրավաբանական փաստակազմի առկայությունը, որի հետագա հաստատումն իրավասու մարմնի կողմից (այդ թվում՝ հնարավոր վեճերի պարագայում) բոլորովին այլ հարց է:

Այսպես, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի²⁰ 162.1-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն. *«Անձը, իսկ նրա մահվան կամ անգործունակության դեպքում նրա ամուսինը, ծնողը, որդեգրողը, երեխան, որդեգրվածը, խնամակալը, հոգաբարձուն իրավունք ունեն դատական կարգով պահանջելու պատճառված ոչ նյութական վնասի հատուցում, եթե »:*

Նշված նորմը հնարավորություն է տալիս իրավահաջորդներին դատական կարգով պահանջելու մահացածին պատճառված ոչ նյութական վնասի հատուցում, ինչից ուղղակիորեն հետևում է, որ նյութական իրավունքը չի դադարում: Այս կապակցությամբ, հավելենք, որ չնայած վարչարարությանը պատճառված վնասի՝ հատուցման հարաբերությունները կարգավորող «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքը նույնաբնույթ կարգավորում չի պարունակում: Վերոգրյալում ամբողջ ներկայացվածից ակներև է, որ այդպիսի դեպքերում ևս պետք է որդեգրել նույն մոտեցումն, ինչ ամրագրված է ՀՀ քաղաքացիական օրենսգրքում:

Այնուամենայնիվ, պետք է փաստել, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի համաձայն՝ մահացածի կենդանության օրոք կատարման ենթակա ոչ նյութական վնասի հատուցման իրավունքը փոխանցվում է ոչ թե անմիջապես ժառանգին, այլ օրենքով հատուկ նշված սուբյեկտներին՝ ամուսին, զավակ, ծնող և այլն: Անշուշտ, դեպքերի գերակշիռ մասում ժառանգներ են հանդիսանում հենց հիշատակված անձինք, սակայն, օրինակ, եթե կտակի հիման վրա մահացածի ամբողջ գույքը ժառանգի որևէ երրորդ անձ, ապա գործող կարգավորումների համաձայն՝ նա չի կարող իր իրավանախորդին պատճառված և նրա կենդանության օրոք վճարման ենթակա ոչ նյութական վնասի հատուցման պահանջ ներկայացնել:

Մեր պատկերացմամբ պահանջը պետք է փոխանցվի ցանկացած սուբյեկտի, ով օրենքի համաձայն՝ հանդես է գալիս տուժողի իրավահաջորդի կարգավիճակում՝ առանց վերջինիս և մահացածի միջև առկա ազգակցական կապին հատուկ շեշտադրում կատարելու, մանավանդ, երբ նման կապի ուժով մերձավոր հարազատի մահը սգացող անձն իր կրած տառապանքների դիմաց սեփական անունից կարող է փոխհատուցման պահանջ ներկայացնել:

Մենք կարծում ենք, որ արդարացված չէ որևէ ժառանգի զրկել իրավահաջորդության կարգով փոխանցվող այն հարստությունից, որը ժառանգատուն ուներ իր կենդանության օրոք, այդ թվում՝ բավարարման ենթակա, սակայն փաստացի չիրացված դրամական պահանջից: Հակված ենք նրան, որ այդպիսի իրավիճակը խախտում է ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի 2-րդ մասով ամրագրված ժառանգելու իրավունքը:

Սույն հոդվածի շրջանակներում կցանկանանք անդրադարձ կատարել նաև այն հարցին, թե ինչպիսի ճակատագրի պետք է արժանանա հանրային իշխանական ակտով պատճառված վնասի հատուցման իրավունքը, երբ տուժողի կենդանության օրոք նման ակտը ոչ իրավաչափ չի ճանաչվել:

Ի տարբերություն մասնավոր իրավահարաբերությունների շրջանակներում պատճառված վնասին վերաբերող դեպքի՝ հանրային իշխանական ակտով պատճառված վնասի հատուցման իրավունքի ծագման նախապայման է հանդիսանում այդպիսի ակտը ոչ իրավաչափ ճանաչելը: Քանի դեռ իրավասու մարմինը ոչ իրավաչափ չի ճանաչել հանրային իշխանական ակտը, գործում է դրա վավերության մասին կանխավարկածը (բացառությամբ առջինից հանդիսացող ոչ իրավաչափ ակտերի):

Այդ իսկ պատճառով հանրային իշխանական ակտով պատճառված վնասի հատուցման իրավունքն անձի մոտ ծագում է միայն այն անվավեր ճանաչվելուց հետո:

Հանրային իշխանական ակտի ոչ իրավաչափ ճանաչվելը հանդիսանում է վնասի հատուցման իրավունքի ծագման համար անհրաժեշտ իրավաբանական փաստակազմի տարր, ինչի պարագայում իրավահաջորդը, պահանջելով համապատասխան հատուցման տրամադրումն անմիջապես իրեն, չի կարող հղում կատարել այն հանգամանքին, որ օրենքի ուսումնասիրումից հետևում է, որ վնասի առաջացմանը հանգեցրած հանրային իշխանական ակտը միևնույն է իրավաչափ չէ: Եթե վնասի հատուցման իրավունքի ծագման պայման-

ներից մեկը հանրային իշխանական ակտի ոչ իրավաչափ ճանաչվելն է, և միաժամանակ մինչև անձի մահն օրենքով սահմանված կարգով այն այդպիսին ճանաչված չէ, ապա վնասի հատուցման պահանջի (գույքի) փոխանցման մասին խոսել հնարավոր չէ, քանզի մահվան պահին այդպիսի գույք ժառանգատուն չի ունեցել:

Ասվածի կապակցությամբ տեղին է մեջբերել 2017 թվականի նոյեմբերի 7-ի կայացված թիվ ՍԴՈ-1383 որոշմամբ ՀՀ սահմանադրական դատարանի կողմից արտահայտած հետևյալ դիրքորոշումը.

«...օրենսդիրը նախատեսել է ոչ իրավաչափ վարչարարությամբ պատճառված վնասի հատուցում պահանջելու նախապայման, այն է՝ ոչ իրավաչափ ճանաչել վարչական մարմնի իրավական ակտը, գործողությունը կամ անգործությունը, որին օրենքի 100-րդ հոդվածի իրավակարգավորումների համաձայն՝ կարող է հետևել վարչարարության հետևանքով վնաս պատճառած մարմնին հատուցման պահանջ ներկայացնելը: Այսինքն, պահանջի իրավունքն անձը ձեռք է բերում վարչական մարմնի իրավական ակտը, գործողությունը կամ անգործությունը, որով անձին վնաս է հասցվել, սահմանված կարգով ոչ իրավաչափ ճանաչվելու դեպքում:»²¹:

Այսպիսով, վնասի հատուցում պահանջելու իրավունքի ծագման համար անհրաժեշտ է անցնել իշխանական ակտը ոչ իրավաչափ ճանաչելուն ուղղված հանրային իրավական ընթացակարգի միջով, որի արդյունքներով միայն օրենքի հիման վրա կարող է ծագել վնասի հատուցման իրավունքը և հետագայում էլ իրավահաջորդության կարգով ենթակա լինել փոխանցման:

Նշվածի լույսի ներքո՝ իրավաչափ հարց է առաջանում, թե ինչպե՞ս վարվել այն դեպքերում, երբ տուժողը մահանում է մինչև հանրային իշխանական ակտի ոչ իրավաչափ ճանաչվելու վերաբերյալ նախապես հարուցված գործընթացի ավարտը կամ իրենից անկախ պատճառներով կենդանության օրոք չի նախաձեռնել նման գործընթացի հարուցումը:

Եթե իրավունքի ծագման պահը, կապված հանրային իրավական գործընթացի ավարտի հետ, պետք է անխուսափելիորեն վրա հասներ, սակայն դրան խանգարել է քաղաքացու մահը, ապա ձեռքբերվող գույքը կարող է ներառվել ժառանգության զանգվածի մեջ: Հարաբերությունների զարգացման համար մահը պատահական գործոն է, իսկ իրավունքը կոչված է չեզոքացնելու պատահական գործոնների ազդեցությունը²²:

Ասվածը վերաբերելի է նաև այն դեպքերին, երբ փաստացի խախտման պահից մինչև մահն ընկած ժամանակահատվածում անձը հարգելի պատճառներով չի կարողացել հարուցել հանրային իշխանական ակտի ոչ իրավաչափ լինելը ճանաչելու գործընթաց:

Ներկայացված դեպքերում, գտնում ենք, անհրաժեշտ է թույլատրել մահացածի իրավահաջորդներին համապատասխանաբար շարունակել կամ նախաձեռնել իրավանախորդի հանդեպ կայացված հանրային իշխանական ակտի ոչ իրավաչափ ճանաչվելու գործընթացը և նրա համար ապահովել տուժողին պատճառված վնասի հատուցման պահանջով սեփական անունից հանդես գալու հնարավորությունը:

Նշվածին զուգահեռ, ցանկանում ենք փաստել, որ այն դեպքերում, երբ մահացածի կենդանության օրոք հանրային իշխանական ակտի ոչ իրավաչափ ճանաչվելու գործընթացը չի նախաձեռնվել վերջինիս անգործության պատճառով, ապա, հետագա-

յում, վնասի հատուցման հնարավորությունը այլևս պետք է համարել կորսված: Ասվածը վերաբերում է նաև այն դեպքերին, երբ հանրային իշխանական ակտի բողոքարկման համար օրենքով սահմանված ժամկետները դեռևս լրացած չեն: Ժառանգության զանգվածի մեջ կարող է մտնել միայն այն գույքը, որը ժառանգատուն ունեցել է մահվան պահին, և էական է հենց այդ պահի դրությամբ ձևավորված իրավիճակը: Այս պարագայում արդեն մահը չի կարող դիտարկվել որպես պատահական գործոն, քանզի ենթադրաբար տուժած անձը մինչև մահը դրսևորել է անգործություն, իսկ այդ պահին հաջորդող ընթացքն իրավահաջորդության հարցի համար որևէ նշանակություն ունենալ չի կարող:

¹ Տե՛ս, Վարդան Պողոսյան, Նորա Սարգսյան; Հայաստանի Հանրապետության 2015թ. խմբագրությամբ Սահմանադրությունը. համառոտ պարզաբանումներ- Եր.: Տիգրան Մեծ, 2016, էջ 168:

² Տե՛ս, «Մարդու իրավունքների և հիմնական ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիա (փոփոխված 11-րդ արձանագրությամբ), ընդունված 04.11.1950թ.-ին; <http://www.irtek.am/views/act.aspx?aid=3854>: Վերջին այցելություն՝ 21.09.2020 թվականին:

³ Տե՛ս, Minasyan and Semerjyan v. Armenia, no 27651/05, § 55, 23.09.2009; <http://hudoc.echr.coe.int/eng?i=001-93184>: Վերջին այցելություն՝ 21.09.2020 թվականին:

⁴ Տե՛ս, Pressos Compania Naviera S.A. and others v Belgium, judgement of 20th November 1995, § 31, Series A, no.332; <http://hudoc.echr.coe.int/eng?i=001-58056>: Վերջին այցելություն՝ 21.09.2020 թվականին:

⁵ Տե՛ս, Plechanow v. Poland, no 22279/04, §§ 83-84, 07.07.2009; <http://hudoc.echr.coe.int/eng?i=001-93302>: Վերջին այցելություն՝ 21.09.2020 թվականին:

⁶ Տե՛ս, Burdov v Russia, no.59498/00, §§ 39-42, ECHR 2002-III; <http://hudoc.echr.coe.int/fre?i=001-60449>, Voytenko v Ukraine, no. 18966/02, § 55, 29.06.2004; <http://hudoc.echr.coe.int/eng?i=001-61855>: Վերջին այցելություն՝ 21.09.2020 թվականին:

⁷ Տե՛ս, Гражданское право. Том 1 Учебник. Издание пятое переработанное и дополненное. /Под ред. А.П. Сергеева, Ю.К. Толстого / - “ПБЮМ Л.В Рожников”, Москва 2000 г. ст. 295.

⁸ Տե՛ս, ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից թիվ ԵԿԴ/0169/02/15 քաղաքացիական գործով 27.12.2016 թվականին կայացված որոշում:

⁹ Տե՛ս, Iatridis v. Greece, no. 31107/96, § 32, ECHR 2000-II; <http://hudoc.echr.coe.int/eng?i=001-59087>: Վերջին այցելություն՝ 21.09.2020 թվականին:

¹⁰ Տե՛ս, ՀՀ սահմանադրական դատարանի կողմից 07.11.2017 թվականին կայացված թիվ ՍԴՈ-1383 որոշում, կետ 5:

¹¹ Տե՛ս, ՀՀ քաղաքացիական օրենսգիրք ՀՀՊՏ 1998.08.10/17 (50):

¹² Տե՛ս, նույն տեղում:

¹³ Տե՛ս, նույն տեղում:

¹⁴ Տե՛ս, նույն տեղում:

¹⁵ Տե՛ս, Keenan v United Kingdom, no. 27229/95, §§ 116,131,138, ECHR 2001-III, <http://hudoc.echr.coe.int/eng?i=001-59365>: Վերջին այցելություն՝ 21.09.2020 թվականին:

¹⁶ Տե՛ս, Law Reform (Miscellaneous provisions) Act 1934, Section 1 (1); <https://www.legislation.gov.uk/ukpga/Geo5/24->

25/41/section/1: Վերջին այցելություն՝ 21.09.2020 թվականին:

¹⁷ Տե՛ս, Гражданский кодекс Российской Федерации от 30 ноября 1994 года N 51-ФЗ, http://www.consultant.ru/document/cons_doc_LAW_5142/: Վերջին այցելություն՝ 21.09.2020 թվականին:

¹⁸ Տե՛ս, Damages for Personal Injury: Non-Pecuniary Loss (1995) Consultation Paper No 140, London: The Stationery Office, paras 2.49-2.50, p. 36-37.

¹⁹ Տե՛ս, Обзор судебной практики Верховного Суда РФ за 1 квартал 2000 года (по гражданским делам) (утв. постановлением Президиума Верховного Суда РФ от 28 июня 2000 г.);

<https://www.garant.ru/products/ipo/prime/doc/11801953/>, Постановление пленума Верховного суда Российской Федерации 29 мая 2012 г. N 9, пункт 14; <https://vsrf.ru/documents/own/8296/>: Վերջին այցելություն՝ 21.09.2020 թվականին:

²⁰ Տե՛ս, ՀՀ քաղաքացիական օրենսգիրք ՀՀՊՏ 1998.08.10/17 (50):

²¹ Տե՛ս, ՀՀ սահմանադրական դատարանի կողմից 07.11.2017 թվականին կայացված թիվ ՄԴՈ-1383 որոշում, կես 6-րդ:

²² Տե՛ս, Наследственное право: постатейный комментарий к статьям 1110–1185, 1224 Гражданского кодекса Российской Федерации [Электронное издание. Редакция 1.0] / Отв. ред. Е.Ю. Петров. – М.: М-Логос, 2018. – ст. 60 (Комментарии к гражданскому законодательству #Глосса.);

https://vk.com/doc6775871_477553069?hash=d0d660591c24cf222b: Վերջին այցելություն՝ 21.09.2020 թվականին:

Арман Григорян
Аспирант кафедры юриспруденции
Европейского университета

РЕЗЮМЕ

Влияние смерти потерпевшего на действие основного права на возмещение вреда

Данная статья посвящена вопросам продолжительности действия основного права на возмещение вреда в случае смерти потерпевшего. Предметом обсуждения стали конституционно-правовой характер требования о возмещении вреда, цель введения основного права на возмещение вреда и в их свете была предпринята попытка прийти к определенным заключениям касательно вопросов о влиянии смерти на действие данного основного права.

Ключевые слова: *смерть, потерпевший, требование о возмещении вреда, средство правовой защиты, собственность, наследство.*

Arman Grigoryan
PhD student of the Chair of Law
of the European University

SUMMARY

The impact of the death of a victim on the operation of the fundamental right to compensation

This article is devoted to the issues concerning the survival of the fundamental right to compensation after the victim's death. The constitutional-legal nature of the claim to compensation, as well as the aim of the provision of such a fundamental right and in their light, tempted to reach some conclusions about the impact the death has on the operation of that particular fundamental right.

Key words: *death, victim, claim to compensation, legal remedy, property, estate.*

Բնագիրը ներկայացվել է 07.10.2021թ.
Ընդունվել է տպագրության 08.02.2021թ.
Հոդվածը երաշխավորել է տպագրության (գրախոսել է)
իրավաբանական գիտությունների թեկնածու Վ. Պողոսյանը

ԶՈՀՐԱԿ ԱՊՐԵՍՅԱՆ

Եվրոպական համալսարանի
իրավագիտության ամբիոնի ասպիրանտ

**ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԿԱ ՇԱՀԵՐԻ
ԱՊԱՀՈՎՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ
ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ**

Հոդվածում խոսվում է հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման ժամանակ սեփականատիրոջ իրավունքների պաշտպանության լրացուցիչ երաշխիքների մասին: Մասնավորապես, անդրադարձ է կատարվում սեփականության իրավունքի պահպանման անհրաժեշտությանն այն դեպքերում, երբ հնարավոր է հանրության գերակա շահ հանդիսացող նպատակի իրականացումն առանց սեփականության օտարման: Դիտարկվում է նաև հետագայում հանրության գերակա շահ հանդիսացող նպատակի դադարման դեպքերում սեփականատիրոջ մոտ սեփականության իրավունքի վերականգնման հնարավորությունը:

Հիմնարառեր- սեփականության իրավունք, սեփականության օտարում, արդարացի հավասարակշռություն, հանրության շահ, իրավունքի վերականգնում, նախապատվության իրավունք:

Ցանկացած երկրում, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետությունում, հասարակության տնտեսական հարաբերությունների հիմքում ընկած է սեփականությունը: Այդ է պատճառը, որ Հայաստանի Հանրապետության Հիմնական օրենքի (այսուհետ՝ մաս՝ Սահմանադրություն) «Սահմանադրական կարգի հիմունքները» գլխում առանձնահատուկ տեղ է հատկացված սեփականության իրավունքի պաշտպանությանը¹:

Սեփականության բոլոր տեսակները ենթակա են պաշտպանության, սակայն ինչքան էլ տարբեր լինեն սեփականության իրավունքի տեսակները կամ դրանց նկատմամբ կիրառվող սահմանափակումները, մի բան ակնհայտ է՝ ցանկացած գույքի նկատմամբ սեփականության իրավունք ենթակա է որոշակի սահմանափակման²:

ՀՀ Սահմանադրությամբ նույնպես սահմանվում է սեփականության իրավունքի սահմանափակման հնարավորությունը, ինչպես նաև նախատեսվում են սահմանափակման պայմանները և սահմանափակումներին ներկայացվող պահանջները: Այդ պահանջների ցանկը չի կարող սպառիչ լինել, սակայն Սահմանադրությունը, առնվազն, պետք է ամրագրի այն պահանջները, որոնք համընդհանուր ճանաչում են գտել ժամանակակից սահմանադրական իրավունքում³:

Սեփականության իրավունքի սահմանափակման ամենախիստ դրսևորումը դրա դադարումն է, որը կարող է տեղի ունենալ նաև հանրության գերակա շահերի ապահովման նպատակով գույքի հարկադիր օտարմամբ: Նման խիստ սահմանափակ-

ման կիրառման պարագայում սեփականատիրոջ շահերը ենթակա են պաշտպանության, որը տեղի է ունենում նաև սահմանափակման կիրառման համար անհրաժեշտ պայմանների սահմանմամբ: Այսպես՝ Սահմանադրության 60-րդ հոդվածը սահմանում է բացառիկ դեպքերում անձին պատկանող սեփականության օտարման հնարավորություն՝ հանրության գերակա շահերի ապահովման նպատակով:

Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարումն ուղղված է հանրության անդամների և սեփականատիրոջ շահերի հնարավոր հակասությունների վերացմանը, դրանց փոխադարձ համերաշխ գոյությունը: Եվ չնայած՝ դրա արդյունքում սեփականատիրոջ սեփականության իրավունքը դադարում է, վերջինս դրա դիմաց պետք է ստանա համարժեք փոխհատուցում: Քաղաքացիական հասարակությունում սեփականատերը պետք է գիտակցի, որ վերջինիս իրավունքի դադարեցումը հետապնդում է ավելի կարևոր նպատակ, քան առանձին անձի անձնական շահեր: Բայցևայնպես, պետությունն էլ պարտավոր է գիտակցել, որ հանրային շահերի ապահովման համար անձի հիմնական իրավունքի դադարեցումը պետք է զուգորդվի սեփականատիրոջ իրավունքների պաշտպանության գործունե երաշխիքներով:

«Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքը (այսուհետ՝ Օրենք), սահմանելով սեփականատիրոջ իրավունքների պաշտպանության

երաշխիքներ, սահմանում է ինչպես այն նպատակները, որոնց իրականացման համար սեփականությունը կարող է օտարվել, այնպես էլ՝ հանրության գերակա շահի որոշման սկզբունքները: Այդ սկզբունքներից երկուսը սահմանում են, որ հանրության գերակա շահից ելնելով՝ *սեփականության օտարումը չպետք է չիմնավորված վնաս պատճառի սեփականատիրոջը, և հանրության գերակա շահի ապահովման նպատակով սեփականությունը կարող է օտարվել, եթե հանրության գերակա շահի արդյունավետ իրազորմամբ չի կարող ապահովվել առանց տվյալ սեփականության օտարման*⁵:

Հետևապես, եթե հանրության գերակա շահ հանդիսացող նպատակին ողջամտորեն կարելի է հասնել առանց անձի սեփականության իրավունքի դադարեցման, ապա սեփականության իրավունքը պետք է պահպանվի: Այսինքն՝ ողջամիտ հնարավորության դեպքում հանրության գերակա շահ հանդիսացող նպատակի իրականացումը չպետք է հանգեցնի սեփականատիրոջ մոտ սեփականության իրավունքի դադարման:

Սեփականության իրավունքի պաշտպանության առանձնահատուկ կարգավորումներ են նախատեսված «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 1-ին արձանագրությամբ, որի 1-ին հոդվածի 1-ին պարբերության համաձայն՝ *յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ իրավասու է անարգել օգտվելու իր գույքից: Ոչ-ոքիչի կարող զրկել նրան գույքից, բացառությամբ ի շահ հանրության և այն պայմաններով, որոնք նախատեսված են օրենքով ու միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքներով*⁶:

Իսկ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ ՄԻԵԴ-), անդրադառնալով սեփականության իրավունքի սահմանափակում հանդիսացող սեփականության օտարման պայմաններին, արձանագրում է. «Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի հետ համատեղելի լինելու համար օտարմանն ուղղված միջոցառումը պետք է բավարարի հետևյալ երեք պայմանները. այն պետք է իրականացվի ազգային իշխանությունների կողմից ցանկացած կամայական գործողություն բացառող՝ «օրենքով նախատեսված պայմաններին համապատասխան», պետք է բխի «հանրային շահերից», ինչպես նաև դրանով պետք է հաստատվի *արդարացի հավասարակշռություն* սեփականատիրոջ իրավունքների և համայնքային շահերի միջև»⁷:

Ինչպես ցանկացած իրավունքի խախտում,

սեփականության իրավունքի խախտումը նույնպես հանգեցնում է որոշակի իրավական հետևանքների, և սեփականության իրավունքի սահմանափակումը առանց վերոնշյալ պայմանների պահպանման, նույնպես հանդիսանում է սեփականության իրավունքի խախտում: Սեփականության իրավունքի խախտման դեպքում հնարավոր է խախտված իրավունքի վերականգնման երկու տեսակ՝

1) *restitutio in integrum* (մինչև իրավունքի խախտումը գոյություն ունեցած վիճակի հնարավորինս վերականգնում),

2) գույքի՝ այն պահի դրությամբ գործող արժեքի չափով գումարի վճարում (եթե ապացուցվել է *restitutio in integrum*-ի անհնարինությունը)⁸:

Իսկ ՄԻԵԴ-ը 2020 թվականի մարտի 19-ին կայացրած վճռով արձանագրում է. «Դատարանը բազմիցս նշել է, որ վճիռը, որով այն խախտում է արձանագրում, պատասխանող պետության վրա իրավական պարտավորություն է դնում խախտումը վերացնելու և դրա հետևանքների համար հատուցում տրամադրելու՝ այնպես, որ հնարավորինս վերականգնվի մինչև խախտումը գոյություն ունեցած իրավիճակը (տե՛ս Իատրիդիս ընդդեմ Հունաստանի (արդարացի փոխհատուցում) [ՄԴ] [Iatridis v. Greece (just satisfaction) [GC]], թիվ 31107/96, «32, ՄԻԵԴ 2000-XI): Եթե խախտման բնույթը բույլ է տալիս *restitutio in integrum* (մինչև իրավունքի խախտումը գոյություն ունեցած իրավիճակի հնարավորինս վերականգնում), ապա պետության պարտականությունն է դա իրազորելու նպատակով պատասխանատվության ենթարկելը, քանի որ Դատարանը դա անելու ո՛չ լիազորություն ունի, ո՛չ էլ գործնական հնարավորություն»⁹:

Փոխհատուցումը պետք է հնարավորինս վերացնի ապօրինի գործողության հետևանքները և վերականգնի իրավիճակը, որն, ամենայն հավանականությամբ, գոյություն կունենար, եթե այդ գործողությունը չկատարվեր¹⁰:

Վերոգրյալից հետևում է, որ բոլոր այն դեպքերում, երբ իրավունքի սահմանափակումը հանգեցնում է իրավունքի խախտման՝ խախտված իրավունքի վերականգնման լավագույն ճանապարհը մինչև խախտումը եղած իրավիճակի վերականգնումն է: Նախընտրությունը տրվում է «*restitutio in integrum*» սկզբունքին այն պատճառով, որ այն ամենաարդյունավետ և ռացիոնալ միջոցն է: Ընդունելով տվյալ դիրքորոշումը, օրինակ, Ստրասբուրգի դատարանը իր գործերից մեկով պետությանը տվեց ընտրության հնարավորություն՝ վերականգնել նախկին իրավիճակը կամ վճարել դիմողին փոխհատուցում, միևնույն ժամանակ ընդգծելով, որ առաջին տար-

բերակը գերակայում է երկրորդի նկատմամբ¹¹:

Եթե հաշվի առնելով սեփականության իրավունքի կարևորությունը՝ մարդու իրավունքների պաշտպանության տեսանկյունից նախկին իրավիճակի վերականգնումը հանդիսանում է խախտված իրավունքի վերականգնման լավագույն տարբերակը սեփականության իրավունքի ապօրինի միջամտության դեպքում, ապա ինչու՞ օրինական միջամտության պարագայում չսահմանել սեփականության իրավունքի վերականգնման հնարավորություն, եթե դրա իրականացումը հնարավոր է: Այսինքն՝ քանի որ Սահմանադրությամբ նախատեսվում է սեփականության իրավունքի պաշտպանությունը, որը, նախևառաջ, իրենից ենթադրում է նման իրավունքի առկայություն կամ պահպանում, ապա անկախ սեփականության իրավունքի սահմանափակման օրինականության հիմքից, հնարավորության դեպքում, կարելի է վերականգնել անձի սահմանափակված (տվյալ դեպքում՝ ոչ խախտված) իրավունքը: Ընդ որում՝ Օրենքը նույնպես սահմանում է, որ հանրության շահի ապահովման նպատակով սեփականությունը կարող է օտարվել միայն այն դեպքում, երբ դրա արդյունավետ իրագործումը հնարավոր չէ առանց սեփականության օտարման:

Նախ, կարծում ենք, որ, նույնիսկ, եթե հանրության գերակա հանրային շահին կարելի է հասնել միայն այլ անձին պատկանող գույքի միջոցով, դա դեռ չի նշանակում, որ այդ գույքի օտարումը հանդիսանում է նպատակին հասնելու միակ միջոցը: Այսինքն՝ եթե նպատակին հասնելու միջոցը գույքն է, այլ ոչ թե դրա նկատմամբ սեփականության իրավունքը, ապա գույքը կարելի է տիրապետել նաև առանց այն օտարելու: Այսինքն՝ նման դեպքերում հետապնդվող նպատակին կարելի է հասնել սեփականության իրավունքի պահպանմամբ:

Եվ երկրորդ, եթե հանրության գերակա հանրային շահին հասնելու համար անհրաժեշտ է գույքի նկատմամբ սեփականության իրավունքի առկայություն, ապա առանձին դեպքերում՝ սեփականության օտարումից հետո հանրության գերակա շահ հանդիսացող նպատակը կարող է դադարել գոյություն ունենալ: Հետևապես, կարելի է դիտարկել սեփականության իրավունքի վերականգնման հնարավորությունը:

Ստորև դիտարկենք սեփականության իրավունքի պաշտպանության վերոնշյալ երկու հնարավորությունները՝ բերելով հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման օրինակներ:

Սեփականության իրավունքի պահպանում.

հանրության գերակա շահ հանդիսացող նպատակի գոյության ժամկետը կարող է ի սկզբանե հայտնի լինել: Օրինակ՝ պետության միջազգային պարտավորությամբ նախատեսված է պարտավորության կատարման ժամկետ, և դրա կատարմամբ միջազգային պատավորությունը դադարում է: Եթե տվյալ պարտավորության կատարման համար անհրաժեշտ է անձին պատկանող սեփականությունը որոշակի ժամկետով, և նման անհրաժեշտությունը կդադարի միջազգային պարտավորության կատարմամբ, ապա, գտնում ենք, որ սեփականության օտարումը բավական խիստ միջամտություն է:

Օրենքը սահմանում է, որ սեփականությունը կարող է օտարվել, եթե հանրության գերակա շահի արդյունավետ իրագործումը չի կարող ապահովվել առանց տվյալ սեփականության օտարման: Սակայն Օրենքը չի նախատեսում տիրապետման և օգտագործման իրավագործությունների ժամանակավոր ձեռքբերման հնարավորություն, որի պարագայում հետապնդվող նպատակին կարելի է հասնել նաև առանց սեփականության օտարման: Այլ կերպ՝ խոսքը վերաբերում է սեփականության օտարման փոխարեն սեփականությունն օգտագործման իրավունքով վերցնելու մասին, որը, կարծում ենք, գործում միջոց կլինի ժամկետներով սահմանափակված նպատակներին հասնելու համար: Ընդ որում՝ նման պայմանի առկայության դեպքում սեփականության օտարումը իրավունքի սահմանափակման համաչափության տեսանկյունից կդիտվի որպես նպատակին հասնելու համար ոչ անհրաժեշտ միջոց:

Կարծում ենք, որ միջամտության նման տեսակի սահմանում ոչ միայն սեփականությունը պահպանել ցանկացող սեփակատիրոջ իրավունքի պաշտպանության միջոց է, այլ նաև՝ ձեռքբերողի համար նախատեսում է ոչ մեծ ծախսերի միջոցով հանրության գերակա շահ հանդիսացող նպատակի իրականացում: Բայց հաշվի առնելով, որ առանց սեփականության օտարման՝ դրա տիրապետման և օգտագործման իրավագործությունների փոխանցումը ձեռքբերողին կարող է էական վնասներ պատճառել սեփականատիրոջը, այդ թվում՝ հանգեցնել de facto սեփականազրկման, անհրաժեշտ է դիտարկել տվյալ միջոցի պարտադիրության հանգամանքը: Քանի որ սեփականությունն օգտագործման իրավունքով վերցնելը կարող է տևել երկար և նաև հանգեցնել սեփականության նկատմամբ սեփակատիրոջ հետաքրքրության կորստի, կարծում ենք, որ տվյալ միջոցը չի կարող կիրառվել սեփականատիրոջ կամքին հակառակ:

Այսինքն՝ սեփականությունն օգտագործման իրավունքով վերցնելու որոշման դեպքում, երբ նպատակի գործողության ժամկետն էականորեն երկար է, սեփականատերը կարող է պահանջել սեփականության իրավունքի օտարում: Նման դեպքերում, հաշվի առնելով գույքի տեսակը՝ սեփականությունն օգտագործման իրավունքով վերցնելու առավելագույն հնարավոր ժամկետը պետք է սահմանի օրենսդիրը, իսկ այդ ժամկետը գերազանցելու դեպքում, սեփականատերը կարող է պահանջել գնել իր սեփականությունը: Ընդ որում՝ եթե օգտագործման ժամկետը երկարաձգվում և գերազանցում է վերոնշյալ առավելագույն ժամկետը, սեփականատերը կրկին պետք է հնարավորություն ունենա պահանջելու գնել իր սեփականությունը:

Ուշադրության է արժանի նաև՝ ցանկացած դեպքում սեփականությունը գնելու պահանջի հնարավորության դիտարկումը, այսինքն՝ օգտագործման իրավունքով սեփականությունը վերցնելու անհնարինությունը՝ առանց սեփականատիրոջ համաձայնության, սակայն հանրության գերակա շահի ապահովման նպատակով, ոչ երկար ժամկետով, վերոնշյալ միջամտության իրականացումը, ընդհանուր առմամբ, կհամարվի համաչափ միջոց, հատկապես, երբ սեփականության իրավունքի դադարեցում տեղի չի ունենում:

Միևնույն ժամանակ, սեփականության օգտագործման իրավունքի ձեռքբերումը պետք է սեփականատիրոջ համար ստեղծի նախնական և համարժեք փոխհատուցում ստանալու հնարավորություն: Կարծում ենք, որ տվյալ դեպքում խոսքը պետք է գնա Օրենքով նախատեսված չափից (շուկայական արժեք + 15%) ավելի բարձր փոխհատուցման մասին՝ հաշվի առնելով միջամտության կարճ տևողությունը:

Սեփականության իրավունքի վերականգնում. սեփականության իրավունքի պահպանումը հնարավոր չի լինի ապահովել, եթե հանրության գերակա շահ հանդիսացող նպատակի տևողությունը երկար է, անժամկետ կամ նախապես հնարավոր չէ իմանալ, թե այն ինչքան ժամանակ կտևի: Սակայն ապագայում գույքը կարող է դադարել սպասարկել հանրության գերակա շահ հանդիսացող նպատակը: Օրինակ՝ միջազգային պարտավորությունը, որի կատարման ապահովման համար անձին պատկանող սեփականությունն օտարվել է, արդեն իսկ պատշաճ կարգով կատարվել է, և դրա համար օտարված սեփականության անհրաժեշտությունն այլևս չկա:

Եթե սեփականության իրավունքի պաշտպանության երաշխիքների սահմանման առաջնային

նպատակը սեփականության իրավունքի պահպանումն է և դրա իրավագործությունների անխոչընդոտ իրականացումը, օտարման նպատակ հանդիսացող հանգամանքի դադարելու դեպքում՝ իրավաչափ է խոսել սեփականության ճակատագրով հետաքրքրված նախկին սեփականատիրոջ իրավունքի վերականգնման հնարավորության մասին:

Կրկին հաշվի առնելով այն, որ սեփականության իրավունքի պաշտպանության երաշխիքները, նախևառաջ, ուղղված են սեփականության իրավունքի պահպանմանը և երրորդ անձանց, այդ թվում՝ պետության ոտնձգություններից զերծ պահելուն, ինչպես նաև այն հանգամանքը, որ ժամանակի մեջ կոնկրետ պահից սկսած գույքն այլևս չի օգտագործվում հանրության գերակա շահի ապահովման համար՝ կարծում ենք, որ գույքի նախկին սեփականատերը այն հետգնելու իրավունք պետք է ունենա: Նման իրավունքի սահմանումը սեփականության իրավունքի պաշտպանության լրացուցիչ երաշխիք կհանդիսանա:

Խախտված իրավունքի վերականգնման ամենաարդյունավետ տեսակը, ինչպես վերևում արդեն քննարկեցինք, **մինչև իրավունքի խախտումը գոյություն ունեցած իրավիճակի հնարավորինս վերականգնումն է** (*restitutio in integrum*): Եթե իրավունքի խախտման դեպքում հնարավոր է վերականգնել նախկին իրավիճակը, ապա մույնը կարելի է անել նաև իրավունքի իրավաչափ սահմանափակման դեպքում:

Սակայն գույքը հետգնելու հնարավորությունը չպետք է լինի անսահմանափակ, ինչը կարող է հանգեցնել այլ անձանց իրավունքների խախտման և սեփականության իրավունքի ճակատագրի նկատմամբ տևական անորոշության:

Նախ, կարծում ենք, որ գույքը հետգնելու հնարավորություն կարող է սահմանվել միայն այն դեպքում, երբ գույքը ձեռք է բերվել պետության կողմից: Եթե գույքը ձեռք է բերվել այլ անձանց կողմից, ապա անհրաժեշտություն կառաջանա պաշտպանելու նաև նոր սեփականատիրոջ շահերը, որը գույքը ձեռք է բերել օրինական հիմքով, հետևապես՝ վերջինիս սեփականության իրավունքը ենթակա է պաշտպանության պետության կողմից: Ավելին՝ գույքը ձեռք բերելիս նոր սեփականատերը ողջամտորեն կարող էր ենթադրել, որ դրա նկատմամբ ձեռք է բերում անժամկետ սեփականության իրավունք: Հակառակ դեպքում՝ վերջինս, հնարավոր է՝ հետաքրքրված չլինել տվյալ գույքի ձեռքբերմամբ:

Միևնույն ժամանակ, եթե գույք ձեռքբերողը պետությունն է, նրա իրավունքների պաշտպանության և գույքի հետագա ճակատագրի անորոշու-

թյան վերացման նպատակով անհրաժեշտ է սահմանել հանրության գերակա շահ հանդիսացող նպատակի դադարման պահից սկսած որոշակի ժամկետ, որի ընթացքում նախկին սեփականատերը կարող է պահանջել իրեն վաճառել իր նախկին սեփականությունը: Այդ ժամկետը, վերոնշյալ նպատակների հաշվառմամբ, ինչպես նաև նախկին սեփականատիրոջ մոտ գույքի նկատմամբ իր հետաքրքրության առկայության մասին մտածելու բավական երկար ժամանակ ունենալու հանգամանքով պայմանավորված՝ պետք է լինի կարճ:

Խնդիրն այն է, որ առանձին դեպքերում կարող է դժվարություն առաջանալ հանրության գերակա շահ հանդիսացող նպատակի դադարման պահի որոշման հետ, որը, միաժամանակ, հանդիսանում է պահանջ ներկայացնելու ժամկետի սկիզբը: Կարծում ենք, որ մասն նպատակի դադարման փաստը և դրա պահը պետք է, նախևառաջ, հաստատվի հենց ՀՀ կառավարության կողմից ինչպես վերջինիս նախաձեռնությամբ, այնպես էլ՝ սեփականատիրոջ դիմումի համաձայն:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ գույքը հետ է գնվում նախկին սեփականատիրոջ կողմից և, արդեն, ոչ հանրության գերակա շահի ապահովման նպատակով, տրամաբանական է, որ գույքն կօտարվի տվյալ պահին գործող շուկայական արժեքով: Ընդ որում՝ գույքի հետգնման հնարավորության սահմանումը ողջամտորեն ձեռնտու է նաև պետությանը, որն իրեն անցած գույքը կրկին կարող է վերածել դրամական միջոցների:

Միևնույն ժամանակ, անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ սեփականության օտարման մեկ այլ կարևոր դեպքի. հնարավոր է, որ հանրության գերակա շահի նպատակով օտարված սեփականությունն ունենա նույն նպատակային նշանակությունը, որն ուներ մինչև օտարումը: Օրինակ՝ նման իրավիճակ կարող է առաջանալ այն դեպքում, երբ սեփականությունն օտարվի քաղաքաշինական կամ բնակավայրերի ենթակառուցվածքների զարգացման բնագավառում համապետական կամ համայնքային կամ միջհամայնքային կարևոր նշանակություն ունեցող ծրագրերի իրականացման ապահովման նպատակով: Տվյալ դեպքում չի բացառվում, որ գույքի արտաքին տեսքի փոփոխման իրականացման պայմաններում, այն շարունակի օգտագործվել իր նախկին նշանակությամբ: Նման պայմաններում կարող է ինչպես չառաջանալ սեփականության օտարման անհրաժեշտություն, այնպես էլ՝ առաջանալ և ոչ կարճ ժամկետով:

Խոսքը վերաբերում է նաև այն դեպքերին, երբ նման ծրագրերի իրականացման նպատակով վե-

րացվում է սեփականություն հանդիսացող գույքը և դրա փոխարեն ստեղծվում է նույն նպատակային նշանակությամբ այլ գույք: Հայաստանի Հանրապետությունում դրա լավագույն օրինակն է հանդիսանում Հյուսիսային պողոտայում տեղի ունեցած կառուցապատման աշխատանքները:

Այսպես՝ ՀՀ կառավարության 2000 թվականի նոյեմբերի 25-ի թիվ 774 որոշմամբ հավանություն տրվեց Երևանի քաղաքապետարանի կողմից ներկայացված Հյուսիսային պողոտայի կառուցապատման ծրագրին: Տվյալ ծրագրում նշվում էին կառուցապատման հրատապ անհրաժեշտության պատճառները, և սահմանվում էր, որ ծրագրի իրականացմամբ Երևանը ձեռք կբերի գեղագիտական և ճարտարապետական նոր փայլ և կավարտվի Թամանյանական Երևանի քաղաքաշինական հիմնականիսի ձևավորումը¹²:

Իսկ ՀՀ կառավարության 2001 թվականի հուլիսի 16-ի թիվ 645 որոշմամբ այդ ծրագրի իրականացման համար որոշվել է հաստատել Երևանի Հյուսիսային պողոտայի հատվածում գտնվող՝ պետության կարիքների համար վերցվող անշարժ գույքի (հողամասեր, շենքեր և շինություններ) օտարման գոտին՝ 82700 քառակուսի մետր տարածքով¹³:

Արդյունքում՝ օտարվել են որոշմամբ նշված տարածքում առկա գույքերը, քանդվել են բազմաբնակարան շենքերը և այլ շինություններ, դրանց փոխարեն կառուցվել են նորերը՝ իրականացնելով ծրագրում նշված նպատակները: Բայց կառուցված շենքերը, մեծ մասամբ, ունեն նույն նպատակային նշանակությունը, որն առկա էր նախկինում: Օրինակ՝ կառուցված շենքերի զգալի մասն իրենց նպատակային նշանակությամբ բնակելի են: Այսինքն՝ ընդհանուր առմամբ, տվյալ տարածքում կառուցապատված ենթակառուցվածքների նպատակային նշանակությունը չի փոխվել, փոխվել է դրա արտաքին տեսքը, ինչը հանդիսանում էր գույքի օտարման հիմնական նպատակը:

Նման դեպքերում անձի սեփականության իրավունքի պաշտպանության տեսանկյունից անհրաժեշտ է դիտարկել սեփականության իրավունքի վերականգնման հնարավորությունը: Դրա համար, նախ, հիմք է հանդիսանում այն հանգամանքը, որ հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարումը չպետք է սեփականատիրոջը գրկի համանման գույք ձեռք բերելու հնարավորությունից կամ առաջացնի վերջինիս համար այլ ծանր հետևանքներ, կամ, ինչպես նշում էր ՄԻԵԴ-ը, Օսմանյանն ընդդեմ Հայաստանի գործով՝ պետք է դիտարկվի, թե արդյո՞ք փոխ-

հատուցումը բավարար է, որպեսզի սեփականատերերը ձեռք բերեն համարժեք գույք այն տարածքում, որտեղ նրանք ապրում էին¹⁴:

Դիտարկելով խնդիրը քանդված շենքի բնակարանների նախկին սեփականատերերի իրավունքների պաշտպանության տեսանկյունից՝ անհրաժեշտ է նշել, որ չնայած քանդված շենքն այլևս գոյություն չունի, սակայն անձինք ունեցել են այդ շենքի բնակարանների նկատմամբ սեփականության իրավունք, այդ թվում՝ բաժնային սեփականության իրավունք շենքը սպասարկող հողամասի նկատմամբ. բնակելի նոր շենքը կառուցվել է նրանց նախկինում պատկանող շենքի վայրում կամ դրա հարևանությամբ: Առավել համամասն տարբերակ, քան նույն հատվածում գտնվող բնակարանի ձեռքբերումը, որտեղ վերջիններս բնակվել են, դժվար է պատկերացնել:

Միևնույն ժամանակ, Օրենքը սահմանում է, որ սեփականության օտարումը չպետք է չիմնավորված վնաս պատճառի սեփականատիրոջը, ինչպես նաև՝ օտարումը կարող է իրականացվել, եթե հանրության գերակա շահի արդյունավետ իրագործումը չի կարող ապահովվել առանց տվյալ սեփականության օտարման: Վերոնշյալ օրինակում հնարավոր չէր հասնել սահմանված նպատակին առանց անձանց պատկանող սեփականության իրավունքի օտարման: Սակայն, քանի որ հետագայում կառուցվող շենքն օգտագործվելու է նույն նպատակով, ինչ նախկինում, ապա իրավաչափ է սեփականատիրոջ իրավունքների պաշտպանության տեսանկյունից ապահովվել սեփականության իրավունքի վերականգման հնարավորություն:

Տվյալ դեպքում, հաշվի առնելով սեփականության օտարման նպատակը, սեփականությունը ձեռքբերողի շահերի պաշտպանությունը և կրած մեծ ծախսերը՝ գույքը հետգնելու իրավունքի փոխարեն կողմերի շահերի արդարացի հավասարակշռության տեսանկյունից, ավելի նպատակահարմար է նախկին սեփականատիրոջ համար սահմանել գնելու նախապատվության իրավունք: Այսինքն՝ այն դեպքում, երբ ձեռքբերողը կառուցվող շենքում վաճառում է բնակարաններ, նախկին սեփականատերերի իրավունքների պաշտպանության տեսանկյունից՝ ցանկալի է սահմանել ձեռքբերողի կողմից առաջարկված պայմաններով բնակարան ձեռք բերելու նախապատվության իրավունք: Ընդ որում՝ ձեռքբերողի շահերի պաշտպանության տեսանկյունից ցանկալի է, որ այդ ժամկետը չլինի շատ երկար և իրականացվի մինչև շենքի կառուցապատման իրավունքների աշխատանքների ավարտը: Այսինքն՝ խոսքը գնում է կառուցվող

շենքից անշարժ գույք գնելու իրավունքի պայմանագիր կնքելու նախապատվության իրավունքի մասին: Կարծում ենք, որ տվյալ փուլում կառուցապատողի առաջարկները պետք է հայտնվեն բոլոր նախկին սեփականատերերին, որոնք որոշակի ժամկետի ընթացքում իրավունք կունենան օգտվելու նույն նպատակային նշանակությամբ և նախկինում առկա քանակի անշարժ գույք ձեռք բերելու նախապատվության իրավունքից:

Սեփականության իրավունքի պաշտպանության վերոնշյալ լրացուցիչ երաշխիքները նպատակ են հետապնդում հնարավորինս պահպանել անձի մոտ սեփականության իրավունքի առկայությունը և նվազագույնի հասցնել սեփականության անվերադարձ օտարման ռեպլերը:

Օրենքով արդեն իսկ սահմանվում է այն սկզբունքը, համաձայն որի՝ հանրության գերակա շահի ապահովման նպատակով սեփականությունը կարող է օտարվել, եթե հանրության գերակա շահի արդյունավետ իրագործումը չի կարող ապահովվել առանց տվյալ սեփականության օտարման: Տվյալ սկզբունքը սահմանադրական այն ձևակերպման հետ միասին, համաձայն որի՝ սեփականությունը կարող է օտարվել միայն օրենքով նախատեսված, բացառիկ դեպքերում, բերում է այն եզրահանգման, որ հանրության գերակա շահին հասնելու ճանապարհին անձի սեփականության իրավունքի պահպանումը, եթե դա հնարավոր է, լավագույն տարբերակն է: Այսինքն՝ սեփականության իրավունքի պահպանումը Սահմանադրության և Օրենքի կողմից դիտարկվում է որպես սեփականության իրավունքի պաշտպանության լավագույն միջոց: Կարծում ենք՝ սեփականության իրավունքի պաշտպանության վերոնշյալ լրացուցիչ երաշխիքներն ուղղված կլինեն սեփականատիրոջ և հանրության շահերի միջև արդարացի հավասարակշռության լիարժեք ապահովմանը:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարելի է հանգել հետևյալ եզրակացություններին.

1. Սեփականության իրավունքի պահպանումը սեփականատիրոջ մոտ հանդիսանում է սեփականության իրավունքի պաշտպանության ամենացանկալի միջոցը:

2. Այն դեպքերում, երբ հանրության գերակա շահի ապահովման համար անհրաժեշտ է կոնկրետ գույք, այլ ոչ թե դրա նկատմամբ սեփականության իրավունք, իսկ հանրության գերակա շահ հանդիսացող նպատակի տևողությունը հայտնի է և կարճ, սեփականության օտարման փոխարեն կարող է իրականացվել սեփականության իրավունքի առանձին իրավագործությունների տրամադրում

ծեռքերողին՝ առանց սեփականության օտարման:

3. Եթե հանրության գերակա շահին հնարավոր չէ հասնել առանց սեփականության օտարման, ապա անհրաժեշտ է հնարավորության դեպքում հասնել նախկին սեփականատիրոջ սեփականության իրավունքի վերականգնմանը: Այսինքն՝ եթե

հնարավոր չէ ապահովել սեփականության իրավունքի պահպանումը ներկայում, ապա սահմանել իրավունքի վերականգնման հնարավորություն հետագայում:

¹ Ալվազյան Ն. Ա., Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունք (Գիրք առաջին), «Տիգրան Մեծ» հրատ., Երևան 2016, էջ 301:

² Clarke A. and Kohler P., Property law, Commentary and Materials, Cambridge University Press, Cambridge 2005, page 217.

³ ՀՀ նախագահին առընթեր սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական բարեփոխումների հայեցակարգ, Երևան, 2014թ., էջ 21:

⁴ ՀՀ Սահմանադրություն (06.12.2015թ. փոփոխություններով)

⁵ «Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման մասին» ՀՀ օրենք, 4-րդ հոդված:

⁶ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի 1-ին արձանագրության 1-ին հոդված:

⁷ ՄԻԵԴ վճիռ թիվ 71306/11 Օսմանյանը և Ամիրադյանն ընդդեմ Հայաստանի գործով, 50-րդ կետ:

⁸ ՄԻԵԴ վճիռ թիվ թիվ 8001/07 Վարդանյանն ընդդեմ Հայաստանի գործով, 29-րդ կետ:

⁹ ՄԻԵԴ վճիռ թիվ 22662/10 Խաչատուրյանն ընդդեմ Հայաստանի գործով, 53-րդ կետ:

¹⁰ Publication of the Permanent Court of International Justice, 13 September 1928, Factory at Chorzow, Series A no. 17, p. 47

¹¹ The European Convention on Human Rights and property rights, Council of Europe, 1998, page 43.

¹² ՀՀ կառավարության 2000 թվականի նոյեմբերի 25-ի թիվ 774 որոշում:

¹³ ՀՀ կառավարության 2001 թվականի հուլիսի 16-ի թիվ 645 որոշում:

¹⁴ ՄԻԵԴ վճիռ թիվ 71306/11 Օսմանյանը և Ամիրադյանն ընդդեմ Հայաստանի գործով, 70-րդ կետ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. ՀՀ Սահմանադրություն (06.12.2015թ. փոփոխություններով):

2. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիա (ընդունված՝ 04.11.1950թ.):

3. «Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման մասին» ՀՀ օրենք (ընդունված՝ 27.11.2006թ.):

4. ՄԻԵԴ վճիռ թիվ 71306/11 Օսմանյանը և Ամիրադյանն ընդդեմ Հայաստանի գործով
<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=127908#>.

5. ՄԻԵԴ վճիռ թիվ թիվ 8001/07 Վարդանյանն ընդդեմ Հայաստանի գործով, 29-րդ կետ
<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=138460#>.

6. ՄԻԵԴ վճիռ թիվ 22662/10 Խաչատուրյանն ընդդեմ Հայաստանի գործով, 53-րդ կետ
<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=143132#>.

7. ՀՀ կառավարության 2000 թվականի նոյեմբերի 25-ի թիվ 774 որոշում:

8. ՀՀ կառավարության 2001 թվականի հուլիսի 16-ի թիվ 645 որոշում:

9. Ալվազյան Ն. Ա., Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունք (գիրք առաջին), «Տիգրան Մեծ» հրատ., Երևան 2016, էջ 301:

10. ՀՀ նախագահին առընթեր սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական բարեփոխումների հայեցակարգ, Երևան, 2014թ., 49 էջ:

11. Clarke A. and Kohler P., Property law, Commentary and Materials, Cambridge University Press, Cambridge 2005, 777 pages.

12. Publication of the Permanent Court of International Justice, 13 September 1928, Factory at Chorzow, Series A no. 17, 65 pages.

13. The European Convention on Human Rights and property rights, Council of Europe, 1998, page 43.

Зорак Апресян
Аспирант кафедры права
Европейского университета

РЕЗЮМЕ

*Возможность сохранения и восстановления права собственности
при обеспечении общественных интересов*

В статье рассматриваются дополнительные гарантии защиты прав собственника при отчуждении собственности в целях обеспечения приоритетных интересов общества. В частности, рассматривается необходимость сохранения прав собственности в случаях, когда возможно достижение цели приоритетного интереса общества без отчуждения собственности, а также возможность восстановления права собственности собственника в случае дальнейшего прекращения цели приоритетного интереса общества.

Ключевые слова: право собственности, отчуждение собственности, справедливый баланс, интересы общества, восстановление права, преимущественное право.

Zohrak Apresyan
PhD student at the
European University, Chair of Law

SUMMARY

*The possibility of preservation and restoration of right
of ownership while ensuring the public interests*

This article discusses additional guarantees for the protection of the owner's rights during the alienation of property with a view to ensuring overriding public interests. In particular, it deals with the need to preserve the right of ownership in cases where it is possible to achieve a goal of public interest without alienation of property, as well as the article considers the possibility of restoring the right of ownership to the owner in the event of termination of a goal of public interest.

Key words: right of ownership, alienation of property, fair balance, public interests, restoration of right, priority right.

Բնագիրը ներկայացվել է 22.01.2021թ.

Ընդունվել է տպագրության 10.02.2021թ.

Հոդվածը երաշխավորել է տպագրության (գրախոսել է)

իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ա. Խաչատրյանը

ԱՆՆԱ ՄԿՏՉՅԱՆ

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի
քաղաքացիական իրավունքի ամբիոնի
ասպիրանտ

ՔԱՂԱՔԱՑԻԱԻՐԱՎԱԿԱՆ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐՈՐՈՇՄԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՅԸ

Քաղաքացիական իրավունքների պաշտպանության համակարգի ինստիտուտները նույնական են իրենց նպատակների առումով, սակայն տարբեր են՝ կիրառվող գործիքակազմերի և իրավական հետևանքի տեսանկյուններից:

Հոդվածում ուսումնասիրված և վեր են հանված իրավունքներ ինքնապաշտպանության ինստիտուտի և անհրաժեշտ պաշտպանության քաղաքացիաիրավական դրսևորումները, առանձնահատկությունները: Փորձ է արվել սահմանել անհրաժեշտ պաշտպանությունը որպես քաղաքացիական իրավունքի ինստիտուտ՝ տալով դրա հատկանիշները:

Հիմնաբառեր – վնաս, անհրաժեշտ պաշտպանություն, իրավունքների ինքնապաշտպանություն, իրավունքների ինքնապաշտպանության եղանակներ, անհրաժեշտ պաշտպանությունը քաղաքացիական իրավունքում:

Քաղաքացիական իրավունքների ինքնապաշտպանության համար բնութագրական են ոչ միայն միակողմանի և փաստացի կատարվող գործողությունները, այլ նաև դրանց արդյունքում առաջացած հետևանքները: Պրակտիկայում հաճախ են հանդիպում դեպքեր, երբ քաղաքացիաիրավական ինստիտուտների միջև տարանջատումը կատարվում է ոչ հստակ և միանշանակ: Այս հանգամանքի վրա ազդեցություն ունեն նաև այնպիսի գործոններ, ինչպիսիք են՝

- իրավունքի ինստիտուտների բնորոշումները և կիրառման շրջանակների ամրագրման բացակայությունը,
- իրավունքի ինստիտուտների փոխհարաբերակցության և առանձնահատկությունների վեր հանման բացակայությունը և այլն:

Այս գործոններից գերծ չէ նաև քաղաքացիական իրավունքների ինքնապաշտպանության ինստիտուտը: Հաճախ իրավունքների ինքնապաշտպանության ընթացքում քաղաքացիական իրավունքի սուբյեկտները բախվում են վնասի ինստիտուտին: Անկախ այն հանգամանքից՝ տվյալ դեպքում վնասը վրա է հասել որևէ ինստիտուտի, այդ թվում՝ իրավունքների ինքնապաշտպանության կիրառման սահմանների պահպանմամբ, թե՛ անցմամբ: Այս հանգամանքով պայմանավորված՝ անհրաժեշտ ենք համարել ուսումնասիրել իրավունքների ինքնապաշտպանության եղանակները, որոնք ենթարկվել են նաև օրենսդրական կարգավորման:

Իհարկե, վնասի ուսումնասիրումը և դրա բնութագրիչները չեն կարող քաղաքացիական իրավունքների ինքնապաշտպանության ինստիտուտի ուսումնասիրությունների մեջ ներառվել, քանի որ դրանք ուսումնասիրվում են արտապայմանագրային հարաբերությունների շրջանակներում: Սակայն, վնասի ուսումնասիրությունն անհրաժեշտ է այնքանով, որքանով պետք է բացահայտել քաղաքացիական իրավունքների ինքնապաշտպանության եղանակների ընթացքում վրա հասած վնասի նկատմամբ իրավական վերաբերմունքը: Իրավունքների ինքնապաշտպանության ինստիտուտի համալիր իրավունկալման համար պետք է բացահայտել նաև «իրավաչափ վնաս» հասկացությունը ներպետական օրենսդրության և վերը քննարկվող ինստիտուտի շրջանակներում¹:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածում թվարկվում են վնասի տեսակները: Վնասներ են՝ իրավունքը խախտված անձի ծախսերը, որոնք նա կատարել է կամ պետք է կատարի խախտված իրավունքը վերականգնելու համար, նրա գույքի կորուստը կամ վնասվածքը (իրական վնաս), չստացված եկամուտները, որոնք այդ անձը կստանար քաղաքացիական շրջանառության սովորական պայմաններում, եթե նրա իրավունքը չխախտվեր (բաց թողնված օգուտ), ինչպես նաև ոչ նյութական վնասը:

Վնաս ասելով՝ պետք է ենթադրել իրավախախտման այնպիսի հետևանքներ, որոնց արդ-

յունքում վնասվում է քաղաքացուն կամ իրավաբանական անձին պատկանող գույքը, քաղաքացու կյանքը կամ առողջությունը, ինչպես նաև առաջանում են այլ բացասական հետևանքներ²: «Վնաս» հասկացությունը քաղաքացիաիրավական գրականության մեջ միասնական բնորոշում չունի³: Սակայն, առավել ընդգրկուն հասկացությունը, որի ընկալումների շրջանակներում էլ դիտարկվում է վնասի քաղաքացիաիրավական ընկալումը, տրվել են Գ. Դարախանյանի, Ե.Ա.Ֆլեյշիցի, Ա.Մ.Բելյակովայի և այլոց կողմից: Ըստ նրանց՝ վնասը բնորոշվում է՝ որպես անբարենպաստ բացասական հետևանք, որը վրա է հասնում օրենքով պահպանվող գույքային իրավունքի կամ ոչ նյութական բարիքի խախտման դեպքում⁴:

Վնասի բնույթի բացահայտման համատեքստում նաև ակնհայտ է դառնում, որ այն իրավունքների ինքնապաշտպանության՝ որպես պաշտպանության ձևի հետ զուգահեռներ չունի: Այն անջատ իրավական երևույթ է, որի առկայությունն արդեն առաջացնում է իրավական ներգործության այլ մեխանիզմներ և հնարավորություններ⁵:

«Վնաս» հասկացության հետ կապված ներպետական դատական պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ վնասի ընկալումները մեծապես համընկնում է վերոգրյալ իրավաբանների կողմից տրված վնասի քաղաքացիաիրավական ընկալմանը: Մասնավորապես, Վճռաբեկ դատարանն արձանագրել է պարտապանի ոչ օրինաչափ վարքագծի, գործողության վնասների միջև պատճառահետևանքային կապի և պարտապանի մեղքի միաժամանակյա առկայությունը⁶: Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ վնասը քաղաքացիական շրջանառության մասնակցի՝ օրենքով պահպանվող իրավունքների խախտման դեպքում վրա հասնող անբարենպաստ, բացասական հետևանքն է⁷:

Վերադառնալով քաղաքացիաիրավական ինքնապաշտպանության ինստիտուտի եղանակների բացահայտմանը՝ հարկ ենք համարում նշել, որ վնասը, որպես վրա հասած հետևանք, իրավունքների ինքնապաշտպանության կիրառման համար չի համարվում պարտադիր պայման: Այս պարագայում վնասը որպես քաղաքացիաիրավական ինքնապաշտպանության դրսևորումների համատեքստում քննարկելի է ոչ թե որպես կիրառման պայման, այլ՝ օրենքով ամրագրված՝ սահմանների, պայմանների (իրավաչափության, համաչափության) արդյունքում վրա հասնող անբարենպաստ հետևանք: Ըստ էության հանդիսանալով իրավագործ անձի կամայական գործողությունները զսպող

երաշխիք՝ պետք չէ քաղաքացիական իրավունքների ինքնապաշտպանության եղանակի կիրառումը կապել վնասի հետ: Վնասն, ինքնին, անհրաժեշտ քաղաքատարր է արտապայմանագրային պարտավորությունների առաջացման համար, այլ ոչ քաղաքացիական իրավունքների ինքնապաշտպանության համար: Այսպես, անհրաժեշտ պաշտպանության կիրառման համար պայման չի հանդիսանում վնասի առկայությունը: Դրանց կիրառումն իրավաչափ, օրենքով նախատեսված սահմաններում իրականացնելու համար՝ բավարար պայման է իրավագործ անձի մոտ քաղաքացիական իրավունքները խախտված լինելու համոզմունքը:

Անհրաժեշտ պաշտպանության իրավական էությունը նպատակ ունի ապահովելու քաղաքացիական իրավունքի սուբյեկտների պաշտպանության համար անհրաժեշտ նախապայմանները: Իրավունքների նկատմամբ ոտնձգության հակազդման գործընթացն իրավական կարգավորումներից դուրս չթողելու անհրաժեշտությամբ է պայմանավորված՝ անհրաժեշտ պաշտպանությունը քաղաքացիական իրավունքի շրջանակներում ամրագրելու փաստը:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համաձայն՝ անձն ունի օրենքով չարգելված բոլոր եղանակներով իր քաղաքացիական իրավունքների ինքնապաշտպանության իրավունք: Ինքնապաշտպանությունը պետք է լինի համաչափ խախտմանը և դուրս չգա խափանման համար անհրաժեշտ գործողությունների սահմաններից: Քաղաքացիական օրենսդրությունում բացակայում է անհրաժեշտ պաշտպանության՝ որպես իրավական երևույթի բնորոշումը: Ըստ այդմ էլ անհրաժեշտ պաշտպանության վիճակում կատարված գործողությունների հստակության ապահովումը ևս դժվարանում է: Տեսաբանները, հիմնականում, բավարարվել են իրավունքի այլ ճյուղերում առկա համանման հասկացությունների բնորոշումների ներմուծմամբ, որոնք հարմարեցվել են քաղաքացիաիրավական եզրութաբանության հետ: Վերջիններս շատ հաճախ իրենց աշխատություններում քաղաքացիաիրավական երևույթների գիտագործնական բացահայտման համար դիմում են իրավունքի այլ ճյուղերին⁹: Նման օրինաչափություն նկատվում է նաև Վճռաբեկ դատարանի քաղաքացիաիրավական նախադեպային պրակտիկայի շրջանակներում¹⁰: Կարելի է եզրահանգել, որ քաղաքացիական օրենսդրությունը բավարար ամրագրումներ չունի քաղաքացիական իրավահարաբերությունների ընթացքում առաջացող իրավական երևույթների բացահայտման համար, մասնավոր

րապես՝ անհրաժեշտ պաշտպանության և ծայրահեղ անհրաժեշտության դեպքում: Այս եզրույթներն օգտագործված են քաղաքացիական օրենսդրությունում, սակայն պրակտիկ կիրառության ժամանակ եզրույթների բավարար բացահայտման համար օգտագործվում են իրավունքի այլ ճյուղերի բնորոշումները: Կարծում ենք, որ առկա է վերը քննարկված ինստիտուտների հստակ ամրագրումն ապահովելու անհրաժեշտություն:

Սուխանովի կարծիքով՝ քաղաքացիական իրավունքի տեսանկյունից՝ անհրաժեշտ պաշտպանությունն առավել լայն հասկացություն է, քան իրավունքի մնացած ճյուղերում առկա համանման կատեգորիաները: Վերջինս կարծում է, որ անհրաժեշտ պաշտպանությունը իրավունքների ինքնապաշտպանության եղանակ է¹¹:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1060-րդ հոդվածի համաձայն՝ անհրաժեշտ պաշտպանության վիճակում պատճառված վնասը ենթակա չէ հատուցման, եթե չեն գերազանցվել դրա սահմանները: Դրույթի վերլուծությունից պարզ է դառնում, որ դրանում ամրագրված իրավական հնարավորությունն ուղղված է իրավունքների պաշտպանության ընթացքում դրսևորված վարքագծի կանոնակարգմանը:

Հոդվածի վերլուծությունից պարզ է դառնում, որ անհրաժեշտ պաշտպանության վիճակում սուբյեկտային կազմը բաղկացած է վնաս պատճառողից և վնասը կրողից: Օրենսդիրը սահմանել է մաս պարտադիր պայման՝ պատճառված վնասի սահմանները չգերազանցել: Եթե հոդվածը տեսականորեն փորձենք ընդգրկել քաղաքացիական օրենսգրքի որևիցե ինստիտուտի շրջանակներում, ապա դրա իրավական պայմանները պիտի փորձենք համադրել առկա քաղաքացիաիրավական ինստիտուտների հետ:

Ըստ էության, անհրաժեշտ պաշտպանության վիճակում կատարված գործողությունների հիմքն օրինական է: Քաղաքացիական իրավունքում թույլատրելի վարքագծի մասին են անհրաժեշտ պաշտպանության քաղաքացիաիրավական դրսևորումները:

Իրավունքների ինքնապաշտպանության դեպքում սուբյեկտային կազմը տարանջատվում է՝ իրավասու անձի և իրավախախտի: Ինքնապաշտպանության եղանակի ընտրության հետևանքով սուբյեկտային կազմում իրավասու անձը դառնում է վնաս պատճառող, քանի որ իրավունքի խախտման արդյունքում՝ ձեռք է բերում իր իրավունքը սեփական միջոցներով պաշտպանելու սուբյեկտիվ իրավունք: Իրավախախտն, իր հերթին, հնարավոր

է վերածվի վնաս կրողի՝ իր կողմից մեկ այլ անձի իրավունքներին ոտնձգելու պատճառով: Իրավունքների ինքնապաշտպանության ինստիտուտի համար նախատեսված է ձեռնարկվող գործողությունների համաչափության անհրաժեշտություն՝ ինչպես անհրաժեշտ պաշտպանության դեպքում:

Ստացվում է, որ իրավունքների ինքնապաշտպանության ինստիտուտն իր մեջ պարունակում է իրավական այն բոլոր պայմանները, որոնք պարտադիր են անհրաժեշտ պաշտպանության դեպքում: Այսպիսով, իրավունքների ինքնապաշտպանության ինստիտուտն ինչ-որ առումով կլանում է անհրաժեշտ պաշտպանության իրավական երևույթը՝ այն դիտելով որպես իրավունքների ինքնապաշտպանության հնարավոր եղանակ:

Քաղաքացիական իրավունքների ինքնապաշտպանության ինստիտուտի և դրա դրսևորման եղանակների մասին ուսումնասիրություններից հետո հանգում ենք այն եզրակացությանը, որ օրենսդրի կողմից ուշադրության են արժանացել ինքնապաշտպանության այն եղանակները, որոնց ոչ իրավաչափ կիրառելիությունը կարող է ավելի շատ սահմանափակել այլոց իրավունքները կամ օրինական շահերը: Իսկ այդ բացասական հետևանքները կանխելու կամ դրանք նվազեցնելու իրավացի ճանապարհը՝ օրենսդրական հստակ ամրագրումներ են: Այդ ճանապարհով է գնացել մեր օրենսդիրը՝ քաղաքացիական օրենսգրքում երաշխավորելով անձի սուբյեկտիվ հնարավորությունն անհրաժեշտ պաշտպանության և ծայրահեղ անհրաժեշտության վերաբերյալ: Ճիշտ է, օրենսդրի կողմից դրանց ամրագրումը բացարձակ հստակության ճանապարհով չի ստացվել, սակայն ինքնին դրանց՝ որպես իրավական երևույթ դիտարկելը, շատ կարևոր հանգամանք է:

Այսպես, ՀՀ քաղաքացիական օրենսգիրքն «անհրաժեշտ պաշտպանություն» եզրույթը կիրառում է միայն մեկ անգամ՝ այն էլ վնաս պատճառելու փաստի տիրույթում: Հոդվածում ասվում է, որ անհրաժեշտ պաշտպանության վիճակում պատճառված վնասը ենթակա չէ հատուցման, եթե չեն գերազանցվել դրա սահմանները: Օրենսդիրը չի տալիս անհրաժեշտ պաշտպանության հասկացությունը և բավարարվում է՝ միայն դրա իրավաչափության վավերապայմանները մատնանշելով: Կարծում ենք՝ օրենսդրի կողմից մնան մոտեցումը այդքան էլ արդարացված չէ, քանի որ այն մեզ հնարավորություն չի տալիս հասկանալու անհրաժեշտ պաշտպանության ինստիտուտի դերն ու նշանակությունը քաղաքացիական իրավունքում:

Ինքնապաշտպանության ընթացքում ներգոր-

ծության հնարավորությանը հաջորդում է այդ ներգործության թույլատրելիության սահմանը: Գործողությունների այն շրջանակը, որի կիրառումը դիտվում է հիմնավոր, օրինական և համաչափ է:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 203-րդ հոդվածը, սահմանելով ներխուժման ինստիտուտի օրինականության պարտադիր պայմանները, ուրվագծում է նաև ինքնապաշտպանության ընթացքում թույլատրելի սահմանները: Այսպես՝ ներխուժումը կանխելու կամ վերացնելու նպատակով օրինական տիրապետողն իրավունք ունի խելամիտ պաշտպանության միջոցներ ձեռնարկելու, այդ թվում՝ ներխուժման հետևանքին համարժեք ուժ գործադրելու, եթե ոչ՝ ուժային միջոցները չեն կարող կանխել կամ վերացնել ներխուժումը: Օրինական տիրապետողն իրավունք ունի հեռացնելու իր հողամասում, շենքում կամ շինությունում կամ այլ անշարժ գույքի տարածքում ապօրինաբար գտնվող ուրիշի շարժական գույքը: Սույն մասով նախատեսված պայմաններում ներխուժումը կանխելու կամ վերացնելու նպատակով ձեռնարկված գործողությունների արդյունքում ներխուժած անձին պատճառված վնասը փոխհատուցման ենթակա չէ: Վերը նշված հոդվածի 6-րդ մասում տեղ գտած դրույթներից հանգում ենք հետևյալ եզրակացության.

- Ներխուժումը, որպես փաստացի կատարվող գործողություն անթույլատրելի է, բացառությամբ օրենքով թույլատրված հիմքերի: Այսինքն, օրենքում ուղակի թույլտվության բացակայությունը գործողությունները, որոնք ուղեկցվել են ներխուժմամբ՝ ոչ իրավական են:

- Ներխուժման գործողությունները վերացնելու կամ կանխելու համար օրենսդիրը պոզիտիվ հնարավորություն է սահմանել՝ ըստ էության իրավագոր անձ ճանաչելով սեփականատիրոջը կամ օրինական տիրապետողին, ներխուժման դեմ միջոցներ ձեռնարկելու համար: Կարծում ենք, որ ամրագրված է իրավական հնարավորությունը՝ դիմելու իրավունքների ինքնապաշտպանության:

- Անհրաժեշտ պաշտպանության հատկանիշներին բավարարող գործողություն է նախատեսված ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 203.6-րդ հոդվածում, մասնավորապես՝ հասցված վնասի փոխհատուցման բացակայության վերաբերյալ:

Կարծում ենք, որ ներխուժման ինստիտուտի կարգավորման նպատակով, օրենսդիրը միաժամանակ ամրագրել է՝ ինչպես իրավունքների ինքնապաշտպանությունը որպես իրավունքների պաշտպանության ձև, այնպես էլ անհրաժեշտ պաշտպանությունը՝ որպես իրավունքների ինքնա-

պաշտպանության եղանակ: Մասնավորապես, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 203.6-րդ հոդվածը սահմանում է իրավագոր անձի գործողությունների սահմանները, ինչպես նաև համաչափության պայմանի անհրաժեշտությունը: Պայմանների պահպանման դեպքում՝ հոդվածը կարգավորում է նաև վնասի հատուցման հետ կապված հարաբերությունները: Ստացվում է՝ ոչ միայն վնասն է համարվում իրավաչափ պատճառված, այլ նաև անհրաժեշտ պաշտպանության իրականացման ընթացքում բացակայում է մեղքը, որպես սուբյեկտիվ հիմք¹²:

ՀՀ իրավունքի համակարգի այլ ճյուղերում անհրաժեշտ պաշտպանությանը ցուցաբերվել է բավականին մանրակրկիտ մոտեցում: Մասնավորապես, Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 42-րդ հոդվածը սահմանում է. «Պաշտպանվողի կամ մեկ այլ անձի կյանքը, առողջությունը և իրավունքները, հասարակության կամ պետության շահերը հանրության համար վտանգավոր ոտնձգությունից կամ դրա իրական սպառնալիքից՝ ոտնձգություն կատարողին վնաս պատճառելու միջոցով պաշտպանելիս, ...¹³»: Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 18-րդ հոդվածը սահմանում է. «..., այսինքն՝ հակաիրավական ոտնձգությունից պաշտպանելիս է եղել պետական կամ հասարակական կարգը, ... ոտնձգություն կատարողին վնաս պատճառելու ճանապարհով»¹⁴: Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում տրված բնորոշումը բավականին մակերեսային է և չի համապատասխանում ներկայիս իրավական մտքի դոկտրինին այն պարզ պատճառով, որ կրում է խորհրդային իրավական համակարգի ազդեցությունը: Բայց վարչական իրավախախտումների վերաբերյալ նոր օրենսգրքի նախագծում տրված է բնորոշում, որը, կարծում ենք, առավել ամբողջական է արտահայտում իրավունքի ինստիտուտի էությունը¹⁵: Նախագծի 24-րդ հոդվածում ասվում է. «..., այսինքն՝ պաշտպանվողի կամ մեկ այլ անձի կյանքը, առողջությունը, իրավունքները, ազատությունները, օրինական շահերը, հասարակության կամ պետության շահերը հակաօրինական ոտնձգությունից կամ դրա իրական սպառնալիքից՝ ոտնձգություն կատարողին վնաս պատճառելու միջոցով պաշտպանելիս, ... »:

Այժմ, վերոգրյալ հասկացություններին և դրանց միասնականությունն ապահովող բնորոշ գծերին անդրադառնալով գուցա հեռաբար:

Տրված բնորոշումներից հստակ արտացոլվում

է, որ՝

- անհրաժեշտ պաշտպանությունը ամրագրված է և կիրառելի է ոչ միայն քաղաքացիական օրենսդրությունում,
- անհրաժեշտ պաշտպանությունը ենթադրում է ոչ սովորական, ինչ-որ դեպքերում նաև ֆորս-մաժորային իրավիճակների լուծում,
- անհրաժեշտ պաշտպանությունը սուբյեկտներից մեկի ակտիվ գործողություններն են (առավելապես ֆիզիկական բնույթի, փաստացի կատարվող),
- անհրաժեշտ պաշտպանության նպատակը սեփական կամ այլոց իրավունքների պաշտպանություն է ցանկացած տիպի ոտնձգությունից,
- անհրաժեշտ պաշտպանությունն այն իրավական երևույթն է, որի ժամանակ օրենսդիրը գիտակցաբար ենթադրում և նախատեսում է վնասի առկայությունը՝ միևնույն ժամանակ այն համարելով իրավաչափ:

Վերը նշված առանձնահատկությունները կարողացանք առանձնացնել շնորհիվ իրավունքի այլ ճյուղերում տեղ գտած հասկացությունների, ինչպես նաև քաղաքացիական օրենսգրքում ամրագրված ներխուժման ինստիտուտի: Այնուամենայնիվ, իրավական նորմի շարադրանքը ինքնին հիմք չէ՝ այն իրավական որոշակիության կամ կիրառելիության առումով ամբողջական գնահատելու համար, սակայն առանց դրույթի ճիշտ ձևակերպման ավելորդ է խոսել հստակ ու պարզ տեքստի և իրավական հասանելի լեզվի մասին:

Բերված բնորոշումներից ակնառու երևում է, որ օրենսդիրը գնում է իրավունքի տարբեր ճյուղերում առկա հասկացությունները միասնականացնելու ճանապարհով՝ իհարկե պահպանելով իրավունքի տվյալ ճյուղին բնորոշ առանձնահատկությունները: Կարծում ենք՝ քաղաքացիական օրենսդրությունը, որպես ներպետական օրենսդրության հիմնական ուղղություններից մեկը, պետք է զերծ չմնա միասնական մոտեցումներ դրսևորելուց և համապատասխան օրենսդրական փոփոխություններով ամրագրելու քաղաքացիական իրավունքների անհրաժեշտ պաշտպանության հասկացության բանաձևումից:

Այսպիսով, քաղաքացիական իրավունքների ինքնապաշտպանության շրջանակներում անհրաժեշտ պաշտպանության իրականացման պայմաններն են հանդիսանում հետևյալները.

- ա) առկա է իրավունքի խախտման վտանգ կամ իրավունքի խախտում,
- բ) կատարվում է իրավասու անձի կողմից (այսինքն՝ այն անձի ում իրավունքները խախտվել են

կամ կարող էին խախտվել, կամ երրորդ անձանց իրավունքների պաշտպանության, ինչպես նաև պետության և հասարակության շահերի պաշտպանության),

գ) և պահպանվել են իրավաչափության սահմանները (այսինքն՝ իրավասու անձի գործողությունները համարժեք են իրավունքի խախտման բնույթին և պատճառված օրինական վնասին¹⁶):

Ամփոփելով վերոգրյալը՝ առաջարկում ենք անհրաժեշտ պաշտպանության հետևյալ բնորոշումը.

1. Քաղաքացիական իրավունքների խախտում չի համարվում այն արարքը, որը կատարվել է անհրաժեշտ պաշտպանության վիճակում, այսինքն՝ անձի կյանքը, առողջությունը, իրավունքները, ազատությունները, պաշտպանվող շահերը, հասարակության կամ պետության շահերը հակաօրինական ոտնձգությունից կամ դրա իրական սպառնալիքից՝ ոտնձգություն կատարողին վնաս պատճառելու միջոցով պաշտպանելը, եթե թույլ չի տրվել անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցում:

2. Անհրաժեշտ պաշտպանության վիճակում պատճառված վնասը ենթակա չէ հատուցման, եթե չեն գերազանցվել դրա սահմանները: Անհրաժեշտ պաշտպանության սահմանների գերազանցում է համարվում՝ դիտավորյալ այնպիսի վարքագիծ դրսևորելը, որը պաշտպանվողի համար, ակնհայտ, չի համապատասխանում հակաօրինական ոտնձգության բնույթին և վտանգավորությանը:

Առաջարկվող բնորոշումներում օգտագործված եզրույթներից յուրաքանչյուրը հանդիսանում է քաղաքացիական գործող օրենսդրությամբ կիրառելի, և նոր տերմինաբանության ներդրման անհրաժեշտությունը բացակայում է:

Նկատենք, որ ի տարբերություն ինքնապաշտպանության օրենսդրությամբ չամրագրված միջոցների, որոնց դեպքում արաքի համար իրավասու անձ է ճանաչվում սուբյեկտիվ իրավունքի կրողը, ում իրավունքի խախտման վտանգը առկա է կամ գոյություն ունի վրա հասած խախտում, ապա անհրաժեշտ պաշտպանության դեպքում իրավասու անձն ընդգրկում է քաղաքացիական իրավունքի սուբյեկտների առավել լայն շրջանակ:

Հարկ է նաև նկատել, որ անհրաժեշտ պաշտպանությունը՝ որպես իրավական երևույթ շատ ավելի լայն ընկալում ունի քաղաքացիական իրավունքում, քան իրավունքի այլ ճյուղերում: Այս հանգամանքը բնորոշ է քաղաքացիական իրավունքի ինստիտուտներին, քանի որ քաղաքացիաիրավական կարգավորումները, հիմնված լինելով մասնա-

կիցների հավասարության, կամքի ինքնավարության, կամայական միջամտության անթույլատրելիության, քաղաքացիական իրավունքների անարգել իրականացման անհրաժեշտության, խախտված իրավունքների վերականգնման ապահովման

սկզբունքների վրա, ենթադրում են նաև առավել լայն գործունեության հնարավորություններ՝ ի շահ իրենց:

- ¹ Տե՛ս, Дмитревна Т.К., Александровна К.Е., Необходимая оборона как форма самозащиты гражданских прав <https://cyberleninka.ru/article/n/neobhodimaya-oborona-kak-forma-samozaschity-grazhdanskih-prav/viewer>, 2016 թ. 1-7 էջեր:
- ² Տե՛ս, Բեքմեյան Գ., Արտապայմանագրային պարտավորություններ, ԵՊՀ, Երևան, 2009թ., 24-27 էջեր:
- ³ Տե՛ս, Բեքմեյան Գ., Արտապայմանագրային պարտավորություններ, ԵՊՀ, Երևան, 2009թ., 24-27 էջեր:
- ⁴ Տե՛ս, ՀՀ քաղաքացիական իրավունք, դասագիրք, 3-րդ մաս, ԵՊՀ, Երևան 2008թ., գլուխ 1-ին:
- ⁵ Տե՛ս, Абашин Э., Возмещения вреда, Белые Альвы, М., 2000г., 2-5 էջեր:
- ⁶ ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումը քաղաքացիական գործ թիվ ՀՔԴ 3/0016/02/08:
- ⁷ ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումը քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/2128/02/13:
- ⁸ Տե՛ս, Южанин Н.В., Самозащита в гражданском праве, статья, 2015г., 11-15 էջեր <https://cyberleninka.ru/article/n/samozaschita-v-grazhdanskom-prave/viewer>:
- ⁹ Տե՛ս, Բեքմեյան Գ., Արտապայմանագրային պարտավորություններ, ԵՊՀ, Երևան, 2009թ., 16-25 էջեր:
- ¹⁰ ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումը, քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/2128/02/13:
- ¹¹ Տե՛ս, Суханов Е.А., Гражданское право: уч., В 4 т. Том 1, Общая часть, 2008г., 330 էջ:
- ¹² Տե՛ս, http://www.consultant.ru/law/podborki/vina_v_grazhdanskom_prave/ Guilt as Condition of Civil Legal Responsibility, Mediterranean Journal of Social Sciences, MCSER Publishing, Rome-Italy Vol 6 No 6 S1 November 2015թ., <http://www.mcser.org/journal/index.php/mjss/article/download/8045/7710>:
- ¹³ Տե՛ս, Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրք, ՀՀՊՏ 2003.05.02/25(260):
- ¹⁴ Տե՛ս, Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրք, ՀՍՍՀԳՍՏ 1985/23:
- ¹⁵ Տե՛ս, <http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=49216>:
- ¹⁶ Տե՛ս, Дмитревна Т.К., Александровна К.Е., Необходимая оборона как форма самозащиты гражданских прав, <https://cyberleninka.ru/article/n/neobhodimaya-oborona-kak-forma-samozaschity-grazhdanskih-prav/viewer>, 2016թ. 1-7 էջեր:

Աննա Մկրտչյան

Аспирант кафедры гражданского права ЕГУ

РЕЗЮМЕ

Взаимосвязь институтов права на самозащиту и необходимой обороны в гражданском праве

Право на самозащиту является институтом гражданского права, входящим в систему защиты прав. При соблюдении условий самозащиты негативных последствий, как правило, не возникает. Но не всегда в гражданско-правовых отношениях соблюдаются правовые рамки того или иного института. В статье также проанализирована необходимая оборона как правовая составляющая самозащиты.

Ключевые слова: вред, необходимая оборона, самозащита прав, формы самозащиты прав, необходимая оборона в гражданском праве.

Anna Mkrtchyan

PhD student of YSU Chair of Civil Law

SUMMARY

The correlation of self-defense and the necessity defense in civil law

The self-defense institute is one of the institutes of civil law included in the system of protection of rights. Providing legal conditions and terms of self-defense won't cause any negative consequences. But in the case of damage the essence of action have to be qualified. For this cases the institute of necessity defense should be analyze. The article highlights the legal terms both for self-defense and necessity defense, also defining them as a distinct institutes of private law.

Key words: damage, self-defense, the system of protection of rights, institute of necessity defense, necessity defense in private law.

Բնագիրը ներկայացվել է 18.01.2021թ.

Ընդունվել է տպագրության 09.02.2021թ.

Հոդվածը երաշխավորել է տպագրության (գրախոսել է)

իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վ. Ավետիսյանը

ԼԻԼԻԹ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտ

ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ «EX OFFICIO» (ԳՈՐԾԻ Ի ՊԱՇՏՈՆԵ ՔՆՆՈՒԹՅԱՆ) ՍԿԶԲՈՒՆՔԻ ԻՐԱՅՄԱՆ ՈՐՈՇ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

Հոդվածը նվիրված է Վարչական դատարանում «ex officio» սկզբունքի իրացման որոշ հիմնախնդիրներին: ՀՀ վարչական դատավարության օրենսգրքը սահմանում է «ex officio» սկզբունքի բովանդակությունը կազմող դատավարական գործողությունների շրջանակը, սակայն դրանք առանձնացված չեն այլ դատավարական գործողություններից, մինչդեռ նման տարանջատումն ունի մեծ գործնական նշանակություն: Այսպիսով, հոդվածում քննարկվում են այդ դատավարական գործողությունների հասկացությունը, հատկանիշները և դրանցից յուրաքանչյուրի կատարման փուլերը: Միաժամանակ, հեղինակն անդրադարձել է Վարչական դատարանում ապացույց պահանջելու ինստիտուտին: Արդյունքում, հեղինակը ներկայացրել է հոդվածում քննարկված հիմնախնդիրների լուծմանն ուղղված առաջարկներ:

Հիմնաբառեր- սկզբունք, «ex officio» սկզբունք, վարչական դատավարություն, ապացույց, ապացույց պահանջել:

Վարչական արդարադատության իրականացման հիմքում ընկած սկզբունքների շարքում իր ուրույն տեղն ունի վարչական դատավարության առանձնահատկությունները պայմանավորող «ex officio» (գործի ի պաշտոնե քննության) սկզբունքը (այսուհետ՝ նաև «ex officio» սկզբունք), որն օժտում է դատարանին ակտիվ դերակատարությամբ՝ ի պաշտոնե պարզելու գործի լուծման համար անհրաժեշտ փաստերը, ապահովելու ֆիզիկական ու իրավաբանական անձանց նկատմամբ հանրային-իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտների ունեցած փաստացի առավելությունների վերացումը և այդ անձանց իրավունքների արդյունավետ պաշտպանությունը:

Նախ հարկ է նշել, որ, թեև Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքով (այսուհետ՝ ՎԴՕ)¹ «ex officio» սկզբունքը ձևակերպվել է որպես գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե պարզելու սկզբունք, իսկ տարբեր դատական ատյանների կողմից կայացված որոշումներում այն մեկնաբանվել է որպես բացառապես գործի փաստական հանգամանքների պարզմանն ուղղված սկզբունք, այդուհանդերձ, գտնում ենք, որ այս սկզբունքի բովանդակությունը կազմող դատավարական գործողությունները, միայն գործի փաստական հանգամանքները պարզելով սահմանափակելը, հակասում են ոչ միայն ՎԴՕ-ով սահմանված այս սկզբունքի բովանդակությանը, այլև՝ տվյալ սկզբունքի էությանն ու նշանակությանը:

Հետևաբար, ՎԴՕ-ում այս սկզբունքն անհրաժեշտ է ամրագրել որպես «ex officio» (գործի ի

պաշտոնե քննության) սկզբունք, և տալ դրա հետևյալ բնորոշումը. «Վարչական դատավարության առանցքային սկզբունք, որն օժտում է դատարանին ակտիվ դերակատարությամբ՝ վերացնելու ֆիզիկական ու իրավաբանական անձանց նկատմամբ հանրային-իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտների ունեցած փաստացի առավելությունները և ապահովելու ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքների արդյունավետ պաշտպանության միջոցի կենսագործումը՝ այդ սկզբունքի բովանդակությունը կազմող գործողությունների իրականացման միջոցով»:

ՎԴՕ 5-րդ հոդվածը սահմանում է «ex officio» սկզբունքի բովանդակությունը կազմող դատավարական գործողությունների շրջանակը, սակայն դրանք առանձնացված չեն այլ դատավարական գործողություններից, մինչդեռ նման տարանջատումն ունի մեծ գործնական նշանակություն՝ տվյալ գործողության կատարման փուլը և կիրառման շրջանակը ճիշտ որոշելու համար:

Ընդ որում, կայացած վարչական դատավարություն ունեցող եվրոպական պետությունների վարչական դատավարության օրենսգրքերում ևս փորձ է արվել բացահայտելու «ex officio» սկզբունքի բովանդակությունը:

Այսպես, Գերմանիայի «Վարչական դատավարության մասին» ակտի 86-րդ հոդվածի համաձայն՝ Վարչական դատարանը գործի փաստական հանգամանքները պարզում է «ex officio»: Ընդ որում, դատարանը կաշկանդված չէ կողմերի ներկայացրած միջնորդություններով և ապացույցներով, և սեփական նախաձեռնությամբ ձեռք է բերում

անհրաժեշտ նյութեր և ապացույցներ: Դատարանը ոչ միայն պարզաբանում է քաղաքացիներին նրանց իրավունքներն ու պարտականությունները, այլև խորհրդատվություն է տրամադրում նրանց, հատկապես այն քաղաքացիներին, ովքեր թույլ են տվել ձևական սխալներ, ներկայացրել են ոչ հստակ պահանջներ կամ ոչ բավարար փաստական տվյալներ²:

Իսկ Ֆրանսիայի վարչական դատարանի դատավորներն օժտված են «ինկվիզիցիոն» լիազորություններով, այն է՝ դատավորը կարող է հանձնարարել մի կողմին՝ մյուս կողմին տրամադրելու անհրաժեշտ տեղեկատվություն և փաստաթղթեր, ձեռնարկել գործի բազմակողմանի քննության համար անհրաժեշտ միջոցառումներ (նշանակել փորձաքննություն, հարցումներ ուղարկել, ձեռք բերել ապացույցներ): Ֆրանսիայի պետական խորհուրդը, որը վարչական գործեր քննող վերին ատյանն է, իրականացնելով վարչական գործի ըստ էության քննություն և վերանայում, մշտապես պահանջում է վարչական մարմնից ներկայացնել գործով ապացույցները, ինչպես նաև բացահայտել վիճարկվող վարչական ակտի ընդունման հիմքում ընկած փաստերը, որպեսզի որևէ դեպքում չհիմնավորված վարչական ակտ չընդունվի, իսկ ընդունված լինելու պարագայում այն անվավեր ճանաչվի³:

2015 թվականին ընդունված Ռուսաստանի Դաշնության վարչական դատավարության օրենսգրքի⁴ 14-րդ հոդվածով ևս ամրագրվել է այս սկզբունքը: Այսպես, վարչական դատարանը դատավարության կողմերին պարզաբանում է նրանց իրավունքները և պարտականությունները, նախագծում է դատավարական գործողություններ կատարելու կամ չկատարելու հետևանքների մասին, աջակցում է նրանց իրենց իրավունքներն իրականացնելիս, պայմաններ է ստեղծում և ձեռնարկում անհրաժեշտ միջոցներ գործի փաստական հանգամանքները ամբողջությամբ պարզելու համար, այդ թվում՝ պահանջում ապացույցներ:

Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ «ex officio» սկզբունքի բովանդակության հետ կապված առկա են տարբեր մոտեցումներ, մասնավորապես, կոնկրետ դատավարական գործողությունները մի դեպքում ներառված են այդ սկզբունքի մեջ, մեկ այլ դեպքում՝ ոչ. անհրաժեշտ է վեր հանել այն հատկանիշները, որոնք բնութագրական են այդ սկզբունքի բովանդակությանը և որոնց միջոցով հնարավոր կլինի տարանջատել այդ սկզբունքը կազմող գործողությունները դատարանի կողմից իրականացվող այլ դատավարական ակտիվ գործողություններից, օրինակ՝ ապացուցման առարկան որոշելուց,

փորձաքննություն նշանակելուց և այլն:

Տեսական գրականության և միջազգային փորձի ուսումնասիրության հիման վրա կարելի է եզրահանգել, որ «ex officio» սկզբունքի բովանդակությունն են կազմում դատավարական այն գործողությունները, որոնք իրականացվում են դատարանի նախաձեռնությամբ, սակայն ուղղված չեն դատավարական ղեկավարմանը, այլ ուղղված են հանրային իրավահարաբերություններից բխող վեճերի քննության ընթացքում մասնավոր անձանց փաստացի անհավասարությունը վերացնելուն՝ վերականգնելով նրանց, վարչական մարմինների կամ պաշտոնատար անձանց ակտերի գործողությունների (անգործության) հետևանքով, խախտված իրավունքները: Այսպիսով, այս սկզբունքը ներառում է դատարանի՝ գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե պարզելու և օժանդակման լիազորությունները:

Գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե պարզելու դատարանի գործառույթի իրացումն անհնար է լիարժեք ապահովել առանց դրա բովանդակությունը կազմող՝ ապացույց պահանջելու, դրանք սեփական նախաձեռնությամբ ձեռք բերելու, կոնկրետ գործի լուծման համար անհրաժեշտ իրական փաստերի վերաբերյալ հնարավոր և հասանելի տեղեկություններ ձեռք բերելու համար համարժեք միջոցներ ձեռնարկելու դատարանի լիազորությունների իրականացման:

Ընդ որում, ՀՀ վարչական դատավարությունն այս առումով ևս ունի որոշակի առանձնահատկություններ: Մասնավորապես, եթե միջազգային փորձի ուսումնասիրությունը վկայում է, որ, հիմնականում, վարչական դատավարությունում ընդունված է «ex officio» սկզբունքի ամրագրման պայմաններում դատարանին սեփական նախաձեռնությամբ ապացույցներ պահանջելու լիազորություն տալը, ապա ՎՊՕ 5-րդ և 28-րդ հոդվածներից հետևում է, որ դատարանը ոչ միայն պահանջում է անհրաժեշտ ապացույցները, այլև դրանք ձեռք բերելու նպատակով՝ իր նախաձեռնությամբ ձեռնարկում է համարժեք միջոցներ:

Մ. Ռզեվուսկան, քննարկելով դատարանի ապացույցներ պահանջելու «ex officio» լիազորությունը, առանձնացրել է այն հարցադրումները, որոնք ենթակա են բացահայտման այս լիազորությունը պատշաճ իրականացնելու համար: Դրանք են՝

- արդյո՞ք այս լիազորությունը վերաբերում է ցանկացած ապացույց պահանջելուն, թե ուղղված է կոնկրետ ապացույցների ձեռքբերմանը,
- ո՞ր դեպքում է պահանջվում ապացույցը,

- արդյո՞ք այս լիազորության իրականացման դեպքում մյուս կողմի համար սահմանված է հակակշռի մեխանիզմ՝:

Վերոնշյալ հարցերի քննարկմամբ հարկ է բացահայտել ապացույց պահանջելու «ex officio» լիազորության իրացման առանձնահատկությունները ՀՀ վարչական դատավարությունում:

Այսպես՝ ՎԴՕ-ով սահմանված չէ այն ապացույցների շրջանակը, որը կարող է պահանջվել այս լիազորության իրականացմամբ, ընդ որում, օրենսդիրը սահմանափակվել է միայն «անհրաժեշտ ապացույց» հասկացությամբ:

Վճռաբեկ դատարանը ևս, անդրադառնալով դատարանի այս լիազորությանը, նշել է, որ Վարչական դատարանը, կաշկանդված չլինելով դատավարության մասնակիցների ներկայացրած ապացույցներով, պարտավոր է՝ գործի լուծման համար անհրաժեշտ ապացույցներ ձեռք բերելու նպատակով՝ իր նախաձեռնությամբ ձեռնարկել համարժեք միջոցներ և պահանջել, որ ներկայացվեն գործի փաստական հանգամանքները պարզելու ու գնահատելու համար անհրաժեշտ բոլոր ապացույցները:

Այնուհետև, Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ կոնկրետ գործով դատարանը չի կատարել իր այդ դատավարական պարտականությունը և չի պահանջել անհրաժեշտ ապացույցներ գործի քննության ու լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքների վերաբերյալ (հայցվորը ենթարկվել է վարչական պատասխանատվության՝ բնակավայրում սահմանված արագությունը գերազանցելու համար, իսկ դատարանը չի պարզել այն հանգամանքը, թե արդյոք ենթադրյալ իրավախախտման կատարման վայրը ճանապարհային երթևեկության կանոնների իմաստով հանդիսանում է բնակավայր, թե՛ ոչ)⁶:

Այսինքն, դատարանը պարտավոր է միջոցներ ձեռնարկել կոնկրետ գործի լուծման համար անհրաժեշտ ապացույցները ձեռք բերելու համար:

Դատավարագետներ Կ. Ա. Պավլենկոյի, Ե. Վ. Խամատովայի և Օ. Պ. Զիստյակովայի կարծիքով դատարանի՝ ապացույց պահանջելու լիազորությունը կարող է իրացվել միայն այն դեպքում, երբ գործին մասնակցող անձինք, կրելով այդ ապացույցները դատարանին ներկայացնելու պարտականությունը, չեն կատարել այն, հակառակ պարագայում տուժում է դատական խնայողության սկզբունքը:

Այս առումով ՎԴՕ 28-րդ և 89-րդ հոդվածների վերլուծությունից կարելի է եզրահանգել հետևյալը՝

- կողմը պարտավոր է դատարանին ներկա-

յացնել իր տիրապետման տակ կամ ազդեցության ոլորտում եղած այն բոլոր ապացույցները, որոնցով նա հիմնավորում է իր պահանջները կամ առարկությունները,

- վարչական մարմինը պարտավոր է նաև ներկայացնել վարչական վարույթի բոլոր նյութերը, ինչպես նաև իր տիրապետման տակ կամ ազդեցության ոլորտում եղած այն բոլոր ապացույցները, որոնք հիմնավորում են հակառակ կողմի պահանջները կամ առարկությունները,

- ապացույցներ ձեռք բերելու նպատակով՝ դատարանն իրավասու է կայացնելու որոշում՝ առանձին դատական ակտի տեսքով, դրանք պահանջելով դատավարության այն մասնակիցներից, պետական և տեղական ինքնակառավարման այն մարմիններից (դրանց պաշտոնատար անձանցից), ինչպես նաև դատավարությունում չներգրավված ֆիզիկական և իրավաբանական այն անձանցից, որոնց ազդեցության ոլորտում են դրանք կամ պետք է լինեն՝ սահմանելով ժամկետ դրանք դատարան ներկայացնելու համար,

- նախնական դատական նիստում դատարանը՝

- կողմերի հետ քննարկում և որոշում է ապացուցում պահանջող փաստերի շրջանակը: Ապացուցում պահանջող փաստերի շրջանակը որոշելը նախապատրաստական փուլում չի սահմանափակում Վարչական դատարանի իրավունքը դատաքննության փուլում պահանջելու այլ ապացույցներ,

- սահմանում է ապացույցներ ներկայացնելու ժամկետները,

- կողմերի միջնորդությամբ, ինչպես նաև իր նախաձեռնությամբ պահանջում է անհրաժեշտ ապացույցներ:

Վերոգրյալ իրավական դրույթներից կարելի է եզրահանգել, որ ՎԴՕ 28-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված ապացույց պահանջելու որոշումը, որն ապահովված է դատական հարկադրանքով, կայացվում է այն դեպքում, երբ նախնական դատական նիստում ապացույց պահանջելու և դրանք ներկայացնելու ժամկետներ սահմանելու պարագայում գործին մասնակցող անձը չի կատարում այն:

Ընդ որում, ՎԴՕ-ն չի պարունակում նորմեր այն մասին, թե երբ է այս որոշումը ուղարկվում հարկադիր կատարման կամ ինչ հետևանքներ են առաջանում՝ նման որոշումը կամովին չկատարելու համար: Հատկանշական է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը նախատեսում է՝ ապացույց չներկայացնելու դեպքում տուգանքի

նշանակման, ինչպես նաև ապացույց պահանջելու որոշման անհապաղ հարկադիր կատարման կանոններ:

Դատական պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այդ որոշումները, որպես կանոն, կայացվում են դատաքննության փուլում, ընդ որում՝ ապացույց պահանջելու որոշման հիման վրա տրված կատարողական թերթը Հարկադիր կատարումն ապահովող ծառայություն՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքով սահմանված կարգով կատարման նպատակով ուղարկելու պայմաններում էլ՝ շատ հաճախ վարչական մարմինները չեն ներկայացնում որևէ ապացույց, չեն հայցում ապացույց ներկայացնելու նոր ժամկետ, ինչպես նաև չեն հայտնում կատարման անհնարինության մասին տեղեկություններ⁷:

Պատահական չէ, որ Բարձրագույն դատական խորհրդի՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության արդյունավետության համալիր բարելավման հայեցակարգում ևս արձանագրվել է հետևյալը. «Վարչական դատարանում գործերի քննության անհարկի ձգձգման պատճառ շատ հաճախ դառնում է դատարանի ի պաշտոնե քննության շրջանակներում ապացույց պահանջելու մասին որոշումների չկատարումը վարչական մարմինների կողմից: Ձևավորված դատական պրակտիկայի համաձայն՝ այդ որոշումները կամավոր չկատարելու դեպքում, կատարումն ապահովվում է դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով, ինչը կարող է հաղթահարվել այն դեպքում, երբ նման որոշումները վարչական մարմնի կողմից կամավոր չկատարելու դեպքում, դատարանը ձեռնպահ մնա այդ որոշումները հարկադիր կատարման ներկայացնելու պրակտիկայից»:

Արդյունքում, քննարկված դեպքում չարդարացված կերպով ծախսվում են ինչպես դատարանի, այնպես էլ՝ Հարկադիր կատարումն ապահովող ծառայության ռեսուրսները:

Վարչական դատարանի աշխատակազմի 04.02.2019 թվականի թիվ ԴԴ-9-Ե-3454/19 գրության ուսումնասիրությունից ևս պարզ է դառնում, որ ապացույց պահանջելու մասին որոշումները, որպես կանոն, չեն կատարվում կամ ներկայացվում են դատաքննությունը ավարտելուց հետո, որի պատճառով դատարանը շատ հաճախ վերսկսում է գործի քննությունը:

Ընդ որում, դատական պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Վարչական դատարանում տվյալ տարում ստացված գործերը շատ հաճախ չեն ավարտվում, քանի որ ապացույց

պահանջելու մասին որոշում կայացնելուց հետո Վարչական դատարանը չի ավարտում գործը՝ ակնկալելով պահանջված ապացույցների ներկայացումը, ինչը ձգձգում է գործի լուծումը:

Հատկանշական է, որ, օրինակ, Ռուսաստանի Դաշնության վարչական դատավարության օրենսգրքի⁹ 63-րդ հոդվածի համաձայն՝ վարչական դատարանի՝ ապացույց պահանջելու վերաբերյալ որոշումը ապահովված չէ դատական հարկադրանքով, այլ վարչական դատարանը կարող է դատական տուգանք նշանակել ապացույց չներկայացրած կամ իր կողմից սահմանված ժամկետում ապացույցը չներկայացրած գործին մասնակցող անձի նկատմամբ:

Որպես հարցի լուծում կարող է դիտարկվել ՎԴՕ 29-րդ հոդվածը, որի 1-ին մասի համաձայն՝ եթե բոլոր ապացույցները հետազոտելուց հետո գործի ելքը պայմանավորող որևէ փաստ մնում է չապացուցված, ապա դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման բեռը կրող կողմը: Նույն հոդվածի 2-րդ մասով բաշխվում է ապացուցման բեռը՝ ըստ հայցատեսակների: Այսինքն՝ օրենսդիրը յուրաքանչյուր հայցատեսակի մասով բաշխել է ապացուցման բեռը՝ միաժամանակ պարտավորեցնելով վարչական մարմնին ներկայացնել վարչական վարույթի բոլոր նյութերը, ինչպես նաև իր տիրապետման տակ կամ ազդեցության ոլորտում եղած այն բոլոր ապացույցները, որոնք հիմնավորում են հակառակ կողմի պահանջները կամ առարկությունները:

Հարկ է նշել, որ Վճռաբեկ դատարանի կողմից արտահայտված դիրքորոշման համաձայն՝ գործի փաստերն ի պաշտոնե պարզելու գործընթացում դատարանի կողմից ողջամիտ միջոցների ձեռնարկումը չի կարող կրել ձևական բնույթ, այլ նման միջոցների ձեռնարկման դեպքում դատարանը պարտավոր է դրանց կատարման նկատմամբ լինել հետևողական: Իսկ այդպիսի հետևողականության ցուցաբերման անարդյունավետության դեպքում դատարանը պարտավոր է վիճելի մնացած փաստի չապացուցման բացասական հետևանքները դնել այդ փաստի ապացուցման բեռը կրող կողմի վրա՝ հաշվի առնելով նաև, որ վարչական դատավարությունում վարչական ակտի համար հիմք ծառայած փաստական հանգամանքների ապացուցման բեռը կրում է այդ ակտն ընդունած վարչական մարմինը¹⁰:

Ավելին, Վճռաբեկ դատարանի գնահատմամբ վարչական դատավարությունում բոլոր ապացույցների հետազոտումից հետո որևէ փաստի առկայությունը կամ բացակայությունը վիճելի մնալու բա-

ցասական (անբարենպաստ) հետևանքները, ըստ էության, հանգում են հետևյալին. բոլոր ապացույցների հետազոտումից հետո որևէ փաստի առկայության կամ բացակայության վիճելի մնալու դեպքում դատարանը կարող է համապատասխան փաստի գոյությունն իրավաչափորեն համարել հերքված (չապացուցված)¹¹:

Ապացույց պահանջելու մասին որոշման կատարման հետ կապված խնդիրների լուծման համար կարծում ենք՝ հարկ է.

- Վարչական դատարանի՝ ապացույց պահանջելու մասին որոշմամբ սահմանել ապացույց ներկայացնելու հստակ և սեղմ ժամկետներ,

- ապացույց պահանջելու մասին որոշումը կատարելու համար նոր ժամկետ չսահմանելու կամ ապացույցը չներկայացնելու պատճառները հարգելի չճանաչելու դեպքում Վարչական դատարանը ապացույց պահանջելու մասին որոշման հիման վրա կազմված կատարողական թերթն անհապաղ պետք է ուղարկի հարկադիր կատարման, իսկ ապացույց ներկայացնելու պարտականություն կրող անձի նկատմամբ նշանակի դատական տուգանք,

- կատարողական թերթը Հարկադիր կատարումն ապահովող ծառայությանը ուղարկելուց հետո վարչական դատարանը չպետք է վճռի կայացումը առկախի ստացվող ապացույցներից, այլ կատարողական գործողությունների իրականացման համար օրենքով սահմանված երկամսյա ժամկետը լրանալու դեպքում անցնի վճռահատության: Այլ կերպ ասած՝ ապացույց ներկայացնելու պարտականությունը չկատարելու դեպքում «ex officio» սկզբունքը պետք է համարել իրագործված, իսկ կոնկրետ փաստը՝ չապացուցված: Արդյունքում, կերաշխավորվի դատական խնայողությունն ու գործի ողջամիտ ժամկետում քննությունը, կնվազեցվի Վարչական դատարանի ծանրաբեռնվածությունը, կբարձրանա վարչական մարմինների՝ դատարանի կողմից սահմանված ժամկետում դատավարական գործողություններ կատարելու հանդեպ պատասխանատվությունը:

ՎԴՕ-ն չի պարունակում նաև կարգավորումներ «ex officio» սկզբունքի կիրառման շրջանակի վերաբերյալ: Արդյունքում՝ ձևավորվել է հակասական դատական պրակտիկա առ այն, թե այդ սկզբունքի բովանդակությունը կազմող դատավարական գործողությունը կատարվում է միայն ֆիզիկական անձանց, թե՞ նաև վարչական մարմինների օգտին՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ «ex officio» սկզբունքով պայմանավորված, Վարչական դատարանի խնդիրն է՝ կոնկրետ գործի լուծ-

ման համար անհրաժեշտ իրական փաստերի պարզումը: Ատենախոսության մեջ հիմնավորվել է, որ գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե պարզելիս՝ ապացույցներ պահանջելու, ինչպես նաև գործի լուծման համար անհրաժեշտ փաստերը վեր հանելու համար համարժեք միջոցներ ձեռնարկելիս՝ դատարանի գործողությունները չեն կարող համարվել գործին մասնակցող անձանց օժանդակում, և չեն կարող կաշկանդվել նրանց կամահայտնությամբ: Մինչդեռ, օժանդակման լիազորությունն իրացնելիս, Վարչական դատարանը դրանում ընդգրկվող գործողություններն իրացնում է միայն ֆիզիկական կամ իրավաբանական անձանց օգտին:

Ընդ որում, քննարկելով Վարչական դատարանի օժանդակման լիազորության իրացման դեպքում ֆիզիկական կամ իրավաբանական անձանց կողմից մատնանշված թերությունները չշտկելու հետևանքները և դատարանի կողմից իրականացվող գործողությունները՝ առաջարկվում է սահմանել, որ Վարչական դատարանի կողմից ֆիզիկական կամ իրավաբանական անձանց կողմից թույլ տրված սխալները մատնանշելու և դրանք շտկել առաջարկելու պարտականությունն իրացնելու պարագայում, տնօրինչականության սկզբունքից ելնելով, անձի իրավունքն է շտկել նման սխալները և որոշել ներկայացված հայցի ճակատագիրը, իսկ մատնանշված սխալները չուղղելու դեպքում՝ «ex officio» սկզբունքը համարվում է իրացված:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՎԴՕ 5-րդ հոդվածով բացահայտված չեն հայցադիմումներում առկա ձևական սխալները մատնանշելու, ոչ հստակ հայցային պահանջները ճշտել առաջարկելու, ոչ ճիշտ հայցատեսակները պատշաճ հայցատեսակներով փոխարինելու, հիմնական և ածանցյալ պահանջները տարբերակելու, ոչ բավարար փաստական տվյալները համալրելու գործողությունների իրականացման կարգը, (ինչի արդյունքում պարզ չէ, թե դատավարության որ փուլում է իրականացվում այս կամ այն գործողությունը՝ ըստ կոնկրետ գործողության բնույթի և նշանակության) առաջարկվում է՝ այդ գործողություններն իրականացնել կամ հայցադիմումի ընդունելության փուլում և/կամ գործը դատաքննության նախապատրաստելու փուլում:

Ամեն դեպքում, գտնում ենք, որ, եթե «ex officio» սկզբունքի բովանդակությունը կազմող այս կամ այն դատավարական գործողությունը գործի քննության սկզբնական (գործի հարուցման կամ հայցադիմումի ընդունելության) փուլում կատարելու համար առկա են բավարար իրավական և

փաստական հիմքեր, ապա Վարչական դատարանը պարտավոր է տվյալ դատավարական պարտականությունը կատարել հենց այդ փուլում՝ ելնելով գործի հետագա քննության արդյունավետությունն ապահովելու նկատառումներից:

Վարչական դատարանի կողմից օժանդակման լիազորության չիրականացումը կամ ոչ պատշաճ իրականացումը կարող է հանգեցնել դատական ակտի բեկանման, ինչը ենթադրում է՝ գործի նոր քննության փուլում այդ լիազորության իրականացում:

Այդուհանդերձ, այն դեպքում, երբ դատական ակտը բեկանվում է Վարչական դատարանի կողմից սխալ հայցատեսակ մատնանշելու կամ մատնանշման պարտականությունը չիրացնելու հիմքով, ՎԴՕ-ն պարունակում է օրենսդրական խոչընդոտներ՝ ոչ ճիշտ հայցատեսակը ճիշտ հայցատեսակով փոխարինել առաջարկելու դատարանի լի-

ազորությունը գործի նոր քննության փուլում իրականացնելու համար՝ սահմանելով, որ գործի նոր քննության ընթացքում հայցի հիմքը և առարկան չեն կարող փոփոխվել: Արդյունքում, գործը չի քննվում վերադաս դատարանի կողմից սահմանված ծավալով, ինչպես նաև չի երաշխավորվում անձի խախտված իրավունքների արդյունավետ դատական պաշտպանությունը:

Վերոգրյալի հաշվառմամբ առաջարկվում է՝ գործի նոր քննության ընթացքում Վարչական դատարանի կողմից ոչ պատշաճ հայցատեսակը պատշաճ հայցատեսակով փոխարինելու առաջարկ ներկայացվելու դեպքում՝ հայցի առարկան փոփոխելու հնարավորություն ամրագրել:

¹ Ընդունվել է 05.12.2013 թվականին, ուժի մեջ է մտել 07.01.2014 թվականին: Տե՛ս ՀՀՊՏ 2013.12.28/73(1013).1, հոդ.1186.1-րդ:

² Տե՛ս, Code of administrative court procedure, Germany, ընդունված 19.03.1991 թվականին, <https://germanlawarchive.iuscomp.org/?p=292> (հասանելի է 23.11.2020 թվականի դրությամբ):

³ Տե՛ս, Козырин А.Н., Штатина М.А., Зеленцов А.Б. Административное право зарубежных стран: Учебник. Под ред. А.Н Козырина, МА Штатиной // М.: Спартак. 2003, С. 316.

⁴ Տե՛ս, Кодекс административного судопроизводства Российской Федерации, от 08.03.2015 N 21-ФЗ (ред. от 29.07.2017):

⁵ Տե՛ս, Rzewuska M. Taking evidence ex officio by the court. Zeszyty Naukowe KUL 60.3, 2017, էջ 89-99:

⁶ Տե՛ս, Վճռաբեկ դատարանի թիվ ՎԴ/3314/05/14 վարչական գործով 02.12.2016 թվականի որոշումը:

⁷ Տե՛ս, օրինակ վարչական դատարանի թիվ ՎԴ/8688/05/18 գործով 06.12.2018 թվականի, թիվ ՎԴ/8043/05/18 գործով 06.12.2018 թվականի, թիվ ՎԴ/6640/05/18 գործով 15.10.2018 թվականի, թիվ ՎԴ/8753/05/18 գործով 06.12.2018 թվականի, թիվ ՎԴ/8920/05/18 գործով 11.12.2018 թվականի վճիռները:

⁸ Տե՛ս, Բարձրագույն դատական խորհուրդ, Հայաստանի Հանրապետության արդարադատության արդյունավետության համալիր բարելավման հայեցակարգ, 2018, էջ 105: <http://old.court.am/news/21-08-2018/%D5%80%D5%A1%D5%B5%D5%A5%D6%81%D5%A1%D5%AF%D5%A1%D6%80%D5%A3.pdf> (հասանելի է 23.11.2020 թվականի դրությամբ):

⁹ Տե՛ս, Кодекс административного судопроизводства Российской Федерации, от 08.03.2015 N 21-ФЗ (ред. от 29.07.2017):

¹⁰ Տե՛ս, Վճռաբեկ դատարանի թիվ ՎԴ-3/0043/05/10 վարչական գործով 01.04.2011 թվականի որոշումը:

¹¹ Տե՛ս, Վճռաբեկ դատարանի թիվ ՎԴ/4315/05/14 վարչական գործով 22.04.2016 թվականի որոշումը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1) Հանրապետության վարչական դատավարության օրենսգիրք, ընդունվել է 05.12.2013 թվականին, ուժի մեջ է մտել 07.01.2014 թվականին: Տե՛ս ՀՀՊՏ 2013.12.28/73(1013).1 հոդ.1186.1-րդ:

2) Code of administrative court procedure, Germany, ընդունված 19.03.1991 թվականին, <https://germanlawarchive.iuscomp.org/?p=292> (հասանելի է 23.11.2020 թվականի դրությամբ):

3) Козырин А.Н., Штатина М.А., Зеленцов А.Б. Административное право зарубежных стран: Учебник. Под ред. А.Н Козырина, МА Штатиной // М.: Спартак. 2003.

- 4) Кодекс административного судопроизводства Российской Федерации, от 08.03.2015 N 21-ФЗ (ред. от 29.07.2017):
- 5) Rzewuska M. Taking evidence ex officio by the court. Zeszyty Naukowe KUL 60.3, 2017, էջ 89-99:
- 6) Վճռաբեկ դատարանի թիվ ՎՂ/3314/05/14 վարչական գործով 02.12.2016 թվականի որոշումը:
- 7) Վարչական դատարանի թիվ ՎՂ/8688/05/18 գործով 06.12.2018 թվականի, թիվ ՎՂ/8043/05/18 գործով 06.12.2018 թվականի, թիվ ՎՂ/6640/05/18 գործով 15.10.2018 թվականի, թիվ ՎՂ/8753/05/18 գործով 06.12.2018 թվականի, թիվ ՎՂ/8920/05/18 գործով 11.12.2018 թվականի վճիռները:
- 8) Բարձրագույն դատական խորհուրդ, Հայաստանի Հանրապետության արդարադատության արդյունավետության համալիր բարելավման հայեցակարգ, 2018, էջ 105: <http://old.court.am/news/21-08-2018/%D5%80%D5%A1%D5%B5%D5%A5%D6%81%D5%A1%D5%AF%D5%A1%D6%80%D5%A3.pdf> (հասանելի է 23.11.2020 թվականի դրությամբ):
- 9) Վճռաբեկ դատարանի թիվ ՎՂ-3/0043/05/10 վարչական գործով 01.04.2011 թվականի որոշումը:
- 10) Վճռաբեկ դատարանի թիվ ՎՂ/4315/05/14 վարչական գործով 22.04.2016 թվականի որոշումը:

Լիլիտ Սետրոսյան

Аспирант кафедры гражданского процесса ЕГУ

РЕЗЮМЕ

Некоторые проблемы реализации принципа “ex officio” в административном суде

Статья посвящена некоторым вопросам, связанным с реализацией принципа “ex officio” в административном суде. Кодекс Административного судопроизводства Армении определяет судебные действия составляющие содержание принципа “ex officio”, тем не менее, эти судебные действия неотличены от других судебных действий, в то время как такое различие имеет большое практическое значение.

Таким образом, в статье обсуждаются понятия и характерные черты данного принципа, стадии применения судебных действий составляющих содержание принципа “ex officio”. В то же время, автор обсуждает некоторые вопросы связанные с институтом требования доказательства в административном судопроизводстве. В результате, автор предлагает решения проблем, обсуждаемые в этой статье.

Ключевые слова: принцип, принцип “ex officio”, административное судопроизводство, доказательство, требовать доказательства.

Lilit Petrosyan

PhD Student of the YSU Chair of Civil Procedure

SUMMARY

Some issues of application of the “ex officio” principle at administrative court

The article is devoted to some issues related to the application of “ex officio” principle at the Administrative Court of RA. The code of Administrative court Procedure defines judicial actions forming the content of the “ex officio” principle, yet, these actions are not differentiated from other judicial actions, at the same time, such a differentiation has a practical significance.

Thus, the article discusses definition and characteristics of the “ex officio” principle, the stages of applying judicial actions forming the content of this principle. Simultaneously, the author discusses certain issues regarding the institute of requesting evidence in the administrative court proceedings. As a result, the author suggests solutions to the issues presented in the article.

Key words: principle, “ex officio” principle, administrative procedure, evidence, requesting evidence.

Բնագիրը ներկայացվել է 23.01.2021թ.

Ընդունվել է տպագրության 16.02.2021թ.

Հոդվածը երաշխավորել է տպագրության (գրախոսել է)

իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Ս.Մեղրյանը

ՔՐԻՍՏԻՆԵ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի սահմանադրական իրավունքի ամբիոնի ասպիրանտ,
ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի օրենսդրության կատարելագործման և վերլուծությունների վարչության գլխավոր մասնագետ

ԼԵԳԻՏԻՄՆՊԱՏԱԿԸ՝ ՈՐՊԵՍ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՉԱՓՈՒԹՅԱՆ ՍԿՁԲՈՒՆՔԻ ՏԱՐԲ

Հոդվածը նվիրված է վարչարարության համաչափության սկզբունքի լեգիտիմ նպատակի տարրի ուսումնասիրությանը: Հոդվածում քննարկվում են այն հարցերը, թե վարչարարության շրջանակներում որ նպատակները կարող են արդարացնել մարդու սահմանադրական իրավունքների սահմանափակումները, ինչպես նաև՝ ինչ չափանիշներով պետք է առաջնորդվի վարչական մարմինը՝ Սահմանադրությամբ և օրենքով հետապնդվող նպատակները որոշելիս:

Հիմնադրադեռ՝ սահմանափակում, սահմանադրական իրավունք, վարչարարություն, համաչափության սկզբունք, լեգիտիմ նպատակ:

Վարչարարության համաչափության սկզբունքի առանցքային տարրերից է՝ լեգիտիմ նպատակի պահանջը: Իրավաբանական գրականության մեջ այս տարրը նշելու համար օգտագործում են տարբեր ձևակերպումներ՝ «հետապնդվող նպատակ»¹, «իրավաչափ նպատակ»², «լեգիտիմ նպատակ»³, «լեգիտիմ հանրային շահ»⁴, «պատշաճ նպատակ»⁵ և այլն: Մենք նախապատվությունը տալիս ենք «լեգիտիմ նպատակ» ձևակերպմանը՝ նկատի ունենալով, որ այս ձևակերպումն առավել համարժեք է արտահայտում համաչափության սկզբունքի բովանդակությունն այնպես, ինչպես մենք այն ներկայացնելու ենք սույն հետազոտության շրջանակում:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի համաձայն՝ վարչարարությունը պետք է ուղղված լինի Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով հետապնդվող նպատակին: Այս նորմից ուղղակիորեն բխում է, որ վարչարարության նպատակները կարող են կանխորոշվել միայն օրենսդրական ակտերով: Այս դրույթից նաև ուղղակիորեն հետևում է, որ Սահմանադրությանը կամ օրենքներին հակասող նպատակները ոչ մի դեպքում չեն կարող լինել պատշաճ: Այսպես, օրինակ, միջոցը, որի բուն նպատակը, անբաբույց, թե բացահայտ, խտրականությունն է, չի կարող համարվել լեգիտիմ նպատակ:

Վերջին շրջանի իրավագիտության աղբյուրներում առավել տարածված է այն մոտեցումը, ըստ

որի՝ ցանկացած նպատակ չէ, որ կարող է արդարացնել սահմանադրական իրավունքի սահմանափակումը: Մենք ևս համաձայն ենք այս մոտեցման հետ և գտնում ենք, որ սահմանադրական իրավունքների առաձնահատկություններից մեկն այն է, որ դրանք կարող են սահմանափակվել միայն այնպիսի նպատակի իրացման համար, որը կարող է արդարացնել սահմանադրական իրավունքի սահմանափակումը: Այն նպատակները, որոնք կարող են արդարացնել մարդու իրավունքների սահմանափակումները, բխում են այն արժեքներից, որոնց վրա հիմնվում է հասարակությունը: Սահմանադրական ժողովրդավարության տեսանկյունից այդ արժեքները՝ ժողովրդավարական արժեքներն են⁶: Իրավագետներն արտահատել են այն կարծիքը, որ համաչափության սկզբունքի լեգիտիմ նպատակի տարրն այս մեկնաբանմամբ փոխարինում է չափավորության տարրին: Այսպես, Փ. Վ. Հոգը նշում է, որ համաչափության սկզբունքի, նեղ իմաստով, համաչափության տարրն անհրաժեշտ չէ, քանի որ նպատակի իրականացման արդյունքում ձեռք բերվող օգուտի և իրավունքին պատճառված վնասի միջև հավասարակշռման հարցն ուսումնասիրվում է առաջին տարրի՝ լեգիտիմ նպատակի, համատեքստում. «Եթե նպատակը բավականաչափ կարևոր է, և նպատակն իրականացվել է ամենամեղ միջամտող միջոցներով, ապա պետք է եզրակացնել, որ միջոցի ազդեցությունը արժանի գին է վճարելու այդ նպատակի օգուտի համար: Ուստի,

մենք եզրակացնում ենք, որ առաջին փուլի դրական պատասխանը՝ բավականաչափ կարևոր նպատակ է, որ միշտ հանգեցնելու է վերջին փուլի՝ դրական պատասխանի համաչափ ազդեցության»⁷ :

Գտնում ենք, որ Փ. Հոգի մոտեցումը վիճահարույց է. այն ունի խոցելի կողմեր և այդ համատեքստում, թերևս, անընդունելի է: Ի դեպ, այն չի ընդունվել մաս համեմատական իրավունքի ներկայացուցիչների կողմից⁸ : Համաչափության սկզբունքի լեգիտիմ նպատակի տարրն ուսումնասիրում է, թե որ նպատակներն են կարող արդարացնել մարդու իրավունքների սահմանափակումները: Մինչդեռ՝ չափավորության տարրն է որոշում, թե արդյո՞ք օրենսդրությամբ որոշված նպատակի իրականացման արդյունքում ձեռք բերվող օգուտը կարող է արդարացնել սահմանադրական իրավունքին պատճառված վնասի չափը:

Ամփոփելով վերոշարադրվածը՝ կարող ենք եզրակացնել, որ վարչարարության համաչափության սկզբունքի լեգիտիմ նպատակի տարրը պահանջում է, որ սահմանադրական իրավունքները սահմանափակելիս, վարչական մարմինը հետապնդի օրենսդրական ակտերով նախատեսված միայն այնպիսի նպատակներ, որոնք բավականաչափ կարևոր են արդարացնելու այդ իրավունքների սահմանափակումը: Վճռաբեկ դատարանն իր որոշումներում, անդրադառնալով այն հարցին, թե արդյո՞ք վարչական մարմնի արագ գործելու պահանջը կարող է համարվել լեգիտիմ նպատակ՝ լսված լինելու սահմանադրական իրավունքի սահմանափակումն արդարացնելու համար, ուղղակիորեն նշել է. «Վարույթի մասնակցի լսված լինելու իրավունքի սահմանափակման համար իրավաչափ հիմք չի կարող հանդիսանալ նույնիսկ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 36-րդ հոդվածում ամրագրված վարչական մարմնի արագ գործելու պարտականության կատարման անհրաժեշտությունը, քանի որ վարչական վարույթը հնարավորինս սեղմ ժամկետում իրականացնելու օրենսդրական պահանջի կատարումը չի կարող տեղի ունենալ ի վնաս վարչական վարույթի ընթացքում անձի լսված լինելու իրավունքի պատշաճ իրացման»⁹ :

Կարևոր է մշակել որոշակի չափանիշներ, որոնք հնարավորություն կտան որոշելու, թե արդյո՞ք մարդու իրավունքը սահմանափակող միջոցը հետապնդում է այնպիսի նպատակ, որը այդ չափանիշների կիրառման համատեքստում կարող է որակվել պատշաճ: Կարծում ենք, որ նախապես մենք պետք է գնահատենք, թե որ տեսակի նպատակներն են, որ կարող են արդարացնել իրա-

վումների սահմանափակումները: Երկրորդ հերթին, գտնում ենք, որ պետք է որոշել, թե ինչ չափանիշներով պետք է առաջնորդվի վարչական մարմինը՝ Սահմանադրությամբ և օրենքով հետապնդվող նպատակները որոշելիս: Առաջին հարցը վերաբերում է մարդու իրավունքը սահմանափակող միջոցի բուն էությանը, երկրորդը՝ օրենսդրական ակտով հետապնդվող նպատակի սահմանման խնդրին:

Նպատակների այն տեսակների, կատեգորիաների ամենակարևոր օրինակը, որը համարվում է «պատշաճ», նախատեսվում է Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրով¹⁰ : Հռչակագրի ընդհանուր սահմանափակող վերապահումը նախատեսում է հետևյալը. «Իրենց իրավունքները և ազատությունները իրականացնելիս, յուրաքանչյուր մարդ ենթարկվում է միայն այնպիսի սահմանափակումների, որոնք օրենքով սահմանված են՝ բացառապես այլ անձանց իրավունքների և ազատությունների պատշաճ ճանաչումն ու հարգանքը ապահովելու համար, և բավարարում են ժողովրդավարական հասարակության մեջ բարոյականության, հասարակական կարգի ու ընդհանուր բարեկեցության պահանջներին»¹¹ : Այս դրույթը ոգեշնչել է օրինակ ծառայել բազում միջազգային պայմանագրերի, ինչպես մաս առանձին սահմանադրությունների¹² :

Մեր եզրահանգումներն առավել համալիր ներկայացնելու նկատառումով՝ անդրադառնանք որոշ օրենսդրական ակտերի վերլուծությանը: «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ օրենքի նպատակն է պաշտպանել և խրախուսել ազատ տնտեսական մրցակցությունը, ապահովել բարեխիղճ մրցակցության համար անհրաժեշտ միջավայր, նպաստել ձեռնարկատիրության զարգացմանը և սպառողների շահերի պաշտպանությանը Հայաստանի Հանրապետությունում: Որոշ դեպքերում, օրենսդիրը սահմանել է մաս վարչական մարմնի առանձին գործիքի նպատակը. «Բնապահպանական վերահսկողության մասին» օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ գործունեության կասեցումը գործընթաց է, որի միջոցով սույն օրենքով սահմանված դեպքերում անհապաղ ժամանակավորապես դադարեցվում է ստուգվող սուբյեկտի գործունեությունը՝ մարդու իրավունքների և առողջության, պետության շահերի, ինչպես մաս շրջակա միջավայրի պահպանման նպատակով:

Արտահայտվելու իրավունքի սահմանափակման վերաբերյալ գործով Վճռաբեկ դատարանը թվարկել է այն նպատակները, որոնք համարել է պատշաճ՝ նշված իրավունքը սահմանափակելու

համար: Այսպես, 2018թ. նոյեմբերի 20-ի թիվ ՎԴ/0243/05/15 վարչական գործով որոշմամբ Վճռաբեկ դատարանը արձանագրել է. «Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ արտահայտվելու իրավունքը բացարձակ չէ և ենթակա է որոշ սահմանափակումների: Ըստ այդմ, նշված իրավունքը ենթակա է սահմանափակումների օրենքով սահմանված կարգով՝ ելնելով պետական անվտանգությունը, տարածքային ամբողջականությունը կամ հասարակական անվտանգությունը, անկարգությունները կամ հանցագործությունները կանխելու, առողջությունը կամ բարոյականությունը, ինչպես նաև անձանց հեղինակությունը կամ իրավունքները պաշտպանելու, արդարադատության հեղինակությունը և անաչառությունը պահպանելու նպատակից»:

Այսպիսով, կարող ենք եզրակացնել, որ ժողովրդավարական բազմաթիվ արժեքների մեջ ամենաբնորոշ լեզվաբանական նպատակներն են՝ սահմանադրական իրավունքները՝ մի կողմից և հանրային շահը՝ մյուս կողմից: Հանրային շահը, սահմանադրական իրավունքներից բացի, համընդհանուր է և ընդգրկում: Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով հանրային շահի բնորոշմանը, նշել է. «... հանրային շահի կրողը հասարակությունն է՝ որպես մեկ միասնական, ամբողջական օրգանիզմ: Ընդ որում, շահը հանրային որակելու համար պարտադիր նախապայման չէ հասարակության բոլոր անդամների կողմից այդ շահն ընկալելը և ընդունելը: Սակայն հանրային շահը տարբերվում է մասնավոր շահից ոչ միայն սուբյեկտային չափանիշով, այլև իր առարկայով, քանի որ հանրային շահի առարկան համընդհանուր, համամարդկային որոշակի բարիքներն են, որոնց նյութականացումը հասարակական կյանքում անհրաժեշտ նախապայման է հասարակության գոյատևման և հետագա զարգացման համար»:¹²

Թեև հանրային շահ կատեգորիայի գոյությունը կասկած չի հարուցում, դրա ճշգրիտ բովանդակության բացահայտումը խնդրահարույց է: Հանրային շահի ստույգ որոշման հարցը երբեք չի դադարում արդիական լինել: Հանրային շահը զարգանում է հասարակության զարգացման ողջ պատմության ընթացքում, և չկան հստակ չափանիշներ՝ հանրային շահի շրջանակի որոշման հարցում: Հանրային շահի վերաբերյալ չափազանց նեղ մոտեցումը կարող է բացասական ազդեցություն ունենալ ժողովրդավարության գոյության և դրա՝ մարդու իրավունքների պաշտպանության արդյունավետության վրա: Հանրային շահի չափազանց լայն մոտեցումը կարող է վնաս պատճառել մարդու իրա-

վունքներին և հենց ժողովրդավարության գաղափարին:

Այնուամենայնիվ, փորձենք ներկայացնել հանրային շահ համարվող արժեքների ոչ սպառնիչ ցանկ, որոնք չեն հավակնում ընդգրկել համեմատական մեթոդաբանությամբ մշակված բոլոր կատեգորիաները: Հանրային շահը, մեր կարծիքով, ներառում է՝ պետության գոյության շարունակականությունը, ազգային անվտանգությունը, հասարակական կարգը, տարածքային ամբողջականությունը, հանդուրժողականությունը, անկարգությունները կամ հանցագործությունները կանխելը, հասարակության առողջությունը կամ բարոյականությունը, իշխանությունների բաժանումը, օրինականությունը, դատական համակարգի անկախությունը, արդարադատության հեղինակությունը, երկրի տնտեսական բարեկեցությունը, շրջակա միջավայրի պաշտպանությունը և սահմանադրական իրավունք չհամարվող այլ շահեր:

Վարչարարության համաչափության սկզբունքի կիրառման համատեքստում, խոսելով հանրային շահի՝ որպես մարդու իրավունքների սահմանափակումն արդարացնող արժեքի մասին, մենք համակարծիք ենք այն դիրքորոշման հետ, որ մարդու իրավունքների պաշտպանության ձգտող հասարակությունը, այսինքն՝ հասարակությունը, որը լրջորեն է ընդունում մարդու իրավունքները, չպետք է թույլ տա, որ հանրային շահերի ցանկացած ընկալում արդարացնի սահմանադրական իրավունքի սահմանափակումը¹³: Հանրային շահերի բավարարման արդյունքում ստացվող օգուտներն ինքնին բավարար չեն սահմանադրական իրավունքների սահմանափակումն արդարացնելու համար:

Ի տարբերություն հանրային շահերի՝ սահմանադրական ժողովրդավարությունում այն նպատակներից մեկը, որը կհամարվի պատշաճ՝ մարդու իրավունքների սահմանափակման համատեքստում, մարդու իրավունքների պաշտպանության նպատակն է: Հասարակությունը, որը ցանկանում է պաշտպանել անձի ազատ կամքի իրավունքը, պետք է պաշտպանի նաև հակադիր գաղափարներ ունեցող անձի ազատ կամքի իրավունքը¹⁴: Այս մոտեցումը հեշտ է հիմնավորել. իսկապես, նա, ով ցանկանում է պաշտպանել մարդու իրավունքները, պետք է պատրաստ լինի սահմանափակել այդ նույն իրավունքները: Երբ մարդու իրավունքները բախվում են, դրա լուծման ճիշտ միջոցը ոչ թե հենց իրավունքների ծավալի նվազեցումն է, այլ դրանց սահմանափակման հնարավորության ճանաչումը: Այսպես, ՀՀ Սահմանադրության 39-րդ հոդվածի համաձայն՝ մարդն ազատ է անելու այն ամենը, ին-

չը չի խախտում այլոց իրավունքները և չի հակա-
տում Սահմանադրությանը և օրենքներին: Ավելին,
ՀՀ Սահմանադրության՝ մարդու առանձին իրա-
վունքները նախատեսող հոդվածներում, որոնք նա-
խատեսում են նաև սահմանափակող վերապա-
հումներ, այլոց հիմնական իրավունքների և ազա-
տությունների պաշտպանությունը միշտ նախա-
տեսվում է այդ իրավունքների սահմանափակումն
արդարացնող նպատակ (25-րդ, 31-րդ, 32-րդ, 33-
րդ, 34-րդ, 39-րդ, 40-րդ, 41-րդ, 42-րդ, 44-րդ, 45-րդ,
51-րդ, 58-րդ, 60-րդ հոդվածներ):

Գլխավորընկալական արժեք ունի այն հարցը, թե
արդյո՞ք օրենքով սահմանված իրավունքի պաշտ-
պանությունը կարող է արդարացնել սահմանադ-
րական իրավունքի սահմանափակումը: Ինչպե՞ս
պետք է վարվի վարչական մարմինն այն դեպքում,
երբ օրինակ՝ Սահմանադրությամբ չամրագրված
իրավունքի պաշտպանության նպատակով պետք է
սահմանափակվի սահմանադրական իրավունքը:

ՀՀ Սահմանադրության 2015 թվականի փոփո-
խություններով մարդու առանձին իրավունքները
նախատեսող հոդվածների սահմանափակող վե-
րապահումներում ուղղակիորեն նշվում է, որ այդ
իրավունքները կարող են սահմանափակվել միայն
այլոց հիմնական իրավունքների և ազատություն-
ների պաշտպանության նպատակով: Թեև Սահմա-
նադրությամբ նախատեսված այս պահանջն ան-
միջականորեն վերաբերում է օրենսդիր մարմնին,
այն նաև մատնանշում է բարձրագույն իրավաբա-
նական ուժ ունեցող այս նորմատիվ իրավական
ակտում ամրագրված ուղենիշը, համաձայն որի՝
Սահմանադրությամբ ամրագրված հիմնական
իրավունքի սահմանափակման արդարացում կա-
րող է լինել միայն այլ հիմնական իրավունքի սահ-
մանափակումը¹⁵:

Այնուամենայնիվ, մենք գտնում ենք, որ այլ
անձանց իրավունքների պաշտպանության հարցի
քննարկումը չպետք է սահմանափակվի սահմա-
նադրական իրավունքների պաշտպանությամբ¹⁶:
Սահմանադրությամբ բուն իրավունքին վերապահ-
ված հիմնադրույթներից բխում է, որ այն պետք է
կիրառվի յուրաքանչյուր իրավունքի պաշտպանու-
թյան նկատմամբ: Այս մոտեցման հիմնավորումը չի
կարող կառուցվել հատուկ փաստարկի վրա, որը
կվերաբերեր բախումների դեպքում սահմանադրա-
կան իրավունքները պաշտպանելու պետության
սահմանադրական պարտականությանը, այլ առա-
վելապես կարող է հենվել լեգիտիմ նպատակի չա-
փանիշի ավելի ընդհանուր հասկացության վրա:
Այդպիսի չափանիշն ուղղված է նրան, որ «ըջորեն
վերաբերվեն իրավունքներին»: Այս «լրջությունը»

չի սահմանափակվում սահմանադրական իրա-
վունքներով: Անհրաժեշտ է հաշվի առնել, որ այն
կենսական դերը, որ ունեն մարդու իրավունքները
ընդհանուր սոցիալական շրջանակներում, չեն
սահմանափակվում միայն սահմանադրական
իրավունքներով: Դրանք նաև ներառում են այն գա-
ղափարը, որ Սահմանադրությամբ չնախատեսված
իրավունքների պաշտպանությունը կարող է արդա-
րացնել այլ իրավունքների, այդ թվում՝ սահմանադ-
րական իրավունքների սահմանափակումը: Մար-
դու բոլոր իրավունքները ժողովրդավարության հա-
մար արժեքավոր են՝ անկախ նրանց իրավական
կարգավիճակից: Որոշ իրավունքների սահմանադ-
րական ճանաչումը չպետք է մեկնաբանվի որպես
իրավական համակարգի, Սահմանադրությանը
ստորադաս իրավական կետերով նախատեսված,
իրավունքների նկատմամբ «բացասական վերա-
բերմունք»: Տեղին է հիշատակել 1995 թվականի ՀՀ
Սահմանադրության 43-րդ հոդվածը, համաձայն
որի՝ Սահմանադրությամբ ամրագրված իրավունք-
ները և ազատությունները սպառնիչ չեն և չեն կարող
մեկնաբանվել որպես մարդու և քաղաքացու այլ
հանրաճանաչ իրավունքների և ազատությունների
բացառում:

Այնուամենայնիվ, պետք է ընդունել, որ Սահ-
մանադրությամբ չնախատեսված իրավունքին,
իրավական համակարգով վերապահված հարաբե-
րական նշանակությունը, տարբերվում է սահմա-
նադրական իրավունքին տրվող նշանակությունից:
Կարծում ենք, սակայն, այս հարցը կարևորություն
է ձեռք բերում իրավունքների իրականացման հա-
մար օգտագործվող միջոցները գնահատելիս, և այդ
իրավունքների իրական օգուտների և սահմանա-
փակված սահմանադրական իրավունքին պատ-
ճառված վնասի միջև անհրաժեշտ պատշաճ հա-
րաբերակցության կամ չափավորության տեսանկ-
յունից:

Ամփոփելով վերոշարադրվածը՝ կարող ենք
նշել, որ վարչարարություն իրականացնելիս վար-
չական մարմնի կողմից մարդու սահմանադրական
իրավունքների սահմանափակումն արդարացնող
Սահմանադրությամբ և օրենքով հետապնդվող
նպատակները կարող ենք խմբավորել երկու հիմ-
քերով՝ հանրային շահ և այլոց իրավունքների
պաշտպանություն: Ընդ որում, եթե այլոց իրա-
վունքների պաշտպանությունը միշտ լեգիտիմ
նպատակ է՝ մարդու սահմանադրական իրավունք-
ների սահմանափակման համար, ապա հանրային
շահ համարվող ցանկացած արժեք չէ, որ կարող է
արդարացնել վարչական մարմնի կողմից մարդու
իրավունքների սահմանափակումը:

Մեր հետազոտության նպատակն է այժմ անդրադառնալ այն չափանիշներին, որոնցով մենք կարող ենք սահմանել Սահմանադրության և օրենքի հետապնդած նպատակները: Այս իրավիճակի հետ կապված բազմաթիվ հարցերից մենք հիմնական ուշադրությունը կհատկացնենք նրան, թե Սահմանադրության և օրենքի նպատակը որոշելիս, պետք է առաջնորդվել՝ դրա ընդունման պահին մեկնաբանման հետապնդած նպատակը սուբյեկտի¹⁶ է, թե՞ օբյեկտիվ: Գուցե հարկ լինի հաշվի առնել երկուսն էլ:

Ահարոն Բարաքը նշում է, որ Սահմանադրության տեքստը մեկնաբանելիս, պետք է հաշվի առնել ինչպես սուբյեկտիվ նպատակը, այնպես էլ՝ բուն ըմբռնումը, թեև՝ առաջինին որոշիչ նշանակություն չպետք է տալ¹⁷: Այս մոտեցումը, որը դիտարկում է անցյալի մեկնաբանությունները, թեև դրանց չի տալիս կենտրոնական մեկնաբանման դեր, շատ արևմտյան իրավական համակարգերի կողմից լայնորեն ընդունված է: Այսպիսին է, օրինակ, Կանադայում ընդունված մոտեցումը: Կանադայի Գերագույն դատարանը մեծ նշանակություն չի տալիս ոչ Սահմանադրության նախնական ըմբռնմանը, ոչ դրա հեղինակների մտադրություններին: Ինչպես պարզաբանել է Կանադացի դատավոր Վ. Լամերը. «Եթե նոր տնկված «կենդանի ծառը», որը խարտիսն է, պետք է ժամանակի ընթացքում աճելու և հարմարվելու հնարավորություն ունենա, ... չպետք է կասեցնել դրա աճը: »: Նմանատիպ մոտեցում է արտահայտվել նաև Ավստրալիայի Գերագույն դատարանը¹⁸, ընդգծելով, որ ինքը չպետք է դիսպոզիտիվ կշիռ տա Սահմանադրության հեղինակների «մեռած ձեռքերին», որոնք փորձում են վերահսկել Սահմանադրության իմաստն իրենց գերեզմաններից: Նույն մոտեցումն է ընդունվել նաև Գերմանիայի Սահմանադրական դատարանի կողմից²⁰:

Այսպիսով՝ Կանադայում, Ավստրալիայում, Իսրայելում և Գերմանիայում ոչ նախնական ըմբռնումը, ոչ հեղինակների մտադրությունը կենտրոնական դեր չունեն Սահմանադրության մեկնաբանման հարցի դատական քննության մեջ²¹:

Օրենքի հիմքում ընկած նպատակների սահմանումը ևս միանշանակ խնդիր չէ: Շատ դեպքերում օրենքները մեր առջև չեն հայտնվում իրենց նպատակները հստակ կանխատեսող նշաններով: Ավելին, նույնիսկ, եթե մեզն են նշաններ իսկապես գոյություն ունեն, ինչպես «նպատակները սահմանող դրույթներում», հարցը դեռևս լուծված չի կարող համարվել, քանզի շարունակում է մնալ այն հարցը, թե արդյո՞ք այդպիսի դրույթը պետք է լինի վերջնական չափանիշ՝ նպատակի որոշման հարցում:

Որոշակի հետաքրքրություն է ներկայացնում այս հարցի վերաբերյալ համեմատական ուսումնասիրությունը: Կանադայի Գերագույն դատարանի կողմից ընդունված մոտեցումն այն է, որ օրենքի ընդունման պահին օրենսդիրի կողմից նախատեսված սկզբնական՝ սուբյեկտիվ նպատակը պետք է նախապատվելի լինի, չպետք է դիտարկել որևէ սոցիալական փոփոխություն, որը տեղի է ունեցել օրենքի ընդունման պահին և որը կարող է արդարացնել օրենքի մեկնաբանման պահին մեկ այլ նպատակ²²: ԱՄՆ Գերագույն Դատարանի դիրքորոշումը, ընդհակառակը, այն է, որ պետք է դիտարկել միայն օբյեկտիվ լեզվով նպատակի գոյությունը²³:

Մինչ այժմ մենք անդրադարձանք օտարերկրյա փորձի հայտնի այն մոտեցումներին, որոնք Սահմանադրության կամ օրենքի նպատակը որոշելիս նախապատվությունը տալիս են կամ օբյեկտիվ, կամ սուբյեկտիվ չափանիշներին: Գտնում ենք, որ նպատակային մեկնաբանման գործընթացը պահանջում է, միաժամանակ, ուսումնասիրել առկա բոլոր մեկնաբանողական տվյալները, որոնք վերաբերում են Սահմանադրության կամ օրենքի տեքստի ինչպես սուբյեկտիվ, այնպես էլ իրական նպատակին²⁴: Առաջին հերթին, Սահմանադրության կամ օրենքի տեքստը չի կարող ճիշտ հասկացվել՝ առանց դրանք ստեղծողների մտադրությունները հաշվի առնելու²⁵, նույն կերպ նշված ակտերի տեքստը չի կարող ճիշտ հասկացվել՝ առանց հաշվի առնելու դրա իրական ըմբռնումը: Այնուամենայնիվ, օրենսդրական տեքստի վերջնական իմաստը, թեև ենթակա է ինչպես տեքստի սուբյեկտիվ, այնպես էլ իրական ընկալման ազդեցությանը, չի կարող գերիշխվել ոչ մեկի, ոչ էլ մյուսի կողմից: Այս համատեքստում լիովին համաձայն ենք այն կարծիքի հետ, որ օրենսդրական նպատակային մեկնաբանությունը ձգտում է ստեղծել սինթեզ օրենսդրական նպատակի վերաբերյալ՝ սուբյեկտիվ և օբյեկտիվ տվյալների միջև²⁶: Մեկնաբանման գործընթացը կոչված է ոչ թե առճակատելու երկու խումբ տվյալները՝ այլ դրանց ներդաշնակեցնելու:

Այժմ անդրադառնանք այս հարցի վերաբերյալ հայրենական օրենսդրությամբ նախատեսված կարգավորումներին: «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգա-

վորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

Գծվար չէ նկատել, որ այս նորմում օրենսդիրը ևս ընդունելի է համարել մեկնաբանման օբյեկտիվ և սուբյեկտիվ մոտեցումների համադրումը: Այսինքն՝ ելնելով օրենքի նշված դրույթից և հիմք ընդունելով այն հանգամանքը, որ ինչպես օրենքը, այնպես էլ Սահմանադրությունը նորմատիվ իրավական ակտեր են՝ վարչական մարմինը դրանցով հետապնդվող նպատակները որոշելիս՝ պետք է հիմք ընդունի ինչպես սուբյեկտիվ, այնպես էլ՝ օբյեկտիվ նպատակները: Ընդ որում, այս հանգամանքները թվարկելիս, որոնք պետք է իրավակիրառը հաշվի առնի նորմատիվ իրավական ակտը մեկնաբանելիս, օրենսդիրը առաջինը նշել է այն ընդունող մարմնի սուբյեկտիվ նպատակը: Նշվածի հետ կապված որոշակի հետաքրքրություն է ներկայացնում այն հարցը, թե ինչ աղբյուրներից պետք է օգտվի վարչական մարմինը օրենսդրական ակտի սուբյեկտիվ նպատակը բացահայտելու համար:

Շատ դեպքերում օրենսդրի մտադրությունը օրենքի ընդունման պահին, և այն նպատակը, որը հետապնդում է օրենքը, նույնական են կամ, առնվազն, շատ մոտ: Որոշ դեպքերում, սակայն, կա անջրպետ սուբյեկտիվ և օբյեկտիվ նպատակների միջև²⁷: Նման պայմաններում հարց է առաջանում, թե ինչ պետք է անի վարչական մարմինը, երբ օրենսդրական ակտի սուբյեկտիվ նպատակը մատնանշում է մեկնաբանության մի ուղղություն, իսկ օբյեկտիվը՝ մեկ այլ: Գտնում ենք, որ սուբյեկտիվ և օբյեկտիվ մոտեցումների միջև, կոլիզիայի դեպքում, օբյեկտիվ նպատակը մեկնաբանման իրականացման պահին պետք է գերակշռի: Նշված մոտեցումը, ըստ էության, համապատասխանում է նպատակային մեկնաբանության մեթոդին, ըստ որի՝ օրենքին, ներառյալ մարդու իրավունքներին վերաբերող, պետք է տրվի մեկնաբանման պահին իր օբյեկտիվ նպատակներին առավել համապատասխան իմաստ²⁸: Նման մեկնաբանումը դիմամիկ է²⁹: «Օրենքը միշտ խոսում է»³⁰:

Այսպիսով, ամփոփելով աշխատանքը՝ կարող ենք ներկայացնել հետևյալ հիմնական եզրակացությունները՝

- վարչարարության համաչափության սկզբունքի լեգիտիմ նպատակի տարրը պահանջում է, որ սահմանադրական իրավունքները սահմանա-

փակելիս վարչական մարմինը հետապնդի օրենսդրական ակտերով նախատեսված միայն այնպիսի նպատակներ, որոնք բավականաչափ կարևոր են՝ արդարացնելու այդ իրավունքների սահմանափակումը,

- վարչարարություն իրականացնելիս վարչական մարմնի կողմից մարդու սահմանադրական իրավունքների սահմանափակումն արդարացնող Սահմանադրությամբ և օրենքով հետապնդվող նպատակները կարող ենք խմբավորվել երկու հիմքերով՝ հանրային շահ և այլոց իրավունքների պաշտպանություն: Եթե այլոց իրավունքների պաշտպանությունը միշտ լեգիտիմ նպատակ է մարդու սահմանադրական իրավունքների սահմանափակման համար, ապա հանրային շահ համարվող ցանկացած արժեք չէ, որ կարող է արդարացնել վարչական մարմնի կողմից մարդու իրավունքների սահմանափակումը,

- Սահմանադրությամբ կամ օրենքով հետապնդվող նպատակները որոշելիս՝ վարչական մարմինը պետք է գնահատի ինչպես օրենսդրի սուբյեկտիվ մտադրությունները, այնպես էլ՝ նշված նորմատիվ իրավական ակտերի տեքստից բխող օբյեկտիվ նպատակը: Այն դեպքում, երբ նշված օրենսդրական ակտերի օբյեկտիվ և սուբյեկտիվ նպատակները հակասության մեջ են մտնում, վարչական մարմինը պետք է առաջնորդվի մեկնաբանման իրականացման պահին տեքստի օբյեկտիվ իմաստով:

Գտնում ենք, որ նշված եզրակացությունները բխում են մարդու սահմանադրական իրավունքների՝ որպես բարձրագույն արժեքների գաղափարից և վարչարարություն իրականացնելիս այդ իրավունքների պաշտպան պաշտպանության անհրաժեշտության հրամայականից:

¹ St'u, Robert Thomas, *Legitimate Expectations and Proportionality in Administrative Law*, Hart Publishing Oxford and Portland, Oregon, 2000, էջ 78:

² St'u, Urbina Molfino, Francisco Javier, *A critique of proportionality and balancing*, Cambridge [UK]; New York: Cambridge University Press, 2017, էջ 5:

³ St'u, Бажанов А.А. Соразмерность как принцип права, дис. ... канд. юрид. наук., 12.00.04, Москва, 2019, էջեր 82, 83:

⁴ St'u, Kremnitzer, M., Steiner, Talya, Lang, Andrej, *Proportionality in action: comparative and empirical perspectives on the judicial practice*, New York: Cambridge University Press, 2020, էջ 2:

⁵ St'u, Aharon Barak, *Proportionality: Constitutional Rights and their Limitations*, Cambridge University Press, 2012, էջ 245:

⁶ St'u, Van der Schyf, *Limitation of Rights: A Study of the European Convention and the South African Bill of Rights* (Nijmegen, h e Netherlands: Wolf Legal Publishers, 2005), էջ 145:

⁷ St'u, P. W. Hogg, *Constitutional Law of Canada*, 5th edn., vol. II (Toronto: Thomson Carswell, 2007), էջ 153:

⁸ St'u, L. E. Trakman, W. Cole-Hamilton, and S. Gatién, “R. v. Oakes 1986–1997. Back to the Drawing Board,” 36 *Osgoode Hall L. J.* 83 (1998), Justice Lamer in *Dagenais v. Canadian Broadcasting Corporation* [1994] 3 SCR 835:

⁹ St'u, Վճռաբեկ դատարանի 2014 թվականի նոյեմբերի 28-ի թիվ ՎԴ/5539/05/11, 2020 թվականի հուլիսի 24-ի թիվ ՎԴ/7317/05/16 վարչական գործերով որոշումները:

¹⁰ St'u, http://www.un.am/res/Human%20Rights/Armenian%20Documents/UDHR_arm.pdf:

¹¹ St'u, օրինակ՝ International Covenant on Economic, Social and Cultural Rights, opened for signature December 19, 1966, 993 UNTS 3 (ուժի մեջ է մտել March 23, 1976), American Declaration of the Rights and Duties of Man (1948); P. Sieghart, *The International Law of Human Rights* (Oxford University Press, 1983), էջ 85:

¹² St'u, Վճռաբեկ դատարանի 2016 թվականի ապրիլի 22-ի թիվ ՎԴ/1621/05/14 վարչական գործով որոշումը:

¹³ St'u, առավել մանրամասն L. Weinrib, “The Supreme Court of Canada and Section 1 of the Charter,” 10 *Sup. Ct. L. Rev.* 469 (1988):

¹⁴ Մարդու և քաղաքացու իրավունքների 1978 թվականի հռչակագիրը արտահատում է նույնպիսի գաղափար. «Ազատությունն արտահատում է անկախություն՝ անելու այն, ինչը չի վնասում այլոց: Այսպիսով, յուրաքանչյուրի կողմից բնական իրավունքների իրականացումը սահմաններ չունի, բացառությամբ, եթե դա անհրաժեշտ է հասարակության այլ անդամների իրավունքների իրականացումն ապահովելու համար: Այս սահմանները կարող են սահմանվել միայն օրենքով:»:

¹⁵ Այս մոտեցումն ընդունված է նաև Լեհաստանում: Այստեղ միայն այլոց սահմանադրական իրավունքների և ազատությունների պաշտպանությունը կարող է հակակշռել Սահմանադրությամբ երաշխավորված իրավունքների և ազատությունների սահմանափակումները, այդպիսի սահմանափակումները չեն կարող արդարացվել սահմանադրական ամրագրում չունեցող իրավունքների պաշտպանության համար (օրինակ՝ աշխատանքի իրավունք կամ եկամտի բավարար մակարդակ): St'u Polish Constitutional Tribunal, Judgment of 22 September 2015, Case No. SK 21/14 OTK-A 2015, No. 8, կետ 122:

¹⁶ St'u, Van der Schyf, նշված աշխատ., էջ 255:

¹⁷ St'u, A. Barak, *Purposive Interpretation in Law* (Princeton University Press, 2005), էջ 386:

¹⁸ St'u, Re BC Motor Vehicle Act [1985] 2 SCR 486, 504: St'u նաև R . v. Therens [1985] 1 SCR 613, 623; Mahe v. Alta [1990] SCR 342, 369:

¹⁹ St'u, H. Patapan, “The Dead Hands of the Founders?: Original Intent and the Constitutional Protection of Rights and Freedoms in Australia,” 25 *Fed. L. Rev.* 211 (1997):

²⁰ Դատարանը բացատրել է. «Ո՛չ նախնական ըմբռնումը, ո՛չ հեղինակների գաղափարներն ու մտադրությունները վճռական նշանակություն չունեն հիմնական օրենքի առանձին դրույթները մեկնաբանելիս: Հիմնական օրենքի ընդունումից ի վեր հիմնական իրավունքների բովանդակության, գործառնությունների և հետևանքների մեր ըմբռնումը խորացել է:» St'u D. Kommers, *The Constitutional Jurisprudence of The Federal Republic of Germany*, 2nd edn. (Durham, NC: Duke University Press, 1977), էջ 307:

²¹ St'u, C. L'Heureux-Dube, “The Importance of Dialogue: Globalization, the Rehnquist Court and Human Rights,” in M. H. Belskey (ed.), *The Rehnquist Court: A Retrospective* (New York: Oxford University Press, 2002), էջ 234:

²² St'u, R . v. B i g M Drug Mart Ltd. [1985] 1 SCR 295:

²³ Ինչպես նկատել է դատավոր Ռենկվիստը. «Որտեղ, ինչպես այստեղ, կան Կոնգրեսի գործողությունների ճշմարտանման պատճառներ, մեր հետաքննությունը մոտենում է ավարտին: Բնականաբար, «սահմանադրորեն նշանակություն չունի, թե արդյոք այդ փաստարկներն ընկած են օրենսդրական որոշման հիմքում», քանի որ այդ դատարանը երբեք չի պնդել, որ օրենսդիր մարմինն իր փաստարկները ձևակերպի ստատուտի ընդունման համար:» St'u United States Railroad Retirement Board v. Fritz , 449 US 166, 179 (1980):

²⁴ St'u, նաև A. Barak, *Purposive Interpretation in Law* (Princeton University Press, 2005), էջ 66, J. H. Merryman, “The Italian Legal Style III: Interpretation,” 18 *Stan. L. Rev.* 583, 593 (1966):

²⁵ St'u, նաև M. C. Dorf, “Integrating Normative and Descriptive Constitutional Theory: The Case of Original Meaning,” 85 *Geo. L. J.* 1765 (1997):

²⁶ St'u, A. Barak, *Purposive Interpretation in Law* (Princeton University Press, 2005), էջ 385:

²⁷ Սա հիմնականում կախված է օրենքի ընդունման և մեկնաբանման միջև ընկած ժամանակից: Այս երևույթի օրինակը, որը կրկնվում է մի քանի իրավական համակարգերում, «կիրակնօրյա օրենքներն» են: Դրանց ընդունման ժամանակ այդ օրենքները, որոնք սահմանափակում են աշխատանքը կամ առևտուրը կիրակի օրերին, պետք է ծառայեն կրոնական նպատակին: Սակայն տարիներ շարունակ դատարաններն օրենսդիրներին մեկնաբանել են դրանք որպես սոցիալական, այլ ոչ թե կրոնական նպատակ հետապնդող, այն է՝

աշխատավորների համար հանգստի պարտադիր օր ապահովելու համար:
²⁸ Նպատակային մեկնաբանման մասին առավել մանրամասն տե՛ս Насырова Т.Я. Телеологическое толкование советского закона. - Казань, 1988.

²⁹ Դինամիկ օրենսդրական մեկնաբանության մասին առավել մանրամասն տե՛ս W. N. Eskridge, Dynamic Statutory Interpretation (Cambridge, MA: Harvard University Press, 1994):

³⁰ Տե՛ս, A. Barak, Purposive Interpretation in Law (Princeton University Press, 2005), էջ 41:

Кристине Алексаян

Аспирант кафедры конституционного права
юридического факультета ЕГУ,
главный специалист офиса по координации работ
инспекционных органов аппарата премьер-министра РА

РЕЗЮМЕ

Легитимная цель как элемент принципа соразмерности

Статья посвящена изучению элемента легитимной цели принципа соразмерности администрирования. В статье рассматриваются вопросы - какие цели в рамках администрирования могут оправдать ограничения конституционных прав человека, а также какими критериями должен руководствоваться административный орган при определении целей, преследуемых Конституцией и законом.

Ключевые слова: ограничение, конституционное право, администрирование, принцип соразмерности, легитимная цель.

Kristine Aleksanyan

PhD student of the Department of Constitutional Law,
Faculty of Law, YSU
Chief Specialist of the Office for Coordination of Work
of Inspection Bodies of the Prime Minister's Office of RA

SUMMARY

Legitimate purpose as an element of the principle of proportionality

The article is devoted to the study of the element of the legitimate goal of the principle of proportionality of administration. The article discusses the issues of what goals within the framework of administration can justify restrictions on constitutional human rights, as well as what criteria an administrative body should be guided by when determining the goals pursued by the Constitution and the law.

Key words: restriction, constitutional law, administration, the principle of proportionality, legitimate purpose.

Բնագիրը ներկայացվել է 20.01.2021թ.

Ընդունվել է տպագրության 16.02.2021թ.

Հոդվածը երաշխավորել է տպագրության (գրախոսել է)

իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գ. Դանիելյանը

ԱՆԻ ՄԻՋԱՅԵԼՅԱՆ

ՀՀ արդարադատության նախարարության
իրավական ապահովման վարչության պետի տեղակալ,
ԵՊՀ քաղաքացիական դատավարության ամբիոնի
դասախոս

**ԸՆԴԴԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԻ ԽԱԽՏՄԱՆ
ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ
ՀԱՅՅԱԴԻՄՈՒՄԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՓՈԼՈՒՄ**

Հոդվածը նվիրված է ընդդատության կանոնների խախտման դատավարական հետևանքների ուսումնասիրությանը և վերլուծությանը հայցադիմումը վարույթ ընդունելու փուլում: Հոդվածում նախ և առաջ ներկայացվում է ընդդատության հասկացությունը՝ հիմնվելով «օրենքի հիման վրա ստեղծված դատարան» եզրույթի վրա: Այնուհետև քննարկվում առարկա են դարձվում՝ գործը տվյալ առաջին ատյանի դատարանին ընդդատյա չլինելու հիմքով հայցադիմումը վերադարձնելու մասին որոշում կայացնելու և կայացված որոշումը բողոքարկելու հետ կապված հարցերը:

Հիմնաբառեր՝ «օրենքի հիման վրա ստեղծված դատարան», ընդդատություն, ենթակայություն, ընդդատության կանոնների խախտում, հայցադիմումի վերադարձ:

1948թ. դեկտեմբերի 10-ին ընդունված Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը բացարձակ արժեք ներկայացնող հիմնական իրավունքների և ազատությունների թվին է դասում յուրաքանչյուրի՝ սահմանադրությամբ կամ օրենքով իրեն տրված հիմնական իրավունքները ոտնահարվելու դեպքում այդ իրավունքները իրավասու ազգային դատարանների միջոցով արդյունավետ կերպով վերականգնելու իրավունքը:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունն¹ իր հերթին սահմանում է, որ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության (61-րդ հոդված), անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք (63-րդ հոդված):

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի»² ՀՀ սահմանադրական օրենքի 8-րդ հոդվածը սահմանում է, որ դատարանների գործունեությունը պետք է կազմակերպվի այնպես, որ ապահովվի յուրաքանչյուրի իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանությունը՝ օրենքի հիման վրա ստեղծված անկախ և անաչառ դատարանի կողմից գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության միջոցով:

Նշված սահմանադրական դրույթների ուժով առանձնակի նշանակություն է ձեռք բերում քաղաքացիական գործերով ընդդատության կանոնների կարգավորման հստակությունը և դրանց խիստ

պահպանումը դատարանների կողմից արդարադատություն իրականացնելիս:

Քաղաքացիական դատավարության հիմնական խնդիրներից մեկը՝ քաղաքացիական գործի ճիշտ և ժամանակին քննությունն ու լուծումն է: Այդ խնդիրը կարող է լուծվել դատարանների գործունեության հստակ կազմակերպման միջոցով՝ իրական և արդյունավետ դատավարական նորմերի գոյության պայմաններում, այդ թվում և՛ ընդդատության կանոններին վերաբերվող: Դրա հետ կապված շատ կարևոր է ընդդատության կանոնների կարգավորման հստակությունը և դատարանների կողմից դրանց պահպանումը արդարադատություն իրականացնելիս³:

Դատական պաշտպանության իրավունքը, ի թիվս այլնի, ենթադրում է նաև, որ իրավաբանական գործի քննությունը և լուծումը պետք է իրականացվի օրենքով սահմանված, այլ ոչ թե կամայականորեն ընտրված դատարանի կազմի կողմից⁴:

Գործերի պատշաճ ընդդատությունը՝ որպես արդար դատաքննության անհրաժեշտ բաղկացուցիչ, հիմնարար իրավական արժեք է: Դրա հիմնարար բնույթը բխում է արդար դատաքննության ինստիտուցիոնալ տարրից՝ անկախ, անկողմնակալ, իրավասու և օրենքի հիման վրա ստեղծված դատարան ապահովելու պետության պոզիտիվ պարտականությունից: Իսկ այդ պարտականությունն, իր հերթին, ըստ էության, ամրագրված է Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում, բարձրագույն իրավաբանական ուժ ունեցող այնպիսի նորմատիվ ակտերում, ինչպիսիք են՝ ՀՀ

Սահմանադրությունը (63-րդ հոդված), Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը (14-րդ հոդված) և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիան (6-րդ հոդված):

Ավելին, Եվրոպայի Խորհրդի Նախարարների Կոմիտեի «Դատավորների անկախության, արդյունավետության և պատասխանատվության մասին» թիվ (2010)12 Հանձնարարականում ևս ընդգծվում է, որ դատարանում գործերի բաշխումը պետք է կատարվի օբյեկտիվ, նախապես սահմանված չափանիշի հիման վրա՝ երաշխավորելու համար անկախ և անկողմնակալ դատավոր ունենալու իրավունքը: Այդ գործընթացի նկատմամբ կողմերը կամ գործով շահագրգռված այլ անձինք ներգործություն ունենալ չեն կարող:

Ընդդատության ինստիտուտը, իր հերթին ուղղված լինելով գործը քննելու և լուծելու հարցում դատարանի լիազորությունները պարզելուն, անմիջականորեն կապված է օրենքի հիման վրա ստեղծված դատարանե եզրույթի հետ և ընդդատության ինստիտուտի բովանդակության բացահայտման համար այն ունի առաջնային նշանակություն:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի պրակտիկայում «օրենքի հիման վրա ստեղծված դատարանի» երաշխիքը խորը մեկնաբանության է ենթարկվել. առանձին մեկնաբանվել են այդ երաշխիքի տարրերը՝ «դատարան (որը պետք է ստեղծվի օրենքի հիման վրա)» և «օրենք (որի հիման վրա ստեղծվում է դատարանը)» տերմինները, ինչպես նաև տրվել է «օրենքի հիման վրա ստեղծված դատարանի» ընդհանրական մեկնաբանությունը:

Եվրոպական դատարանն ինքնավար իմաստ է դնում «դատարան տերմինի ներքո՝ բազմաթիվ նախադեպային աղբյուրներում մասնավորեցնելով այդ ինստիտուտի հատկանիշները:

Բեյլյուսի գործով վճռում՝ 1988թ., Եվրոպական դատարանն, ընդհանուր առմամբ, ամբողջացրել էր «դատարանին» որպես օրգանական միավորի ներկայացվող պահանջներ: Դրանք մասնավորապես հանգում են հետևյալներին՝ որոշում կայացնելու հնարավորություն, հարցերի լուծում՝ իր իրավասության շրջանակներում, գործառնում միայն սահմանված ընթացակարգերի հիման վրա, անկախություն, անկողմնակալություն, անդամների պաշտոնավարման ժամկետ, վարության իրավունքների առկայություն⁶:

«Օրենքի հիման վրա ստեղծված դատարան» արտահայտությունը Մարդու իրավունքների եվրո-

պական դատարանը մեկնաբանել է նաև Սոկուրենկոն և Ստրիգունը ընդդեմ Ուկրաինայի գործով՝ նշելով, որ «Օրենքի հիման վրա ստեղծված դատարան» («տրիբունալ») հասկացությունը, Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն, ներառում է դատարանների ամբողջ կազմակերպչական համակարգը՝ ներառյալ համապատասխան դատարանների իրավասության մեջ մտնող հարցերը: Այսինքն՝ «օրենքի հիման վրա ստեղծված» սահմանումը ներառում է ոչ միայն դատարանի («տրիբունալ») գործելու իրավական հիմքը, այլ նաև դատարանի (տրիբունալի) կողմից կոնկրետ այն իրավական նորմերին հետևելը, որոնք կարգավորում են նրա գործունեությունը:

ՀՀ Վճռաբեկ դատարանն ևս իր որոշումներում անդրադարձել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված օրենքի հիման վրա ստեղծված դատարանի իրավական վերլուծությանը: Մասնավորապես Վճռաբեկ դատարանը նշել է, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից դատաքննության իրավունքի երաշխավորման համար անհրաժեշտ են մի շարք պահանջներ, որոնց պետք է բավարարի վեճը քննող դատական մարմինը: Այդ պահանջներից մեկն էլ այն է, որ դատարանը պետք է ստեղծված լինի օրենքի հիման վրա: Մասնավորապես, Վճռաբեկ դատարանը գտել է, որ նշված պահանջը սերտորեն կապված է դատարանի կազմավորման ընթացակարգի հետ, որը պետք է համապատասխանի օրենքին⁸:

«Դատարանի» նշված չափանիշները արդար դատաքննության իրավունքի երաշխավորվածության լույսի ներքո դիտարկելիս՝ կարող ենք եզրահանգել, որ եթե ՀՀ-ում դատական համակարգի մաս հանդիսացող որևէ դատարան կոնկրետ գործ քննելիս օժտված չլինի որոշակի հատկանիշներով, ապա այն չի համարվի «դատարան»՝ Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի իմաստով: Արդյունքում՝ կարճաճանաչվի անձի արդար դատաքննության իրավունքի խախտում:

Անդրադառնալով «օրենքի հիման վրա ստեղծված դատարան» օրգանական տարրի «օրենք» բաղադրիչին՝ պետք է նկատի ունենալ, որ Ստրասբուրգի դատարանը հստակ փոխկապակցվածություն է տեսնում Կոնվենցիայի տարբեր հոդվածներում, օրինակ՝ 6-րդ, 10-րդ, 11-րդ հոդվածներում կիրառված «օրենք» հասկացությունների միջև: Այլ կերպ՝ «օրենքին» ներկայացվող պահանջները միասնական են: Կոնվենցիայի 6-րդ հոդվածի կապակցությամբ այս թեզն արտահայտված է Գինի-

կանվալի գործով Մարդու իրավունքների եվրոպական հանձնաժողովի որոշման մեջ, որտեղ Հանձնաժողովը դիրքորոշում է հայտնում, որ «օրենքի հիման վրա ստեղծված դատարանն դրույթի մեջ «օրենքի» արտահայտության մեկնաբանման համար անհրաժեշտ է ելնել Սանդի Թայմսի գործով Կոնվենցիայի 10-րդ հոդվածի համատեքստում «օրենք» բառի նախադեպային մեկնաբանությունից: Ինչ վերաբերում է Սանդի Թայմսի գործում վեր հանված «օրենք» հասկացության չափանիշներին, ապա դրանք երկուսն են՝ որոշակիությունը և մատչելիությունը:

Անդրադառնալով «օրենքի հիման վրա ստեղծված դատարանին ընդհանրական մեկնաբանմանը՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ քննարկվող օրգանական տարրն ընդհանրական մեկնաբանելիս՝ Եվրոպական դատարանն առանձնացնում է երկու չափանիշ՝ դատական կազմը և դատարանի իրավասությունը:

Դատական կազմին են մասնավորապես վերաբերում՝ Լավենտսի և Պոստխովի գործերը, որոնցում դատարանն արդար դատաքննության իրավունքի ոստնահարում է արձանագրել այն պարագայում, երբ տվյալ գործը քննող դատական կազմի մեջ մտնող որոշ դատավորներ (իսկ Պոստխովի դեպքում՝ ատենակալներ) պատշաճ մակարդակի դատավորներ չեն եղել¹⁰:

Ինչ վերաբերում է դատարանի իրավասությանը, ապա այս հարցում Եվրոպական դատարանը լայն մոտեցում է դրսևորել՝ այս հասկացության տակ հասկանալով թե՛ գործը վարույթ ընդունելու և թե՛ գործին կոնկրետ լուծում տալու դատարանի իրավագործությունը:

Հիմնվելով վկայակոչված որոշումների համակարգային վերլուծության վրա՝ կարող ենք նշել, որ արդար դատաքննության իրավունքի անքակտելի տարր համարվող «օրենքի հիման վրա ստեղծված դատարանն ղեկավարում իրավունքը խախտվում է բոլոր այն դեպքերում, երբ դատարանը որոշում է կայացնում օրենքով հստակ սահմանված լիազորությունների սահմանն անցնելով, դատարանի կողմից իր գործունեությունը կարգավորող իրավական նորմերին չհետևելով, դատարանի կազմի ոչ օրինական լինելու և բոլոր այն դեպքերում, երբ դատարանը վարույթ է ընդունում և քննում է այն գործը, որը իրեն ընդդատյա չէ:

Այսպիսով, կարելի է նշել, որ ընդդատությունը, հանդիսանալով քաղաքացիական գործը վարույթ ընդունելու, քննելու, լուծելու, մի շարք հարցերի վերաբերյալ որոշում կայացնելու հարցում դատա-

րանների իրավասությունը որոշող չափանիշ՝ դատավարական նորմերի համակցություն է, որը կարգավորում է օրենքով սահմանված կարգով սուբյեկտիվ իրավունքների դատական պաշտպանության ենթակա իրավաբանական գործերի բաշխումը առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանների միջև, ինչպես նաև գործի ընդդատությանը համապատասխան՝ այն մի դատարանից մեկ այլ դատարանը փոխանցելու հետ կապված հարցերը:

Կոնկրետ քաղաքացիական գործի ընդդատության ճիշտ որոշումը հանդիսանում է անհրաժեշտ պայման՝ դատարանն ղեկավարելու իրավունքի իրականացման և արդարադատության մատչելիության իրավունքի երաշխավորման համար:

Ընդդատության կանոնների խախտման հետևանքով տուժում են ոչ միայն առանձին անձանց շահերը, այլև ինքնին արդարադատությունը:

Դրա հետ մեկտեղ, ինչպես ցույց է տալիս քաղաքացիական գործերով ընդդատության որոշման ոլորտում ձևավորված դատական պրակտիկան՝ դատական մարմինների կողմից քաղաքացիական գործի լուծման ժամանակ թույլ տրված շատ սխալներ հանդիսանում են ընդդատության կանոնների խախտման հետևանք: Դա շատ հաճախ հանգեցնում է ժամանակի մեծ մասի կորստի, ինչպես նաև և՛ դատական մարմինների, և՛ իրենց խախտված կամ վիճարկվող իրավունքների կամ օրինական շահերի դատական պաշպանության համար դիմող անձանց միջոցների անիմաստ վատման, ինչը, իր հերթին, էականորեն սահմանափակում է արդարադատության հասանելիությունը: Հետևաբար, առաջին ատյանի դատարանի կարգավիճակով գործեր քննող ընդհանուր իրավասության դատարանների իրավասությունների հստակ սահմանազատումը, այլ խոսքերով՝ քաղաքացիական գործերի ընդդատությունն ունի կարևոր նշանակություն ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված դատական պաշտպանության իրավունքի իրականացման գործում:

Քաղաքացիական գործի ճիշտ ընդդատության որոշումը ունի գործնական կարևոր նշանակություն: Միայն դատարան հայցի ներկայացումը, ոչ ընդդատյա դատարանի կողմից հայցադիմումը վարույթ ընդունելը և քննություն իրականացնելը հանգեցնում են ընդդատության կանոնների խախտման, որը քաղաքացիական դատավարության տարբեր փուլերում կարող է ունենալ տարբեր իրավական հետևանքներ, ընդհուպ՝ դատական ակտի բեկանում:

Գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի¹² կարգավորումներից պարզ է

դառնում, որ տարածքային ընդդատության կանոնների խախտման իրավական հետևանքը հայցի հարուցման փուլում հայցադիմումը վերադարձնելն է:

Հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը լուծելիս՝ դատարանը նախ և առաջ պարզում է հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքերի առկայությունը և միայն այդ հիմքերի բացակայության պարագայում՝ հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշում է կայացնում:

Ընդ որում, նշված հիմքերի առկայությունը ստուգելու համար, դատարանը չպետք է կաշկանդվի հայցվորի կողմից հայցադիմում ներկայացրած պահանջի ձևակերպումից և պարտավոր է հայցադիմումը վարույթ ընդունելու փուլում դրա բովանդակությունից հասկանալ վեճի բնույթն ու կիրառման ենթակա օրենսդրությունը, որպեսզի անսխալ որոշի նաև գործի ենթակայությունը:

Այլ կերպ ասած, հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը լուծելիս, դատարանը նախ և առաջ պետք է որոշի՝ արդյո՞ք վեճը ենթակա է դատարանի քննությանը: Եթե դատարանը պարզում է, որ վեճը դատարանի քննությանը ենթակա չէ, ապա մերժում է հայցադիմումի ընդունումը (ՀՀ ԶԴ-Օ 126-րդ հոդված, 1-ին մասի 1-ին կետ):

Նման իրավակարգավորումը կոչված է բացառելու դատարանների իրավասությանը չհանձնված վեճերի քննությունը և լուծելու այն դատարանների կողմից: Եթե գործը ենթակա չէ դատարանին, ապա դատարանն ղիմող անձը հայց հարուցելու իրավունք չունի, իսկ դատարանն իրավասու չէ խախտել այլ մարմինների իրավասությունը և լուծել նրանց վերապահված գործերը:

Ենթակայության հարցը պարզելուց հետո՝ դատարանը պետք է որոշի քաղաքացիական գործի ընդդատությունը, որը տարանջատում է դատարանների իրավասությունը դատական համակարգի միևնույն օղակի ներսում: Քաղաքացիական գործի դատական ենթակայությունը որոշելուց անմիջապես հետո՝ հայցադիմումն (դիմումն) ընդունող դատավորը պետք է պարզի, թե տվյալ գործն ընդդատյա՞լ է արդյոք այն դատարանին, որը սպասարկում է ինքը: Ընդդատության հարցը դատավորը լուծում է միանձնյա՝ հայցադիմումն ընդունելու հարցը լուծելու հետ միաժամանակ: Եթե գործն ընդդատյա չէ տվյալ դատարանին, ապա դատավորը վերադարձնում է հայցադիմումը (ՀՀ ԶԴ-Օ 127-րդ հոդվ. 1-ին մասի 1-ին կետ):

Հայցադիմումը վերադարձնելը հանդիսանում է քաղաքացիադատավարական պաշտպանության

միջոց: Որպես քաղաքացիադատավարական պաշտպանության միջոց հայցադիմումը վերադարձնելը իրենից ներկայացնում է կոնկրետ պահանջներ, որոնք անհրաժեշտ է իրականացնել դատական պաշտպանության իրավունքի իրագործման համար: Այդ պահանջները խոչընդոտվում են անբարեխիղճ հայցվորի կողմից քաղաքացիական գործով վարույթի հարուցմանը: Ընդ որում, անբարեխիղճ համարվում է այն կողմը, որը փորձում է իրագործել դատական պաշտպանության իրավունքը՝ շրջանցելով օրենսդրությամբ ամրագրված կանոնները, որի հետևանքով կարող են խախտվել այլ անձանց իրավունքները:

Դատական պաշտպանության իրավունքը կարող է սահմանափակվել՝ կապված հայցադիմում ներկայացնելիս կոնկրետ պայմանների չպահպանման հետ:

Սուբյեկտիվ իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը ներառում է դատարանի կողմից որոշումների կայացում: Ընդ որում՝ հայցադիմումի վերադարձման մասին որոշումը նպատակաուղղված է նրան, որ վերացվեն խոչընդոտները շահագրգիռ անձի կողմից դատական պաշտպանության իրավունքի իրականացման ճանապարհին¹³:

Հետևաբար, հայցադիմումը վերադարձնելու մասին որոշմամբ, դատարանը պետք է մատնանշի խոչընդոտների վերացման ուղիները:

Հայցադիմումը վերադարձնելու խնդիրն անդրադարձել է նաև ՀՀ Սահմանադրական դատարանը՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 79-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործում: Սույն որոշմամբ սահմանադրական դատարանը նշել է, որ դատարան (այդ թվում՝ սահմանադրական դատարան) ղիմելու հետ կապված իրավահարաբերությունների օրենսդրական կարգավորման նպատակը ոչ միայն ղիմումի բովանդակության վերաբերյալ պարտադիր պայմաններ սահմանելն է, այլև այն քննության ընդունելու (կամ չընդունելու) պատճառաբանման նորմատիվ պահանջի սահմանումը: Ի թիվս վերոնշյալի՝ դատարանը գտել է նաև, որ անձի իրավունքների դատական պաշտպանության արդյունավետ իրականացումը պայմանավորված է նաև օրենքներով նախատեսված ընթացակարգային պահանջների հստակ և միակերպ կատարմամբ, որպիսիք իրավական պայմաններ կստեղծեն, մի կողմից՝ անձի դատարան հասցեագրված ղիմումը, դրանում բարձրացված հարցերն օբյեկտիվ գնահատելու, նաև այն հիմնավոր ճանաչելու, մյուս

կողմից՝ դատարանի՝ այդ դիմումի քննության (այդ թվում՝ նախնական) արդյունքում պատճառաբանված որոշում կայացնելու համար: Սահմանադրական դատարանն արձանագրել է, որ օրենսգրքով նախատեսված է կոնկրետ իրավական կառուցակարգ, որի շրջանակներում դատարանն իրավասու է գնահատել հայցադիմումի ընդունելիությանն առնչվող պահանջների և պայմանների պահպանվածությունը:

Սահմանադրական դատարանը նշել է նաև, որ հայցադիմումը վերադարձնելու մասին միջանկյալ դատական ակտ կայացնելով՝ դատարանը պատշաճ հիմնավորմամբ պետք է մատնանշի այն բոլոր առերևույթ թերությունները, որոնք թույլ են տրվել հայցվորի կողմից ներկայացված հայցադիմումում¹⁴:

Քաղաքացիական դատավարության օրենսդրությամբ սահմանված կարգով՝ դատավորը միանձնյա կատարում է հայցադիմումը վարույթ ընդունելու և քաղաքացիական գործ հարուցելու բոլոր գործողությունները: Հետևաբար, դատավորը պետք է ձեռնամուխ լինի կատարելու բոլոր անհրաժեշտ դատավարական միջոցներն իրականացնելու ճիշտ գործողություններ՝ ապահովելով շահագրգռված անձի դատական պաշտպանության իրավունքն ամբողջությամբ: Հաշվի առնելով, որ ՀՀ Սահմանադրությունը յուրաքանչյուր անձի իրավունք է վերապահում դատարանում պաշտպանել Սահմանադրությամբ և օրենքներով ամրագրված իր իրավունքները, ազատությունները և օրինական շահերը, դատարանները պարտավոր են քաղաքացիական գործերը ժամանակին և ճիշտ քննելու միջոցով ապահովել այդ պաշտպանությունը, որը սկսվում է հենց հայցադիմումը (դիմումը) վարույթ ընդունելու և գործ հարուցելու պահից:

Հետևաբար, բոլոր այն դեպքերում, երբ առկա են հայցադիմումի ձևին և բովանդակությանն առաջադրվող պահանջների ձևական խախտումներ, ինչպես նաև պրակտիկ խոչընդոտներ, որոնք հնարավոր է շտկել գործը դատաքննության նախապատրաստելու փուլում, ապա դատավորը պետք է ձեռնամուխ լինի հայցադիմումը վարույթ ընդունելու, իսկ դրանում առկա անհստակությունները շտկելու գործը՝ դատաքննության նախապատրաստելու փուլում, ինչը բխում է անձի «դատարան դիմելու» և «դատարանի մատչելիության» իրավունքներից¹⁵:

Վկայակոչվածի համատեքստում, գտնում ենք, որ քաղաքացիական գործերը ժամանակին և ճիշտ քննելու միջոցով անձի ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով ամրագրված իրավունքները, ազատու-

թյունները և օրինական շահերը դատարանում պաշտպանելը առավել արագ և առանց խոչընդոտների ապահովելու շահից ելնելով, հայցադիմումի ընդունելության փուլում տարածքային ընդդատության կանոնի խախտման պարագայում՝ նպատակահարմար է հրաժարվել հայցադիմումը վերադարձնելու առկա կարգավորումից: Փոխարենը առաջարկվում է նախատեսել այնպիսի կարգավորում, որի դեպքում դատարանը հայցադիմումը վարույթ ընդունելու փուլում հայտնաբերելով, որ գործն իրեն ընդդատյա չէ, այն հանձնում է ըստ ընդդատության, ինչն էլ, իր հերթին, կապահովի նաև քաղաքացիական գործով վարույթի իրավաչափ հարուցումը:

ոսքն, իհարկե, վերաբերում է այն դեպքերին, երբ բացի տարածքային ընդդատության կանոնի խախտումից՝ հայցադիմումը վերադարձնելու այլ հիմքեր առկա չեն:

Ասվածը հիմնավորվում է նաև նրանով, որ ընդդատության կանոնների խախտման հիմքով հայցադիմումը վերադարձնելու դեպքերում, նույնիսկ հայցադիմումի վերադարձման հիմքը դատարանի կողմից նշելու պարագայում էլ հայցվորը պատշաճ ատյան որոշելու հարցում կարող է ընկնել անորոշության մեջ, ինչն իր հերթին՝ հանգեցնելու է անձի դատական պաշտպանության ձգձգման:

Իրավաբանական գրականության մեջ որպես նշված հարցի լուծման տարբերակ առաջարկվում է նաև սահմանել, որ եթե դատավորը գործն այդ դատարանին ընդդատյա չլինելու հիմքով վերադարձնում է հայցադիմումը, ապա պարտավոր է իր որոշման մեջ ցույց տալ, թե հայցվորը որ դատարանին պետք է դիմի¹⁶: Այսպես, օրինակ, ՌԴ ԲԴՕ-ի 129-րդ հոդվածը, որը կարգավորում է հայցադիմումը վերադարձնելու հետ կապված հարցերը, պարունակում է նորմ, համաձայն որի, երբ դատավորը վերադարձնում է հայցադիմումը, գործը տվյալ դատարանին ընդդատյա չլինելու հիմքով, հայցադիմումը վերադարձնելու մասին որոշման մեջ պետք է անպայման նշի այն դատարանը, որին կարող է դիմել հայցվորը¹⁷:

Ասվածի հիման վրա առաջարկում ենք սահմանել, որ բոլոր այն դեպքերում, երբ ներկայացված հայցադիմումի ընդդատությունը պատկանում է ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանին, սակայն հայցադիմումը ներկայացնելիս խախտվել է տարածքային ընդդատության կանոնը, ապա դատարանը ոչ թե վերադարձնում է հայցադիմումը, այլ գործը հանձնում է ըստ պատշաճ ընդդատության:

Զննարկման ենթակա հաջորդ հարցը վերաբե-

րում է ընդդատության հիմքով հայցադիմումը վերադարձնելու մասին որոշման բողոքարկման հնարավորության վերաբերյալ հարցին:

Մինչև 05.01.2020թ. գործող խմբագրությամբ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին ատյանի դատարանը վերադարձնում է հայցադիմումը, եթե գործն ընդդատյա չէ տվյալ առաջին ատյանի դատարանին:

Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ հայցադիմումը վերադարձնելու մասին առաջին ատյանի դատարանի որոշումը կարող է բողոքարկվել նույն օրենսգրքով սահմանված կարգով, բացառությամբ՝ նույն հոդվածի 1-ին մասի 1-ին և 12-րդ կետերով նախատեսված դեպքերի:

Մինչև 05.01.2020թ. գործող խմբագրությամբ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդվածի համաձայն՝ հայցադիմումը վերադարձնելու մասին որոշումը, որպես կանոն, ենթակա է անմիջական բողոքարկման: Այս կանոնից բացառություն էին կազմում հետևյալ երկու դեպքերը.

1. եթե գործը տվյալ դատարանին ընդդատյա չէ, այսինքն՝ հայցադիմումը ներկայացվել է ընդդատության կանոնների խախտմամբ,

2. եթե վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջ ներկայացնող երրորդ անձի կողմից հայցադիմումը ներկայացվել է նույն օրենսգրքի 37-րդ հոդվածով սահմանված պահանջների խախտմամբ:

Այսինքն՝ քաղաքացիական դատավարության օրենսդրությունը վերոնշյալ երկու հիմքերով առաջին ատյանի դատարանի կողմից հայցադիմումը վերադարձնելու դեպքերի համար չէր նախատեսել հայցադիմումը վերադարձնելու մասին որոշման անմիջական բողոքարկման իրավական հնարավորություն: Վերոնշյալ հիմքերով հայցադիմումը վերադարձնելու մասին առաջին ատյանի դատարանի կայացրած որոշումները վերաքննության կարգով բողոքարկման ենթակա չէին:

Վճռաբեկ դատարանը կայացրած նախադեպային որոշմամբ, անդրադառնալով նշված հարցի քննարկմանը, փաստել է, որ գործը տվյալ առաջին ատյանի դատարանին ընդդատյա չլինելու հիմքով հայցադիմումը վերադարձնելու մասին որոշման բողոքարկման հետաձգված կարգի կիրառումն առանձին դեպքերում կարող է անհնարին լինել: Այսինքն՝ հնարավոր են դեպքեր, երբ անձի կողմից ներկայացված հայցի հիման վրա չկայացվի այն եզրափակիչ դատական ակտը, որի հետ մեկտեղ՝ անձն իրավունք կունենա բողոքարկելու հայցադի-

մումը քննարկվող հիմքով վերադարձնելու մասին դատարանի որոշումը: Մասնավորապես, նման իրավիճակ անխուսափելիորեն առաջանում է այն դեպքում, երբ առաջին ատյանի դատարանը հայցադիմումը վերադարձնում է՝ գտնելով, որ գործն ընդդատյա է մեկ այլ դատարանի, իսկ վերջինս, իր հերթին, համարում է, որ տվյալ գործն իրեն ընդդատյա չէ և նույն հիմքով վերադարձնում է ներկայացված հայցադիմումը: Քննարկվող իրավիճակում, անձը ոչ միայն հնարավորություն չի ունենում բողոքարկելու հայցադիմումը վերադարձնելու մասին որոշումները, այլև՝ արդյունքում ընդհանրապես զրկվում է դատարանում իր գործի քննության իրավունքից, քանի որ դատարանները համարում են, որ գործն իրենց ընդդատությանը չի պատկանում:

Փաստորեն, անձը, չունենալով հայցադիմումը վերադարձնելու մասին որոշումները բողոքարկելու հնարավորություն, կարող է հայտնվել իրավական փակուղում՝ ձևականորեն ունենալով դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքներ, սակայն չկարողանալով դրանք գործնականում իրացնել: Մինչդեռ, իրավական պետության պայմաններում, պետք է երաշխավորվեն ոչ թե տեսական, երևակայական իրավունքներ, այլ գործնականում հնարավոր և արդյունավետ իրավունքներ: Այդ իսկ պատճառով Վճռաբեկ դատարանը կարևորել է վերոնշյալ դատական ակտերի անմիջական բողոքարկման հնարավորության օրենսդրական ամրագրումը¹⁸:

Նախատեսված փոփոխությամբ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված՝ գործը տվյալ առաջին ատյանի դատարանին ընդդատյա չլինելու հիմքով հայցադիմումը վերադարձնելու մասին որոշումը ևս ենթակա է անմիջական բողոքարկման, ինչը, կարծում ենք, արդարացված է, քանի որ այն խոչընդոտում էր դատարանի մատչելիության իրավունքի իրացման ընթացքն այնպես, ինչպես ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված մյուս հիմքերով հայցադիմումը վերադարձնելը:

Միևնույն ժամանակ, հետաքրքրություն է ներկայացնում նաև այն հարցը, թե ի՞նչ իրավունքներով են օժտված կողմերը այն դեպքերում, երբ դատարանը գործը վարույթ է ընդունել ընդդատության կանոնների խախտմամբ, մասնավորապես, արդյոք նման դեպքերում արդեն որոշված ընդդատությունը ենթակա՞ է փոփոխության:

ՀՀ ՔԴ-Օ 25-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է, որ սույն օրենսգրքի 21-րդ կամ 22-րդ հոդվա-

ծով սահմանված ընդդատության կանոնների խախտմամբ վարույթ ընդունված գործը հանձնվում է այլ դատարանի քննությանը, եթե պատասխանողը մինչև ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշում կայացնելն առարկում է գործը տվյալ դատարանում քննելու վերաբերյալ:

Դա նշանակում է, որ եթե ընդհանուր տարածքային կամ այլընտրանքային ընդդատության կանոնների խախտմամբ գործը արդեն իսկ ընդունվել է վարույթ, ապա գործը հանձնվում է ըստ պատշաճ ընդդատության միայն այն դեպքում, երբ պատասխանողը մինչև ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշում կայացնելն առարկում է գործը տվյալ դատարանում քննելու վերաբերյալ:

Սակայն, այս պարագայում էլ բացառված չէ, որ դատարանը մերժի պատասխանողի առարկությունը և չփոխի գործի ընդդատությունը, որի վերաբերյալ դատարանի կայացված որոշումը անմիջական բողոքարկման ենթակա չէ: Պատասխանողը այս դեպքում գործի ընդդատության հետ կապված անհամաձայնությունը կարող է բողոքարկման առարկա դարձնել՝ միայն հետաձգված բողոքարկման կարգով: Մինչդեռ, նման դեպքերում խախտվում է պատասխանողի սահմանադրորեն ամրագրված իր դատարանում գործի քննության իրավունքը:

Հետևաբար, գտնում ենք, որ բոլոր այն դեպքերում, երբ պատասխանողը մինչև ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշում կայացնելն առարկում է գործը տվյալ դատարանում քննելու վերաբերյալ, սակայն դատարանը, չնայած ներկայացված առարկությանը, գործը չի հանձնում իրավասու դատարանի քննությանը, ապա տարածքային ընդդատության կանոնների խախտումը պետք է հանգեցնի դատական ակտի անվերապահ բեկանման, քանի որ այդ դեպքում խախտվում է կողմի օրենքի հիման վրա ստեղծված դատարանում գործի քննության իրավունքը:

Ամփոփելով վերոգրյալը՝ հարկ է նշել հետևյալը.

Ընդդատությունը, հանդիսանալով քաղաքացիական գործը վարույթ ընդունելու, քննելու, լուծելու, մի շարք հարցերի վերաբերյալ որոշում կայացնելու հարցում դատարանների իրավասությունը որոշող չափանիշ, դատավարական նորմերի համակցություն է, որը կարգավորում է օրենքով սահմանված կարգով սուրյեկտիվ իրավունքների դատական պաշտպանության ենթակա իրավաբանական գործերի բաշխումը առաջին աստիճանի ընդհանուր իրավասության դատարանների միջև, ինչպես նաև գործի ընդդատությանը համապատասխան

այն մի դատարանից մեկ այլ դատարանը փոխանցելու հետ կապված հարցերը:

Քաղաքացիական գործերը ժամանակին և ճիշտ քննելու միջոցով անձի ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով ամրագրված իրավունքները, ազատությունները և օրինական շահերը դատարանում պաշտպանելը, առավել արագ և առանց խոչընդոտների ապահովելու շահից ելնելով, առաջարկվում է՝ հայցադիմումի ընդունելության փուլում, տարածքային ընդդատության կանոնի խախտման պարագայում, հրաժարվել հայցադիմումը վերադարձնելու առկա կարգավորումից: Փոխարենը, առաջարկվում է՝ նախատեսել այնպիսի կարգավորում, որի դեպքում դատարանը հայցադիմումը վարույթ ընդունելու փուլում, հայտնաբերելով, որ գործն իրեն ընդդատյա չէ, այն հանձնում է ըստ պատշաճ ընդդատության, ինչն էլ, իր հերթին, կապահովի նաև քաղաքացիական գործով վարույթի իրավաչափ հարուցումը:

Եթե պատասխանողը մինչև ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշում կայացնելն առարկում է գործը տվյալ դատարանում քննելու վերաբերյալ, սակայն դատարանը, չնայած ներկայացված առարկությանը, գործը չի հանձնում իրավասու դատարանի քննությանը, ապա տարածքային ընդդատության կանոնների խախտումը պետք է հանգեցնի դատական ակտի անվերապահ բեկանման:

- ¹ Ընդունվել է 06.12.2015թ.: Տե՛ս ՀՀՊՏ 2005.12.05/Հատուկ թողարկում, հոդ. 1118-րդ: Ուժի մեջ է մտել 22.12.2015թ.:
- ² Ընդունվել է 07.02.2018թ., ուժի մեջ է մտել 09.04.2018թ.: Տե՛ս ՀՀՊՏ 2018.02.12/10(1368), ՀՕ-95-Ն:
- ³ Տե՛ս, Кузнецова Е. В. Институт подсудности в гражданском процессуальном праве Российской Федерации, Дисс. канд. юрид. наук: Москва 2004, С. 3.
- ⁴ Տե՛ս, Определение Конституционного Суда РФ от 4 июня 1998 г. «По жалобе гражданина Генина А.И. на нарушение его конституционных прав пунктом 1 части 2 ст. 122 ГПК РСФСР» // СЗ. 1998. N 30. С. 3799.
- ⁵ Եվրոպայի Խորհրդի Նախարարների Կոմիտեի «Դատավորների անկախության, արդյունավետության և պատասխանատվության մասին» թիվ (2010)12 հանձնարարականը հաստատվել է 2010թ. նոյեմբերի 17-ին: Տե՛ս Հանձնարարականի 24-րդ կետը:
- ⁶ Տե՛ս, Case of Belilos v. Switzerland, judgment, 29 ապրիլի 1988 թվական, կետ 65-րդ:
- ⁷ Տե՛ս, Case of Sokurenko and Strygun v. Ukraine, judgment, 20 հուլիսի թվական, կետ 24-րդ:
- ⁸ Տե՛ս, ՀՀ Վճռաբեկ դատարանի 24.07.2009 թվականի թիվ 3-96 (ՎԳ) որոշումը:
- ⁹ Տե՛ս, Case of Ginikanwa v. The United Kingdom, judgment, 09 մարտի 1988 թվական, Իրավունքի հարցեր, կետ 1-ին:
- ¹⁰ Տե՛ս, Case of Posokhov v. Russia, judgment, 04 մարտի 2003 թվական, Case of Lavents v. Latvia, judgment:
- ¹¹ Տե՛ս, Ղազինյան Գ., Մելիքյան Ռ., Օրենքի հիման վրա ստեղծված անկախ և անկողմնակալ դատարան. Ստրասբուրգի դատարանի նախադեպային պրակտիկան և Հայաստանի Հանրապետության իրավական համակարգը: Պետություն և իրավունք, Երևան, 2008, N 1-2, էջեր 3-17:
- ¹² Ընդունվել է 09.02.2018թ., ուժի մեջ է մտել 09.04.2018թ.: Տե՛ս ՀՀՊՏ 2018.03.05/16(1374) Հոդ. 208-րդ: Այսուհետ՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրք կամ ՀՀ ԲԳՕ:
- ¹³ Տե՛ս, Соловьева Т. С. Возвращение искового заявления в гражданском судопроизводстве. Дисс. на соискание ученой степени кандидата юридических наук. Саратов 2006, С. 15-18.
- ¹⁴ Տե՛ս, ՀՀ սահմանադրական դատարանի 17.04.2012թ. թիվ ՍԳՈ-1022 որոշումը:
- ¹⁵ Տե՛ս, ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ԵԱԲԳ/1020/02/14 քաղաքացիական գործով 24.09.2014թ. որոշումը:
- ¹⁶ Տե՛ս, Պետրոսյան Ռ. Գ. Հայաստանի քաղաքացիական դատավարություն, - երրորդ հրատ., Երևանի համալս. հրատ., Եր., 2007, էջ 394-395:
- ¹⁷ «Гражданский кодекс Российской Федерации (часть первая)» от 30.11.1994, N 51-ФЗ (ред. от 23.05.2018) (с изм. и доп., вступ. в силу с 03.06.2018).
- ¹⁸ Տե՛ս, ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ԵԳ/20761/02/18 քաղաքացիական գործով 20.10.2020թ. որոշումը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր: Ընդունվել է 1948թ. դեկտեմբերի 10-ին:
2. ՀՀ Սահմանադրություն: Ընդունվել է 06.12.2015թ.: ՀՀՊՏ 2005.12.05/Հատուկ թողարկում, հոդ. 1118-րդ: Ուժի մեջ է մտել 22.12.2015թ.:
3. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրք (09.02.2018), ՀՀՊՏ 2018.03.05/16 (1374), 09.04.2018:
4. «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի» ՀՀ սահմանադրական օրենք (07.02.2018թ), ՀՀՊՏ 2018.02.12/10(1368), ՀՕ-95-Ն (09.04.2018թ):
5. «Гражданский кодекс Российской Федерации (часть первая)» от 30.11.1994 N 51-ФЗ (ред. от 23.05.2018) (с изм. и доп., вступ. в силу с 03.06.2018).
6. Պետրոսյան Ռ. Գ., Հայաստանի քաղաքացիական դատավարություն, - երրորդ հրատ., Երևանի համալս. հրատ., Եր., 2007:
7. Ղազինյան Գ., Մելիքյան Ռ., Օրենքի հիման վրա ստեղծված անկախ և անկողմնակալ դատարան. Ստրասբուրգի դատարանի նախադեպային պրակտիկան և Հայաստանի Հանրապետության իրավական համակարգը: Պետություն և իրավունք, Երևան, 2008, N 1-2, էջեր 3-17:
8. Кузнецова Е. В. Институт подсудности в гражданском процессуальном праве Российской Федерации, Дисс. канд. юрид. наук: Москва 2004.
9. Соловьева Т. С. Возвращение искового заявления в гражданском судопроизводстве. Дисс. на соискание ученой степени кандидата юридических наук. Саратов 2006.
10. Եվրոպայի Խորհրդի Նախարարների Կոմիտեի «Դատավորների անկախության, արդյունավետության և պատասխանատվության մասին» թիվ (2010)12 հանձնարարականը հաստատվել է 2010թ. նոյեմբերի 17-ին:
11. Case of Sokurenko and Strygun v. Ukraine, judgment, 20 հուլիսի թվական:
12. Case of Ginikanwa v. The United Kingdom, judgment, 09 մարտի 1988 թվական:
13. Case of Posokhov v. Russia, judgment, 04 մարտի 2003 թվական, case of Lavents v. Latvia, judgment:
14. Case of Belilos v. Switzerland, judgment, 29 ապրիլի 1988 թվական:
15. ՀՀ սահմանադրական դատարանի 17.04.2012թ. թիվ ՍԳՈ-1022 որոշումը:
16. ՀՀ Վճռաբեկ դատարանի թիվ ԵԱԲԳ/1020/02/14 քաղաքացիական գործով 24.09.2014թ. որոշումը:
17. ՀՀ Վճռաբեկ դատարանի թիվ ԵԳ/20761/02/18 քաղաքացիական գործով 20.10.2020թ. որոշումը:

18. ՀՀ Վճարելի դատարանի 24.07.2009 թվականի թիվ 3-96 (ՎԴ) որոշումը:

19. Определение Конституционного Суда РФ от 4 июня 1998 г. «По жалобе гражданина Генина А.И. на нарушение его конституционных прав пунктом 1 части 2 ст. 122 ГПК РСФСР»// СЗ. 1998. N 30.

Անի Միկաելյան

Заместитель начальника отдела правового
обеспечения министерства юстиции РА,
преподаватель кафедры гражданского судопроизводства
юридического факультета ЕГУ

РЕЗЮМЕ

Юридические последствия нарушение правил подсудности на стадии принятия искового заявления

В данной статье рассматриваются вопросы юридических последствий нарушения правил подсудности на стадии возбуждения гражданского дела. В статье автор предлагает собственную версию определения института подсудности исходя из термина “суд, созданный на основании закона”. Кроме того, предметом изучения данной статьи являются вопросы о возвращении искового заявления на том основании, что дело не подсудно данному суду и возможность обжалование этого решения.

Ключевые слова: “суд, созданный на основании закона”, подсудность, подведомственность, нарушение правил подсудности, возвращение искового заявления.

Ani Mikayelyan

Deputy head of Legal Support Department
at Ministry of Justice of the Republic of Armenia.
Lecturer of the Chair of Civil Procedure, YSU, Faculty of Law

SUMMARY

The legal consequences of violation of the rules of jurisdiction at the stage of acceptance of the statement of claim

The article is devoted to the issues related to the legal consequences of violations of the rules of jurisdiction at the stage of acceptance of the statement of claim. In the article the author offers her own version of the definition of the jurisdiction based on the term a tribunal established by law. In addition, the subject matter of this article is the question of returning the statement of claim on the grounds that the case is not within the jurisdiction of that court and the possibility of appealing against this decision.

Key words – “A tribunal established by law”, jurisdiction, jurisdiction, violation of the rules of jurisdiction, return of complaints.

Բնագիրը ներկայացվել է 19.02.2021թ.

Ընդունվել է տպագրության 23.02.2021թ.

Հոդվածը երաշխավորել է տպագրության (գրախոսել է) իրավաբանական
գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վ. Հովհաննիսյանը

ՀԱՄԱԻՆ ԿՈՎԱԿԻՄՅԱՆ

«Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ի իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոնի վերականգնողական ծրագրերի և հանրակրթության բաժնի գլխավոր մասնագետ

ՄԻՐԱՐՓԻ ՄՈՒՂԴՈՒՄՅԱՆ

ՀՀ ԱՆ պրոբացիայի ծառայություն Երևանի քաղաքային մարմնի պետի տեղակալ


ԴԱՏԱՊԱՐՏՅԱԼՆԵՐԻ ՎԵՐԱՍՈՑԻԱԼԱԿԱՆԱՅՄԱՆ ՀԱՄԿԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ

Սույն հոդվածում ներկայացվում են Հայաստանի Հանրապետությունում վերականգնողական քրեական արդարադատության կայացման ընթացքի վերասոցիալականացմանն ուղղված հիմնախնդիրները: Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քրեակատարողական և պրոբացիայի ոլորտի 2019-2023 թվականների ռազմավարությունը, դրա իրականացման 2019-2023 թվականների միջոցառումների ծրագիրը՝ առաջարկվում է «վերասոցիալականացում» հասկացության մեկնաբանությունը[1]:

Հիմնաբառեր - ռազմավարություն, վերասոցիալականացում, քրեական օրենսգիրք, ուղղում, պատիժ, հանցագործություն, դատապարտյալ, քրեակատարողական հիմնարկ:

Պայմանավորված Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակով՝ տնտեսական ճգնաժամ, գործազրկություն, մասնավորապես՝ 2020թ-ի ՔՈՎԻԴ-19-ի համավարակով, ինչպես նաև քաղաքական և իրավական բարեփոխումների շրջափուլով՝ վերջին տարիներին նկատվում է հանցագործության թվի աճ [2], որն առկա է նաև այս տարի: 2020թ.-ի առաջին 7 ամիսներին

հանրապետությունում արձանագրված հանցագործությունների վերաբերյալ վիճակագրությունը ցույց է տալիս, որ 2019 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ արձանագրվել է հանցագործությունների թվի 6.7 տոկոս աճ: Նախորդ տարվա հունվար-հուլիս ժամանակահատվածում արձանագրվել էր 14,238 հանցագործության դեպք, մինչդեռ 2020-ին՝ 15,196 դեպք[3]:



Գրաֆիկ 1. Գրանցված հանցագործությունները ՀՀ-ում 2019-2020թ. հունվար-հուլիս ամիսներին

Հանցավորության դեմ պայքարի մեթոդների ուժգնացումը, ինչպես նաև դատապարտյալների նկատմամբ լրացուցիչ սահմանափակումներ նախատեսելն ավելի է խորացնում հանցածին վիճակը երկրում, հանգեցնում հասարակության սոցիալական լարվածության աճի: Ուստի, առավել անհրաժեշտ է գիտականորեն բացահայտել իրականացվող գործընթացների էությունը՝ կիրառելով առավել արդյունավետ ձևեր, մեթոդներ և միջոցներ՝ ՀՀ-ում ճգնաժամային իրադրության հաղթահարման և հանցավորության չեզոքացման համար:

Հանդիսանալով հանցավորության դեմ պայքարի քաղաքականության բաղկացուցիչ մաս՝ քրեակատարողական քաղաքականությունն ամբողջացնում է պատիժներ կատարելիս պետության գործունեության ձևերը, եղանակները, սկզբունքները, նպատակները և հիմնական ուղղությունները, ինչպես նաև դատապարտյալների վերասոցիալականացումը, նոր հանցագործությունների կանխումն ինչպես դատապարտյալների, այնպես էլ՝ այլ անձանց կողմից: Ներկայումս Հայաստանի Հանրապետության քրեական արդարադատության ռազմավարության որդեգրած նպատակն է՝ պատժողական քաղաքականությունից անցումը վերականգնողական արդարադատության, պատիժների ոլորտում վերականգնողական արդարադատության սկզբունքների արմատավորումը, պատժի նպատակների արդյունավետ իրացումը:

Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածի համաձայն՝ պատիժը պետական հարկադրանքի միջոց է, որը դատարանի դատավճռով պետության անունից նշանակվում է հանցագործության համար մեղավոր ճանաչված անձի նկատմամբ և արտահայտվում է այդ անձին իրավունքներից ու ազատություններից՝ օրենքով նախատեսված զրկմամբ կամ դրանց սահմանափակմամբ: Նախկին՝ Հայաստանի Հանրապետության 1961թ.-ի մարտի 7-ին ընդունված քրեական օրենսգրքի 20-րդ հոդվածում նշվել է, որ պատիժը ոչ միայն մեղքի քավումն է կատարված հանցագործության համար, այլև՝ նպատակ ունի դատապարտվածներին ուղղել և վերադաստիարակել աշխատանքին ազնվորեն վերաբերվելու, օրենքները ճշտորեն կատարելու, համակեցության կանոնները հարգելու ոգով, ինչպես նաև կանխել նոր հանցագործությունների կատարումն՝ ինչպես դատապարտվածների, այնպես էլ՝ այլ անձանց կողմից:[4]: Պատիժը նպատակ չունի ֆիզիկական տանջանքներ պատճառել կամ ստորացնել մարդկային արժանապատվությունը: Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պատիժը կիրառվում է սոցիալական արդարությունը վերականգնելու, դատապարտյալներին ուղղելու, ինչպես նաև հանցագործությունները կանխելու նպատակով: Ի տարբերություն Հայաստանի Հանրապետության 1961թ.-ին ընդունված քրեական օրենսգրքի 20-րդ հոդվածի, այս նորմը նորովի է սահմանում պատժի նպատակները՝ իրականացնելով քրեական իրավունքի սահմանադրական և, առաջին հերթին, մարդասիրության և արդարության սկզբունքները (Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի հոդվածներ 10-րդ, 11-րդ)[5]:

Այնուամենայնիվ, հասարակության մեջ առկա

է նաև կարծիք, թե հանցագործությունների կանխման գրավականը պատիժների խստացումն է՝ հատկապես հանցավորության աճի պայմաններում: Պատիժն այն միջոցներից մեկն է, որի օգնությամբ պետությունն, ազդելով հանցավորության վրա, պահում է այն որոշակի մակարդակում: Պատիժը վերջին ծայրահեղ միջոցն է, որը պետք է գործի այն պարագայում, երբ հասարակությունն այլևս չի գործի չէ կանխել հանցագործությունը: Ոչ թե պատիժների խստությունն է ահաբեկում հանցագործներին, այլ՝ օրենքների գործնական, օպերատիվ կիրառումը և հանցագործությունների հուսալի բացահայտումը: Պետության համար առավել նպատակահարմար է և արդյունավետ կանխել հանցագործությունը, քան պատժել հանցանք կատարած անձին:

Անձի վերասոցիալականացումը՝ որպես պատժի նպատակ, նախատեսված է մի շարք երկրների, մասնավորապես՝ Իսպանիայի, Պորտուգալիայի, Կոլումբիայի, Պարագվայի, Վրաստանի և այլ երկրների քրեական օրենսգրքերում: Քրեական իրավունքում վերասոցիալականացումը որպես պատժի առանձին նպատակ նախատեսելը կամ չնախատեսելը քննարկման առարկա է հանդիսացել մի շարք իրավաբան-գիտնականների կողմից: Հարկ է նշել, որ Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքի նոր նախագծի 2-րդ հոդվածում վերասոցիալականացումը սահմանվում է որպես պատժի նպատակ:

«Վերասոցիալականացում» և «ուղղում» հասկացությունների տարբերակումը:

Ազատագրվածն դատապարտված անձը պատժի կրման ընթացքում ենթարկվում է որոշակի լուրջ փոփոխությունների, որի արդյունքում՝ նրա համար առաջնային նշանակություն են ստանում անհատական և ոչ համընդհանուր արժեքները, իսկ անձի սոցիալական էությունը բովանդակող արժեքները մղվում են երկրորդ պլան: Այս փաստը հիմնավորվում է ինչպես արտասահմանյան, այնպես էլ՝ հայրենական գիտնականների բազմաթիվ հետազոտություններում:

Պատժի կրումից հետո դատապարտյալը վերադառնում է հասարակություն և պարտավոր է պահպանել այնտեղ գործող օրենքները, բայց որոշակի հանգամանքների ուժով միշտ չէ, որ այն իրագործելի է, քանի որ նրա մոտ արգելակված է սոցիալական հարմարվողականությունը: Ազատագրվում պատժատեսակը կրելուց հետո անցումն ազատության նորմերին այնքան էլ դյուրին գործընթաց չէ: Ազատագրվումը ենթադրում է սոցիալական հմտությունների կորուստ, առավել ևս՝ երկարաժամկետ ազատագրվումը: Միջազգային

պրակտիկան վկայում է, որ անձի դեգրադացումն ազատագրկման վայրերում անխուսափելի հետևանքներից է, որը հատկապես բնորոշ է երկարաժամկետ ազատագրկման դատապարտվածներին: Այդ իսկ պատճառով, այսօր, հատկապես եվրոպական բանտային արդի համակարգերում, կիրառվում են աշխատանքային համալիր մեթոդներ՝ ազատագրկման բացասական հետևանքները վերացնելու և անձին լիարժեք ու արդյունավետ վերասոցիալականացնելու նպատակով: Առաջին հիմնական սյունը, որն արդի բանտային համակարգերի սկզբունքներից է, հետևյալն է. ազատագրկման առաջին իսկ օրվանից անձի հետ տարվող բոլոր աշխատանքներն ուղղվում են նրա ազատման նախապատրաստմանը և սոցիալական վերականգնմանը:

Ազատագրկված անձանց վերասոցիալականացման գործընթացը համալիր գործընթաց է: Այն, ընդհանուր առմամբ, միջամտությունների, ներագրման մեթոդների ամբողջություն է՝ ուղղված անձի կորսված ունակությունների և հմտությունների վերականգնմանը, ինքնուրույն սոցիալ-կենցաղային գործունեությամբ զբաղվելուն: Դատապարտյալների սոցիալական վերականգնումը բազմապարզ գործընթաց է, որն իր մեջ ներառում է նրանց բարոյական, հոգեբանական և գործնական պատրաստակամությունը:

Վերասոցիալականացումը՝ (լատ. re (կրկնակի, վերականգնողական գործողություն) և լատ. socialis (հանրային), անգլ. resocialization) կրկնակի սոցիալականացումն է [6]:

Վերասոցիալականացման հասկացության տարբեր մեկնաբանությունների հիմք են հանդիսանում գիտությունների տարբեր ճյուղերի կողմից տարաբնույթ ձևակերպումները: Հոգեբանության մեջ «վերասոցիալականացում» հասկացությունն առաջին անգամ օգտագործվել է սոցիալական հոգեբաններ Ա. Քեննեդիի և Ի.Դ. Կերբերի կողմից, որն է՝ սոցիալական թերություն ունեցող անձի երկրորդային մուտքը սոցիալ –մշակութային միջավայր[7]:

«Վերասոցիալականացում» հասկացությունը կիրառվում է նեղ և լայն իմաստներով: Նեղ իմաստով՝ այն պատիժը կրելուց հետո՝ հետպատժյա ժամանակաշրջանում իրականացվող սոցիալական գործընթաց է, երբ իրացվում են անձի որակական փոփոխություններ, հայացքների և դիրքորոշումների փոփոխություն, որոնք արտահայտվում են իրավահպատակ վարքագծում: Լայն իմաստով՝ վերասոցիալականացումը փաստացի սկսվում է դատապարտյալի ազատագրկման վայրում հայտնվելու առաջին օրվանից և շարունակվում պատժի կրման ողջ ընթացքում, որը պատժի կրման

վերջին շրջանում քրեակատարողական հիմնարկի վարչակազմի կողմից իրականացվում է ավելի ինտենսիվ [8]:

Ն. Սմելգերի մոտեցման համաձայն՝ վերասոցիալականացումը նոր արժեքների, դերերի, ինչպես նաև նախկին, ոչ բավարար ուսումնասիրված, արդիականությունը կորցրած հմտությունների փոխարեն նոր հմտությունների յուրացումն է [9]:

Երբեմն համարժեք են դիտարկվում «վերասոցիալականացում» ու «դատապարտյալների ուղղում» հասկացությունները: Ըստ Մ. Ռիբակի, վերասոցիալականացումն ավելի լայն հասկացություն է, իսկ ուղղումը պետք է դիտել որպես վերասոցիալականացման ինքնուրույն փուլ [10]:

Վ.Ե. Յուժանինը նշում է. «Վերասոցիալականացումն, ընդհանուր առմամբ, իր մեջ ներառում է նաև ուղղումը, բայց արդեն «սոցիալականացման», «պատժի ազատմանը պատրաստվելու», «սոցիալական օգտակար գործունեությանն ընդգրկվելու», «հասարակությունում սոցիալական ադապտացման» նշանակության տեսանկյուններից»:[11]

Երբեմն վերասոցիալականացման գործընթացը զուգորդվում է նաև սոցիալական հարմարվողականության հետ, որը, չնայած ընդհանրությունների ևս համարվում է որպես վերասոցիալականացման առանձին տարր:

Ստեղծվում է նույն երևույթի՝ «ուղղում», «հարմարում» և «վերասոցիալականացում» հասկացությունների երկակի ընկալման որոշակի իրավիճակ: Առաջարկվում է հստակեցնել «վերասոցիալականացում» հասկացությունը, որը իր մեջ ներառում է և՛ ուղղումը, և՛ հարմարումը:

«Վերասոցիալականացում» հասկացության սահմանումը:

Վերասոցիալականացման սահմանման մեջ կարևոր է տարբերակել «re» բառը և լատինական ծագման «սոցիալականացում» բառը, ինչը նշանակում է՝ անձին դարձնել հասարակության մաս, որոշակի գիտելիքների ձեռքբերման գործընթաց, նորմերի և արժեքների համակարգ, որը նրան հնարավորություն է տալիս դառնալ հասարակության լիիրավ անդամ: Այն ներառում է նպատակային ազդեցություն անձի վրա (դաստիարակություն), ինչպես նաև՝ բնական, ինքնաբերական գործընթացներ, որոնք ազդում են անհատականության ձևավորման վրա: Դատապարտյալների վերասոցիալականացման գործընթացում շատ կարևոր է սոցիալական, կրթական և հոգեբանական աշխատանքի կազմակերպումը: Մրա կարևորությունը պայմանավորված է նրանով, որ այն հիմք կդառնա տարբեր տեսակի դեֆորմացիաների հաղթահարման, վերականգնման, դատապարտյալի սոցիալական և անձնական

կապերի ձևավորման, նրա միկրո միջավայրի վերականգնման, տարբեր տեսակի դրական գործողությունների ներառման համար: Սոցիալական, հոգեբանական և կրթական աշխատանքների նպատակն է կանխել դատապարտյալների հոգեվիճակի վատթարացումը, նպաստել սոցիալական խնդիրների լուծմանը, առկա և ապագա դժվարությունները հաղթահարելու անձնական ներուժի զարգացմանը, անձնային աճին՝ փոխել վերաբերմունքը ազատագրված ժամանակահատվածում չլուծված իրավիճակների և խնդիրների նկատմամբ:

Քրեակատարողական հիմնարկներում գտնվելու հանգամանքը բացասաբար է անդրադառնում անձի վրա, հաճախ նպաստում նաև անձի կտրուկ հետաճին՝ ընդհուպ մինչև պաթոլոգիկ դրսևորումներ: Դատապարտյալը գտնվում է սոցիալական մեկուսացման մեջ՝ շրջապատված միևնույն սեռի անձանցով, հարկադրված կեցությամբ: Իրագործվում է նաև հանգստի, ազատ ժամանակի, սովորելու կարգավորումը: Հոգեբանության տեսանկյունից ռեժիմը մշտական ֆրոստատոր է, որը զրկում է անձին որոշակի բարիքներից, սահմանափակում է, հիմնականում, ֆիզիոլոգիական և սոցիալական պահանջմունքների բավարարումը[12]: Այս ամենն առաջացնում է բացասական հոգեկան վիճակներ: Ուստի կարևոր է դատապարտյալի անհատական հոգեբանական առանձնահատկությունների ուսումնասիրումը, համապատասխան հոգեբանական միջամտությունների կիրառումը: Դատապարտյալների վերասոցիալականացմանն ուղղված հոգեբանական պատրաստակամության ապահովման համար կարևոր են ագրեսիվության, տագնապայնության, ագրեսիվ և ավտորիտար միջանձնային հարաբերությունների նվազեցումը, ինքնագնահատականի կարգավորումը, հումանիստական մոտեցման ձևավորումը, արժեքային կոդմորոշումները, աշխարհայացքը, դիրքորոշումները, դրդապատճառային համակարգի փոփոխությունները: Արդյունավետ վերասոցիալականացումն ապահովելու համար՝ անհրաժեշտ է քրեակատարողական հիմնարկներում կիրառել անհատական և խմբային հոգեբանական աշխատանքներ, որոնց պետք է նախորդեն և հաջորդեն վերը թվարկված որակների և առանձնահատկությունների վերաբերյալ թեստավորումը և ռեթեստը:

Սոցիալական աշխատանքը ներառում է դատապարտյալների վերասոցիալականացման մի շարք ձևեր /միջոցներ/ **սոցիալական օգտակար աշխատանք, ընդհանուր և մասնագիտական ուսուցում, կրթական աշխատանք:**

Վերասոցիալականացման գործընթացն, իրականում, անհնար է պատկերացնել առանց դատա-

պարտյալի համար իրականացվող ընդհանուր և մասնագիտական կրթության, քանի որ կրթությունը վերասոցիալականացման ծրագրի կարևոր մաս է և ունի խիստ դաստիարակչական բնույթ: Ինչպես նշում է Է. Քոյլը, դատապարտյալների մեծ մասը կրթության ցածր մակարդակ ունի, ուստի, ենթադրաբար, կրթության այս ցածր մակարդակն ազդել է նրանց կյանքի վրա մինչև ազատագրվելը և հնարավոր է, որ մեծ դեր է խաղացել հանցագործության կատարման մեջ [13]: Դատապարտյալին պատժի կրման ընթացքում ընձեռնված մասնագիտական կրթություն ստանալու հնարավորությունը վերջինիս հասարակության մեջ ինտեգրվելու հիմքերից մեկն է՝ կրթության միջոցով փոխելով անձանց աշխարհաճանաչությունը և ինքնաճանաչությունը՝ նպաստելով մտավոր զարգացմանը, բարոյական մոր արժեքների ընդունմանը, ստեղծագործական մտածողության զարգացմանը, լայն մտահորիզոնի ձևավորումը, ես-ի մոտիվ ընկալմանը: Հիմնականում դատապարտյալների մեծ մասի կրթական մակարդակը բավականին ցածր է և չունեն մասնագիտական ու աշխատանքային հմտություններ կամ կորցրել են դրանք քրեակատարողական հիմնարկներում հայտնվելուց հետո: Վերասոցիալականացման ծրագրերը հասանելի չեն բոլոր քրեակատարողական հիմնարկներում, ինչպես նաև մասնակիորեն է իրացվում միջին մասնագիտական և բարձրագույն կրթություն ստանալու իրավունքը, ուստի շատ կարևոր է նշել վերասոցիալականացման մեջ կրթության դերը, որը դատապարտյալներին հնարավորություն կտա ավելի հեշտ վերաինտեգրվել հասարակություն, ինչպես նաև ամենաարդյունավետ միջոցն է ազատվելուց հետո նրանց ուղղման, վերասոցիալականացման և սոցիալական հարմարվողականության խնդիրների լուծման հարցում:

Աշխատանքի կազմակերպումը նպաստում է դատապարտյալների հոգեկան և ֆիզիկական առողջության պահպանմանը, կոլեկտիվ հարաբերությունների ստեղծմանը, ազատ արձակման հաջող նախապատրաստմանը և հետագա վերասոցիալականացմանը: Դատապարտյալների մոտ սոցիալ-հոգեբանական թերությունները /դեֆեկտներ/ առավելապես արտահատվում են աշխատանքի նկատմամբ բացասական վերաբերմունքով, սակայն վերասոցիալականացմանն ուղղված աշխատանքները քրեակատարողական հիմնարկներում արդյունավետ լինել կարող են միայն այն դեպքում, երբ դատապարտյալների մոտ առաջանա աշխատանքի նկատմամբ պահանջմունք: Դատապարտյալը պետք է տեսնի իր աշխատանքի արդյունքը և գնահատի այն: Այս հանգամանքը նպաստում է, որպեսզի դատապարտյալները գիտակցեն

հասարակության վերաբերմունքն աշխատանքին, գիտակցեն հասարակական նորմերը և առավել հեշտությամբ վերախնտեգրվեն հասարակության մեջ:

Առողջական - Առկա չէ հստակ սահման առողջ հոգեկանի և հոգեպաթոլոգիկ սահմանային իրավիճակների միջև: Անոմալ, բայց ոչ պաթոլոգիկ դրսևորումներն անձին հնարավորություն չեն տալիս ճիշտ գնահատելու իրավիճակը՝ էապես նպաստելով հանցավոր վարքի ձևավորմանը: Այն անձինք, որոնց մոտ առկա են սահմանային անոմալ դրսևորումներ՝ թեթև մտավոր հետամնացություն, նկրդներ, փսիխոպատիայի թեթև դրսևորումներ, վերջիններիս մոտ նկատվում է քննադատական մտածողության ցածր մակարդակ, բարձր զգայնություն, թույլ կամային հատկանիշներ:

Ֆիզիկական ակտիվության սահմանափակումը հանգեցնում է նյարդահոգեբանական դեֆորմացիայի, ըստ այդմ՝ արդյունավետ է քրեակատարողական հիմնարկներում որպես վերասոցիալականացման առանձին ծրագիր ներառել նաև ֆիզիկական դաստիարակությունը, որը կնպաստի անձի սթրեսակայունության բարձրացմանը, բացասական հույզերի հաղթահարմանը, ագրեսիվության նվազմանը և ինքնավերահսկման մեխանիզմների կարգավորմանը, ինչպես նաև անձի ինքնագնահատականի բարձրացմանը:

Վերասոցիալականացման գործընթացում արդյունավետությունը ապահովվում է անընդհա-

տականության և շարունակականության միջոցով: Վերասոցիալականացումը վարքագծի նորմերի և կանոնների, անհատական արժեքների նոր համակարգ է, որը տարբերվում է տվյալ անհատի մոտ նախկինում ձևավորված արժեքներից: Ուստի, վերասոցիալականացումը նոր արժեքների, դերերի, հմտությունների յուրացումն է հասարակական բարոյականությանը չհամապատասխանող նախկինի փոխարեն:

Այսպիսով, կարելի է «վերասոցիալականացում» հասկացությունը սահմանել հետևյալ կերպ. վերասոցիալականացումն անձի մտավոր և հուզական վերափոխմանն ուղղված գործընթաց է, որն իր մեջ ներառում է հոգեբանական, կրթական-ստեղծագործական, իրավաբանական, աշխատանքային, առողջապահական, մարզական համալիր երկարատև միջոցառումներ, որոնք ուղղված են դատապարտյալի մոտ ձևավորելու պատժի կրումից հետո հասարակական կյանքում ընդգրկվելու համար անհրաժեշտ դիրքորոշումներ, հմտություններ և պատրաստակամություն:

Վերասոցիալականացումը բարդ և տևական գործընթաց է, որի իրականացումը պահանջում է մասնագիտական գիտելիքների և հմտությունների կիրառում:

Գրականության ցանկ

1. ՀՀ էլեկտրոնային կառավարում <https://www.e-gov.am/gov-decrees/item/33014/> (վերջին անգամ դիտվել է 03.10.2020թ.)
2. Փաստերի ստուգման հարթակ <https://fip.am/9292> (վերջին անգամ դիտվել է 03.10.2020թ.)
3. Փաստերի ստուգման հարթակ <https://fip.am/12620> (վերջին անգամ դիտվել է 03.10.2020թ.)
4. <https://www.arlis.am/documentview.aspx?docid=5> (վերջին անգամ դիտվել է 03.10.2020թ.)
5. Պատժի ենթարկված անձի վերասոցիալականացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, Հարություն Մարտինի Խաչիկյան, էջ 68-69
6. <https://www.merriam-webster.com/dictionary/rehabilitation>
7. Resocialization: An American Experiment. Kennedy, Daniel B.; Kerber, August
8. Իրավաբանական հոգեբանություն Արգունյան Ս.ԳրինԷ.-Երևան 2004թ.էջ 415
9. Еникеев М.И. Основы общей и юридической психологии Москва 1996г., 631с.
10. Смелзер Н. Социология. - М., 1994, С. 112.
11. Рыбак М.С.Ресоциализация осужденных к лишению свободы: проблемы теории и практики / - 2-е изд., испр. и доп. - Саратов: Изд-во ГОУ ВПО «Саратовская государственная академия права», 2004, С. 31.
12. Южанин В.Е. Процесс ресоциализации в уголовном судопроизводстве // - Рязань, 1992, С. 16.
13. A Human Rights Approach to Prison Management .Andrew Coyle, Helen Fair, 1973x,191p.illus.22cm

Ասմիկ Օվակիմյան

Главный специалист отдела реабилитационных программ
и общего образования ГНКО “Центр правового
образования и реализации реабилитационных программ”

Տիրարի Մուղդուսյան

Заместитель начальника городского органа Еревана
службы пробации министерства юстиции РА

РЕЗЮМЕ

Концепция понятия ресоциализации осужденных

В данной статье представлены проблемы, связанные с ресоциализацией процесса реабилитации уголовного правосудия в Республике Армения, которые основаны на стратегии пенитенциарного и пробационного сектора Республики Армения на 2019-2020 годы и на плане действий по ее реализации. Также трактуется концепция ресоциализации.

Ключевые слова: стратегия, ресоциализация, уголовный кодекс, исправление, наказание, преступление, осужденный, пенитенциарное учреждение.

Hasmik Hovakimyan

Chief specialist of the Department of Secondary Education
and Rehabilitation Programs “Legal Education and
Rehabilitation Programs’ Implementation Center” SNCO

Sirarpi Mughdusyan

Probation Service of the Ministry of Justice of RA
Deputy Head of the City Department (Body) of Yerevan

SUMMARY

The Notion of the Concept of Resocialization of Convicts

This article presents the issues aimed at the resocialization of the process of rehabilitation criminal justice in the Republic of Armenia, as well as based on the strategy of the Republic of Armenia in the field of penitentiary and probation in 2019-2020, the program of measures for its implementation in 2019-2023 within the scope of which the interpretation of the concept of resocialization is suggested.

Key words -strategy, resocialization, criminal code, correction, punishment, crime, convict, penitentiary institution.

Բնագիրը ներկայացվել է 20.01.2021թ.

Ընդունվել է տպագրության 10.02.2021թ.

Հոդվածը երաշխավորել է տպագրության (գրախոսել է)

իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Դ. Թումասյանը

ՆԱՐԻՆԵ ԱՎԱԳՅԱՆ

ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնի ասպիրանտ
ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարի տեղակալ

ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՆՇՈՒՄՆԵՐԻ, ԾԱԳՄԱՆ ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԱՎԱՆԴԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոդվածում քննարկվում են աշխարհագրական նշումների, ծագման աղբյուրների և երաշխավորված ավանդական արտադրանքի պաշտպանությանն առնչվող հարցեր: Մասնավորապես, քննարկվում են անհատականացման վերոհիշյալ միջոցներին պաշտպանություն տրամադրելու հիմնավորումները: Հեղինակը բացահայտում է վերոհիշյալ միջոցների նպատակը և մտավոր սեփականության հետ կապը: Հեղինակն առաջարկում է պաշտպանել նշված անհատականացման միջոցները անբարեխիղճ մրցակցությունը կանխարգելող օրենսդրության շրջանակներում:

Հիմնարաներ- աշխարհագրական նշում, ծագման տեղանուն, երաշխավորված ավանդական արտադրանք, մտավոր սեփականության իրավունք, բացառիկ իրավունքներ, անբարեխիղճ մրցակցություն:

Յուրաքանչյուր պետության մշակույթում սննդամթերքը և գյուղատնտեսական արտադրանքը կարևոր դեր են խաղում և պատահական չէ, որ դեռևս 14-րդ դարում Ֆրանսիայում պաշտպանվում էր Ռոկֆոր պանրի արտադրությունը¹:

«Աշխարհագրական նշում» հասկացության առաջացումը ընդունված է կապել ծագման տեղանվան հետ, որը հնարավորություն տվեց տարբերել մեկ տեղանքի արտադրանքը մյուսից:

Ծագման տեղանուն ասելով՝ պետք է հասկանալ այն բոլոր նշումները, որոնք օգտագործվում են ցույց տալու համար, որ տվյալ արտադրանքն արտադրվում է կոնկրետ երկրում կամ տարածաշրջանում²:

Աշխարհագրական նշումների, ծագման տեղանունների և երաշխավորված ավանդական արտադրանքի պաշտպանության իրավական ռեժիմների հարցը քննարկելիս, շատ հաճախ հարց է առաջանում, թե արդյո՞ք իրենց կարգավիճակով վերջիններս համարվում են մտավոր սեփականության օբյեկտ: Չնայած այն հանգամանքին, որ Փարիզյան կոնվենցիան գյուղատնտեսական արտադրանքը ներառում է իր կարգավորման օբյեկտների շարքում³, այդուհանդերձ, կան տեսաբաններ, որոնք կասկածի տակ են դնում աշխարհագրական նշումների, ծագման տեղանունների և երաշխավորված ավանդական արտադրանքի՝ մտավոր սեփականության իրավունքի օբյեկտների շարքին դասելը⁴: Այս տեսաբանները գտնում են, որ աշխարհագրական նշումները և ծագման տեղանունները տարբերվում են ապրանքային նշաններից, հետևաբար չեն կարող ներառվել «մտավոր սեփականություն» կատեգորիայի ներքո: Նշվում է, որ

այս անհատականացման միջոցների կարգավորման առարկան տվյալ տեղանքի կամ տարածաշրջանի շահառուների բարի համբավի (goodwill) պաշտպանությունն է, և բացառիկ իրավունքներ գոյություն չունեն⁵: Չնայած վերոնշյալ հակասական մոտեցումներին՝ Արդարադատության եվրոպական դատարանը անհատականացման միջոցները դիտում է որպես մտավոր սեփականություն⁶:

Աշխարհագրական նշումների հասկացությունը, դրանք պաշտպանելու ռացիոնալությունը մշտապես եղել է միջազգային հանրության թեժ քննարկման առարկա: Միջազգային հանրությունը քննարկում էր այն հարցը, թե ինչ ծավալով պետք է պաշտպանել աշխարհագրական նշումները: Եվրոպական երկրները հատկապես առաջ էին տանում այն թեզը, որ աշխարհագրական նշումները չպետք է օգտագործվեն ոչ շահագրգիռ անձանց կողմից, որովհետև աշխարհագրական նշումներով մակնշված ապրանքների որակը ունի յուրահատուկ բնութագրիչներ և համբավ, և, հետևաբար, եթե այլ անձինք աշխարհագրական նշումներն օգտագործեն անպատշաճ, ապա սպառողները մոլորության մեջ կհայտնվեն՝ աշխարհագրական նշումների իրական ծագման վերաբերյալ: Ի հակադրումն այս մոտեցման՝ ԱՄՆ և այլ երկրները փաստարկում էին, որ շատ աշխարհագրական նշումներ դարձել են ջնջելիկ անուններ, ինչպիսիք են, օրինակ, շամպայնը, և, հետևաբար, սպառողները չեն կարող մոլորության մեջ լինել այս ապրանքների ծագման վերաբերյալ⁷:

Այս քննարկումների տրամաբանական ավարտը եղավ ԹԻԲՄ համաձայնագրի ստորագրումը, որով հաստատվեց եվրոպական դիրքորոշումը, քա-

նի որ նախատեսեց նվազագույն պահանջներ աշխարհագրական նշումները պաշտպանելու համար:

Աշխարհագրական նշումները, ինչպես ապրանքային նշանները, ևս օգտագործվում են ապրանքը նույնականացնելու համար: Աշխարհագրական նշումները, այնուամենայնիվ, չեն պաշտպանում ապրանքները որպես այդպիսին, այլ պարզապես տվյալ աշխարհագրական տարածքի արտադրողներին տրամադրում են իրավունք՝ օգտագործելու տարբերակիչ նշան՝ իրենց արտադրանքը նույնականացնելու համար:

Ինչ վերաբերում է ծագման տեղանուններին, ապա դրանք աշխարհագրական նշան տեսակ են: Ծագման տեղանվան պահպանությունը նախատեսվել է «Ծագման տեղանունների պահպանության և դրանց միջազգային գրանցման մասին» Լիսսաբոնի համաձայնագրով: Համաձայնագրի 2.1-րդ հոդվածը սահմանում է, որ ծագման տեղանունը տարածքի (բնակավայրի), որոշակի տեղանքի կամ երկրի աշխարհագրական անվանումն է, որը ծառայում է տվյալ տարածքից՝ որոշակի տեղանքից կամ երկրից ծագած արտադրանքը նշելու համար, և որի յուրահատուկ որակը և/կամ հատկանիշները գլխավորապես կամ բացառապես պայմանավորված են տվյալ աշխարհագրական բնապայմաններով, ներառյալ՝ բնական և մարդկային գործոնները: Այս հասկացությունը նման է աշխարհագրական նշան, սակայն ծագման տեղանվան համար ավելի բարձր պահանջներ են ներկայացվում, քանի որ միայն արտադրանքի համբավը բավարար չէ. այն որպես ծագման տեղանուն պահպանելու համար կարևոր է առանձնահատուկ որակների և հատկանիշների առկայությունը: Բացի այդ, ծագման տեղանունները պետք է լինեն կոնկրետ տեղանքի, տարածքի կամ երկրի անվանումը: Որպես օրինակ կարող ենք նշել՝ «Habanos» կուբայական սիգարները և «Veracruz» սուրճը Մեքսիկայից:

Գլոբալիզացված տնտեսության պայմաններում աշխարհագրական նշումները ուրույն տեղ են զբաղեցնում: Դրանք կոչված են պաշտպանելու ոչ նյութական այնպիսի արժեքներ, ինչպիսիք են՝ համբավը և որակական ստանդարտները: Պատահական չէ, որ աշխարհագրական նշումով մակնշված արտադրանքն իրենից բարձր որակի արտադրանք է ներկայացնում: Բացի այդ, աշխարհագրական նշումները հաղորդում են մշակութային ինքնություն ազգին, տարածքին, տեղանքին, երկրին, որտեղ ծագել են:

Միջազգային փաստաթղթերից Փարիզյան կոնվենցիան առաջինն է նախատեսել ծագման տեղանունների կամ ծագման նշումների իրավական պահպանությունը: Մասնավորապես, Փարիզյան կոնվենցիայի 1-ին հոդվածի՝ մտավոր սեփականության օբյեկտների շարքին, դասվում են նաև

ծագման տեղանունները կամ ծագման նշումները (indications of source or appellation of origin): Փարիզյան կոնվենցիան ծագման տեղանունների պաշտպանություն է նախատեսում անբարեխիղճ մրցակցությունից, որը արգելում է օգտագործել այնպիսի նշումներ, որոնք շփոթեցնում են ապրանքի իրական ծագման վերաբերյալ:

Փարիզյան կոնվենցիան չի պարունակում դրույթներ աշխարհագրական նշումների մասին: Աշխարհագրական նշումների պաշտպանությունն առաջին անգամ միջազգայնորեն նախատեսվել է ԹԻԻՓՄ-ի համաձայնագրով, որի 22-րդ հոդվածը նախատեսում է հետևյալը.

«(...) Աշխարհագրական նշումների հետ կապված անդամ պետություններ կապահովեն, որպեսզի շահագրգիռ անձինք կարողանան արգելել.

(a) Ապրանքի ցանկացած նշում, որից կարելի է ենթադրել, որ խնդրո առարկա ապրանքը ծագել է իրական ծագման վայրից այլ աշխարհագրական վայրում այնպես, որ սպառողները շփոթության մեջ լինեն ապրանքի իրական աշխարհագրական ծագման վերաբերյալ:

(b) Ցանկացած օգտագործում, որը Փարիզյան կոնվենցիայի 10bis հոդվածի իմաստով անբարեխիղճ մրցակցության գործողություն է:»:

ԹԻԻՓՄ համաձայնագիրը նախատեսում է, որ անդամ պետությունը ի պաշտոնե, եթե ներպետական օրենսդրությունը նման հնարավորություն նախատեսում է, կարող է մերժել կամ անվավեր ճանաչել ապրանքային նշանի գրանցումը, եթե այն պարունակում է կամ բաղկացած է աշխարհագրական նշումներից, որոնք վերաբերում են այն ապրանքներին, որոնք չեն ծագել այդ տարածքից, եթե այդպիսի անվանման օգտագործումը որպես ապրանքային նշան կարող է շփոթություն առաջացնել սպառողների շրջանում ապրանքի իրական ծագման վերաբերյալ: Այս ընդհանուր նորմերի հետ մեկտեղ ԹԻԻՓՄ-ը ընդլայնված պաշտպանություն է նախատեսում գինիների և հանքային ջրերի համար:

Աշխարհագրական նշան, ծագման տեղանվան և երաշխավորված ավանդական արտադրանքի հասկացությունը տրված է ինչպես ՀՀ բաղադրական օրենսգրքում, այնպես էլ «Աշխարհագրական նշումների մասին» ՀՀ օրենքում: Մասնավորապես՝ աշխարհագրական նշումը տարածքի (բնակավայրի), որոշակի տեղանքի կամ բացառիկ դեպքերում երկրի անվանումն է, որը ծառայում է այն արտադրանքը նշելու համար, որը ծագել է տվյալ տարածքից, որոշակի տեղանքից կամ երկրից, որի յուրահատուկ որակը, համբավը կամ այլ բնորոշ հատկանիշները հիմնականում պայմանավորված են տվյալ աշխարհագրական ծագմամբ, որը արտադրվել և (կամ) վերամշակվել և (կամ) պատրաստվել է տվյալ աշխարհագրական վայրում: ՀՀ-

ում գրանցված է միայն PARMIGIANO REGGIANO տեղանունը¹⁰ :

Ծագման տեղանունը տարածքի (բնակավայրի), որոշակի տեղանքի կամ բացառիկ դեպքերում երկրի աշխարհագրական անվանումն է, որը ծառայում է այն արտադրանքը նշելու համար, որը ծագել է տվյալ տարածքից, որոշակի տեղանքից կամ երկրից, և որի յուրահատուկ որակը կամ այլ բնորոշ հատկանիշները գլխավորապես կամ բացառապես պայմանավորված են տվյալ աշխարհագրական բնապայմաններով, ներառյալ՝ բնական և մարդկային գործոնները, և որի արտադրությունը, վերամշակումը և պատրաստումը տեղի են ունենում տվյալ աշխարհագրական վայրում¹¹ : Որպես հայկական ծագման տեղանվան օրինակ կարող ենք նշել «Սևանի իշխան» տեղանունը¹² :

Առաջին հայացքից թվում է, թե աշխարհագրական նշումները և արտադրանքի ծագման տեղանունները նույնանում են, սակայն կան որոշակի տարբերություններ: Մասնավորապես, աշխարհագրական նշման պարագայում՝ արտադրանքի կապը տարածքի հետ, որի հիմքում ընկած է յուրահատուկ որակ, համբավ կամ այլ հատկանիշներ՝ պայմանավորված աշխարհագրական ծագմամբ և արտադրությունը կամ դրա վերամշակմամբ, որը պետք է կատարվի տվյալ աշխարհագրական վայրում:

Ինչ վերաբերում է արտադրանքի ծագման տեղանվանը, ապա այն պետք է արտադրված լինի տվյալ տարածքում, տեղանքում կամ երկրում, որի որակը կամ այլ բնորոշ հատկանիշները առավելապես կամ բացառապես պետք է պայմանավորված լինեն աշխարհագրական բնապայմաններով, ներառյալ՝ բնական և մարդկային գործոնները, և որի արտադրությունը, վերամշակումը և պատրաստումը ևս պետք է տեղի ունենա այդ աշխարհագրական վայրում¹³ :

Այստեղից կարելի է եզրակացնել, որ եթե աշխարհագրական նշման դեպքում անհրաժեշտ է, որպեսզի արտադրանքի համբավը պայմանավորված լինի աշխարհագրական ծագմամբ, ապա ծագման տեղանունը պահանջում է, որպեսզի որակը կամ այլ հատկանիշները մեծապես կամ բացառապես պայմանավորված լինեն աշխարհագրական բնապայմաններով: Ավելին, ծագման տեղանվան համար պարտադիր է, որպեսզի թե՛ արտադրությունը, թե՛ մշակումը և թե՛ պատրաստումը տեղի ունենան տվյալ աշխարհագրական վայրում, մինչդեռ աշխարհագրական նշման դեպքում բավական է վերոգրյալ պայմաններից միայն մեկի առկայությունը¹⁴ :

«Աշխարհագրական նշումների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածը սահմանում է հետևյալը.

1. Գրանցված աշխարհագրական նշումները և ծագման տեղանունները պաշտպանվում են՝

1) գրանցված անվանման ուղղակի կամ անուղղակի ցանկացած առևտրային օգտագործումից՝ գրանցումով չներառված արտադրանքի համար այնքանով, որքանով այդ ապրանքները համեմատելի են տվյալ անվանմամբ գրանցված արտադրանքի հետ, կամ այնքանով, որքանով՝ այդպիսի օգտագործումը թույլ է տալիս օգտվել պահպանվող անվանման համբավից,

2) ցանկացած ապօրինի յուրացումից, վերարտադրումից, նմանակումից կամ հիշեցնող (մտաբերող) ցանկացած ինչ-որ բանի օգտագործումից (եթե նույնիսկ նշված է ապրանքի իրական ծագումը) կամ անվանման պահպանվող թարգմանաբար օգտագործումից կամ այնպիսի օգտագործումից, երբ պահպանվող անվանումն ուղեկցվում է՝ «սեռ», «տեսակ», «տիպ», «ոճ», «նմանակում» կամ նմանատիպ այլ արտահայտություններով,

3) ցանկացած կեղծ կամ շփոթություն առաջացնող նշումից, որը վերաբերում է ապրանքի ծագմանը, աշխարհագրական վայրին, բնապայմաններին կամ էական որակական հատկություններին, որոնք առկա են ապրանքի կամ դրա փաթեթավորման վրա, գովազդում, տվյալ ապրանքին վերաբերող փաստաթղթերում կամ փաթեթավորման համար նախատեսված կոնտեյներների վրա, որոնք կարող են մոլորեցնել ապրանքի աշխարհագրական ծագման հարցում,

4) ցանկացած գործողությունից, որը կարող է սպառողի մոտ շփոթություն առաջացնել ապրանքի իրական աշխարհագրական ծագման վերաբերյալ:

2. Պահպանվող անվանումները չեն կարող դառնալ համընդհանուր օգտագործման (ջեներիկ):

Աշխարհագրական նշումները մտավոր սեփականության իրավունքի այլ օբյեկտներից տարբերվում են, քանի որ պահպանություն է տրվում կոնկրետ արտադրանքին և ոչ թե իրավատիրոջը:

Վերոգրյալը կիրառելի է նաև երաշխավորված ավանդական արտադրանքի նկատմամբ: Երաշխավորված ավանդական արտադրանքը գյուղատնտեսական արտադրանք կամ սննդամթերք է, որի յուրահատկությունները ճանաչված են, և որը գրանցված է օրենքի համաձայն:

Որպես երաշխավորված ավանդական արտադրանք կարող է պահպանվել այն արտադրանքը, որը բավարարում է հետևյալ պայմաններից մեկը՝

1) ստացվում է ավանդական սկզբնական հումքից,

2) բնութագրվում է ավանդական բաղադրությամբ,

3) բնութագրվում է արտադրության և (կամ) վերամշակման եղանակով, որը համապատասխանում է արտադրության և (կամ) վերամշակման ավանդական եղանակին: Հարկ ենք համարում նշել, որ այս մեխանիզմը գրեթե չի օգտագործվում

ինչպես ՀՀ-ում, այնպես էլ ամբողջ աշխարհում: Որպես երաշխավորված արտադրանքի պահպանության վառ օրինակ կարող ենք նշել հայտնի Mozzarella պանիրը:

Աշխարհագրական նշում, ծագման տեղանուն կամ երաշխավորված ավանդական արտադրանք կարող են օգտագործել անսահմանափակ թվով անձինք, ովքեր, որ կհամապատասխանեն ներկայացվող պահանջներին, հետևաբար, իրավատերերից ոչ մեկը չի կարող արգելել այլ իրավատիրոջը օգտագործել վերոհիշյալ անհատականացման միջոցները և չի կարող օտարել այլ անձի:

Ապրանքային նշանի հետ համեմատելիս պետք է նշել, որ ապրանքային նշանների համար կարևոր է տարբերակիչ հատկանիշ ունենալը և այն չպետք է լինի նկարագրական: Մինչդեռ, աշխարհագրական նշումները նկարագրական են, քանի որ նշում են այն տարածքը, որտեղից ծագել են:

Եթե փորձենք զուգահեռներ անցկացնել ապրանքային նշանների միջև, ապա կարող ենք վեր հանել հետևյալ առանձնահատկությունները.

- վերոգրյալ անհատականացման միջոցները, ի տարբերություն ապրանքային նշանների, անհատականացնում են ոչ թե ցանկացած ապրանք, այլ կոնկրետ ապրանքներ, որոնք արտադրվում են կոնկրետ տարածքում և ունեն առանձնահատկություններ,

- եթե ապրանքային նշանների հիմնական գործառնությունը զանազանումն է մնանատիպ ապրանքներից, ապա հիշյալ անհատականացման միջոցների նպատակն է՝ երաշխավորել ապրանքի առանձնահատուկ հատկությունները,

- հիշյալ անհատականացման միջոցների օբյեկտ կարող են հանդիսանալ միայն ապրանքները և ոչ ծառայությունները,

- հիշյալ անհատականացման միջոցները չեն կարող օտարվել կամ օգտագործման հանձնվել լիցենզիայի պայմանագրի հիման վրա:

Վերոգրյալ միջազգային իրավական կարգավորումները և աշխարհագրական նշումների դերը ցույց են տալիս, որ դրանք զուտ արտադրանքը անհատականացնելուց բացի, իրենց մեջ պարունակում են նաև որակ, տարածքային առանձնահատկություններ, ծագման տեղանունների դեպքում՝ նաև մարդկային գործոն: Հետևաբար թե՛ տնտեսվարողները, թե՛ սպառողները՝ առավել քան շահագրգիռ պետք է լինեն դրանք պաշտպանելու հարցում: Տնտեսվարող սուբյեկտների համար նման պաշտպանությունը կարևոր է բարեխիղճ մրցակցության տեսանկյունից, որպեսզի մրցակից տնտեսվարողները առանց որևէ ջանքի, առանց որակական հատկանիշ ներկայացնող պահանջները պահպանելու՝ առավելություններ չստանան անվանումը օգտագործելով: Իսկ սպառողների համար կարևոր է, որպեսզի իրենք ձեռք բերեն իսկական

արտադրանք, որը համապատասխանում է տվյալ աշխարհագրական նշանը ներկայացվող պայմաններին ու պահանջներին:

Քանի որ աշխարհագրական նշումները կոչված են տեղեկություն հաղորդել ապրանքի ծագման մասին, որը իր մեջ ներառում է որակական հատկանիշներ, դրանք կրկնօրինակելու կամ դրանք օգտագործելու գաղափարներն ավելի է մեծանում: Աշխարհագրական նշումների պաշտպանությունը կարևոր է ինչպես տնտեսվարող սուբյեկտների համար, այնպես էլ սպառողների համար:

Տնտեսության զարգացմանը զուգընթաց սպառողների նախասիրությունները սննդամթերքի նկատմամբ ևս փոխվում են: Նրանք նախընտրում են որակյալ արտադրանք, այլ խոսքերով՝ իսկական արտադրանք կայուն ավանդույթներով, և ընտրություն կատարելիս առաջնորդվում են իրենց գիտակցությամբ: Սպառողները նախընտրում են էկոլոգիապես մաքուր կամ սոցիալական պատասխանատվություն կրող ապրանքներ:

Այստեղ հարց է առաջանում, թե արդյո՞ք այս անհատականացման միջոցները կարելի է դասակարգել մտավոր սեփականության օբյեկտների շարքին:

Թեև այս անհատականացման միջոցները շատ երկրներում դիտվում են որպես մտավոր սեփականություն, այդուհանդերձ այս եզրութաբանությունը չի կանխորոշում դոկտրինալ բնորոշումը: Իրականում, մտավոր սեփականության իրավական ռեժիմն օգտագործվել է՝ ստեղծելով ֆիկցիա, թե դրանք իրավատերերի համար առաջացնում են սուբյեկտիվ իրավունքներ, որպեսզի այս անհատականացման միջոցների իրավատերերը՝ խթան ունենան արտադրելու և նպաստելու տնտեսության զարգացմանը: Եվ իսկապես, եթե ընդունում ենք, որ այս անհատականացման միջոցներին պետք է տրամադրվի պաշտպանություն, ապա պետք է նաև հասկանալ դրանց տեղը քաղաքացիական իրավունքի համակարգում: Թերևս այս տեսանկյունից արդարացվում է հիշյալ անհատականացման միջոցների՝ մտավոր սեփականության իրավունքի օբյեկտներին հավասարեցնելը: Միևնույն ժամանակ, կարծում ենք, որ, այնուամենայնիվ, այս անհատականացման միջոցների պաշտպանությունը պետք է իրականացվի անբարեխիղճ մրցակցությունը կանխարգելող նորմերով: Ավանդը հիմնավորվում է այն հանգամանքով, որ դրանք ավելի շատ հետապնդում են հանրային շահ, քան մասնավոր, որպիսի պայմաններում հանդիսանում են գործիք՝ անբարեխիղճ մրցակցությունը կանխարգելելու համար:

Այս համատեքստում աշխարհագրական նշումները, ծագման տեղանունները, երաշխավորված ավանդական արտադրանքը որպես մտավոր սեփականություն դիտելով դասական իմաստով՝ սխալ տպավորություն կարող է ստեղծվել ինչպես

այս միջոցների գործառնություն, այնպես էլ՝ այն իրավունքների ծավալի մասին, որը տրամադրվում է մտավոր սեփականության իրավունքներին: Խոսքը բացառիկ իրավունքների մասին է, որը աշխարհագրական նշումների, ծագման տեղանունների և երաշխավորված ավանդական արտադրանքի համար կիրառելի չէ:

Հաշվի առնելով, որ եզրութաբանությունը կարող է մեծ ազդեցություն ունենալ իրավակիրառ

պրակտիկայում՝ կարծում ենք, որ թե՛ տեսական և թե՛ գործնական նկատառումներից ելնելով՝ աշխարհագրական նշումների, ծագման տեղանունների և երաշխավորված ավանդական արտադրանքի պաշտպանությունը պետք է իրականացնել անբարեխիղճ մրցակցությունը կանխարգելող նորմերով:

¹ Տե՛ս, Lionel Bently, Brad Sherman, Intellectual Property Law, 3rd edition, 2009, էջ 976:

² Տե՛ս, Боденхаузен Г. Парижская конвенция по охране промышленной собственности: Комментарий. М.: Издательство Прогресс, 1977. С. 33.

³ Տե՛ս, Փարիզյան կոնվենցիա Արդյունաբերական սեփականության պահպանության մասին, հոդված 1-ին, մաս 3-րդ, ընդունվել է 20.03.1883թ.:

⁴ Տե՛ս, Lionel Bently, Brad Sherman, նշված աշխատության, էջ 976:

⁵ Տե՛ս, Tim W.Dornis, Trademark and Unfair Competition Conflicts, Historical-Comparative, Doctrinal and Economic Perspectives, 2017, էջ 376:

⁶ Տե՛ս, Exportur v. LOR and Confiserie du Tech, C-3/91, para. 23 et seq. (10 November 1992), [1992] E.C.R. I-5529; Ravil (“Grana Padano”), C-469/00, para. 49 (20 May 2003), [2003] E.C.R. I-5053; Consorzio del Prosciutto di Parma and Salumificio S. Rita, C-108/01, para. 62 et seq. (20 May 2003), [2003] E.C.R. I-5121; տե՛ս նաև Statement by the Commission concerning Article 2 of Directive 2004/48/EC of the European Parliament and of the Council on the enforcement of intellectual property rights (2005/295/EC), O.J. EU (13 April 2005), L 94/37.

⁷ Տե՛ս, Expanding the Protection of Geographical Indications of Origin Under TRIPS: “Old” Debate or “New” Opportunity?, <https://scholarship.law.marquette.edu/cgi/viewcontent.cgi?referer=&httpsredir=1&article=1075&context=facpub>, վերջին այց՝ 15.03.2020թ.:

⁸ Տե՛ս, Geographical Indications beyond Wines and Spirits,

https://www.ige.ch/fileadmin/user_upload/Juristische_Infos/e/PDF-doku3.pdf, վերջին այց՝ 15.03.2020թ.:

⁹ Տե՛ս, «Աշխարհագրական նշումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասը:

¹⁰ Տե՛ս, ավելին Հայաստանի Հանրապետության մտավոր սեփականության գործակալություն, https://karavarum.aipa.am/u_files/file/GI/PARMIGIANO%20REGGIANO.pdf, վերջին այց՝ 15.03.2020թ.:

¹¹ Տե՛ս, «Աշխարհագրական նշումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասը:

¹² Տե՛ս, ավելին Հայաստանի Հանրապետության մտավոր սեփականության գործակալություն,

https://www.aipa.am/u_files/file/GI/SEVANI_ISHXANI.pdf, վերջին այց՝ 15.03.2020թ.:

¹³ Տե՛ս, D.Gangjee, “Molton Mowbray and the GI Pie in the Sky: Exploring Cartographies of Protection” (2006), Intellectual Property, Quarterly 291:

¹⁴ Տե՛ս, նույն տեղում:

¹⁵ Տե՛ս, Geographical Indications beyond Wines and Spirits,

https://www.ige.ch/fileadmin/user_upload/Juristische_Infos/e/PDF-doku3.pdf, վերջին այց՝ 15.05.2020թ.:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՑԱՆԿ

1. «Աշխարհագրական նշումների մասին» ՀՀ օրենք, ՀՕ-60-Ն, ընդունվել է 29.04.2010թ., ուժի մեջ է մտել 01.07.2010թ.:

2. Lionel Bently, Brad Sherman, Intellectual Property Law, 3rd edition, 2009.

3. Боденхаузен Г. , Парижская конвенция по охране промышленной собственности: Комментарий. М.: Издательство Прогресс, 1977.

4. Փարիզյան կոնվենցիա Արդյունաբերական սեփականության պահպանության մասին, ընդունվել է 20.03.1883թ., ՀՀ-ի կողմից վավերացվել է 25.12.1991թ.:

5. Tim W.Dornis, Trademark and Unfair Competition Conflicts, Historical-Comparative, Doctrinal and Economic Perspectives, 2017, 700 էջ:

6. Exportur v. LOR and Confiserie du Tech, C-3/91, para. 23 et seq. (10 November 1992), [1992] E.C.R. I-5529; Ravil (“Grana Padano”):
7. Irene Calboli, Expanding the Protection of Geographical Indications of Origin Under TRIPS: “Old” Debate or “New” Opportunity?, <https://scholarship.law.marquette.edu/cgi/viewcontent.cgi?referer=&httpsredir=1&article=1075&context=facpub>, վերջին այց՝ 15.03.2020թ.:
8. Felix Addor and Alexandra Grazioli, Geographical Indications beyond Wines and Spirits, https://www.ige.ch/fileadmin/user_upload/Juristische_Infos/e/PDF-doku3.pdf, վերջին այց՝ 15.03.2020թ.:
9. D.Gangjee, “Melton Mowbray and the GI Pie in the Sky: Exploring Cartographies of Protection” (2006), Intellectual Property, Quarterly 291:

Нарине Авакян

Аспирант кафедры гражданского право ЕГУ,
заместитель руководителя Комитета Кадастра РА

РЕЗЮМЕ

Особенности защиты географических указаний, наименований мест происхождения и гарантированного традиционного продукта

В данной статье рассматриваются вопросы, связанные с охраной географических указаний, источников происхождения и гарантированного традиционного продукта. В частности, в статье обсуждаются основания для предоставления защиты вышеупомянутым средствам индивидуализации. Автор раскрывает предназначение указанных средств и соотношение с интеллектуальной собственностью. Автор предлагает защитить географические указания, источники происхождения и гарантированный традиционный продукт в рамках законодательства о недобросовестной конкуренции.

Ключевые слова: географическое указание, место происхождения, гарантированные традиционные продукты, права интеллектуальной собственности, исключительные права, недобросовестная конкуренция.

Narine Avagyan

PhD student at the Chair of Civil Law of the YSU
Deputy Head of the Cadastre Committee of the RA

SUMMARY

Peculiarities of the protection of geographical indications, sources of origin and guaranteed traditional product

The current article discusses the issues related to the protection of geographical indications, sources of origin and guaranteed traditional product. In particular the article discusses the justifications for granting the protection to the aforementioned means of individualization. The author reveals the purpose of the aforementioned means and the correlation with intellectual property. The author suggests to protect geographical indications, sources of origin and guaranteed traditional product within unfair competition legislation.

Key words: geographical indication, sources of origin, guaranteed traditional products, intellectual property rights, exclusive rights, unfair competition.

Բնագիրը ներկայացվել է 18.02.2021թ.

Ընդունվել է տպագրության 23.02.2021թ.

Հոդվածը երաշխավորել է տպագրության (գրախոսել է)

իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Գ. Բեքմեջյանը

JUSTICE

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

ISSN 1829 1252

